´ ³ ½Ù ³ ÏáÕÙ ³ ÝÇ Éñ ³ ïí áõÃÛ ³ Ý Ó»éÝ ³ ñÏ

Սույն հրապարակությանը վերաբերվող ցանկացած հարցերով դիմել Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ

100 Park Village East, London NW1 3SR, UK0
Tel: + 44 20 7380 0200
Fax: +44 20 7380 0050
Էլ.փոստ: info@media-diversity.org
Կայք: **www.media-diversity.org**

Բազմակողմանի լրատվության ձեռնարկ
Հեղինակ՝ Դեյվիդ Թալեր. Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համար

Հրապարակիչներ՝ Արթուր Պապյան, Ելշադ Փարզալիեւ, Ելենա Ալադաշվիլի, Լիդիա Էլ-Խուրի՝ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համար

ISBN 99941-32-78-4

Ministerie van
Buitenlandse Zaken

Ձեռնարկը լույս է տեսել Եվրոպական համայնքի եւ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտինն են եւ որեւիցե կերպ չեն արտացոլում Եվրոպական համայնքի եւ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության պաշտոնական կարծիքը:

¸»ÛÍÇ¹ Â³É»ñ

# ´³½Ù³ ÏáÕÙ³ÝÇ Éñ³ïíáõÃÛ³Ý Ó»éÝ³ñÏ

²é³ç³µ³ÝÁ` ææáÝ úáõ»ÝÇ

ÈáÝ¹áÝ, 2004
´³½Ù³ ÏáÕÙ³ÝÇ ï»Õ»Ï³ïíáõÃÛ³Ý ÇÝëïÇïáõïÇ Ññ³ï³ñ³ ÏáõÃÛáõÝ`
ºíñáå³ Ï³Ý Ñ³Ù³ÛÝùÇ »õ ÜÇ¹»éÉ³Ý¹Ý»ñÇ ³ñï³ùÇÝ ·áñÍ»ñÇ
Ý³Ë³ñ³ñáõÃÛ³Ý ýÇÝ³Ýë³Ï³Ý ³ç³ÏóáõÃÛ³Ùµ:

Շնորհակալություն ենք հայտնում Բազմակողմանի լրատվության ցանցի Հարավային Կովկասի գործընկերներին՝ աջակցության, մշտական եւ բարյացակամ համագործակցության համար:

Ադրբեջանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա, Բաքու
Բաքվի մամուլի ակումբ, Բաքու
Սեւծովյան մամուլի միություն, Թբիլիսի
Ազատության ինստիտուտ, Թբիլիսի
«Ասպարեզ» լրագրողների ակումբ, Գյումրի
Ստեփանակերտի մամուլի ակումբ, Ստեփանակերտ
Երեւանի մամուլի ակումբ, Երեւան

# ´ ³ ½Ù ³ ÏáÕÙ ³ ÝÇ Éñ ³ ïí áõÃÛ ³ Ý Ó»éÝ ³ ñÏ


8 æáÝ úáõ»Ý ²é ³ ç ³ µ ³ Ý

1.

12 Ü»ñ ³ Íáõ ÃÛáõÝ

2.

16 ÀÝ¹Ñ ³ Ýáõñ ËáñÑáõñ¹Ý»ñ µ ³ ½Ù ³ ß»ñïáõ ÃÛ ³ Ý Ù ³ ëÇÝ
Ññ ³ å ³ ñ ³ ÏáõÙÝ»ñÇ í»ñ ³ µ»ñÛ ³ É

17 ÊáñÑáõñ¹Ý»ñ ï»Õ»Ï ³ ïí áõÃÛ ³ Ý ³ ÕµÛáõñÝ»ñ ·ïÝ»Éáõ í»ñ ³ µ»ñÛ ³ É

19 ÊáñÑáõñ¹Ý»ñ ï ³ ñµ»ñ ËÙµ»ñÇ ³ Ý¹ ³ ÙÝ»ñÇ Ñ»ï Ñ ³ ñó ³ ½ñáõÛó
³ ÝóÏ ³ óÝ»Éáõ í»ñ ³ µ»ñÛ ³ É

3.

22 ¾ÃÝÇÏ ³ Ï ³ Ý å ³ ïÏ ³ Ý»ÉÇáõÃÛáõÝ

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
27 ¶Ýãáõ Ý»ñÁ Ï ³ óÇÝÝ»ñáí Ñ ³ ñÓ ³ Ï í áõÙ »Ý áëïÇÏ ³ ÝáõÃÛ ³ Ý
½ÇÝí ³ Í áõÅ»ñÇ íñ ³

30 §¶Ýãáõ¦ ³ í ³ ½ ³ ÏÝ»ñÁ ÏáÕáå ïáõÙ »Ý ²ñ»õÙáõïùÁ

32 ¶Çß»ñ ³ ÛÇÝ ÑÛáõñÁ ¹ ³ Ý ³ ÏÇ ¿ ù ³ ßáõÙ ï ³ ÝÇÇñáçÁ

36 ØÇÝã âáõµáõñËÇÝçÇáõÙ µ ³ Ý ³ ÏóáõÃÛáõÝÝ»ñ »Ý ÁÝÃ ³ ÝáõÙ`
íñ ³ óÇÝ»ñÇÝ Ï»Ý¹ ³ ÝÇ Ã ³ ÕáõÙ »Ý úã ³ ÙãÇñÇáõÙ

40 Ô ³ ñ ³ µ ³ ÕÇ ³ ½ ³ ï ³ ·ñ ³ Ï ³ Ý Ï ³ ½Ù ³ Ï»ñå áõÃÛáõÝÁ µáÕáùáõÙ ¿
Ñ ³ Û»ñÇ` Ù»ñ »ñÏÇñ ³ Ûó»É»Éáõ ¹»Ù

4.

41 ÎñáÝ

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ

45 Æ±Ýã Ïï ³ ³ ÙÉÁÝïñ ³ Ýù ³ ÙÇÝ Í ³ é ³ ÛáõÃÛáõÝÁ ²¹ñµ»ç ³ ÝÇÝ
49 ä»ïù ¿ ëï»ÕÍ»É Ñ ³ ïáõÏ Ï»Ýïñá Ý

50 Ìñ ³ ëï ³ ÝÇ »Ñá í ³ ÛÇ í Ï ³ Ý»ñÇÝ Ñá í ³ Ý ³ íáñáõÙ ¿ ²Ù»ñÇ Ï Û ³ Ý

ÏáÝ · ñ»ëÇ Ñ ³ ÛÏ ³ Ï ³ Ý Éáµµ ÇÝ

5.

53 ê»é

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
57 öáÕáó ³ ÛÇÝ Ï ³ Ý ³ Ûù ½ ³ Ý ³ ½ ³ Ý í»Ý»ñ ³ Ï ³ Ý ÑÇí ³ Ý¹áõÃÛáõÝÝ»ñÇ ÏñáÕÝ»ñ »Ý

58 ¼íÇ ³ ¹Ç ÏáÕÙÝ ³ ÏÇó Ï ³ Ý ³ Ûù Ñ ³ ñÓ ³ Ï íáõÙ »Ý
§´áõñç ³ Ý ³ Ó»-¹»ÙáÏñ ³ ïÝ»ñÇ¦ íñ ³

61 Ð ³ çáñ¹ Ø ³ ñïÇ 8-Ý ³ ÝóÏ ³ óÝ»Éáõ »Ýù Ù»ñ ÁÝï ³ ÝÇùÝ»ñÇ Ñ»ï

6.

63 üÇ½ÇÏ ³ Ï ³ Ý Ï ³ Ù Ùï ³ íáñ Ñ ³ ßÙ ³ Ý¹ ³ ÙáõÃÛáõÝ

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
66 Ð ³ ßÙ ³ Ý¹ ³ ÙÝ»ñÁ µáÕáùáõÙ »Ý

68 Êáñá í í ³ Í ·Å»ñÁ

70 ²Ûë ¹»åùÁ áõß ³ ¹ñáõÃÛáõÝ ¿ å ³ Ñ ³ Ýçáõ Ù

73 ÒÆ²Ð-á í ÑÇ í ³ Ý¹Ý»ñÇ ÃÇíÁ ²¹ñµ»ç ³ ÝáõÙ ³ ×áõÙ ¿

76 Þ ³ ñÅ ³ ë ³ ÛÉ ³ ÏÁ Ã ³ ïñáÝáõÙ

7.

82 êáóÇ ³ É ³ å»ë Ëáó»ÉÇ ËÙµ»ñ

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
84 Øáõñ ³ óÇÏÝ»ñÁ ËáñÑñ¹ ³ ñ ³ ÝÇ å ³ ñë åÇ Ùáï

8.

87 Î ³ ñ»óÝ»ñ »õ Ãáß ³ Ï ³ éáõÝ»ñ

ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ

91 øí» ³ ñÏ»Éáõ Ï»ë-Çñ ³ íáõÝù 60-Çó Ñ»ïá

92 ö ³ Ëëï ³ Ï ³ ÝÝ»ñ »ñ ï»Õ ³ Ñ ³ Ýí ³ ÍÝ»ñ
ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
94 î»Õ ³ Ñ ³ Ýí ³ Í ³ ÝÓÇÝù Ïëï ³ Ý ³ Ý Çñ ³ í ³ Ï ³ Ý ³ ç ³ ÏóáõÃÛáõÝ
99 Ð ³ Ï ³ Ñ ³ ÛÏ ³ Ï ³ Ý Ë ³ Õ»ñ` Ñ ³ Û»ñÇ ÙÇçáóáí
101 àëïÇ Ï ³ ÝáõÃÛáõÝÁ ÅËïáõÙ ¿ ùÇëï»ñÇ »ñ ã»ã»Ý
÷ ³ Ëëï ³ Ï ³ ÝÝ»ñÇ ï»Õ ³ Ñ ³ ÝáõÙÁ

10.

102 ê»é ³ Ï ³ Ý ÏáÕÙÝáñáßáõÙ
ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
104 Üáñ Ñ ³ Ù ³ Ï ³ ñ·Ç ïñ ³ ·ÇÏáÙ»¹Ç ³ Ý
108 È»ëµáõÑáõ Ù»ñÅáõÙÁ å ³ ï× ³ é ¹ ³ ñÓ ³ í Ù ³ ñ¹ ³ ëå ³ ÝáõÃÛ ³ Ý
110 ÆÝãáõ ¿ñ »ñÏë»é æ ³ µ ³ ´áç·áõ ³ Ý §ç»ñÙ¦ ´áñÇë Ì Ç åáõñÇ ³ ÛÇ Ñ»ï
113 §Þ ³ µ ³ Ãí ³ ½ ³ ñÙ ³ ÝùÁ¦

11.

115 ø ³ Õ ³ ù ³ Ï ³ Ý ÁÝ¹¹ÇÙáõÃÛáõÝ »ñ ³ ÛÉ ³ ËáÑÝ»ñ
ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ
118 Î ³ ñÇù ãÏ ³ , áñ ÁÝ¹¹ÇÙáõÃÛáõÝÁ Ñ ³ Ýñ ³ Ñ ³ í ³ ùÝ»ñ Ï ³ ½Ù ³ Ï»ñåÇ
119 ÆÙ ÃßÝ ³ Ùáõ ÃßÝ ³ ÙÇÝ ÇÙ µ ³ ñ»Ï ³ ±ÙÝ ¿

12.

123 Èáõë ³ ÝÏ ³ ñãáõÃÛáõÝ »ñ å ³ ïÏ»ñ

13.

127 Ì»ñ ³ å ³ ïñ ³ ëïÙ ³ Ý Ùá¹áõÉÝ»ñ

14.

158 ´ ³ é ³ ñ ³ Ý

15.

160 Ð ³ ñ ³ í ³ ÛÇÝ Îáí Ï ³ ëÇ µ ³ ½Ù ³ ÏáÕÙ ³ ÝÇ Éñ ³ ïíáõÃÛ ³ Ý
ó ³ Ýó

16.

161

´ ³ ½Ù ³ ÏáÕÙ ³ ÝÇ ï»Õ»Ï ³ ïíáõÃÛ ³ Ý ÇÝëïÇïáõïÇ

# ²é³ç³µ³Ý æáÝ úáõ»Ý

# ²é³ç³µ³Ý

Օթե դուք ուզում եք իմանալ, թե ի՞նչ խնդիրներ են դրված Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի առջեւ, ապա պարզապես պետք է մի օրվա մամուլի օրինակները ուսումնասիրեք: Այս պատմությունները ամառային մի օրվա քաղվածքներ են՝ բրիտանական թերթերից եւ «*Ինթերնեյշնլ Հերալդե*»-ից:

Ամստերդամում կատարված նոր հետազոտությունը բացահայտել է Նիդեռլանդներում միասեռների նկատմամբ անհանդուրժողականության միտում: Եվ սա մի երկրում, որտեղ առաջինն արվամոլներին թույլատրվեց ամուսնանալ:

Բրիտանիայի «*Դեյլի Մեյլ*»-ում, «Համզայի Ատելության խմբավորումը գրոհել է մզկիթը» վերնագիր էր հայտնվել, որտեղ մատնանշվում էր խմբավորման կապը բանտարկված հոգեւորական Կեռ-Ձեռքով Համզա-ի հետ (նա զրկվել է մի ձեռքից), եւ վերջինիս կապերը ահաբեկչական խմբավորումների հետ:

Իտալիայի քանակով ամենամեծ թերթը՝ «*Corriere della Sera*»-ն, լույս է ընծայել մի բացահայտորեն հակամահմեդական 126 էջանոց գիրք՝ գրված հայտնի իտալացի գրող Օրիանա Ֆալաչիի կողմից:

Բրիտանացի մամուլի տեսաբան Դարկուս Հոուն «*Գարդիանի*» էջերում. հրապարակում է «Հարձակվենք իրար վրա. այդ ու՞մ ես նեզր անվանում» վերնագրով հոդված: Հոուն այդտեղ ողբում է արեւելյան հնդիկների՝ սոմալացիների հետ եւ արեւելյան հնդիկների՝ պակիստանցիների հետ դաժան հակասությունները:

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի առաքելությունն է պարզաբանել, թե ինչպես են նմանատիպ հոդվածները հանձնարարվում, գրվում եւ խմբագրվում: Ինստիտուտի հիմնադիր տնօրենը՝ Միլիցա Պեշիչը, գտնում է, որ լրագրողները պարտավոր են իրենց պատմություններում ճշգրիտ փաստեր ներկայացնել: Նրանց բառերը նման են մի զենքի, որը արձակելուն պես կարող է երկարատեւ վնաս պատճառել համայնքներին, անհատներին եւ ընդհանրապես հասարակությանը: Եւ, ինչպես երեւում է այս պատահականորեն ընտրված օրինակներում, լրագրողներն օգտագործում են նմանատիպ երկակի չափանիշներ ամենահեղինակավոր թերթերում ՝ հրապարակություններում, որոնց կցանկանան ընդօրինակել լրատվամիջոցներում աշխատողները ժողովրդավարության համար պայքարի պայմաններում:

Չնայած BSԻ-ի աշխատանքը բարդ է, բայց ինչպես Պեշիչն է պնդում, համապատասխան դասընթացների եւ վերապատրաստման շնորհիվ լուսավորված եւ պատասխանատու լրագրողների նոր սերունդը կկարողանա իրար ատող համայնքները վերածել գործուն եւ հանդուրժող մարդկանց խմբերի:

BSԻ-ը լույս է ընծայել «Բազմակողմանի լրատվության ձեռնարկը», որպեսզի օգնի լրագրողներին վերանայել իրենց՝ բազմազանությունը լուսաբանելու միջոցները: Սա անհանգստություն հարուցող մի ժողովածու է վատ, հաճախ էլ անպատասխանատու եւ թունոտ պատմությունների, որոնք մտահոգության տեղիք են տալիս այն մասին, թե թերթերն ինչքան վատ են ծառայում իրենց ընթերցողներին: Եթե այս պատմությունների հրապարակման համար պատասխանատու խմբագիրները բժիշկ լինեին, ապա նրանց կզրկեին իրենց որակավորումից:

Այս ձեռնարկը գործնական խորհուրդներ է տրամադրում լրագրողներին եւ այն անձանց, ովքեր շահագրգռված են բարելավելու լրատվությունը, խուսափելու սխալներից: Յուրաքանչյուր լրագրող պետք է այս ձեռնարկը միշտ իր ձեռքի տակ պահի, եւ հաճախակի ինքն իրեն հարց տա, թե արդյո՞ք պատմությունը, որն ինքը հենց նոր գրել կամ խմբագրել է, համապատասխանում  է բազմազանության չափանիշներին:

Բազմազանությանը վերաբերող հարցերի մասին գրելու գործնական ուղեցույցներից առավել կարեւոր է տվյալ հարցի նկատմամբ վերաբերմունքը: Ես ամբողջովին համաձայն եմ Միլիցա Պեշիչի այն տեսակետին, որ բազմազանությունը պետք չէ դիտել, որպես հաղթահարելու խնդիր, դա լրագրողների եւ խմբագիրների վզերից կախված ծանրաքար չէ: Խելացի եւ ճարպիկ խմբագիրներն իրենք պետք է հասկանան, որ քիչ լուսաբնվող կամ էլ ընդհանրապես անտեսվող ազգաբնակչությունը կարող է միանալ իրենց ընթերցողների շարքերին: Բոլոր խմբագրություններում պետք է գրված լինի. «Բազմազանությունը ավելացնում է վաճառքը»:

Վերջին հաշվով, լրագրողները պարտավորված են իրենց ներդրումներն անել այն աշխարհին, որը թիկունքով կշրջվի դեպի ատելությունն ու մոլեռանդությունը:

Նրանք պետք է փորձեն սպանձնել այն, ինչը հայտնի ամերիկացի գրող եւ մամուլի տեսաբան Ուոլթեր Լիփմանը անվանել է «լույսը փնտրողի դեր»: Նրանք իրենց լրագրողական լույսով պետք է լուսաբանեն իրենց պատմությունները, որ դրանք ոգեւորեն, այլ ոչ թե բարոյալքեն:

Ռոջեր Կոենը՝ «*Ինթերնեյշնլ Հերալդ Թրիբյուն*»-ից, գրում է իր «գլոբալիստի սյունակում», թե Գերմանիան եւ Լեհաստանը՝ պատմականորեն ոխերիմ թշնամիներ, հաշտվեցին: «Եթե լեհերը եւ գերմանացիները կարողացան հաշտվել, ապա, հրեաներն ու պաղեստինցիներն էլ կարող են», գրում է Կոենը:

«Եվ եկեք ընդունենք, որ ողբերգությունների պատմությունը ջնջել չի լինի, բայց այն կարելի է հաղթահարել՝ միասին դեպի ապագա նայելով»:

*Ջոն Օուենը Սի-Բի-Սի հեռուստատեսային լուրերի նախկին ղեկավարն է*
*«Ազատության փորումի եվրոպական կենտրոնի» հիմնադիր տնօրենը,*
*եւ Լոնդոնի Սիթի համալսարանի լրագրության ազատ պրոֆեսոր*

# 1. Ü»ñ³ÍáõÃÛáõÝ

# Ü»ñ³ Í áõÃÛáõÝ

2003 թվականին ես ղեկավարում էի Հարավային Կովկասի լրագրողների համար կազմակերպված լրատվամիջոցների եւ էթնիկական փոքրամասնությունների թեմայով դասընթացը: Իմ գործընկերներից մեկը՝ ազգությամբ վրացի, սեմինարը դիտարկեց «հերթական անպտուղ սեմինար»: Ինչպես հետո ինքը ինձ բացատրեց, որ այդ ժամանակ իր երկրում տեղի ունեցող քաղաքական իրարանցման համեմատ տվյալ թեման շատ փոքր հետաքրքրություն է ներկայացնում լրատվամիջոցների համար: Բայց նա վերջերս ինձ նամակ էր գրել՝ ասելով, որ ժամանակները փոխվել են. այժմ Վրաստանի քաղաքական օրակարգը հիմնականում կենտրոնացած է Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի վրա: «Այժմ,- գրում է նա,- լրատվամիջոցների թողարկումները փորձում են անդրադառնալ էթնիկական փոքրամասնությունների եւ հետկոնֆլիկտային իրականության մեջ նրանց հետ կողք-կողքի ապրելու խնդիրներին: Էթնիկական փոքրամասնությունները,-ասում է նա,- տեղական կառավարման եւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ լրիվ պասիվ դիրքում էին: Նրանք պարզապես իրենց չեն համարում այս երկրի մասնիկ, եւ լրատվամիջոցները նրանց մասին չեն խոսում, քանի դեռ հարցը չի վերաբերում ընդհարմանը»:

ԲՏԻ-ի Բաքվում տեղի ունեցած միջոցառման ժամանակ լրատվամիջոցների մի մեկնաբան նմանատիպ իրավիճակ մատնանշեց իր երկրում.փոքրամասնությունների խնդիրները չեն լուսաբանվում, մինչեւ որ յուրահատուկ առիթ չի ներկայանում: «Պետք է վարվել ինչպես բժշկության մեջ՝ վարվել այնպես, որ հնարավորին չափ քիչ վնաս պատճառվի»:

Եվրոպական խորհրդի տվյալներով Հայաստանում նույնպես դեռ կարիք կա անդրադառնալու էթնիկական փոքրամասնությունների խնդիրներին՝ կրթությանը, լրատվամիջոցների հասանելիությանը, եւ իրենց լեզուների օգտագործմանը:

Հետկոնֆլիկտային իրականությունում փոքրամասնությունների հետ ապրելը եւ նրանց էլ ապրել թույլ տալն է, ԲՏԻ-ն Հարավային Կովկասի համար կապարում է վերագրում: Թե՛ հիմնական, թե՛ փոքրամասնություններ ներկայացնող ազգաբնակչությունը, որոնց հետ մենք առնչվել ենք, չէին համաձայնվի իմ վրացի գործընկերոջ հետ այն պարզ պատճառով, որ նրանք չեն խորանում հարցի մեջ, այլ միայն մակերեսային կողմ են դիտարկում, որտեղ շատ ավելի կարեւոր խնդիրներ կան, կարեւոր՝ էթնիկական փոքրամասնությունների, եւ, առավել եւս, մնացած անտեսված եւ խոցելի խմբերի խնդիրների հետ համեմատած: Ինչպես եւ Հարավ-Արեւելյան Եվրոպայում՝ էթնիկական փոքրամասնությունների խնդիրը շոշափվում է միայն այն ժամանակ, երբ հարցը կոնֆլիկտի է հասնում:

Մեզանից շատերը, ովքեր ապրել են կոմունիստական ժամանակաշրջանում, միգուցե միամտորեն հավատում էին, որ Բեռլինյան պատի անկումից հետո անհատի նկատմամբ հարգանքը եւ անհատի ինքնության իրավունքը կապահովվի: Մենք հավատում էինք, որ էթնիկական, քաղաքական, կրոնական եւ այլ տարբերությունների նկատմամբ վախն ու նախապաշարումը իրենց տեղը կզիջեն նոր՝ համբերատարության եւ կարեկցանքի ժամանակաշրջանին:

Վերջին տարիների ընթացքում Բալկաններում, Արեւմտյան Եվրոպայի մեծ մասում եւ նախկին Խորհրդային Միության երկրներում իրավիճակը կոմունիստական ժամանակաշրջանի համեմատությամբ բարելավվել է: Բայց մարդու իրավունքների դաժան խախտումները եւ էթնիկական մրցակցությունը դեռ առկա են: Կրոնի, սեռի, սոցիալական վիճակի, տարիքի, ֆիզիկական եւ մտավոր հաշմանդամության, սեռական հակվածության, եւ այլ հիմունքների վրա խտրականությունն ու անհանդուրժողականությունը սպառնում են հետկոմունիստական տարածաշրջանների կայունությանը եւ պարարտ հող են ապահովում նրանց համար, ովքեր ծայրահեղականություն են քարոզում:

Հարավային Կովկասում ԲՏԻ-ի աշխատանքը ցույց է տվել, որ լրատվամիջոցները հաճախ որեւէ տեղեկություն չեն տալիս մարդկանց՝ իրենց կողքին ապրող տարբեր փոքրամասնությունների իրավունքների, ավանդույթների եւ կարիքների մասին: Ընդհակառակը, բոլոր լրագրողները չափազանց հաճախ բացասական կամ էլ խիստ մակերեսային տեղեկություններ են տալիս, ինչը մեծացնում է փոքրամասնությունների հանդեպ կասկածամտությունը եւ վախը:

Բնականաբար, այս խնդիրը միայն զարգացող երկրներում չի հանդիպում: Վերջին տարիների ընթացքում Մեծ Բրիտանիայում, Միացյալ Նահանգներում եւ արեւմտյան այլ երկրներում լրագրողները եւ լրատվամիջոցների ղեկավարները բոլոր տեսակի փոքրամասնությունների խմբերի խնդիրները լուսաբանելու ճանապարհներն են որոնում: Հենց հիմա Մեծ Բրիտանիայում բացահայտ բանավեճ է ընթանում. ավելի շատ բազմաշերտությո՞ւն, թե՞ բրիտանականություն: Կանադայում մարտահրավեր է նետվել այսպես կոչված «Կանադական նվիրվածությանը» (ենթազգային խմբերի պահպանման օրինապահությանը): Նիդեռլանդներում հարցեր են ծագում, թե արդյո՞ք ներգաղթյալները  ընդունում են հոլանդական արժեքները:

Չնայած այսպես կոչված Արեւմուտքը մեծ առաջընթաց է ապրել, բայց  դեռ հաճախ կարելի է հանդիպել էթնիկական ստերեոտիպերի, վիրավորական խոսքերի եւ կողմնակալ լրատվության օրինակների: Բայց իրավիճակը ավելի բարդ է այն երկրներում, որոնք դեռ պայքար են մղում ժողովրդավարության համար: Ժողովրդավարության գաղափարն ինքնին ենթադրում է բոլոր մարդկանց մասնակցությունը եւ ներգրավվածությունը մեկ միասնական պետության կյանքում: Լրատվամիջոցը սոցիալական մի հզոր աղբյուր է, որը կարող է, եւ պետք է մոբիլիզացնի իր ուժերը՝ հաշտեցման գործընթացին աջակցելու համար: Երբ լրագրողներն իրենց առաքելությունը կապարում են բարի կամք ցուցաբերելով եւ սրտանց, նրանք կարող են զարգացող ժողովրդավարական հասարակությունում մեծ դեր խաղալ էթնիկական, կրոնական, եւ այլ համայնքային խմբերի հարաբերությունների ձեւավորման մեջ:

Այս հնարավորությունը գիտակցելով՝ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը մշակել  եւ իրագործել է Բազմաշերտ լրատվության ուսուցման ռեգիոնալ ծրագիր, որի նպատակն է առաջ քաշել եւ հաստատել պրոֆեսիոնալ լրատվության բարձրագույն չափանիշները՝ ստրատեգիական եւ գործնական լրատվություն ուսուցանելով, եւ լրատվամիջոցների հզորությունը մոբիլիզացնել՝ խորացնելով հասարակության պատկերացումները բազմաշերտության, փոքրամասնությունների եւ մարդու իրավունքների մասին:

Մենք հավատում ենք, որ արդարացի, ճշմարիտ, կարեկցող եւ թեմաները խորությամբ ներկայացնող լրատվությունը կարեւոր է այդ գաղափարի տարածմանը նպաստելու, նախապաշարումներին հակառակվելու եւ քաղաքական օրակարգին մարտակոչ անելու համար: Իրականում անհրաժեշտ կապ կա զարգացող ժողովրդավարության եւ բազմաշերտության հարգանքի միջեւ: Հասարակությունը միատարր չէ, եւ ժողովրդավարական բարեփոխումները տեղի չեն ունենա առանց այդ փաստն ընդունե-

լու: Եթե լրագրողի գործունեության հիմնական իմաստը հասարակության բոլոր անդամների կարիքներն ու ցանկություններն արտացոլելն է, ապա նա պետք է գտնի դրան հասնելու ճանապարհներ եւ միջոցներ: Դա պետք է արվի ոչ թե պարզապես արդարության համար, այլ որպես բոլորին՝ քաղաքացի լինելու պատասխանատվությունը հնարավորությունը կիսելու քայլ:

Բազմաշերտ տեղեկատվության կարեւորությունը միայն գերազանց լրատվությունը չէ: Դա նաեւ խելամիտ բիզնես է: Լուսաբանվող թեմաների շրջանակը ընդլայնելով՝ լրատվական կազմակերպությունները կկարողանան լայնացնել մասնատված շուկայի նեղ սահմանները: Նրանք կհայտնաբերեն, որ նախկինում չշոշափվող պոտենցիալ լսարանի նեղ կապերը կարող են էականորեն ամրացնել, մասնավորապես նրանց հետ, ովքեր մինչ այդ իրենց կյանքը կամ նպատակները չեն համարել լրատվամիջոցներում ներկայացվելու արժանի:

Չնայած մեր տարբերություններին, մենք բոլորս էլ այն հասարակության անդամներն ենք, որտեղ աշխատում եւ ապրում ենք: Մենք բոլորս էլ ցանկանում ենք խաղաղ ապրել, եւ ներդրումներ կատարել մեր համայնքներում: Մենք բոլորս էլ ցանկանում ենք հնարավորություն ունենալ մեր երեխաներին կերակրել եւ կրթել: Եվ մենք պետք է սովորենք ընդունել մեր ապշեցուցիչ բազմաշերտությունը՝ որպես ուժի եւ հույսի, զարգացման եւ հետաքրքրության աղբյուր, այլ ոչ թե որպես դաժանության եւ հուսահատության պատճառ:

Որպես լրագրողներ՝ մենք եզակի հնարավորություն ունենք նպաստելու հաշտեցման գործընթացին: Մենք հնարավորություն ունենք մեր հասարակության բոլոր անդամներին օգնել՝ արտահայտելու իրենց կարիքներն ու ցանկությունները: Մենք մեր հասարակության մեջ էթնիկական, ռասայական եվ կրոնական փոքրամասնությունների հանդեպ եղած ստերեոտիպերը ոչնչացնելու հնարավորություն ունենք: Եվ մենք իրավունք ունենք խնդիրների քննարկում սկսելու եւ այդ խնդիրները մատնանշել ճշգրիտ, անկողմնակալ լրագրության օգնությամբ:

Այս ձեռնարկը մեր բազմակողմանի ծրագրի պարզապես մի մասն է, որը պետք է օգնի զարգացող հասարակություններին ավելի լուրջ վերաբերվելու բազմաշերտության եւ «տարբերությունների» խնդիրներին: Սրա առաջնային նպատակն է՝ հնարավորություն տալ լրագրողներին բարելավելու փոքրամասնությունների, միջէթնիկական հարաբերությունների եւ մարդու իրավունքների մասին լրագրությունը: Ձեռնարկից կարող են օգտվել նաեւ խմբագիրները եւ լրատվական կազմակերպությունների տերերը, ովքեր իրենց պատասխանատու են զգում այս խնդիրների ճիշտ լուսաբանման համար:

Բազմաշերտ տեղեկատվության ծրագրի ստեղծվելուց ի վեր մենք մեր գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ տարբեր երկրներում ԲԼ ձեռնարկի ութ տարբերակ ենք լույս ընծայել, այդ թվում՝ անգլերեն լեզվով միջազգային տարբերակը: Սույն ձեռնարկը եւ՛ լրագրողներին, եւ՛ լրատվամիջոցների պատասխանատուներին ավելի շատ կօգնի փորձառու դառնալ՝ այստեղ ընդգրկված փաստերի, ուսումնասիրությունների եւ ԲՏ վերապատրաստման սիստեմատիկ մեթոդակարգի շնորհիվ: Մենք հուսով ենք, որ դուք սա պետքական եւ օգտավետ կհամարեք: Այս ձեռնարկից ԲՏԻ-ին պատկանող ցանկացած նյութեր կարող եք արտատպել եւ օգտվել՝ որքան շատ, այնքան լավ: Խնդրում ենք այս ձեռնարկից նյութեր օգտագործելիս նշեք դրանց աղբյուրները: Շնորհակալություն:

Միլիցա Պեշիչ
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի տնօրեն
2004

# 2. ÀÝ¹Ñ³Ýáõñ ËáñÑáõñ¹Ý»ñ µ³½Ù³ß»ñïáõÃÛ³Ý Ù³ëÇÝ Ññ³å³ñ³ÏáõÙÝ»ñÇ í»ñ³µ»ñÛ³É

# ÀÝ¹Ñ³Ýáõñ Ëá¹Ñáõñ¹Ý»ñ µ³½Ù³ß»ñïáõÃÛ³Ý Ù³ëÇÝ Ññ³å³ñ³ÏáõÙÝ»ñÇ í»ñ³µ»ñÛ³É

Èրագրողների կարեւոր խնդիրներից մեկն իրենցից էապես տարբերվող մարդկանց մասին գրելն է: Հաճախ լրագրողի դերը փվյալ անձի դիրքորոշումները, գաղափարները կամ աշխարհայացքը ճշգրիտ կերպով ներկայացնելն է, նույնիսկ, եթե այդ անձը տարբերվում է իր էթնիկ պատկանելիությամբ, հավատքով, սեռական հակվածությամբ, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակով եւ նույնիսկ այն դեպքում, երբ հիշյալ տարբերությունները շոշափելի են:

Հատկապես այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին Հարավ-Արեւելյան Եվրոպան է, որտեղ սոցիալական եւ էթնիկ միավորները տարանջատվել են ամենատարբեր համայնքների ամբողջությունից, այդ նպատակին հասնելը կարող է դժվարահասանելի լինել, բայց, այնուամենայնիվ՝ ոչ անհնար: Իրենց հասարակությունների ներսում հաշտեցմանն ու առողջացմանը նպաստելու ցանկություն դրսեւորելով՝ լրագրողները կարող են խթանել բազմակողմանիության ըմբռնում եւ հանդուրժողականություն, բայց ո՛չ երբեք կասկած ու թերահավատություն:

## ÊáñÑáõñ¹Ý»ñ ï»Õ»Ï³ïíáõÃÛ³Ý ³ÕµÛáõñÝ»ñ ·ïÝ»Éáõ í»ñ³µ»ñÛ³É

Որոշ մեթոդներ հիմնականում վերաբերում են յուրահատուկ խմբերին կամ տեսակներին: Սակայն հետեւյալ առաջարկությունները հավասարապես կիրառելի են բոլոր խմբերի համար:

* Էթնիկ, սոցիալական, կրոնական կամ այլ փոքրամասնությունների մասին գրելիս չափազանց կարեւոր է այդ խմբի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ անցկացնել եւ վերջիններիս դիրքորոշումների ընդգրկել հոդվածում: Հակառակ դեպքում, նրանք հանդես են գալիս ոչ այնքան իբրեւ այդ հոդվածի «սուբյեկտներ», որքան «կրողներ»: Ոչ մի հոդվածում չպետք է քննադատվի մարդկանց մի ամբողջ խումբ՝ առանց փվյալ խմբի անդամներին ներկայացնելու սեփական տեսակետը եւ մեղադրանքին արձագանքել հնարավորություն ընձեռելու:

* Շրջահայաց եղեք բառեր եւ արտահայտություններ գործածելիս: Դրանք վիրավորելու, ինչպես նաեւ սփոփելու մեծ ուժ ունեն: Լեզվի անփույթ գործածությունը կարող է սրել էթնիկ եւ սոցիալական լարվածությունը, եթե նույնիսկ նման մտադրություն չեք ունեցել: Իրազեկ եղեք, թե փոքրամասնությունների անդամներն ինչպես են նախընտրում, որպեսզի իրենց անվանեն փվյալ լեզվով, որով դուք գրում եք:

* Նյութեր հավաքելիս փորձեք գնահատել բոլոր հնարավոր կանխակալ կարծիքները կամ նախապաշարումները: Իհարկե՝ դուք կարող եք ունենալ ձեր սեփական կարծիքը, սակայն լրագրության առաքելություններից մեկը սեփական եւ հասարակության կանխակալ մտքերի ուսումնասիրությունն է: Որեւէ խմբի կարծիքը մյուսի մասին մեծամասամբ հիմնվում է ոչ թե փաստերի, այլ՝ նախապաշարմունքների վրա, չնայած

դրանք եւս հաճախ ճշմարտության մասնիկ են պարունակում: Օրինակ, որոշ հոմոսեքսուալ տղամարդիկ կանացի են (ինչպես որոշ նորմալ տղամարդիկ), բայց մեծամասնությունը՝ ոչ:

★ Ուշադիր եղեք այնպիսի արտահայտություններ գործածելիս, ինչպիսիք են, օրինակ, «ինչպես բոլորին հայտնի է» կամ «ակնհայտ է, որ»: Նմանատիպ արտահայտություններով լրագրողները սովորաբար ներկայացնում են իրենց սեփական կամ իրենց սոցիալական խմբի կարծիքը եւ այն, ինչը «բոլորին հայտնի է», միանգամայն հավանական է, որ սուտ է կամ հիմնված է նախապաշարմունքի վրա կամ էլ կոնկրետ իրավիճակի փաստերի արտացոլում է:

★ Սոցիալական խմբերի միջեւ կոնֆլիկտներ պարունակող շատ իրավիճակներ բավականին խճճված են: Սովորաբար, երկու կողմերն էլ ունենում են հիմնավոր դժգոհություններ եւ դիրքորոշումներ, իսկ լրագրողի ամենակարեւոր խնդիրներից մեկն այդ դիրքորոշումներն անաչառ եւ պատշաճ ներկայացնելն է: Զգտեք բարդ սոցիալական խնդիրները սեւ-սպիտակի վրա չներկայացնել:

★ Հասարակական տարբեր շերտերից մարդկանց ներգրավումը միայն անաչառության եւ հավասարակշռության պահպանման խնդիր չէ: Այն գործնական տեսանկյունից եւս կարեւոր է լրատվության համար: Շատ լրատվական թողարկումներ սահմանափակում են իրենց հնարավոր լսարանը՝ ներկայացնելով միայն մեկ խմբի դիրքորոշումները: Եթե նրանք փորձեն ընդլայնել շրջանակները՝ լուսաբանելու համար այլ համայնքներին եւս՝ կարող են ընդլայնել իրենց լսարանը:

★ Հոգացեք ներկայացվող իրադարձության համար ենթատեքստ ապահովելու մասին: Էթնիկ, կրոնական եւ սոցիալական առճակատումները չեն կարող ծագել հենց այնպես, ոչնչից: Սովորաբար դրանց եւտեւում երկարատեւ կոնֆլիկտ է ընկած լինում, ընդ որում՝ յուրաքանչյուր կողմ միանգամայն յուրովի է մեկնաբանում անցյալը: Նախքան նյութն անաչառորեն ներկայացնելը, պետք է հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել նախկինում եւ միայն հետո որոշել, թե անցյալում կատարվածի որ մասն է անհրաժեշտ ընդգրկել, որպեսզի ընթերցողները կարողանան ըմբռնել խնդրի ողջ էությունը:

★ Ընտրեք գրելու առանձնահատուկ եղանակ: Մի ամբողջ օր անցկացրեք անտուն մարդու, լեզբուհու կամ փախստականի հետ՝ հասկանալու համար, թե ինչպիսին է իրականում նրանց կյանքը: Ի՞նչ հույսեր եւ անհանգստացնող խնդիրներ ունեն նրանք: Արդյո՞ք նրանք համապատասխանում են ձեր ստերեոտիպերին, թե ոչ: Եթե որեւէ սոցիալական խումբ դեմ է իր անդամներին բնորոշելու համար գործածվող որեւէ կոնկրետ բառի, ապա ուսումնասիրեք այդ բառի ստուգաբանությունը: Ի՞նչ պատկերացումների եւ գաղափարների հետ է զուգակցվում այն: Ինչու՞ են մարդիկ դեմ այդ բառին: Ինչու՞ մյուս սոցիալական խմբի անդամները շարունակում են գործածել այդ բառը:

★ Ինֆորմացիայի աղբյուրներ փնտրեք այլ համայնքներում: Գտեք մարդկանց, ովքեր կցանկանան տեղեկացնել ձեզ, թե ինչի մասին են մտածում, խոսում կամ մտահոգվում իրենց սոցիալական խմբի անդամները: Կապ հաստատեք այդ համայնքները ներկայացնող հասարակական կազմակերպությունների հետ եւ պարզեք, թե նրանց կյանքի որ կողմերը դեռեւս չեն լուսաբանվել: Այդ հասարակական կազմակերպությունների

միջոցով տեղեկություններ հայթայթեք քաղաքական, հասարակական, տնտեսական եւ այլ զարգացումների մասին, ինչ այլ կերպ իմանալ հնարավոր չէ:

* Թերահավատ եղեք: Ստուգեք փաստերը: Դուք չպետք է անմիջապես հավատաք այն ամենին, ինչի մասին լսում եք ձեր կամ այլ համայնքի որեւէ անդամից: Զրուցելիս կամ հարցազրույց վարելիս հիշեք, որ յուրաքանչյուր ոք ունի իր տեսակետն ու սրտույն շահերը: Դուք պետք է հաշվի առնեք նրանց դիրքորոշումները, բայց միեւնույն ժամանակ հավասարակշռեք այն մյուսների ասածների եւ այն ամենի հետ ինչն ինքներդ եք ուսումնասիրել:

* Էթնիկ եւ այլ փոքրամասնություններին մի վերաբերվեք իբրեւ միաձույլ միավորների: Արտաքուստ թվում է, թե համայնքի բոլոր անդամներն ունեն միեւնույն մոտեցումը, սակայն իրականում ամեն ինչ այդքան էլ պարզ չէ: Երբ մի խումբը մյուսին դիտում է որպես գործող միասնական միավոր, դա կարող է մեծապես սրել լարվածությունը՝ խթանելով, որ խմբերը միմյանցից վախենան: Զրուցեք հնարավորինս շատ մարդկանց հետ այլ սոցիալական խմբերից եւ հնարավորինս պարզ եւ մանրակրկիտ ներկայացնել տեսակետների ողջ երանգավորումը:

* Շատ մարդիկ տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ ունեն ընդգծված բացասական վերաբերմունք: Եթե որոշ պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ կամ այլ անձինք կարող են վիրավորական արտահայտություններ գործածել փոքրամասնությունների մասին խոսելիս, ապա դա ամենեւին չի նշանակում, թե դուք իբրեւ լրագրող պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման անպատիվ արտահայտությունները: Անհրաժեշտության դեպքում այդ միտքն այլ խոսքերով արտահայտեք: Եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, ի նկատի ունեցեք, որ տվյալ փոքրամասնության անդամները վիրավորական եւ զայրացնող են համարելու դրանք:

## Êáñ Ñáõñ¹Ý»ñ ³ÛÉ ËÙµ»ñÇ ³Ý¹³ÙÝ»ñÇ Ñ»ï Ñ³ñó³½ñáõÛó ³ÝóÏ³óÝ»Éáõ í»ñ³µ»ñÛ³É

* Եղեք նրբանկատ եւ խոհուն: Հասկացեք, որ ձեզանից տարբերվող մարդիկ կարող են խուճապի մատնվել լրագրողի հետ զրուցելիս, եթե անգամ դա նրանց առաջին հարցազրույցը չէ: Նրանց ավելի անկաշկանդ դարձնելու համար կարող եք խոսակցությունը սկսել ընտանիքի, աշխատանքային կյանքի, հոբբիի եւ այլնի մասին փոքրիկ զրույցով: Դա կօգնի նրանց լիցքաթափվել: Նման մոտեցմամբ կհասկանաք, որ դուք նրանց միայն իբրեւ փոքրամասնության ներկայացուցիչ չեք դիտում, ավելին՝ գիտակցում եք, որ նրանք կյանքի այլ կողմեր եւս ունեն:

* Հավաստիացրեք, որ հասկանում եք հարցազրույց տալու համար նրանց առաջարկած ցանկացած նախնական պայման: Պարզեք, թե արդյոք դեմ չեն լինի, եթե նրանց իրենց անունով դիմեք: Կամ գուցե նրանք չեն առարկի, որ գործածեք իրենց անունը, սակայն կնախընտրեն չնշել իրենց ազգանունը, քաղաքը կամ այլ մանրամասներ, որոնց միջոցով կարող է պարզ դառնալ իրենց ինքնությունը: Ընդառաջեք նրանց խնդրանքներին եւ մի փորձեք համոզել հակառակը:

★ Եթե ունեք հարցազրույց անցկացնելու վայրն ընտրելու հնարավորության, ապա ընտրեք այն տեղը, ուր նրանք ավելի անկաշկանդ կզգան իրենց: Հաճախ ամենալավ փարբերակը մարդկանց հետ իրենց միջավայրում՝ օրինակ իրենց բնակարանում կամ գրասենյակում զրուցելն է, քանի որ հենց այստեղ է, որ նրանք ամբողջովին լիցքաթափվում են: Դա նաեւ կօգնի ձեզ հասկանալ նրանց դիրքորոշումները, քանի որ այդպիսով հնարավորություն կունենաք շփվել նրանց հետ իրենց իսկ միջավայրում եւ հնարավոր է, որ նրանք ավելի բացահայտ խոսեն, ինչը չէին անի պաշտոնական կամ անծանոթ պայմաններում:

★ Թույլ տվեք նրանց յուրովի ներկայացնել իրենց պատմությունը: Եթե նրանք ցանկանում են սկսել 10 տարի առաջ տեղի ունեցածից, թույլ տվեք, նույնիսկ եթե ձեր կարծիքով դա այնքան էլ չի առնչվում ձեզ հետաքրքրող հարցին: Փորձեք բավականաչափ ժամանակ տրամադրել նրանց, որպեսզի ստիպված չլինեք շտապեցնել նրանց անցնելու բուն թեմային: Հաճախ մարդիկ ավելի անկաշկանդ են զգում իրենց համար հարազատ թեմաներից խոսելիս, երբ հանգամանորեն արտահայտվելու հնարավորություն են ունենում:

★ Նախօրոք կազմեք հարցաշար, սակայն օգտագործեք այն որպես ընդհանուր ուղեցույց, այլ ոչ թե խստորեն հետեւեք դրան: Ձեր հարցերն ուղղելիս պետք է ուշադիր լսեք նրանց պատասխանները, որպեսզի հետագայում այլ դիրքորոշումներ եւս ճշտեք: Եղեք ճկուն: Եթե չափից դուրս հավատարիմ եք ձեր սեփական գաղափարներին, որոնց շուրջ պետք է ծավալվի հարցազրույցը, հնարավոր է, որ չկարողանաք որսալ այն պահերը, երբ ձեր զրուցակիցը նշում է տվյալ խնդրի կարեւոր, բայց շատ նուրբ կողմերը, որոնց մասին դուք նախապես տեղյակ չեք եղել:

★ Կարեւոր չէ, թե նրանք որքան տարբեր են ձեզանից. մի խրատեք նրանց ինչպես ապրել: Եթե նրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք ցուցաբերեք, նրանք անմիջապես կզգան եւ հավանաբար ազատ չեն արտահայտվի կամ վստահ չեն լինի, թե դուք նրբանկատ կգտնվեք նրանց փոխանցած տեղեկատվության նկատմամբ: Նրանք ձեզանից ավելի լավ են հասկանում իրենց իրավիճակը, եւ դա է նրանց հետ զրուցելու ձեր շահագրգռվածության պատճառը:

★ Փորձեք բացահայտել տվյալ փոքրամասնության նկատմամբ ձեր ունեցած նախապաշարմունքները եւ կանխակալ կարծիքը, իսկ հետո, հարցազրույց անցկացնելիս կամ պատմությունը կազմելիս, փորձեք մի կողմ դնել այդ գաղափարները: Եթե ստերեոտիպային մոտեցում ունեք այն մարդկանց նկատմամբ, ում մասին պետք է գրեք, սակայն դա չեք գիտակցում, ապա հավանաբար այդ նախապաշարմունքը կդրսեւորվի թե ձեր հարցերում եւ թե գրվածքում:

★ Հիշե՛ք, որ ձեր զրուցակիցները փորձված գիտակներ են: Գիտակը պարզապես բժիշկ կամ գիտնական լինելը չէ. ձեր զրուցակիցները փորձված են սեփական կյանքով: Մի ձեւացրեք, թե գիտեք ինչ են նրանք պատմելու, քանի որ այդպիսով կփակեք անակնկալների ճանապարհը: Դուք ցանկանում եք, որ նրանք ներկայացնեն իրենց կյանքն ու փորձառությունը, իսկ ձեր խնդիրը դրանք լսարանին փոխանցելն է:

* Զրույցի վերջում հարցրեք, թե արդյո՞ք նրանք ճանաչում են այնպիսի մարդկանց, ովքեր եւս կցանկանային հարցազրույց տալ: Դա հետագա հոդվածների աղբյուրներ գտնելու հրաշալի միջոց է: Անշուշտ, որքան դյուրազգաց լինեք նրանց հետ հարցազրույցի ընթացքում, այնքան նրանք ավելի ազատ կզգան մեկ ուրիշին ձեզ առաջարկելիս:

* Ամեն ինչից զատ ուշադիր եղեք ինֆորմացիան օգտագործելիս: Երբ ինչ-որ մեկը համաձայնում է զրուցել ձեզ հետ, դրանով մեծ ծառայություն է մատուցում ձեզ: Նրանց մասին գրեք խնամքով եւ համեմատություններով: Հեշտությամբ կարող եք խրտնեցնել ձեր լսարանին, երբ այլ խմբի պատկանող մարդկանց մասին խոսեք հիմնվելով ստերեոտիպերի վրա, գործածեք զայրացնող կամ նսեմացուցիչ արտահայտություններ, օգտվեք ոչ ստույգ տեղեկություններից կամ այլ կողմնակալ նյութերից: Ի վերջո` ձեր դերն է օգնել լսարանին հասկանալ եւ կիսել ուրիշների ապրումները եւ ոչ թե խրտնեցնել նրանց:

# 3. ¾ÃÝÇÏ³Ï³Ý å³ïÏ³Ý»ÉÇáõÃÛáõÝ

# ¾ÃÝÇÏ ³ Ï ³ Ý å ³ ïÏ ³ Ý»ÉÇáõÃÛáõÝ

¾թնիկական տարաձայնությունները, անշուշտ, իրենց ազդեցությունն ունեցան Հարավ-Արեւելյան Եվրոպայում վերջին տարիներին տեղի ունեցած պատերազմների եւ ընդհարումների վրա:

Չնայած կրոնական եւ այլ գործոնները նույնպես յուղ էին լցնում կրակի վրա, բայց հենց էթնիկ տարբերության ընկալումն էր, որ արթնացրեց դաժանագին եւ ագրեսիվ կրքերը, որոնք էլ իրենց հերթին հանգեցրին 1990-ների ողբերգությանը: Նմանատիպ իրավիճակ է տիրում Հարավային Կովկասում. Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսեթիա եւ Աջարիա:

Դժբախտաբար, լրատվական կազմակերպությունները եւ լրագրողները հաճախ են հայտնվում չափազանց նրբանկատ եւ երբեմն էլ՝ անելանելի իրավիճակներում: Որպես որոշակի էթնիկական համայնքի ներկայացուցիչ, նրանց համար հաճախ դժվար է լրագրողական օբյեկտիվ դիրք պահպանել, անհաղթահարելի քաղաքական եւ սոցիալական ճնշման պատճառով: Եվ ընդհակառակը, նրանք ավելի շատ իրենց պեսնում են որպես որոշակի էթնիկական համայնքի շահերի պաշտպաններ, քան թե իրավիճակի բազմաբարդությունն ու բազմաբաղադրությունը փնտրող դիտորդներ:

Նման հակվածությունը հաճախակի արտացոլվում է լրատվամիջոցներում, երբ ախոյան էթնիկական խմբերը նկարագրվում են որպես արյունարբու, չար եւ ընդհարման միակ մեղավորը: Լրագրողները հիմնովին հավերժացրել են բացասական ստերեոտիպերը՝ անտեսելով ընդհարման առանցքային սոցիալական եւ քաղաքական պատճառները, չեն ջանացել հարցնել որեւէ մեկի կարծիքը, ով մեծամասնության տեսակետը չի կիսում, եւ չեն ներկայացրել իրադարձությունը ավելի լայն իմաստային համատեքստով:

Ահա որոշ կարեւոր առաջարկներ, որոնք կօգնեն լրագրողներին ինչ-որ դերակատարություն ունենալ էթնիկ տարբերությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք եւ ներդաշնակեցում խթանելու հարցում:

* Երբեք հոդված մի գրեք առանց քննարկվող նյութի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ ունեցող մարդկանց հետ հարցազրույց անցկացնելու: Միայն մեկ տեսակետի վրա հիմնված նյութը անպայման կողմնակալ կլինի: Եթե ձեր զրուցակիցները քննադատում են մի ամբողջ էթնիկ խմբի, ապա այդ խմբի ներկայացուցիչներին եւս պետք է հնարավորություն ընձեռնվի արձագանքելու քննադատություններին: Հակառակ դեպքում, լրագրողը պարզապես դառնում է մի կողմի կարծիքը տարածող:

* Մեծ ուշադրություն դարձրեք ձեր բառերի եւ արտահայտությունների ընտրության վրա: Խուսափեք այլ էթնիկ պատկանելիություն ունեցող մարդկանց մասին սովորաբար գործածվող նսեմացուցիչ արտահայտություններից: Եթե ցիտում եք նման արտահայտություններ գործածող մարդկանց, ապա ուղղակիորեն մեջբերում կատարելու փոխարեն փորձեք այդ միտքն այլ խոսքերով արտահայտել: Այստեղ պահանջվում է մեծ նրբանկատություն, քանի որ որոշ բառեր կարող են մի լեզվով վիրավորական հըն-

չել, իսկ մյուսով՝ ոչ: Այնպես որ՝ իբրեւ լրագրող դուք պետք է հասկանաք բոլոր նրբերանգները: Եթե վստահ չեք, թե տվյալ արտահայտությունը նսեմացուցիչ է համարվում կամ ոչ, հարցրեք, թե ինչպես են ընկալում դա այն մարդիկ, ում ուղղորդված են նմանատիպ արտահայտությունները:

* Ավելի լավ է ինֆորմացիայի աղբյուրներ գտնել ոչ թե ձեր, այլ՝ ուրիշ էթնիկ խմբերում: Կանչեք նրանց շահերը ներկայացնող ՀԿ-ներին (հասարակական կազմակերպություններ) եւ խնդրեք հանդիպել նրանց: Հարցրեք նրանց գործերի, հույսերի, սովորությունների  եւ հոգսերի մասին: Որոշ ժամանակ անցկացրեք նրանց համար հավաքատեղի հանդիսացող մշակութային եւ հասարակական ինստիտուտներում՝ համայնքային կենտրոններում, դպրոցներում, թատրոններում եւ այլուր, ինչպես նաեւ զրուցեք հնարավորինս շատ մարդկանց հետ: Նրանց տեսակետը հասկանալու ամենալավ տարբերակը իրենց միջավայր ներքաշվելն է, որքան էլ դա սկզբնական շրջանում անհարմար լինի:

* Ջննեք ձեր ներաշխարհը եւ բացահայտեք ձեր նախապաշարմունքները: Գիտակցաբար թե ոչ, յուրաքանչյուր ոք կանխակալ կարծիք ունի այլ սոցիալական խմբերի անդամների մասին, ինչը լիովին հասկանալի է: Լրագրության արդյունավետությունը եւ պատշաճությունը կախված է այդ կանխակալ կարծիքները բացահայտելու եւ մի կողմ դնելու կարողությունից: Իրականում սա է իրենց կյանքի եւ ապրումների մասին պատմող մարդկանց ունկնդրելու միակ տարբերակը:

* Համոզվեք, որ դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում եք համատեքստով, այլ ոչ թե ուղղակի կենտրոնանում այն բանի վրա, թե ինչ է կատարվել: Ոչինչ անսպասելիորեն չի պատահում: Երբ էթնիկ վեճեր եւ կոնֆլիկտներ են ծագում, լրագրողները շատ հաճախ յուրաքանչյուր միջադեպ լուսաբանում են մեկուսի: Բայց սովորաբար երկու կողմերը յուրովի են մեկնաբանում ստեղծված իրավիճակը: Նյութն անաչառորեն մատուցելու համար պետք է ըմբռնեք այդ պատմությունը, ինչպես նաեւ՝ ներկայացնեք համապատասխան դրդապատճառները, որպեսզի ձեր լսարանը կարողանա ընկալել խճճված խնդրի բուն էությունը:

* Բացի իբրեւ առաջնորդ ներկայացող անձանցից, զրուցեք նաեւ երկու կողմերի շարքային անդամների հետ: Հաճախ ժամանակակից տղամարդիկ, կանայք եւ երեխաները բոլորովին այլ կարծիք են ունենում կատարվածի մասին, քան նրանք, ովքեր իրենց իրավունք են վերապահում խոսել կամ գործել ողջ խմբի անունից: Ի՞նչ են նրանք իրականում ցանկանում: Հարցրեք, թե արդյո՞ք նրանց անունից իրականացվող գործողություններն իրենց կարծիքով նպատակին հասնելու ամենաարդյունավետ եղանակներն են:

* Ձեր ուշադրությունը կենտրոնացրեք էթնիկ բախումների ոչ միայն տեսանելի եւ ակնառու արդյունքների, այլ նաեւ առավել քիչ ակնհայտ հետեւանքների վրա: Հոգեբանական բնույթի ինչպիսի՞ տեւական տրավմա է առաջացել: Ինչպիսի՞ն են կոնֆլիկտի հասարակական ու տնտեսական հետեւանքները: Ինչպիսի՞ եզրակացություններ կարելի է անել ապագայի համար՝ ելնելով այսօրվա կատարվածից:

* Երկու կողմերի տեսակետները ներկայացնելիս՝ փորձեք նախ գտնել դրանց ընդհանրությունները եւ ապա միայն՝ լուսաբանել: Չափազանց հեշտ է գտնել մարդկանց,

ովքեր բացասաբար կարծիք են հայտնում այլ խմբերի անդամների մասին: Սակայն լրագրողը, ով ավելի խորությամբ եւ բազմակողմանիորեն է հետաքննում, կարող է բացահայտել, որ երկու կողմերի նպատակներն իրականում, ի վերջո, այնքան էլ տարբեր չեն, որքան մարդիկ իրենք են կարծում:

★ Փորձեք կենտրոնանալ ինչպես հակամարտող կողմերի զգացմունքների, այնպես էլ՝ ընթացիկ իրադարձությունների վրա: Ի վերջո, բոլորս էլ մարդկային էակներ ենք, եւ ցանկացած սոցիալական խմբի անդամների համար հաճախ ավելի հեշտ է կիսել քաղաքացիների հոգսերն ու վշտերը, քան՝ ընդունել գեներալների ու քաղաքական գործիչների զայրացած կամ հարձակողական հայտարարությունները: Շատ մարդիկ ունակ են կիսել երեխայի կամ ծնողի մահվան վիշտը, օջախի կամ հույսի կորուստը:

★ Մի՛ մտածեք, թե յուրաքանչյուր կողմ ապրում է մեկ միաձույլ իրականությամբ եւ որ բոլորը միակարծիք են: Յուրաքանչյուր համայնքում կան մեծամասնությանը չհարող այլախոհներ: Հնարավոր է, որ որոշ մարդիկ չեն արտահայտվում՝ վախենալով հարեւանների, քաղաքական գործիչների կամ այլոց ճնշումներից: Սակայն պետք է միշտ գիտակցել, որ նույնիսկ թվացյալ միախոհ հասարակություններում առկա են տարակարծիք խմբավորումներ, եւ պետք է ջանալ հայտնաբերել նրանց ու ներկայացնել նրանց մոտեցումները:

★ Փորձեք պատշաճ կերպով նկարագրել իրադարձությունները եւ վկայակոչել տեղեկատվության ձեր աղբյուրները՝ փոխանակ մեջբերելու այնպիսի ածականներ, ինչպիսիք են՝ «վայրագ», «անմարդկային» եւ «բարբարոս» բառերը: Լրագրողները հաճախ դիմում են նմանատիպ արտահայտությունների օգնությանը՝ կողմերից մեկին դատափետելով եւ միտումնավոր, կամ գուցե՝ ոչ, մյուս կողմին զրգռելով եւ այդպիսով բռնությունները շարունակական դարձնելով: Նման կերպ վարվելով՝ նրանք իրականացնում են հակամարտության կողմերից միայն մեկի նպատակները եւ տարածում վերջինիս տեսակետները:

★ Մի՛ մոռացեք, որ պետք է թերահավատ լինեք: Հակամարտության կողմերից եւ ոչ մեկին թույլ մի տվեք օգտագործել կամ հմտորեն կառավարել ձեզ: Հնարավորինս ստուգեք յուրաքանչյուր փաստ: Եթե դուք լիովին վստահ չեք որեւէ փաստի ճշգրիտ լինելուն, ապա կամ շրջանցեք այդ տեղեկատվությունը, կամ էլ այն վերագրեք համապատասխան աղբյուրին, բայց երբեք մի ներկայացրեք այն իբրեւ ճշմարտություն: Ձեր լսածը գնահատելիս հաշվի առեք անցյալում տվյալ աղբյուրի վստահելիությունը: Լսարանին հնարավորինս շատ մանրամասներ հայտնեք ձեր տեղեկատուի եւ նրա հիմնավորումների մասին, որպեսզի մարդիկ կարողանան ինքնուրույն դատել, թե որքանո՞վ են դրանք ստույգ:

★ Անտեսեք իշխանությունների եւ այլոց կողմից ենթադրվող բավականաչափ «օրինապահություն» կամ «ազգային միակարծություն» հանդես բերելու կոչերը: Ձեր դերը ռասիստական ստերեոտիպերի հաստատումը, որպես կողմերից մեկի ջատագով ու քարոզիչ հանդիսանալը կամ չհիմնավորված ասեկոսների տարածումը չէ, ինչը կարող է հանգեցնել ծայրահեղական գործողությունների: Ձեր օրինապահությունը եւ հավասարակշռվածությունը բխում են ձեր լսարանի շահերից, որի համար դուք կոչված եք հավաքագրելու հնարավորինս հիմնավոր եւ ճշգրիտ տեղեկություններ:

* Շատ մարդիկ տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ ունեն ընդգծված բացասական վերաբերմունք: Եթե, որ որոշ պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ կամ այլոք կարող են վիրավորական արտահայտություններ գործածել փոքրամասնությունների մասին խոսելիս, ապա դա ամենեւին չի նշանակում, թե դուք իբրեւ լրագրող պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման անպատիվ արտահայտությունները: Անհրաժեշտության դեպքում այդ միտքն այլ խոսքերով արտահայտեք: Եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, ի նկատի ունեցեք, որ տվյալ փոքրամասնության անդամները վիրավորական եւ զայրացնող են համարելու դրանք:

# ö ³ ëï»ñÇ áõëáõÙÝ ³ ëÇñáõÃÛáõÝ

Հետեւյալ բաժիններում փաստերի ուսումնասիրությունները ներկայացնում են Հարավային Կովկասում, Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի կողմից հավաքագրված հոդվածների վերլուծությունը: Հոդվածներն ուղեկցվում են մեկնաբանություններով, որոնք լուսաբանում են արդյունավետ կամ վիճահարույց լրագրողական պրակտիկան եւ առաջարկում բազմաշերտության վերաբերյալ հրապարակումների որակի բարելավման մոտեցումներ կամ ուղեցույցներ:

Այստեղ նկարագրված իրադարձությունները չափազանց անհստակ են  և շփոթեցուցիչ՝ հիմնված լինելով գնչուների մասին այն կարծրացած պատկերացումների վրա, թե նրանք գող և վրեժխնդիր մարդիկ են: Ըստ ամենայնի, նույնիսկ ոչ մի փորձ էլ չի արվել խոսել այդ ընդհարմանը մասնակցած գնչուներից որևէ մեկի հետ կամ էլ իրադարձության նախապատմությունը ներկայացնել (էթնիկ լարվածությունը և հակառակ կողմի ագրեսիվ գործողությունները):

## ¶Ýãáõ Ý»ñÁ Ï ³ óÇÝÝ»ñáí Ñ ³ ñÓ ³ Ï í áõÙ »Ý áëïÇÏ ³ ÝáõÃÛ ³ Ý ½ÇÝí ³ Í áõÅ»ñÇ íñ ³

Իրադարձությունն իբրև հեղափոխության նմանվող զանգվածային ընդհարում ներկայացնելը չափազանց ահաբեկիչ է, հատկապես այն դեպքում, որ միջադեպին մասնակցել են մի քանի փասնյակ գնչուներ, և ոչ թե հարյուրավոր կամ հազարավոր: Տվյալ բառակապակցությունը գրվել է այդ կերպ, որպեսզի վախ փարածի, և ոչ թե ընթերցողների համար լուսաբանի , թե ինչ է իրականում տեղի ունեցել:

Օրեքշաբթի երեկոյան Բոտեւգրադի շրջակա անտառներում տեղի ունեցավ հեղափոխության նմանվող զանգվածային ընդհարում:

Երբ նրանք հասկացան, որ իրենց ընկերներն ու բարեկամները հետապնդվում և ձերբակալվում էին ապօրինի ծառահատման և ծառերի գողության համար, երեկոյան ժամը 8.30-ին, կացիններով զինված 50-ից 60 գնչուներ հարձակվեցին անտառապահների և ոստիկանության աշխատակիցների վրա:

Ոստիկանության զինված ուժերը ժամանեցին դեպքի վայր և օդ կրակելով, փորձեցին խոչընդոտել գնչուներին: Սակայն վերջիններս ոչ միայն չդադարեցրին իրենց գործողությունները, այլև սկսեցին ոստիկանների աչքի առաջ հարվածներ հասցնել ոստիկանական մեքենայի ավանդողներին:

Վերնագիրն անմիջապես ստեղծում է սարսափազդու մի տպավորություն. կացիններով վազվզող գնչուներ՝ առանց որևիցե դրդապատճառի ոստիկանության վրա հարձակվող: Իրականությունը, անշուշտ, ավելի բարդ և բազմաշերտ է:

Արդյո՞ք բոլորն էին զինված կացիններով: Պատմությունից կարելի է ենթադրել, որ դա հենց այդպես է եղել: Եթե այո, ապա կարելի ենթադրել, որ օրինապահներից մի քանիսը պետք է սպանված լինեն, կամ էլ լուրջ վնասվածքներ ստացած: Բայց, քանի որ լրագրողը չի պատմում վնասվածք ստացած որևէ մի կոնկրետ մարդու մասին, կարելի է ենթադրել, որ միջադեպը պակաս լուրջ բնույթ է կրել, քան ներկայացվել է: Գնչուների գործողությունների դրդապատճառներն էլ են անհասկանալի: Ովքե՞ր եին կոնկրետ ձերբակալվել: Ի՞նչ էին նրանք իրականում կատարել: Ո՞ր օրենքն էին նրանք խախտել: Որտե՞ղ էին նրանց ձերբակալել: Արդյո՞ք նրանց բանտ էին տարել: Ինչպե՞ս պատահեց, որ գնչուները միանգամից ամբողջ խմբով իմացան նման բան տեղի ունենալու մասին:

Արդյո՞ք այս նշանակում է, որ նրանք հարձակվեցին ոչ թե օրինապահներ-

Սա կարող է եւ ճիշտ է, բայց թվում է, թե բարդ իրականությունը չափազանց պարզեցվում է: Արդյո՞ք բոլոր 26 աշխատակիցներն են հրաժարական փվել: Արդյո՞ք լրագրողը բոլոր 26-ից էլ լսել է, որ նրանք հեռանում են աշխատանքից՝ գնչուների վրեժխնդրությունից վախենալով, թե՞ դա նրա սեփական ենթադրությունն է, կամ էլ երկրորդ ձեռքի տեղեկություն, որի աղբյուրը պետք է նշվի: Արդյո՞ք իրական սպառնալիքներ են հնչել, թե՞ նրանց վախը պարզապես գնչուների վերաբերյալ գոյություն ունեցող պատկերացումների արդյունք է: Ինչու՞ լրագրողը մեջ չի բերում մեկնաբանություններ հենց աշխատողներից եւ գնչուներից մեկից: Առանց այս ամենի պատմությունը չափազանց շատ անհասկանալի կողմեր ունի, որպեսզի միջադեպի վստահելի նկարագիր համարվի:

Այժմ քաղաքի անտառապահների աշխատակազմը խուճապի մեջ է: Բոլոր 26 աշխատակիցներն էլ աշխատանքից ազատվելու դիմումներ են ներկայացրել: Նրանք իրենց այդ քայլը բացատրում են նրանով, որ վախենում են գնչուների վրեժխնդրությունից:

*«24 Ժամ»*,
Սոֆիա, օգոստոսի 29, 2002 թ.

րի, այլ նրանց մեքենաների վրա: Ոստիկանները պարզապես կանգնե՞լ էին, եւ դիտու՞մ էին, թե ինչպես են իրենց անվադողերը կտրտում: Ինչպե՞ս ավարտվեց միջադեպը:

Վերնագիրը, որը տպագրված է թերթի առաջին էջի վերեւի մասում, իբրեւ փաստ է ներկայացնում մի բան, որը դեռեւս միայն կասկածվում է եւ չի ապացուցվել: Տպավորություն է ստեղծվում, եթե գնչուների մի կամ մի քանի ավազակախմբեր են կատարել այս կողոպուտները, բայց, ըստ երեւույթին, ոչ ոք չի ձերբակալվել այդ մեղադրանքով, առավել եւս ոչ ոք չի դատապարտվել դրա համար: «Ավազակներ» եւ «կողոպտում» վիրավորական եւ չափազանցված բառերի օգտագործումը միայն ավելացնում է գնչուների նկատմամբ նախապաշարումը, եւ դա այն դեպքում, որ, հավանաբար, նրանց մեծամասնությունը նման գործունեություն չի ծավալում:

## §¶Ýãáõ¦ ³í³½³ÏÝ»ñÁ ÏáÕáåïáõÙ »Ý ²ñ»õÙáõïùÁ

²րեւելաեվրոպական ծագում ունեցող մի ավազակախումբ, որը շփոթեցրել էր իր զոհերին՝ անըմբռնելի խոսակցություններով ձեւացնելով, թե գնումներ է կատարում, փախուստի է դիմել 10.000 եվրո ավարով՝ որպես վերջին ամսվա ընթացքում երկրի արեւմտյան եւ կենտրոնական մասերում մի շարք կողոպուտների արդյունք:

Անցած հինգշաբթի սրանց թիրախը դարձավ Կլերմորիսի մոտակայքում գտնվող Բրիքենսի փոստի բաժանմունքը, որտեղ ավազակները՝ վաճառողուհու ուշադրությունը երեխայի օգնությամբ շեղելով, գտել են սեյֆի բանալիները եւ գողացել մի մեծ գումար:

Ըստ նկարագրությունների՝ ավազակախումբը բաղկացած է թուխ մաշկով երկու տղամարդուց եւ չորս կանանցից, որոնց հագուստներից կարելի ենթադրել, թե սրանք արեւելաեվրոպացի են, միգուցե ռումինական գնչուներ:

Բրիքենսում կատարած հարձակման ժամանակ, կանայք կանչել են վաճառողուհուն իր աշխատասեղանից հեռու՝ ձեւացնելով, թե կերակուր են փնտրում իրենցից մեկի գրկին եղած երեխայի համար:

Գումարի բացակայությունը նկատել են այդ խմբի գնալուց հետո:

Ավազակախումբը նույնատիպ տակտիկա է օգտագործել վերջի ամիսներին կատարած մի քանի կողոպուտների ժամանակ: Հունիսի 11-ին սրանց զոհն է դարձել նաեւ Մայոյի արեւելքից պարեց մի խանութպան, որի ննջասենյակը կողոպտել են այն ընթացքում, երբ նա փորձում էր սպասարկել սրանց:

Սա տպավորություն է ստեղծում, թե անըմբռնելի խոսակցությունները գողության տակտիկա են եղել: Բայց եթե այդ մարդիկ օտարազգի են, անշուշտ, նրանց լեզուն անհասկանալի կլիներ վերջինս չիմացողների համար:

Կրկին, իբրեւ փաստ են պնդում այն, ինչ դեռ միայն կասկածվում է: Շատ կարեւոր է, որ լրագրողները հստակորեն այդ երկուսը իրարից տարբերակեն:

Ո՞վ է տվել նման տեղեկություններ: Հանցագործությունը նկարագրելիս կարեւոր է տեղեկությունների աղբյուրը նշել: Սա վկայի ցուցմունքնե՞ր են, թե՞ ոստիկանության կարծիքն է:

Ի՞նչ տեսակի հագուստի մասին է խոսում լրագրողը: Չափազանց կարեւոր է հստակ մանրամասներ նշել: Ամբողջ հոդվածում սա միակ նախադասությունն է, որը հաստատում է առաջին պարբերությունում հայտարարված այն փաստը, թե գողերը արեւելաեվրոպացի են: Հարկ է նաեւ նշել այն, որ չնայած վերնագրում գողերը գնչուներ են ներկայացված, այստեղ մենք հայտնաբերում ենք, որ դա միայն ենթադրություն է, եւ ոչ թե հաստատված փաստ: Հոդվածի միայն այս մասում է, որ գողերի էթնիկական պատկանելիությունը ներկայացվում է ոչ թե որպես փաստ, այլ փաստերից եզրակացություն:

Կրկին, ի՞նչ աղբյուրից են ստացվել այս տեղեկությունները:

80-նն անց այս կինը *«Քոննաութ Թելեգրաֆ»-ին պատմել է*. «խմբում հինգ կին էին: Նրանք բոլորը բլբլում էին՝ ցուցափեղկում ներկայացված իրերին ցույց տալով: Նրանք խմելու շոկոլադ էին ցանկանում: Դա շատ վախեցնող էր: Ես փորձում էի նրանց բացատրել, որ կմատուցեմ այն նրանց հերթով»:

Խանութպանը հայտնաբերեց գումարի կորուստը միայն որոշ ժամանակ անց, երբ գնաց ննջասենյակ, որ գումար վերցնի՝ առաքիչին վճարելու համար:

Գարդայները[1] ասում են, որ վերջին ամիսների ընթացքում մի շարք նմանտիպ կողոպուտներ են կատարվել երկրի արեւմտյան եւ կենտրոնական մասերում, իսկ մեկ անգամ էլ՝ Բելինրոբի մոտ գտնվող «Նիլ»-ում, կողոպուտը ձախողվել է:

Երեքշաբթի օրը մի ավագ սպա, որն ընդգրկված է հետաքննական խմբում, նշեց. «Ես կասեի, որ այս ավազակախմբերը սպառնալիք են դարձել»:

Սապթ Քեն Բռենանը՝ Սուինֆորդ Գարդա շրջանի ղեկավարը, ասաց, որ գարդայները հստակ կասկածներ ունեն այս միջադեպերի վերաբերյալ:

Սապթ Բռենանի կարծիքով տվյալ տարածաշրջանում մի քանի ավազակախմբեր են գործում:

«Նմանատիպ հանցագործությունները ամեն տեղ էլ տարածված են: Չնայած բռնության կամ հրազենի օգտագործման ոչ մի դեպք չի եղել, բայց այս հանցագործությունները քամնելի են, եւ զոհերին պարզ վնաս են պատճառել»,- ավելացրեց նա:

*«Քոննաութ Թելեգրաֆ»*, Քասթլբար, Մայոյի կոմսություն, Իռլանդիա, 7 հունիսի, 2004թ.

Հանկարծակի պարզվում է, որ ոչ թե մի, այլ մի քանի ավազակախումբ կա: Դրանք բոլո՞րը գնչուների խմբեր են: Թե՞ լրագրողը իրար է խառնում մի քանի կողոպուտներ, որոնք միմիանց հետ ոչ մի ուրիշ կապ չունեն, բացի կողոպուտ լինելուց: Հոդվածում սրանք բոլորը միասին մի կույտի մեջ են հայտնվել, եւ տպավորություն է ստեղծվում, թե գնչուները պատասխանատու են բոլոր դեպքերի համար: Միգուցե իրականում այդպես է, բայց լրագրողը այդպիսի եզրակացության հանգելու համար չափազանց անբավարար վկայություններ է բերում:

1 Գարդայները իռլանդական ոստիկաններն են.

Սա մի ակնառու օրինակ է, որը ցույց է տալիս, թե ինչքան քիչ  կարեւորություն ունի մեկի ազգությունը բացահայտելը՝ ընթերցողներին ճշգրիտ տեղեկություններ տալու համար: Այն պնդումը, թե հարձակվողը հունգարացի է կարծես թե շատ մեծ կապ չունի այն փաստի հետ, թե ինչ է տեղի ունեցել: Գուցենու՝ ինչ-որ կապ կա, բայց լրագրողը ավելի շատ տեղեկություններ պետք է ներկայացներ՝ փաստը ապացուցելու համար: Որպես այդպիսին, հոդվածը օտարազգիների եւ հիմնականում՝ հունազարացիների հանդեպ կրքեր բորբոքելու ազդեցություն է զործում:

## ¶Çß»ñ³ÛÇÝ ÑÛáõñÁ ¹³Ý³Ï³Ñ³ñ»É ¿ ï³ÝïÇñáçÁ

Ülորիդսդորֆ-Ֆլորիդսդորֆցի 50-ամյա Փիթեր Ֆ.-ն վտանգավոր ծանոթություն հաստատեց Ֆրանց-Ջոնասի հրապարակի ստորգետնյա գնացքի կանգառում: Նա իր տուն հրավիրեց 28-ամյա մի հունգարացու՝ Փիթեր Ն.-ին: Շաբաթ երեկոյան այնտեղ վեճ է ծագել, ինցից հետո հունգարացին դանակահարել է տանտիրոջը, որը հաջողացրել է փախչել հարեւանի տուն: Հունգարացուն ձերբակալել են նույն բնակարանում:

*«Կուրյեր»,* Վիեննա,
Ավստրիա, 18 մայիսի, 2004թ.

Այս վերնագիրը փաստերից առաջ է ընկնում: Առանց դատավարության կամ էլ խոստովանանքի մենք չգիտենք, թե ինչ է իրականում տեղի ունեցել: Միգուցե Փիթեր Ֆ.-ն հարձակվել է իր հյուրի վրա եւ նա ստիպված է եղել պաշտպանվե՞լ: Մենք ոչ մի տեղեկություն չունենք, թե քաշքշուկի պատճառը ո՞րն է եղել, չգիտենք իրադարձությունների հաջորդականությունը: Մենք չգիտենք նաեւ, թե որտեղից է լրագրողը տեղեկություններ քաղել: Փիթեր Ֆ.-ի՞ց: Ոստիկանությունի՞ց:

Անհասկանալի է նաեւ, թե արդյո՞ք լրագրողը նկատի ունի, որ միասեռական կապ է տեղի ունենցել: Եթե Փիթեր Ֆ.-ն կամ ոստիկանությունը պնդում են, որ նման բան է տեղի ունեցել, այդ փաստը ճշտել է պետք: Եթե լրագրողը պարզապես գրպարտում է, դա արդարացի չէ: Միգուցե այդ տղամարդը պարզապես փորձում էր օգնել դժբախտին: Միգուցե նա պարզապես աշխատա՞նք էր առաջարկում: Մենք դա չգիտենք, որովհետեւ այս կարճ հոդվածը մեզ գրեթե ոչինչ չի պատմում:

Այս պատմությունն, անշուշտ, կարեւոր եւ էմոցիոնալ խնդիր է ներկայացնում՝ հայերի հանդեպ վերաբերմունքը Թուրքիայում: Այնուամենայնիվ, վերնագիրը մի քիչ շփոթեցնող է: Պատմությունից մի նախադասություն է վերցվել, որն այնտեղ հարցի կերպ է ձեւակերպված, եւ փոխվել ու դարձվել է եզրակացություն՝ չակերտները հանելով: Նման ձեւով այն դարձել է ավելի շուտ փաստի հայտարարություն, քան թե հռետորական հարց՝ արտահայտված անհատի կողմից: Անշուշտ, փաստ է, որ հայ լինելը Թուրքիայում հանցանք չէ: Բայց Քարոլին Ջամգեզը կարծում է, որ այդպես է, եւ այդ տարբերությունը կորչում է վերնագրի մեջ: Սա կարող է թվալ շատ ծայրահեղ մոտեցում, բայց իրականում բազմաթիվ մարդիկ, միայն վերնագիրը  կարդալով, բացարձակապես սխալ տպավորություն կստանան: Փաստերը արդեն ինքնին բավականին անհանգստացնող են: Չափազանցնելու կամ դրամայի վերածելու կարիք չկա:

## Ð³Û ÉÇÝ»ÉÁ Ñ³Ýó³·áñÍáõÃÛáõÝ ¿ ÂáõñùÇ³ÛáõÙ

Þարունակելով անդրադառնալ Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման թեմային, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի տնօրեն եւ հրապարակիչ Հարութ Սասունյանը սեպտեմբերի 4-ի իր սյունակում գրում է.

«Փաստ է, որ հայ, ասորի, հույն, հրեա եւ քուրդ փոքրամասնությունները Թուրքիայում ոչ միայն զրկված են իրենց ամենատարրական քաղաքացիական իրավունքներից, այլեւ մշտական վախի մեջ են ապրում՝ չհամարձակվելով բարձրաձայն խոսել իրենց ճնշված վիճակի մասին: Նույն վախի պայմաններում են ապրում նաեւ մարդու իրավունքների պաշտպանությանը զինվորագրված մի խումբ թուրք ակտիվիստներ, որոնք իրենց կյանքի գնով համարձակվում են բացահայտել ոտնահարումներն ու հետապնդումները: Հակառակ Եվրամիությանն անդամակցելու նպատակով թուրք կառավարության տված խոստումներին, այդ թուրքերից շատերն այժմ գտնվում են բանտերում:

Հազվադեպ երեւույթ է, որ փոքրամասնության ներկայացուցիչներից մեկն անշրջահայաց լինելով դատապարտի իրեն հասցված հաճախակի հարձակումները: Այդպիսի խիզախ ոգու տեր մի անձնավորություն է Քարոլին Ջամգյոզ անունով մի հայ դեղագործ Բախչեսարայում (Վանի շրջանում), որին, հակառակ իր թուրքացված ազգանվանը, շարունակում է հետապնդել թուրքական կառավարությունը պարզապես ազգությամբ հայ լինելու պատճառով: Քարոլին Ջամգյոզը թուրքական լրատվամիջոցներին հայտնել է, որ իր հայ նախնիների պատճառով երկար տարիներ հետապնդվել է կառավարական պաշտոնյաների կողմից:

Քանի որ թերթը, ըստ ամենայնի, մի ուրիշ թերթից է այս հոդվածը վերատպել, լավ կլիներ, որ մի քանի փաստեր նախորդ հրապարակումից մեջ բերվեին, որպեսզի դա օգներ ընթերցողներին ընկալել տեղեկությունը: Կոնկրետ որտե՞ղ է Կալիֆոռնիայում այն հրապարակվել: Որտեղի՞ց է Սասունյանը այդ տեղեկությունը գտել: Նա անձա՞մբ է այդ կնոջ հետ հարցազրույց անցկացրել: Թե՞ դա երկրորդ կամ էլ երրորդ ձեռքի տեղեկություններ են:

Դա տեղի է ունենում հատկապես իր հայ նախնիների թե՞ իր քաղաքական գործունեության պատճառով, ինչպես դա երեւում է հաջորդ նախադասությունից: Երկու պատճառներն էլ անարդար են, բայց չափազանց իրարից տարբեր, եւ լրագրողը պետք է մատնանշեր այդ:

Նախքան Բախչեսարայում հաստատվելը քաղաքից քաղաք է տեղափոխվել փախչելու համար անօրինական կազմակերպությունների պատկանելու իրեն ուղղված մեղադրանքներից: Նույնիսկ բանտարկվել է:

«Թուրքիայում բոլոր նրանք, ովքեր թուրք չեն, մշտապես հետապնդվում են, իսկ եթե դու հայ ես, ընդհանրապես իրավունք չունես ապրելու», ասել է նա, շարունակելով. «Տարիներ շարունակ շրջել եմ երկրով մեկ: Միշտ էլ ինձ հետապնդել են հայ նախնիներիս պատճառով: Բախչեսարայում, որտեղ դեղատուն բաց արեցի, հետապնդումները չդադարեցին: Այստեղ ծառայող զինվորական սպաներից շատերը «Միլլի հարեքեթ» կուսակցության համակիրներ են: Հրամանատարները գյուղացիներին եւ այլ պաշտոնյաներին զգուշացնում են. «Եթե Քարոլինի դեղատնից գնումներ կատարեք, ձեր զենքը վերցնելու ենք եւ ձեզ վրա կրակելու ենք»: Հակառակ, որ կառավարությունը թույլատրել է ինձ դեղորայք վաճառել, ոչ ոք չի համարձակվում դեղ գնել իմ դեղատնից: Հաճախորդներին անընդհատ սպառնում են: Նույնիսկ խանգարում են, արգելքներ են ստեղծում, որ դեղորայքի նոր առաքումները չհասնեն ինձ»:

Լրագրողներին նա պատմել է, որ Կարսում աշխատելիս նրան մեղադրել են **PKK**[1] ի անդամ լինելու մեջ եւ բանտարկել 3,5 ամիս:

Նա Կարս է եկել Ստամբուլում հետապնդումներից փախչելու միտումով: Իսկ բանտից ազատվելուց հետո ապրել է Էրզրումում եւ Էրզինջանում (Երզնկա), որտեղ դարձյալ 3,5 ամսով բանտարկվել է:

Ստամբուլում աշխատելիս, իր դեղատան առաջ մշտապես երկու ոստիկանական մեքենաներ օրական 24 ժամ հսկողություն են իրականացրել: Նրան մեղադրել են ահաբեկչական կազմակերպության անդամ լինելու մեջ: Ի վերջո, նրանց հաջողվել է սնանկացնել Քարոլինին:

Նա իր փխուր ոդիսականի շարադրանքն ավարտել է հարց տալով՝ արդյոք հանցագործությո՞ւն է Թուրքիայում հայ լինելը:

Հաշվի առնելով թուրքական վարչակարգի գազանաբարո բնույթը, Քարոլին Ջամգյոզի տագնապներն, ըստ երեւույթին, նոր են սկսվելու,

Սրանք լուրջ մեղադրանքներ են, բայց եթե նույնիսկ ընդունենք, որ ճշմարիտ են, թուրք պաշտոնական պետք է հնարավորություն ստանան պատասխան տալ սրանց: Ինչ ահավոր փորձություններով էլ նա անցած լինի: Խնդիրն այն է, որ հայերը Թուրքիայում ընդհանրապես ապրելու իրավունք չունեն, չէ՞ որ այդքան հայեր են այնտեղ ապրում: Նրա հալածանքների պատմությունն իրո՞ք է: Ի՞նչ է իրականում տեղի ունեցել: Ինչպե՞ս էր նա դեղատուն հիմնել: Եթե այդքան շատ էին իրեն անհանգստացնում, ուրեմն որտեղի՞ց նա հաճախորդներ ուներ: Զինվորականները իսկապե՞ս սպառնացել էին կրակել նրանց վրա,ով դեղ կգներ իր մոտից: Ի՞նչ են թուրքերը ասում իր մեղադրանքների վերաբերյալ: ◄ Լրագրողին պատիվ չի բերում, որ բաց է թողնում մանրամասնություններ, որոնք պատմությունը կիմաստավորեին:

◄ Ինչպե՞ս է դա պատահել: Ճի՞շտ է դա: Եթե ոչ, ապա ի՞նչ հիմունքների վրա էին նրան բանտարկել:

◄ Կոնկրետ ինչի՞ համար:

◄ Ո՞ր քաղաքում էր նա այդ ժամանակ:

երբ նա համարձակվել է բարձրաձայն խոսել իր իրավունքների ոտնահարման մասին: Մարդու իրավունքների եվրոպական եւ ամերիկյան կազմակերպությունները, ինչպես նաեւ արեւմտյան կառավարությունները պարտավոր են աչալուրջ հետեւել նրան՝ երաշխավորելու նրա անվտանգությունը:

Ցեղասպանությունից 88 տարի անց, թուրքական կառավարությունը ոչ միայն ժխտում է անցյալի փաստերը, այլեւ շարունակում է իրագործել երկրում ոչ մի հայ չթողնելու Թալեաթի[1] խոստումը:

«ԱԶԳ», Երեւան, Հայաստան,
13 սեպտեմբերի, 2003թ.

Ի՞նչ կազմակերպություններ: Ո՞ր կառավարությունները: Ի՞նչ աղբյուրներից է լրագրողը այս տեղեկությունները քաղել: Արդյո՞ք իրեն հետեւել խոստացած կազմակերպությունները ստուգել են այս տեղեկությունները:

Սա անշուշտ չափազացված հայտարարություն է: Չնայած այն ամենին, ինչ տեղի է ունեցել Եղեռնի ժամանակ, պարզ է, որ Թուրքիան այսօր հայերին չի բնաջնջում, ինչքան էլ որ խտրականության քաղաքականություն վարելիս լինի: Ավելին, լրագրողը չի տալիս ոչ մի տեղեկություն՝ պաշտոնական կամ ոչ պաշտոնական, թե ինչքա՞ն հայեր են դեռեւս Թուրքիայում ապրում այսօր: Ընթերցողի համար այս տեղեկությունները կարծիք կրստեղծեին:

1 Օրենքից դուրս հայտարարված քրդական կուսակցություն

Սա մի չափազանց կողմնակալ կարծիք արտահայտող հոդված է, որը միայն արդեն գոյություն ունեցող լարվածությունն ավելի կրորրոքի, քան բոլորին կպեղեկացնի այն մասին, թե ինչ է պեղի ունենում փարածաշրջանում: Առանց որեւէ օրինական աղբյուր մեջբերելու, հոդվածը աբխազներին՝ որպես անբարոյական, դաժան հալածողների եւ անազնիվ բանակցողների, միեւնույն ժամանակ վրացիներին զերծ պահելով բոլոր այն մեղադրանքներից, որոնք առկա լարված իրադրության պատճառ են հանդիսացել: Ակնհայտ է, որ դա հակամարտության միայն մի փեսանկյունն է, սակայն, իհարկե, ոչ միակը: Հոդվածում նաեւ ահավոր մեղադրանքները բազմիցս ներկայացվում են որպես «փաստ»՝ առանց ջանալու ապացուցելու դրանց խկությունն ու ճշգրտությունը:

## ØÇÝã âáõµáõñËÇÝçÇáõÙ §µ³Ý³ÏóáõÃÛáõÝÝ»ñ¦ »Ý ÁÝÃ³ÝáõÙ, íñ³óÇÝ»ñÇÝ Ï»Ý¹³ÝÇ Ã³ÕáõÙ »Ý úã³ÙãÇñÇáõÙ

²բխազիայի փարածքում շարունակվում են վրացիների սպանությունները, չնայած այն բանին, որ Չուբուրխինջիում գրեթե ամեն հինգշաբթի կայացող հավաքների ժամանակ նշվում է, որ այնտեղ խաղաղություն է, որ վրացիներն այնտեղ վայելում են իրենց կյանքը:

Վրացական հետաքննող խմբի անդամները խստորեն արտահայտում են իրենց դիրքորոշումը, սակայն ցավոք, ոչ ոք նրանց վրա ուշադրություն չի դարձնում: Անցյալ հինգշաբթի Չուբուրխինջիի հերթական ժողովին վրացական կողմը շեշտված ձեւով առաջ քաշեց երկու հարց: Առաջինը վերաբերում էր գերի վերցված հինգ վրացիներին, չնայած հետո պարզվեց, որ նրանք իրականում վեցն էին: Վեցերորդ պատանդի մասին հայտնաբերել է Պատանդների փոխանակման եւ անհայտ կորածներին փնտրող հանձնաժողովի ղեկավար Վլադիմիր Դոբորջինիձեն:

Ամեն ինչ սկսվեց հետեւյալ կերպ. 2003թ-ի օգոստոսի 4-ին Գալիի շրջանի Թագիլոնի գյուղի ծայրամասում մի քանի ինքնությունը չպարզաբանված անձինք պայթեցրեցին «Գազել» մակնիշի մինի ավտոբուս: Այս դեպքի ժամանակ սպանվեցին վեց աբխազ սահմանապահներ: Ինչպես էլ սպասվում էր, դրան շուտով հետեւեց աբխազների արձագանքը: Նրանք պայթյունի մեջ մեղադրեցին վրացիներին:

Սկզբում աբխազները հրդեհել են Քիրիա եղ-

Բանակցություններ բառը չակերտների մեջ դնելով՝ լրագրողն անմիջապես ցույց է տալիս իր դիրքորոշումը՝ որ հակառակ կողմը՝ աբխազները, հակված չեն բարիդրացիական հարաբերություններով լուծել երկու ազգերի միջեւ եղած խնդիրները: Այս դիրքորոշումը, ըստ որի հակամարտությունն իրենից ներկայացնում է սեւ-սպիտակ իրադրություն, ավելի է ակնհայտ դառնում, երբ հոդվածի վերնագիրն ընդգրկում է աբխազների դաժան վարքի մասին վկայող չապացուցված մի մեղադրանք, որն ակնհայտորեն նպատակ ունի՝ սարսափ առաջացնելու յուրաքանչյուր վրացի ընթերցողի մոտ:

Ո՞վ է ասում, որ վրացիների սպանությունները շարունակվում են: Ի՞նչն է իրականում հավաստում այս մեղադրանքը:

Արդյո՞ք նա է հոդվածում եղած այս ամբողջ ինֆորմացիայի աղբյուրը: Եթե ոչ, ապա՝ ո՞վ է: Սա երբեւէ չի պարզաբանվում:

Իրականում ո՞վ էր մեղադրում վրացիներին: Լավ կլիներ այստեղ որեւէ մեկին նշել՝ մի պաշտոնյայի, գյուղացու կամ առհասարակ որեւէ անձի: Օգտակար կլիներ նաեւ մեջբերել վրացական կողմի արձագանքը: Լրագրողը հավաստո՞ւմ է, որ պարտիզանները պատասխանատու չէին: Այն հարցը, թե ով է արել այդ, ամբողջովին արհամարհվում է, կարծես այն ոչ մի առնչություն չունի իրադարձության հետ:

բայրների՝ Չուբուրխինջիի եւ Թագիլոնիի սահմանում գտնվող տունը, որտեղ ըստ նրանց վրացի պարտիզաններն էին թաքնվում, հետո գերի են վերցրել եղբայրներին: Միեւնույն ժամանակ նրանք այրել են այն մարդկանց տները, ովքեր ընդհանրապես անմեղ էին, ծեծել նրանց եւ սարսափի մատնել ամբողջ գյուղը:

Քիրիա եղբայրների հետ միասին նրանք գերի են տարել Չուբուրխինջի գյուղի եւս երեք բնակիչների՝ Ջոկոլա Խարջիանիին, Լիֆտեր Արկանիային եւ Նոդար Լեպսարյային: Երեք ամիս շարունակ վրացական հետաքննող խումբը այս դեպքի մասին ինֆորմացիա էր փնտրում: Սկզբում աբխազներն ընդհանրապես ժխտում էին, որ առեւանգումը տեղի է ունեցել, սակայն հետո նրանք կատարվածի համար մեղադրում էին սովորական հանցագործներին:

Ճշմարտությունն այնուամենայնիվ այն է, որ Չուբուրխինջիի վրացիները ձերբակալվել են Գալիի, այսպես կոչված, միլիցիայի կողմից:

Անցյալ հինգշաբթի քառակողմ ժողովի ժամանակ վրացական կողմը պահանջեց այդ հարցի քննարկումը եւ ասաց, որ այն կդառնա ավելի լայն շրջանակների քննարկման առարկա: Միեւնույն ժամանակ վրացական կողմը մեղադրեց Միացյալ Ազգերի առաքելությանը՝ ԱՊՀ խաղաղապահներին՝ անգործության մեջ: Նույն երեկոյան Պատանդների փոխանակման եւ անհայտ կորածներին փնտրող հանձնաժողովը աբխազական տարածքից ուղիղ Էնգուրիի կամուրջ տեղափոխեց Մուրթազ Քիրիայի եւ Ջոքոլա Խարջիանիի դիակները: Կազմակերպության մեկ այլ ակտիվ ղեկավարը՝ Վլադիմիր Դոբորջինիձեն բերեց մեկ այլ մարդու, որը Աբխազիայի տարածքում գերի էր ընկած: Դա Թբիլիսիի բնակիչ Նուգզար Կուրցիձեն էր, որը փախել էր քաղաքից՝ պարտքերը վճարելու իր պարտականությունից խույս տալու պատճառով եւ ազատություն փնտրելով, հայտնվել էր Աբխազիայի տարածքում: Ինֆորմացիա էր տարածվել, որ օգոստոսին Գալիի շրջանի Չուբուրխինջի գյուղ տարված բոլոր գերիները դաժանորեն սպանվել են (Խարջիանին եւ Քիրիան, որոնց դիերը բերվել էին Էնգուրիի կամուրջ, այդ գերիների մեջ էին գտնվում): Ըստ ստույգ աղբյուրի Օչամչիրիի շր-

Ո՞ւմ հավաստմամբ: Եվ լրագրողն ի՞նչ գիտի, թե ով է մեղավոր, իսկ ով՝ անմեղ: Այս ինֆորմացիան բոլորովին ապացուցված չէ եւ մենք ստիպված ենք ուղղակի հավատալ լրագրողի՝ այդ դեպքերի մասին տրված նկարագրություններին:

Օգտակար կլիներ, որ մի քանի աբխազ պաշտոնյաներ իրենց տեսակետն արտահայտեին այդ դեպքի վերաբերյալ:

Ո՞ւմ հավաստմամբ:

Ո՞ւմ կողմից: Ո՞վ է այս ինֆորմացիայի աղբյուրը: Բամբասանքները չպետք է մամուլով տարածվեն որպես փաստ:

ջանում աբխազական սեպարատիստները անմեղ վրացի պղաներին նետել են հատուկ փորված մի հորի մեջ: Հավանաբար նրանց ոտքերն ու ձեռքերը կապված են եղել եւ նրանց դաժանորեն փանջել են, նետել հորը եւ հետո այնտեղ թաղել:

Մուրթազ Քիրիայի, Լեֆսայայի եւ Արկանիայի ճակատագրերը դեռեւս պարզ չեն: Կասկած չկա, որ նրանք ողջ չեն:

Ամեն դեպքում, բոլորը գերադասում են լռել այդ մասին: Քառակողմ բանակցությունները փանում են փակուղի: Այդ բանակցություններում ոչինչ չի ասվում, բացի այն բանից, որ վրացական կողմը իր զայրույթն է արտահայտում գոյություն ունեցող սարսափելի փաստերի վերաբերյալ եւ, որ աբխազական կողմը պաշտպանում է իրեն եւ յուրաքանչյուր կապարվածի մեջ մեղադրում վրացական պարտիզաններին:

Չուբուրխինջիի հավաքների ժամանակ աբխազական կողմի պաշտպանողները Միացյալ Ազգերի առաքելության եւ ԱՊՀ խաղաղապահ ուժերի ներկայացուցիչներն են:

Անցյալ հինգշաբթի օրվա հերթական ժողովի ժամանակ վրացական կողմը խստորեն բարձրացրեց մեկ այլ հարց, որը պակաս կարեւոր չէ եւ վերաբերում է այսպես կոչված, աբխազական մաքսատան հարկերի բարձրացմանը:

Աբխազներն իրականում արգելեցին վրացիներին ոտք դնել իրենց սեփական հողերը եւ «իրենց տարածքում» գտնվող տները, երբ նրանք ներկայացրեցին նոր տարիֆներ իրենց, այսպես կոչված, մաքսատանը: Աբխազիայի բնակիչը, առհասարակ, Գալիի շրջանի բնակիչները, պետք է վճարեին 100 ռուսական ռուբլի` սահմանը եւ, այսպես կոչված, մաքսատունն անցնելու համար. ( ուքը վերաբերում է մաքսատնով միայն մեկ անգամ անցնելուն): Ոչ ոք ի վիճակի չի լինի վճարել այդ գումարը, քանի որ հնարավոր է, որ ընտանիքի յուրաքանչյուր անձին հարկավոր լինի օրվա մեջ բազմիցս անցնել մաքսատունը. էլ չենք նշում ընտանիքի մի քանի անձանց: Ըստ վրացական կողմի ներկայացուցիչների` սա աբխազական կողմի հնարքներից մեկն է, որպեսզի խուչընդոտեն վրացիների մուտքը Աբխազիա: Ըստ աբխազների, այս քայլը կօգնի նվազեցնել այն վրացիների քանակը, որոնք մտնում են աբխազական տարածք`

Կրկին, որտեղի՞ց է ծագել այս ինֆորմացիան: Արդյո՞ք հնարավոր չէ նշել այդ «սպույզ աղբյուրը». Լրագրողն առնվազն պետք է հայտներ մեզ, թե ինչպես է այդ ինֆորմացիան դարձել իր սեփականությունը: Ինչի՞ հիման վրա է լրագրողը համոզված, որ այդ աղբյուրն իսկապես սպույզ է: Մեղադրանքը նույնպես պարզ չէ: Քանի՞ պղաների է նշում լրագրողը, քանի՞ տարեկան: Ի՞նչ էր պեղի ունեցել նախապես, որ հանգեցրել էր այդպիսի զազանության: Ի՞նչ զիտի լրագրողը, որ նրանց փանջել եւ կապկպել են: Եթե այս ինֆորմացիայի աղբյուրը սպույզ է, արդյո՞ք դա կնշանակի թե հոդվածի սկզբում գրված փվյալները սպույզ չեն:

Այս երկու նախադասությունները հակասում են միմյանց: Եթե նրանց ճակատագրերը պարզ չեն, ապա ինչպե՞ս կարող է կասկած չլինել նրանց մահվան մասին:

Արդյո՞ք լրագրողը հավապացած է, որ պարտիզաններն են մեղավոր լարված իրադրության համար: Պարզ է, որ ոչ: Պապկերն այն է, որ, եթե նույնիսկ պարտիզանները մասնակցություն ունենային այդ կոնֆլիկտին, չարժե բնութագրել նրանց դերն այդ իրադրության մեջ այդքան բացասական, որքան նկարագրվում է:

Կրկին, ո՞րն է այս ինֆորմացիայի աղբյուրը: Բանակցություններին մասնակցող, վրացական կողմը օգտվելով իր համերկրացի լրագրողների համակրանքից, տարածում է հակամարտության եւ քննարկումների միայն իրեն օգուտ բերող տեսանկյունը: Դեռ ավելին, լրագրողը աբխազական տեսանկյունը լսում եւ իմանում է վրացական կողմից: Միգուցե աբխազներն ունե՞ն ավելի մանրամասն բացատրություն՞ն իրենց վարքի վերաբերյալ: Լրագրողը պետք է փորձեր խոսել նրանց հետ` այդ ամենը պարզաբանելու համար:

լրտեսության եւ ինֆորմացիա հավաքելու համար: Դժվար է հավատալ, որ լրտեսներին կխոչընդոտեր այդ, քանի որ այդ բնույթի աշխատողները դրա համար գումար են ստանում իրենց պատվիրատուներից:

Եվ վերջապես, այս քայլը բացասական ազդեցություն կունենա այն հասարակ մարդկանց վրա, ովքեր կարիք ունեն այցելելու իրենց տները: Սա միակ ելքն է, որ նրանք կարող են պաշտպանել իրենք իրենց եւ իրենց ընտանիքները, որոնք, ցավոք սրտի, փախստականներ են:

Հաջորդ հինգշաբթի Չուբուրխինջիի ժողովին վրացական կողմը կրկին կբարձրացնի այս եւ այլ օրախնդիր եւ կարեւոր հարցեր: Ինչպես իրենք են նշում, չեն հանձնվի, մինչև այդ խնդիրն ամբողջովին չլուծվի: Չնայած, դժվար է հավատալ, որ Չուբուրխինջիում որեւէ բան իր լուծումը կգտնի, առավել եւս՝ մեր օգտին:

*«Թավիսուպալի Գազեթի»,* Թբիլիսի, Վրաստան,
հոկտեմբերի 28-նոյեմբերի 3, 2003թ.

Կրկին թվում է, թե վրացական կողմը ազատված է վիճաբանության համար եղած որեւէ պատասխանատվությունից: Լրագրողը չի ժխտում լրտեսության առկայությունը՝ անհիմն համարելով աբխազների մտահոգությունն այդ մասին: Բացի այդ, ովքե՞ր են այն աբխազները, որ մեկնաբանում են այս հարցը: Լրագրողը պետք է իրազեկ լինի նաեւ աբխազների տեսանկյանը:

Այս վերջին նախադասությունը եւ «մեր» բառի գործածումը կրկին ընդգծում է այն փաստը, որ այս հոդվածը գրված է բացառապես մի, այլ ոչ թե տարբեր դիրքորոշումներից: Մեղադրանքների շարքն, անկասկած, կսաստկացնի վրացի ընթերցողի նախապես գոյություն ունեցող կանխակալ կարծիքը: Սակայն լրագրողի կողմնակալությունը այնքան պարզ է, որ այլ ընթերցողներ դժվար թե հավատացած լինեն այդ հարցի օբյեկտիվությամբ: Հարկավոր է այդ սարսափելի մեղադրանքներն ավելի լավ ուսումնասիրել, ինչը կարող է լավ հիմք հանդիսանալ լուրջ լրագրողական ուսումնասիրության համար, քան գրել մի հոդված, որն ավելի կբորբոքեր առանց այն էլ լարված իրադրությունը:

Այս հոդվածը թեժ բանավեճի օրինակ է, որը վիճաբանությունը հանդարտացնելու փոխարեն ավելի շատ է այն բորբոքում: Առանց որեւիցե մեկնաբանության` ԴԱԿ-ն ընդդեմ կառավարության, խնդրում լրագրողը Ղարաբաղի ազատագրության կազմակերպությանն է կողմնակից: Ադրբեջանում գերակշռող տեսակետները ներկայացնելիս «ագրեսոր» եւ «ահաբեկիչ» բառերով Հայաստանի եւ հայերի մասին արտահայտվելը միայն վավերացնում է այդ տեսակետները: Համենայն դեպս, կառավարությունը պետք է հնարավորություն ունենա նմանատիպ հայտարարություններին պատասխանել:

## Ô ³ ñ ³ µ ³ ÕÇ ³ ½ ³ ï ³ ·ñáõÃÛ ³ Ý Ï ³ ½Ù ³ Ï»ñåáõÃÛáõÝÁ µáÕáùáõÙ ¿ Ñ ³ Û»ñÇ` Ù»ñ »ñÏÇñ ³ Ûó»É»Éáõ ¹»Ù

Ôարաբաղի ազատագրության կազմակերպությունը բողոք է արտահայտել Սեւծովյան համագործակցության կազմակերպությանը արտաքին գործերի նախարարների խորհրդին մասնակցելու համար ագրեսոր Հայաստանից պատվիրակություն հրավիրելու դեմ: Հանդիպումը կկայանա Բաքվում 2003 թ-ի հոկտեմբերի 31-ին:

ԴԱԿ-ից ասում են, որ այս հրավերով կառավարությունը վիրավորում է մեր նահատակների ոգիները, եւ պայմաններ է ստեղծում ահաբեկիչ հայերի հետ ընկերական եւ եղբայրական հարաբերություններ հաստատելու, սրանով իսկ մոռացության է մատնում մեզանից զավթած տարածքները: Ղարաբաղի ազատագրության կազմակերպությունը կարծում է, որ նմանատիպ գործողությունները Ադրբեջանի ժողովրդի շահերին հակառակ են:

ԴԱԿ-ը պահանջել է, որ կառավարությունը անմիջապես հանձնարարի արտաքին գործերի նախարարությանը անհապաղ եւ վճռական միջոցներ ձեռնարկել` հայկական պատվիրակության այցը Բաքու կանխելու համար: Այլապես, ինչպես շեշտել է կազմակերպությունը, հնարավոր միջադեպների պատասխանատվությունը ամբողջովին վերոհիշյալ նախարարության վրա կընկնի:

*«Ազադլիք»*, Բաքու, Ադրբեջան,
28 հոկտեմբերի, 2003թ.

Սրանք լուրջ մեղադրանքներ են, եւ կառավարության պատասխանին են արժանի: Բայց, քանի որ ոչ մի նման արձագանք չգտանք, պարզ է դառնում, որ հոդվածը հաստատում է ԴԱԿ-ի տեսակետները: Դա կարող է միտումնավոր արված լինել, բայց նորություններին նմանատիպ մոտեցումը չի վերաբերվում իրավիճակին եւ այն չի պարզաբանում: Լրագրողը չպետք է ԴԱԿ-ի ձայնափողի դերը խաղար:

Բռնություն ներթաղրող այս սպառնալիքը քողարկված շորթանքի է նման: ԴԱԿ-ը պետք է հանգիստ առարկության հնարավորություն վերապահեր, եւ իր վարքի համար պատասխանատվությունը հենց իր վրա վերցներ, քանի որ մարդկանց մղում է բռնության:

# 4. ÎñáÝ

# Îñáí

Æ նչպես էթնիկ նախապաշարմունքները, այնպես էլ դավանաբանական տարբերությունները, փաստորեն, հանգեցրել են մեծ կոնֆլիկտների ողջ աշխարհում: Իրականում, այդ երկուսն իրարից զատորոշելը կարող է դժվար լինել, քանի որ հակամարտող էթնիկ խմբերը հաճախ դավանում են տարբեր կրոնների:

Օրինակ, Կոսովոյում սերբերի եւ ալաբանացիների միջեւ լարվածությունը հիմնված է էթնիկական պատկանելիության, թե՛ կրոնի վրա: Այս երկուսը իրարից անջատելը դժվար է: Անշուշտ, երկուսն էլ այստեղ դեր են խաղում:

Նույնը կարելի է ասել նաեւ հակասեմիտիզմի մասին: Հրեաների նկատմամբ ատելությունը որոշակիորեն ունի թե՛ էթնիկ, եւ թե՛ դավանաբանական հիմքեր: Հրեաներին հաճախ համարում են օտար ռասայի ներկայացուցիչներ եւ բնորոշում որոշակի ֆիզիկական ու անհատական ստերեոտիպերով, ինչպես, օրինակ, կեռ քթով կամ կասկածելի ճանապարհով փող վաստակելու ունակությամբ: Միեւնույն ժամանակ հակասեմիտները մշտապես ծաղրել են հուդայականության իբրեւ կրոն եւ կեղծ ասեկոսներ տարածել վերջինիս կրոնական հավատալիքների մասին, ինչպիսին օրինակ այն տեսակետն է, թե իբր հրեաները քրիստոնյա երեխաներ են առեւանգում զոհաբերելու համար:

Վերջին տարիներին Հարավարեվելյան Եվրոպայում կրոնի նկատմամբ վերաբերմունքի հետ կապված իրավիճակը ավելի է բարդացել:

Իրավիճակը բարդացնում են ոչ միայն նախկինում ինքնապարփակ հասարակությունները՝ պայքարելով, որ փոխադարձ ըմբռնում հաստատվի տարածաշրջանում հնուց հիմնված կրոնական խմբերի միջեւ, այլ նաեւ Արեւմուտքից ժամանող առաքելությունները, որոնք փորձում են մարդկանց դավանափոխել:

Կրոնական թեմաներով հրապարակումների վերաբերյալ ստորեւ բերված որոշ առաջարկներ կնպաստեն ոչ թե հակամարտությունների, այլ՝ հանդուրժողականության խթանմանը:

★ Անցյալի բացթողումները երեւան հանելու համար հետադարձ հայացք նետեք այն փաստի վրա, թե ձեր քաղաքում կամ շրջանում լրատվամիջոցներն ինչպես են անդրադարձել կրոնական տարբերության խնդիրներին: Արդյոք եղե՞լ են գերիշխող կրոնին չդավանող մարդկանց մոտեցումները ներկայացնող նյութեր: Արդյոք մյուս կրոնների մասին հրապարակումները եղել են անաչառ եւ կշռադատվա՞ծ, թե՞ ամրապնդել են իրականությանը գրեթե չհամապատասխանող ստերեոտիպերը:

★ Կրոնի մասին գրելիս մեծ ուշադրություն դարձրեք այլ մարդկանց բնորոշելու համար ձեր կողմից գործածվող բառապաշարին: Հնարավոր է որոշ բառեր ինքներդ նսեմացուցիչ չհամարեք, սակայն դրանց կիրառումը վիրավորական լինի տվյալ խմբի անդամների համար: Այդ պատճառով, եթե վստահ չեք, թե տվյալ բառն ինչպես կընկալվի նրանց կողմից, անպայման ճշտեք դա նախապես:

* Ժամանակ մի՛ խնայեք ձեր մարզում նոր դավանաբանական ուղղությունները բացահայտելու համար: Մեկ օր անցկացրեք մորմոն միսիոներների կամ Եհովայի վկաների հետ: Հետեւեք նրանց փոխհարաբերություններին այն մարդկանց հետ, ում փորձում են հավատափոխ անել: Պարտադիր չէ կիսել նրանց հավատքը՝ վերջիններիս մասին պատշաճ լրագրություն ապահովելու համար՝ ըմբռնելով նրանց իրականությունը:

* Գրեք ձեր մարզում կրոնական բնագավառը կարգավորող օրենքների մասին: Արդյո՞ք գերիշխող հավատքի համար պետությունը արտոնություններ է սահմանում, իսկ մյուսներին վերաբերվում խտրականորեն: Եթե օրենքով հավասար պայմաններ են սահմանվում բոլոր կրոնների համար, արդյո՞ք իշխանություններն այդպես էլ վարվում են իրականում, թե՞ կողմնակալ են ի շահ իրենց հոգեւոր ավանդույթների:

* Զգուշացեք այն աղբյուրներից... 

* Շրջահայաց եղեք, որպեսզի փուրք չտաք այլ կրոնական պատկանելիություն ունեցող մարդկանց մասին առկա ընդհանուր ստերեոտիպերին: Ինչ վերաբերում է կրոնին, ապա շատ ինքնակոչ «գիտակներ» այլ հոգեւոր ավանդույթների մասին կարող են ասել այն ամենը, ինչ ուզում են՝ անգամ կարիք չզգալով փաստերով հիմնավորել իրենց պնդումները: Քանի որ լրագրողներն իրենք էլ շատ հաճախ կիսում են այդ նախապաշարմունքները, միգուցե նրանք կարիք ունեն վերհիշելու, որ իրենց անելիքը ոչ թե նման պնդումները միանշանակ ընդունելն է, այլեւ դրանք քննելը:

* Պարզեք, թե արդյո՞ք ձեր մարզում կան համալսարաններ, որոնք ունեն կրոնի ուսումնասիրության բաժիններ: Եթե այո՝ այդ պրոֆեսորներին դիտարկեք որպես հնարավոր աղբյուրներ: Եթե նրանք օժտված են մեկից ավելի հոգեւոր ավանդույթների մասին ընդհանուր փորձագիտական գիտելիքներով, ուրեմն հարմար թեկնածուներ կարող են լինել միջհավատալիքային փոխհարաբերությունների վերաբերյալ բարդ հարցադրումներին պատասխանելու համար:

* Զգուշացեք այն աղբյուրներից, որոնք կրոնական թեմաների շուրջ իրենց պնդումները հիմնավորում են զուտ Աստվածաշնչից, Ղուրանից եւ այլ սուրբ գրքերից բերված մեջբերումներով: Հստակ պարզորոշեք շատ դարեր առաջ գրված բառերի մեկնաբանությունների տարբերությունները (օրինակ, դա է պատճառը, որ կան այդքան շատ քրիստոնեական դավանանքներ կամ միմյանցից էապես տարբերվող իսլամական ավանդույթներ): Եթե քաղաքական գործիչը ձգտում է դավանաբանական քերթվածքներն օգտագործել որպես պետական քաղաքականության հիմնաքար, պարզեք, թե ինչպես են միեւնույն տեքստը մեկնաբանում մյուսները եւ դրա մասին հարցեր ուղղեք այդ քաղաքական գործչին:

* Կրոնական հարցադրումներն ուղղեք այլ սոցիալական, քաղաքական եւ տնտեսական զարգացումների կամ միտումների համատեքստում: Եթե, օրինակ, տվյալ կրոնական խմբի անդամների շրջանակներում մեծ է գործազրկությունը, դա ավելի շուտ կարող է լինել իրենց ավանդական տնտեսավարման դժվարին ժամանակների արտացոլումը, քան պայմանավորված լինել ծուլությամբ: Եթե նոր դավանանքը գայթակղիչ է թվում շատ հետեւորդների համար, ապա ուսումնասիրեք եւ պարզեք, թե ինչ է այն առաջարկում, որից մարդիկ այդ պահին զրկված են:

★ Գրեք հոդվածներ, որտեղ կփորձեք ուսումնասիրել, թե արդյո՞ք ընդհանուր ստերեոտիպերն արտացոլում են իրականությունը եւ եթե այո՝ ինչու՞: Օրինակ, ճշմարտություն է, որ որոշ հրեաներ պատմականորեն եղել են վաշխառուներ, հատկապես այն պատճառով, որ մյուս մասնագիտությունները նրանց համար փակ են եղել. մի իրավիճակ, որ անշուշտ սրել է այն տպավորությունը, թե իբր նրանք ագահ են կամ՝ հաշվենկատ դրամական հարցերում:

★ Գրեք այլ կրոնական ավանդական տոների մասին այնպես, ինչպես կլուսաբանեիք ձերը: Օրինակ, մասնակցեք հրեական Զատկի տոնին, Խանուկայի տոնակատարությանը կամ Բարմիցվահին: Մեկ օր անցկացրեք Ռամադանի ընթացքում պաս պահող մահմեդականների հետ:

★ Կրոնական խմբի մեկ անդամին մի դատեք իբրեւ նրանց ամբողջի ներկայացուցիչ. ասենք, որ եթե մի բուդդիստ, արեւին նայելով ինքնաներշնչվում է, դա չի նշանակում, որ բոլորն են այդպես անում: Ամեն մարդ առանձին անհատ է եւ իրավունք ունի արտահայտելու անհատական գաղափարներ կամ կարծիքներ եւ տարբեր տեսանկյունից մոտենալու իր հավատալիքներին առնչվող հարցերին:

★ Երբ հարցազրույց եք վերցնում այլ հավատալիքներ ունեցող մարդկանցից, մի կարծեք, թե նրանց կյանքը սկսվում ու ավարտվում է իրենց դավանանքով: Նրանց ուղղեք նաեւ այլ թեմաներին վերաբերող հարցեր, քանզի, նրանք էլ ձեզ նման ունեն հավատալիքների հետ ոչ մի առնչություն չունեցող հոգսեր, կարիքներ եւ զվարճանքներ: Հարցրեք իրենց ընտանիքների, հետաքրքրությունների, մասնագիտությունների եւ կյանքի այլ կողմերի մասին, ինչն, անշուշտ, չի նշանակում, թե դուք այդ ամենը պետք է ընդգրկեք ձեր հոդվածում, այն ուղղակի կօգնի ձեզ առավել լավ հասկանալ նրանց մոտեցումները:

Այս հոդվածը ակնհայտորեն զինվորական ծառայության մասին է: Բայց լրագրողի համար սա մի շարք սոցիալական խմբերի նկատմամբ իր զայրույթը արտահայտելու հնարավորություն է, չնայած սրանցից ոչ ոք ոչ-ավանդական կրոնի հետեւորդ չէ: Լրագրողը նրանց, ում քննադատում է ոչ մի հնարավորություն չի տալիս այս փաստարկները ժխտել:

## Æ±Ýã Ïï ³ ³ÛÁÝïñ³ Ýù³ÛÇÝ ½ÇÝíáñ³ Ï³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÁ ²¹ñµ»ç³ÝÇÝ

*Üáñ ³Õ³Ý¹Ý»ñ, ³ÝÑá· »ñÇï³ë³ñ¹Ý»ñ, Ï³ß³é³ Ï»ñáõÃÛ³Ý ³× »õ ÃßÝ³ÙÇÝ»ñÇ Ñ³Ù³ñ ÑÝ³ñ³ íáñáõÃÛáõÝÝ»ñ*

àչ ոք չի ժխտում, որ Ադրբեջանը զգայուն ժամանակաշրջան է ապրում: Մեզանից անկախ պատճառներով մենք հայտնվել ենք տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների կենտրոնում: Անկախություն ձեռքբերելուց ի վեր, մենք զգոն ենք մեր անվտանգության հանդեպ:

Այն ժամանակ, երբ մեր հողերը բռնազավթված են, մենք պետք է նաեւ աշխատենք կանխել այլ վտանգները եւս: Բոլորը գիտեն, թե ինչքան լարվածություն են ստեղծում էներգիայի վերաբերվող պրոբլեմները: Մենք պետք է նաեւ հոգանք մեր ուտելիքի անվտանգության եւ բնապահպանության մասին:

Հայաստանը հետ չի կանգնում իր բռնած դիրքերից: Ավելին, Հայաստանը կասեցրեց խաղաղ բանակցությունների գործընթացը: Այս ամենը մեծացնում է պատերազմի վերսկսման հավանականությունը: Այդ պատճառով Ադրբեջանը պետք է որոշակի չափանիշների համապատասխանի:

Ահա թե ինչու է այլընտրանքային ծառայության մասին խոսակցությունների ծավալումը մտածելու տեղիք տալիս: Եթե դրվի կշեռքի մի կողմում այս օրենքի մարդասիրությունը, իսկ մյուս կողմում՝ երկրի պրոբլեմները, հավասարակշռություն միջեւ չի լինի: Եվ մի շարք հարցեր են ծագում: Արդյո՞ք պատմության այս հատվածում մենք այլընտրանքային ծառայության կարիք ունենք: Այլընտրանքային զինվորական ծառայությունը հնարավորություն կտա քաղաքացուն որոշակի գումար մուծելով ուրիշ ծառայություն կատարել: Եթե մեկը չուզենա զինվորական ծառայություն կրել կրոնական, գաղափարախոսական կամ որեւիցէ ուրիշ պատճառով, ապա նրան կառաջարկվի այլընտրանքային զինվորական ծառա-

Լրագրողը համարում է իր երկրի վիճակը սարսափելի, եւ դա պատճառը դարձնում այլ դավանանքների հետեւորդ մարդկանց վրա հարձակվելու: Նա փորձում է իր նախապաշարմամաղրվածությունն արդարացնել՝ սա ներկայացնելով իրրեւ փիրող իրավիճակի բացատրություն:

յություն: Նրան կտան մի աշխատանք, կտան որոշակի արտոնություններ` այն պայմանով, որ այդ ծառայությունը բանակի հետ կապ ունենա: Բայց եթե ուշադրություն դարձնենք աղանդների եւ նմանատիպ խաբեբաների ծավալած գործունեությանը Ադրբեջանում, ապա կհասկանանք, թե ինչ հետեւանքների կարող է բերել նման արտոնությունը:

Լրատվամիջոցներում հաճախակի խոսվում է այն մասին, որ քրիստոնեական կրոնական առաքելությունները իրենց գաղափարներն են քարոզում սահմանամերձ շրջաններում եւ կոչ անում նրանց չպատերազմել: Նրանք հազարավոր օրինակներ եւ բացատրություններ են բերում, թե մենք «եղբայրներ ենք»:

Ավելին, այդ աղանդների անդամների վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ նույնպես անհանգստացնող է: Եթե նույնիսկ այդ առաքյալները Ադրբեջանցի են, նրանք օտարի պես են մտածում, հայրենիքի եւ ազգի տեսակետները չեն կիսում:

Նրանք դա բացահայտորեն արտահայտում են: Նրանք կրկին ու կրկին շեշտում են անհատականությունը: Կրիշնայականները, ադվենթիստները, Բապտիստները, եւ նմանները երկրին ծառայելու գաղափարներից զուրկ են:

Արդյո՞ք այլընտրանքային զինվորական ծառայության օրենքի ընդունումը այս պորտաբույծներին մեր հասարակության մեջ բազմանալու հնարավորություն չի տա: Անկասկած` այո:

Մահմեդական աղանդները նույնպես վնաս են պատճառում հասարակությանը: Արդյո՞ք վահաբականների գաղափարախոսությամբ հիվանդացած Ադրբեջանցի երեխասարդը կծառայի «անհավատների բանակում»: Նրանց մեծամասնությունը չի ծառայի: Եթե նկատել եք արագությունը, որով վահաբականները տարածվում են, ապա կարելի է ենթադրել, որ մեր երիտասարդության մեծ մասը այլընտրանքային ծառայության բանակի պորտաբույծներ կլինեն:

Առավել եւս, սա կոգեւորի մյուս երեխասարդներին` նույնպես այս ուղին բռնել: Գաղտնիք չէ, որ շատերն են այս հնարավորությանը սպասում:

Քանի որ այլընտրանքային ծառայությունը ենթադրում է մարդկանց աշխատանքով ապահո-

Լրագրողը անկասկած կողմնապահ է այլ կրոնական համոզմունքներ ունեցող մարդկանց նկատմամբ, ովքեր Հայաստանի հետ պատերազմի վերաբերյալ իր տեսակետները չեն կիսում եւ մերժում է այն կարծիքը, որ պատերազմելը սխալ է, քանի որ հակառակորդ կողմերը եղբայրներ են: Մարդիկ այս հարցի վերաբերյալ բացարձակ տարբեր կարծիքներ կարող են ունենալ: Բայց դրանից նրանք իրենց երկրի վատ քաղաքացի չեն դառնում:

Իհարկե «հազարավոր» բառի օգտագործումը այստեղ չափազանցություն է: Լրագրողը պետք է մի քանի մանրամասն օրինակներ բերեր, թե ինչ են քրիստոնյաները ասում` իրենց տեսակետը ապացուցելու համար:

Ինչո՞ւ պետք է բոլորը ընդունեն հայրենիքի եւ ազգի մասին լրագրողների գաղափարները: Մարդիկ իրավունք ունեն ընդունել այն կրոնը, որն իրենք են ցանկանում, եւ եթե այդ հարցերի վերաբերյալ նրանք ուրիշ կարծիք են կազմում, դա նրանց իրավունքն է:

Կրկին, որեւիցէ մի դավանանքի հետեւորդները երկրին ծառայելու մասին իրենց պատկերացումները չպետք է մյուսներին պարտադրեն: Նրանք ունեն սեփական կարծիքի իրավունք եւ ունեն իրենց սեփական պատկերացումները, թե ինչպես ծառայեն իրենց երկրին:

Չնայած հոդվածը այլընտրանքային զինվորական ծառայության մասին ակնարկի ձեւով է գրված, բայց լրագրողը կրկին օգտագործում է այս թեման իր կարծիքով անօրինական մարդկանց հանդեպ իր զայրույթը արտահայտելու համար:

Փաստորեն, լրագրողը նախապաշարմունքներ ունի ոչ միայն ոչ մահմեդական հավատքների հանդեպ: Մարդիկ իրենց ընտրած դավանանքը ընդունելու իրավունք ունեն: Լրագրողը կրկին օգտագործում է այլընտրանքային զինվորական ծառայության մասին հոդվածը, իր կարծիքով` անօրեն մարդկանց հանդեպ իր զայրույթը արտահայտելու համար:

Ինչ պատճառներով էլ որ վահաբիզմը Ադրբեջանում լայն տարածում գտնի, դրանում այլընտրանքային ծառայությունը մեղադրելը անմտություն է:

վել, նրանք կփարաձվեն հասարակության բոլոր շերտերում: Սրանց հեղափոխելու փոխարեն մենք այս մարդկանց կփարաձենք զանազան հասարակական համայնքներում, եւ դրանով իսկ նրանց աճի համար նպաստավոր պայմաններ կստեղծենք: Եվ, ցավոք սրտի, մենք դա մեր սեփական ձեռքերով ենք անում:

Եվ ի վերջո, մեկ ուրիշ փաստ էլ է պետք շեշտել: Բոլորս տեղյակ ենք, որ մարդիկ իրենց երեխաներին ամեն կերպ ուսման են տալիս, որ բանակից փրկեն: Նրանք կաշառք են տալիս, գումար են ծախսում, բայց կանխում են իրենց երեխաների ծառայությունը բանակում: Այս ամենը տեղի է ունենում մի քանի պատճառներով, որոնց մասին մենք հիմա չենք խոսի: Բայց եթե դուք այցելեք համալսարանները, հատկապես մասնավոր հաստատությունները, կտեսնեք, թե ինչքան ուսանողներ են այնտեղ պարզապես ժամանակ վատնում, միայն թե բանակից խուսափեն: Սա հատկապես նկատելի է Ռուսական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերում: Որոշ ծնողներ բանակից խուսափելը նույնիսկ հեղինակությունը բարձրացնող են համարում: Հենց որ այլընտրանքային ծառայության օրենքը ընդունվի, այս խավերը մի ուրիշ ճանապարհ կբռնեն: Նրանք կսկսեն իրենց երեխաներին այլընտրանքային զինվորական ծառայության ուղարկել: Սա փաստ կլինի, թե նրանք ծառայում են, եւ կխնայի այն 4-5 տարիները, որ նրանք անիմաստ պետք է անցկացնեին ուսումնական հաստատություններում: Այլընտրանքային զինվորական ծառայության մեջ հետաքրքրված ամենավտանգավոր խումբը հենց այս խավերի երեխաներն են: Նրանք մի ձեռքով երկու նապաստակ կբռնեն. նրանց ծնողներն ի վիճակի կլինեն իրենց եւ ծառայության ուղարկել, եւ աշխատանքի տեղավորել: Եվ Ադրբեջանի օրենքը թույլ կտա սա:

*Խմբագրի ծանոթություն: Այստեղից կրճատել ենք մի չափազանց գրպարտչական նախադասություն*

Այսպիսով, ի՞նչ կտա այլընտրանքային զինվորական ծառայությունը Ադրբեջանին: Առաջին հերթին, կրոնական առաքելություններին ավելի շատ դրդապատճառներ՝ մեր հասարակությունը քայքայելու համար:

Անշուշտ նրանք կօգտագործեն այս հնարավորությունը: Երկրորդ՝ սա հնարավորություն կընձեռնի օտարազգի խմբավորումներին երիտասարդության մեջ զինվորական ծառայությանը եւ հասարակության տրամադրվելը փոքրացնելու անպարբեր վերաբերմունքը կուժեղացնի: Նրանք ազդեցության տարբեր ուղիներ ունեն, եւ ավելի կավելացնեն: Երրորդ՝ որոշ ծնողներ (խաբեբաներ) նոր ճանապարհներ կփնտրեն իրենց զավակներին բանակից փրկելու համար: Եվ այդ պատճառով ոմանք էլ կաշառք վերցնելու նոր առիթներ կստանան: Եվ սրանք իրենց հերթին մարդկանց արյունը տզերի նման կծծեն: Հավանաբար ժողովրդավարության տեսանկյունից այլընտրանքային զինվորական ծառայությունը որոշ առավելություններ ունի: Բայց Ադրբեջանի համար հիմա դա դեպի անդունդը տանող ճանապարհ է: Եկեք չմոռանանք, որ նույնիսկ շատ լավ գաղափարները վատ արդյունքների կարող են հանգեցնել, եթե կիրառվեն ոչ ճիշտ պահին: Եվ քանի որ մենք դա գիտենք, էլ ինչո՞ւ ենք գլուխներս քարին տալիս:

*«Օլայլար»,* Բաքու, Ադրբեջան,
22 հունիսի, 2004թ.

Անհասկանալի է, թե ինչպե՞ս պետք է կրոնական առաքելությունները քայքայեն հասարակությունը՝ քաղաքացիներին պարզապես մեկ այլ տեսակետ ընդունելու հնարավորություն տալով:

Այս փոքրիկ հոդվածը նման է տեղական լրատվամիջոցներում հրապարակվող բազմաթիվ պատմությունների, որոնք փվյալ երկրում նորահայտ կրոնական դավանանքների անդամների հանդեպ բացասական տրամադրվածություն են արտացոլում: «Հերձված» եւ «աղանդ» բառերը վիրավորական չեն որոշ լեզուներում, բայց հայերենում, անկասկած, դրանք վիրավորական են: Որեւիցե դավանանքի հետեւորդներին համարել աղանդավորներ (բացասական իմաստով), հաստատելով, որ հիմնական դավանանքների հետեւորդները «նորմալ» են, իհարկե, խտրականություն է: Չկա մի կրոնական հավատալիքների մի այնպիսի հավաքածու, որը օբյեկտիվորեն ավելի ճշմարիտ կամ ընդունելի է, քան մեկ ուրիշը: Եվ, ի վերջո, աթեիստներն էլ համարում են, որ բոլոր մարդիկ իրենք իրենց մոլորության մեջ են զգում: Սուրբ երրորդության հետեւորդները, Եհովայի վկաները, եւ Բողոքականների փոքր խմբերը երկար ժամանակ եղել են Ամերիկայի կրոնական պատկերի մասնիկը: Ոմանք կարող են սրանց տարօրինակ համարել, սրանց հավատալիքները՝արտասովոր բայց այլ բան է, երբ այս մարդկանց ի վիճակի չեն համարում կրոնական ընտրություն կատարել,ինչպես հաճախ աղանդների, կամ  պաշտամունքներին հետեւողների մասին են կարծում:

## ä»ïù ¿ ëï»Õ Í»É Ñ ³ ïáõ Ï Ï»Ýïñá Ý

§Øոսկվայում ստեղծվել է նախկին աղանդավորների հոգեկան վերականգնման կենտրոն եւ, իմ ունեցած տվյալներով, հատկապես երկար աշխատանք է պահանջվում նախկին հոգեգալստականներին նորմալ կյանքի վերադարձնելու համար: Այդպիսի կենտրոն մենք չունենք, բայց դրա ստեղծումն անհրաժեշտ է: Որովհետեւ բազմաթիվ են հոգեպես խեղված նախկին աղանդավորները, անկախ նրանից, թե ինչ աղանդի են պատկանել:

Սա խնդիր է, որ հավանաբար պետությունը եւ եկեղեցին միասին պիտի լուծեն, որովհետեւ նման մարդկանց լիարժեք կյանքի վերադարձնելու համար անհրաժեշտ է ոչ միայն բժիշկների ու հոգեբանների աշխատանք, այլեւ հոգեւորականների»,- համոզված է Ղեվոնդ քահանա Մայիլյանը:

*«Հայոց աշխարհ»,* Երեւան, Հայաստան, 20 սեպտեմբերի, 2003 թ.

Կոնկրետ ինչո՞վ կզբաղվի այդ կենտրոնը: Ի՞նչ ծրագրով այն կաշխատի: Մարդիկ այդտեղ ստիպողաբար կայցելեն, թե՞ դա միայն նրանց համար կլինի, ովքեր ուզում են աղանդից հեռանալ:

Այս հայտարարությունից կարելի է ենթադրել, որ միայն դեպի հիմնական կրոն վերադառնալը կարող է համարվել նորմալ եւ բնական: Միգուցե այս հոգեւորականը այդպես է մտածում, բայց թերթը պնդում է այդ տեսակետը՝ առանց այդ հաստատման հիմքերը պարզաբանելու: Միգուցե պարզաբանելու համար աղանդների անդամների հետ խոսե՞լ էր պետք, եւ տեսնել, թե ի՞նչ են նրանք շահում այդ աղանդին անդամակցելով:

Հոգեւորականին, որը կոչ է անում հոգեւորականներին պայքարել  հոտը լքածներին «փրկելու» համար, կարելի է հասկանալ: Բայց հետաքրքիր կլիներ ընթերցողների առջեւ այս մտահոգությունը բացահայտել՝ որպես եկեղեցու՝ իր իշխող սոցիալական դիրքը կորցնելու անհանգստության նշան, այլ խոսքով, որպես իշխանության խնդիր, այլ ոչ թե աստվածաբանական:

Այս հոդվածը հաջողացնում է վիրավորել է երկու ամբողջական կրոնական կարգեր, առանց դրանց որեւիցէ մեկ անդամից հարցազրույց վերցնելու: Ներկայացվող տեղեկությունների աղբյուրը շատ անհստակ է: Թվում է , թե տեղեկությունների մեծ մասը ոստիկանությունից է քաղվել, բայց այդ փաստն էլ է աղոտ, քանի որ լրագրողը հստակ չի նշում , թե ով է այս հոդվածի համար տեղեկություններ ապահովել: Այս տարածաշրջանում շատերի համար այլ կրոնական կազմակերպությունների առկայությունը ակնհայտորեն անհանգստացնող հեռանկար է, բայց նմանատիպ հոդվածները ոչինչ չեն անում փոխըմբռնում եւ հարգանք հաստատելու համար:

## Ìñ³ëï³ÝÇ ºÑáí³ÛÇ íÏ³Ý»ñÇÝ Ñáí³Ý³ íáñáõÙ ¿ ²Ù»ñÇÏÛ³Ý ÏáÝ·ñ»ëÇ Ñ³ÛÏ³Ï³Ý ÉáµµÇÝ

¶որիի ոստիկանությունը հետաքրքիր ապացույցներ գտավ Եհովայի վկաներից մեկի տանը, որտեղ ապօրինի գրականության հետ մեկտեղ հայտնաբերվեցին Վրաստանի քարտեզներ, որոնց վրա նշված էին բոլոր վրացական ուղղափառ եկեղեցիները: Այս հավաքածուում նրանք հայտնաբերեցին նաեւ այն մոտավոր ամսաթվերը, երբ եկեղեցիները հարձակման պիտի ենթարկվեին եւ ոչնչացվեին: Գորիում գտնված մեկ այլ քարտեզում ներկայացված էր Վրաստանի գյուղական շրջանների աղքատ բնակչության պատկերը, նրանց քանակը յուրաքանչյուր գյուղում եւ բնակիչների անունները:

Ավելի ուշ Եհովայի վկաներից մեկի հետ հարցազրույցի ժամանակ այս խորհրդավոր քարտեզների նպատակը բացահայտվեց: Վրաստանի Եհովայի վկաները Միացյալ նահանգների գլխավոր գրասենյակներից հանձնարարություն են ստացել հնարավորինս շատ մարդու ներգրավել իրենց շարքերը: «Ձեզ համար դժվար կլինի աշխատել մեծ քաղաքներում ու բնակավայրերում, բայց մի հանձնվեք: Աշխատեք վրացական գյուղերում, որտեղ մարդիկ սոցիալական ու տնտեսական սուր կարիքի մեջ են: Յուրաքանչյուր գյուղում սկսեք համագործակցել ճանաչված ընտանիքներից մեկի որեւէ անդամի հետ, որը հետո ինքը շահագրգռված կլինի սփռել հավատքը»:

*Ի՞նչ կապ կա «Եհովայի վկաների» ու Վահաբիզմ ուսմունքի միջեւ:*

Այսօր փեսաբանները մեծ սպառնալիք են տեսնում ոչ ավանդական կրոնական աղանդների ներկայացուցիչների կողմից, այնպիսիք, ինչպիսիք են Եհովայի վկաներն ու վահաբականները:

Այս վերնագիրը հենված չի հոդվածի մեջ պարունակվող ոչ մի տեղեկության վրա: Լրագրողը հայակական լոբբիի կամ ԱՄՆ-ի կոնգրեսի մասին այլեւս ոչինչ չի հիշատակում:

Արդյո՞ք Եհովայի վկաների գրականությունը անօրինական է ըստ Վրաստանի օրենքների: Կոնկրետ ի՞նչ քրեական վտանգ է այն ներկայացնում: Ոստիկանության մեղադրանքների հիման վրա դրանց անօրինական անվանելը պարզապես չափազանցություն չէ՞:

Արդյո՞ք այս բոլոր տեղեկությունները հիմնված են ոստիկանության զեկույցի վրա: Եթե այո, ապա լրագրողը հստակորեն պետք է նշեր այն անձի անունն ու պաշտոնը, ով տրամադրել էր այս տեղեկությունները: Հակառակ դեպքում, մենք կարող ենք եզրակացնել, որ դա երկրորդ կամ, երրորդ ձեռքից տեղեկություններ են, որոնք բամբասանքից ավելի կշիռ չունեն:

Արդյո՞ք խոսքը գնում է այն տանը ապրող Եհովայի վկաների հետ ոստիկանության հարցաքննության մասին, որտեղ այդ նյութերն էին գտնվել: Անհնարին է հասկանալ:

Որտեղի՞ց է վերցված այս մեջբերումը: Նամակի՞ց: Տվյալ մեջբերումը կոնտեքստ չունի: Եվ ո՞վ է այդ խոսքերը փոխանցել լրագրողին: Ոստիկանությու՞նը: Մենք պետք է այս ամենն իմանանք, որպեսզի հասկանանք, թե ինչքանով վստահելի են դրանք: Եթե նույնիսկ սրանք օրինական են, լրագրողը ակնարկում է, որ ինքնին աղետաբեր է, եթե կրոնական կազմակերպությունը խորհուրդ է տալիս իր առաքյալներին մարդկանց դավանափոխել: Բայց չէ՞ որ հենց դա է նրանց առաքելությունը:

Ավանդական անվանումը խիստ հարաբերական է: Սրանք ավելի շուտ ոչ ավանդական են մի հասարակության մեջ, որտեղ իրենք նախկինում չեն եղել: Սրանք հավատալիքների համակարգ են դարձել միայն այն երկրներում, որտեղ սրանց գործունեությունը ավելի լայն է տարածված:

Սրանք երկուսն էլ ղեկավարվում են հատուկ գաղտնի գործակալությունների կողմից:

Այս կրոններն ակտիվացել են վերջին տասնամյակում՝ տարածվելով ամբողջ աշխարհով մեկ:

Եթե 10 տարի առաջ աշխարհի բնակչության 100 տոկոսը, այդ թվում ԱՄՆ բնակչությունը, Եհովայի վկաներին անլուրջ մարդկանց խումբ էր համարում, ապա այժմ միայն 70 տոկոսն է այդպես կարծում:

Քրիստոնեական ծագում ունեցող «Եհովայի վկաները» և մահմեդական արմատներ ունեցող վահաբիզմը հատուկ գաղտնի գործակալությունների կողմից ստեղծված նոր կրոններ են:

Երկուսի նպատակն էլ մարդկային մեծ զանգվածներ ներգրավելն է, եւ երկուսն էլ բնորոշվում են ագրեսիայի բուռն դրսեւորումներով: Ամբողջ աշխարհում քրեական օրենսգրքի հիմնական խախտողները Եհովայի վկաներն են: Բանն այն է, որ նրանք իրենց նպատակին հասնելու համար ստիպված են դիմել բռնության: Քրեական օրենսգիրքն արգելում է նաեւ նրանց բռնի ներխուժումները քաղաքացիների տներ իրենց անօրինական գրականությունը բաժանելու նպատակով:

Ինչ վերաբերում է վահաբիզմին, ապա նրա կողմնակիցների հավաստմամբ սա մի կրոն է, որ ավելի է մոտեցնում մարդկանց Ղուրանի ակունքներին, որոնք ներկայումս անտեսվում են մահմեդական հասարակության կողմից: Վահաբականները մահմեդականներին «վատ հավատացյալներ» են համարում: Վահաբականները դեմ են խաներին կամ դրամի ու կարողության առկայությանը: Նրանք համոզում են յուրաքանչյուր հավատացյալի, որ իրենց ուսմունքը համամարդկային է: Խանը կամ շեյխը բարեպաշտ վահաբականից ավելի բարձր չէ: Վահաբիզմը նաեւ պարզեցնում է հին մահմեդական ընտանեկան ավանդույթները: Օրինակ, եթե ավանդական մահմեդական ընտանիքում ամենաերիտասարդ կինը իրավունք չունի քնել այնքան ժամանակ քանի դեռ ընտանիքի որեւէ անդամ արթուն է, վահաբականների կարծիքով կինը պատասխանատու է միայն իր ամուսնու առջեւ: Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա համաձայն վահաբիզմի ուսմունքի, հզորության եւ իշ-

Այս նկատառումը չափազանց անհասկանալի է: Ի՞նչ է դա նշանակում: Որո՞նք են այդ հատուկ գործակալությունները: Արդյո՞ք Վատիկանն ու Ռուսական ուղղափառ եկեղեցին հատուկ գաղտնի գործակալություններ են համարվում:

Այս աղանդները 10 տարուց շատ ավելի են գործում: նախկին Խորհրդային Միության երկրներում է, որոնք միայն վերջին տասնամյակում են սրանց ծանոթացել:

Այս տվյալները առանց որեւէ հաստատող տեղեկության են բերված, ինչը թույլ կտար սրանց հավաստիությունը տեսնել: Անհասկանալի է, թե ի՞նչ է նշանակում «անլուրջ» բառը տվյալ համատեքստում, եւ չնայած, որ սրանք մեծ քանակությամբ հետեւորդներ չեն ունեցել Միացյալ Նահանգներում, սխալ է ասել, թե սրանց այնտեղ լուրջ չեն վերաբերվել:

Կրկին, շատ հարաբերական է «նոր են» բառի օգտագործումը:Երկուսն էլ արդեն մեկ դարից ավելի են գործում:

Այս մեղադրանքներին ոչ մի վկայություն չկա: Ինչպե՞ս են նրանք քրեական օրենսգիրքը խախտում: Եվ ի՞նչ բռնի գործողությունների մասին է խոսում լրագրողը: Սրանց սովորությունն է մարդկանց դռները թակել եւ նրանց հետ խոսել: Եթե դեպքեր են եղել, երբ նրանք տան դռնից ուժով են ներխուժել, ապա լրագրողը դրանց կոնկրետ օրինակները պետք է բերեր:

խանության կարելի է հասնել միայն անհատական քաջության ու զենքի միջոցով: Հատուկ գործակալությունները բավարար քանակությամբ զենք ու դրամ են տրամադրում յուրաքանչյուր վահաբականի: Նրանց ամեն օր կոչ են անում բռնության դիմել, արյուն թափել ու կռիվներ սարքել: Մարտի դաշտի հերոսը «անվախ սիրտ» տիտղոսին է արժանանում: Նրան հետմահու հավերժական կյանք է սպասվում, իսկ երկրի վրա դրախտային կյանք:

Կովկասյան տարածաշրջանում այս կրոններից երկուսն էլ ակտիվացել են վերջին 7-10 տարիների ընթացքում: Այս աղանդները համագործակցում են, և նրանց հիմնական նպատակը տարածաշրջանի վերահսկողությունն իրենց ձեռքը վերցնելն է:

Եթե «Եհովայի վկաները» չափազանց ակտիվ են հատկապես Վրաստանում, վահաբիզմը սկսել է աշխուժանալ Պանկիսի կիրճում և Աբխազիայում: Այս տիպի գաղտնի գործակալությունները, որոնք հիմնականում տեղակայված են Սաուդյան Արաբիայում, նպատակ ունեն տիրել համաշխարհային նավթի պաշարներին:

*Ո՞ւմ կհաջողվի իր ձեռքը վերցնել Կովկասի վերահսկողությունը:*

Այս աղանդներից երկուսն էլ շատ ակտիվ են գործում Կովկասում բնակչության կրոնական վերահսկողությունն իրենց ձեռքը վերցնելու համար, եւ առայժմ նրանք միմյանց համար խոչընդոտներ չեն ստեղծում: Եթե Մեյսոնի հիմնական նպատակը էլիտայի՝ քաղաքական գործիչների, գիտնականների ու արվեստագետների վրա վերահսկողություն սահմանելն էր, ապա վահաբիզմի ու «Եհովայի վկաներ»-ի նպատակը բնակչության լայն զանգվածներին վերահսկելն է:

Աղանդավորները կարծում են, որ այս կրոնները շուտով նույնքան մեծ տարածում կգտնեն, որքան բողոքականությունն ու կաթոլիկությունը Եվրոպայում: Արեւմտյան Եվրոպայի մի շարք երկրներում բողոքականությունը երկար ժամանակ աղանդ էր համարվում, սակայն այժմ այն պետական կրոն է:

Այնպես որ, ի՞նչը կարող է խանգարել 50 տարի հետո վահաբիզմը կամ «Եհովայի վկաները» Վրաստանում օրինական կրոն հռչակելուն:

*«Ջորջիան Թայմզ»*, Թբիլիսի, Վրաստան,
22-29 օգոստոսի, 2002 թ.

Որտեղի՞ց են քաղված վահաբականների մասին այս տեղեկությունները: Ոստիկանությունի՞ց: Կրոնի մասնագետի՞ց, թե՞ անձնական գիտելիքներից: Եվ վահաբականների մասին լրագրողի պատմած տեղեկությունները վտանգավոր բնույթի չեն: Կրոնների մեծամասնությունը քարոզում է, որ հավատքը համընդհանուր է, ճշմարտությունը մեկն է: Եվ մեծամասնությունը իր հետեւորդներին հետմահու կյանք է խոստանում: Զենքի եւ բռնությունների մասին տեղեկությունները լրագրողի սեփական բառերից զատ ոչ մի ուրիշ վկայությամբ չեն հաստատվում, իսկ դա մեղադրանքի համար շատ քիչ հիմք է:

Որտե՞ղ է վկայությունն այն մասին, որ սրանց գործողությունները համաձայնեցված են: Ի՞նչ նկատի ունի լրագրողը, ասելով, թե սրանք ուզում են տարածաշրջանում իրենց իշխանությունը հաստատել: Քաղաքակա՞ն իշխանություն, թե՞ պարզապես կրոնական իշխանություն:

Արդյո՞ք լրագրողը ուզում է ասել, որ Սաուդյան Արաբիան իր քաղաքացիներին ուղարկում է այլ, երկրներ, տեղացի բնակիչներին դավանափոխելու դեպի վահաբիզմ, որպեսզի Սաուդյան Արաբիան համաշխարհային նավթի շուկային տիրանա: Որտե՞ղ է այդ մեղադրանքի վկայությունը:

Արդյո՞ք այս նպատակը տարբերվում է բոլոր ուրիշ դավանանքների, այդ թվում և ուղղափառ եկեղեցու նպատակներից:

Արդյո՞ք դա վատ բան է: Ինչո՞վ է այս կամ այն դավանանքը պետական կրոնից վատ կամ լավ: Լրագրողը ոչ մի բացատրություն չի տալիս, կարծես թե այն փաստը, որ պետական կրոնը լավագույնն է, ապացույց չի պահանջում:

Ի՞նչ վատ բան կա նրանում, որ մարդկանց թույլ կտան ընտրել իրենց համար ամենահարմար կրոնական ավանդույթը: Եթե նրանք դավանափոխվում են, ապա դա հստակորեն նշանակում է, որ ուղղափառությունը հոգևոր եւ էմոցիոնալ կարիքները եւ պահանջները չի բավարարում, եւ այդ փաստն է, որ պետք է հետաքննել՝ ուրիշ դավանանքները մեղադրելու փոխարեն:

# 5. ê»é

ալկաններում վերջին փասը փարիների ընթացքում հասարակության փոխվելուն պես փոխվել է նաեւ կանանց դերը: Բայց եթե դատելու լինենք ըստ վերջերս կանանց համար հրապարակված մի քանի հանդեսների եւ մի շարք ուրիշ հրապարակությունների, կեզրակացնենք, թե նրանց հետաքրքրությունները միայն հագուստը, հարդարանքի միջոցները, ձեւավորումը եւ խոհարարությունն են:

Իհարկե, վերջին փասը փարիների զրկումներից կանայք էլ, ինչպես եւ մյուսները, էլ փառապել են, եւ հասկանալի է, որ առաջարկվող իրերի բազմազանությունը պետք է գայթակղիչ լինի, բայց շատ կանայք, անկասկած հետաքրքրությունների ավելի լայն շրջանակ ունեն:

Եթե կնոջը չեն ներկայացրել որպես փնարարության կամ նորաձեւության ասփվածուհու մարմնավորում, ապա հավանաբար նա լրափվական միջոցներում կհայփնվի որպես մարմնավաճառ կամ էլ որեւիցե ուրիշ փեսակի զոհ: Եվ, չնայած մարմնավաճառությունը եւ թրաֆիքինգը (կանանց ապօրինի առեւփուրը) լուրջ խնդիր են, բայց կարեւոր է լուսաբանել կանանց կյանքի բոլոր ասպարեզները՝ իրենց բազմազանությամբ, այնպես, ինչպես որ փղամարդկանց կյանքն է լուսաբանվում: Սփորեւ ներկայացված մի քանի խորհուրդները կօգնեն ձեզ այդ հարցում:

* Կանայք չպետք է հայտնվեն միայն զուտ կանանց խնդիրներին վերաբերող պատմություններում: Փորձեք կանանց իբրեւ աղբյուրներ ընդգրկել հնարավոր ամեն տեղ: Եթե գրում եք նկարչության որեւէ ուղղության մասին, գտեք մեկ կամ երկու նկարիչ կանանց, ովքեր որոշակի մեկնաբանություններ կանեն այդ ուղղության վերաբերյալ: Կամ եթե գրում եք ձեր քաղաքում կամ մարզում քաղաքական բանավեճերի մասին, փորձեք վկայակոչել որեւէ կին քաղաքական գործչի: Սրա էությունը կանանց արհեստականորեն ներկայացնելը չէ, այլ խնդիրների լայն շրջանակների վերաբերյալ գուցե իրենց տեսակետներն արտահայտելու համար նրանց հնարավորություն ընձեռելու կարեւորության գիտակցումը:

* Վերանայեք հերթական աղբյուրների եւ շփումների ցանկը, որոնց դուք ամեն անգամ անդրադառնում եք որեւէ նոր նյութ պատրաստելիս: Եթե ձեր ցանկն ամբողջությամբ կամ գերակշիռ մասով ներկայացնում են տղամարդիկ, ապա գիտակցված քայլեր ձեռնարկեք այն ընդլայնելու ուղղությամբ: Չնայած տղամարդիկ գերակշռում են բիզնեսի, ինչպես նաեւ գիտական, քաղաքական, եւ մշակութային կյանքում, միեւնույնն է ավելի հեշտությամբ, քան դուք կարծում եք, կարելի է գտնել այնպիսի կանանց, ովքեր կարող են նույնչափ բավարարել տեղեկություններ ստանալու ձեր կարիքները:

* Կանանց ընդգրկելիս՝ նրանց բնորոշեք այնպես, ինչպես կբնորոշեիք տղամարդկանց: Եթե դուք ընդհանրապես չեք նկարագրում որեւէ գործարարի հագուստը կամ սանրվածքը, ապա գործնական կնոջ հագուստն ու սանրվածքը եւս մի քննարկեք, եթե

միայն դա ինչ-որ ձեւով չի առնչվում բովանդակության: Խուսափեք այնպիսի անմիտ խոսքերից, ինչպիսին է, օրինակ, «իգական» բառը, որը ենթադրում է մի շարք զուգորդումներ եւ կարող է տարբեր կերպ մեկնաբանվել: Այդ պատճառով, առանձնահատուկ մանրամասնեք ձեր միտքը՝ բացատրելու համար թե ինչ նկատի ունեք. այն, որ նա նազանքո՞վ է քայլում, թե՞ որ մեղմ ձայնո՞վ է խոսում:

* Ուշադիր եղեք ձեր հոդվածում կանանց իսկական դերի մասին ենթադրություններ անելիս: Լրագրողները հաճախ կիսում են կանանց ու տղամարդկանց մասին հասարակության ունեցած պատկերացումները եւ նույնիսկ առանց դիտավորության ավելի սրում դրանք: Ոչ բոլոր կանայք են հետաքրքրվում նորաձեւությամբ եւ խոհանոցով: Նրանցից շատերը լրջորեն զբաղված են ամենահրատապ հասարակական եւ քաղաքական հարցերով, իսկ մյուսները՝ հաջողությամբ զբաղվում են բիզնեսով: Բացահայտեք նրանց, ու կյանքն անցնում է հակառակ կանանց մասին եղած ընդհանուր պատկերացումներին:

* Հանդիպեք կանանց կազմակերպությունների անդամների հետ եւ հարցրեք իրենց հոգսերի մասին: Հնարավոր է, որ նրանք այնպիսի խնդիրներ կարեւոր համարեն, որոնց մասին ոչ դուք եւ ոչ էլ ձեր խմբագիրները իրազեկ չեք եղել: Խրախուսեք նրանց զանգահարել ձեզ, երբ կարծում են, որ քննարկման արժանի ինչ-որ նորություններ ունեն: Սակայն նրանց ասածն իբրեւ օրենք մի ընդունեք եւ մի ենթադրեք, թե կանանց մյուս բոլոր կազմակերպությունները նույնը կասեն: Մյուսներն ավելի շուտ այլ կարծիքի կլինեն, եւ ձեր նյութի մեջ պետք է հաշվի առնվեն նաեւ այդ գաղափարները:

* Պատմություններ գրեք այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են ընտանեկան բռնությունները կամ սեռական հետապնդումները, որոնք լայնորեն քննարկվել են Արեւմուտքում, սակայն մեծ ուշադրության չեն արժանացել հետկոմունիստական հասարակություններում: Այս երկուսն էլ չափազանց լուրջ խնդիրներ են, որոնք ընդհանուր առմամբ անտեսվել են կամ թերի ուշադրության են արժանացել իրավական համակարգի, ինչպես նաեւ լրատվամիջոցների կողմից: Ընտանեկան բռնությունը սովորաբար համարվում է ներքին ընտանեկան խնդիր, եւ ոչ քան հանցանք, նույնիսկ երբ դրա հետեւանքով լուրջ վնասվածքներ են լինում: Ուսումնասիրեք, թե դրան ինչպես են վերաբերվում ձեր քաղաքում կամ մարզում: Արդյո՞ք օրենքը պաշտպանում է կանանց իրենց ամուսինների կամ զուգընկերների կողմից ծեծի ենթարկվելուց: Ինչպե՞ս են դրան արձագանքում ոստիկանությունը կամ իշխանությունները: Կան արդյո՞ք ապաստարաններ, որտեղ կանայք եւ երեխաները կարող են օգնություն գտնել:

* Մեկ այլ խնդիր է աշխատավայրում սեռական հետապնդումը, որը մեծ ուշադրության է արժանացել Արեւմուտքում: Մինչ որոշ մարդիկ դատարկ բան են համարում վերոնշյալ խնդիրը, փաստը է մնում այն, որ բոլոր հասարակություններում կանայք երբեմն ստիպված են լինում դիմակայել տղամարդ գործընկերների կամ ղեկավարների սեռական պահանջներին, ովքեր փոխարենը առաջարկում են աշխատավարձի բարձրացում եւ առաջխաղացում կամ էլ վախեցնում են հեռացնել աշխատանքից: Երբեմն նման հետապնդումը դրսեւորվում է ոչ թե սեքսի ուղղակի պահանջով, այլ կնոջն ուղղված գռեհիկ, նվաստացուցիչ կամ ծաղրող սեքսուալ արտահայտություններով. մի իրավիճակ, որ կարող է չափազանց տհաճ դարձնել աշխատավայրը: Կրկին, պարզեք, թե որոնք են ձեր մարզում կիրառվող օրենքները: Ի՞նչ սրության խնդիր է դա: Ինչպե՞ս են կանայք պայքարում դրա դեմ:

* Երբ հարցը վերաբերում է կանանց մասին լրատվամիջոցների հրապարակումնե-րին, հիմնական խնդիրներից մեկը մարմնավաճառությունն է: Ակնհայտ է, որ այս թե-մային անդրադառնալը կարեւոր է, բայց միեւնույն ժամանակ քննադատելի է, երբ փորձում են դատարպարտել այն կանանց, ում համար դա կարող է ապրուստի միակ միջոցը լինել: Նույնիսկ եթե կինն ինքն է ընտրել մարմնավաճառությունը եւ ոչ թե նրան ստիպել են, փորձեք նրա տեսանկյունից ընկալել աշխարհը: Ջանացեք վեր կանգնել ստերեոտիպերից: Ոչ բոլոր մարմնավաճառներն են թմրամոլներ եւ ոչ բոլորը՝ վատ մայրեր:

* Որոշ երկրներում մարմնավաճառները որդեգրել են « սեռական ոլորտի աշխատող» տերմինը՝ իբրեւ ավելի քիչ նվաստացուցիչ համարվող դիմելաձեւ: Հարցրեք նրանց, թե ինչու են նրանք նախընտրում այդ արտահայտությունը եւ մի հոդված գրեք այն մասին, թե ինչ է նշանակում այդ փոփոխությունը: Արդյո՞ք մարմնավաճառները կամ « սեռա-կան ոլորտի աշխատողները» փորձում են ստեղծել իրենց իսկ կազմակերպություննե-րը եւ ընկերությունները: Արդյո՞ք նրանք կողմնակից են, որպեսզի ավելի շատ հոգ տարվի իրենց առողջության մասին կամ փորձում են տեղակատվություն տարածել ՄԻԱՎ-ից եւ սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդություններից պաշտ-պանվելու մասին:

* Կանանց ապօրինի առեւտուրը (թրաֆիքինգը) եւս կարեւոր խնդիր է դարձել վեր-ջին տարիներին: Ուսումնասիրեք իրավիճակը ձեր մարզում: Որտեղի՞ց են գալիս կա-նայք: Ինչո՞վ են նրանց գայթակղում հեռանալ հայրենի երկրներից եւ ինչպե՞ս են նրանց ստիպում մնալ: Զրուցեք այդ հարցով զբաղվող հասարակական կազմակեր-պությունների հետ եւ դրանց միջոցով կապ հաստատեք նման իրավիճակում հայտն-ված կանանց հետ:

Լրատվամիջոցներում կանանց հիմնականում պատկերում են որպես մարմնավաճառներ: Այս հոդվածում կանայք պատկերված են ոչ թե միայն որպես մարմնավաճառներ, այլ հիվանդությունների կրողներ, եւ այդ համատեքստում՝ որպես բնակչության համար վտանգ: Ակնհայտ է, որ թերթերը եւ ուրիշ լրատվամիջոցները պետք է ուսումնասիրեն մարմնավաճառության խնդիրը հասարակությունում, բայց դա պետք է լինի կանանց մասին թեմաներից մեկը, այլ ոչ թե միակը: Եվ չափազանց անպատասխանատու է նրանց մասին գրել՝ առանց որեւիցե մարմնավաճառուհու կամ էլ կանանց իրավունքների պաշտպանության որեւէ կազմակերպության հետ խոսելու: Այլապես, նրանք պարզապես մեր սոցիալական խնդիրների քավության նոխազն են դառնում: Այս դեպքում՝ ՁԻԱՀ-ի եւ ՄԻԱՎ-ի տարածման մեղավորներ:

## Ø ³ ñÙÝ ³ í ³ × ³ éÝ»ñÁ ï ³ ñµ»ñ í »Ý»ñ ³ Ï ³ Ý ÑÇí ³ Ý¹áõÃÛáõÝÝ»ñÇ Ïñ áÕÝ»ñ »Ý

Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ եւ Եկատերինբուրգ քաղաքները ԱՊՀ[1] երկրների մեջ առաջնային դիրքն են գրավում անառակների մեջ ՁԻԱՀ-ի լայն տարածման քանակով:

Սա պարզվել է Ռուսաստանի չորս քաղաքներում եւ ԱՊՀ երկու երկրներում ՁԻԱՀ-ով հիվանդ մարդկանց միջեւ Մեդ Նյուզ- ի կոզմից անցկացված լայնածավալ հարցումներով:

Ըստ հարցումը անցկացրած խմբի ղեկավար Գալինա Ֆեդոտովայի, հարցաթերթերը բաժանվել էին Ռուսաստանի Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Եկատերինբուրգ, եւ Տոմսկ քաղաքներում, ինչպես նաեւ Մոլդովայում եւ Ադրբեջանում մարմնավաճառությամբ զբաղվող կանանց, եւ հարցաթերթիկների պատասխանները վերլուծվել են բժշկական հետազննության տվյալների հետ միասին:

Սանկտ Պետերբուրգը զբաղեցնում է առաջին տեղը անառակ կանանց մոտ ՁԻԱՀ-ի վարակի լայն տարածվածությամբ՝: Պարզվել է, որ մարմնավաճառությամբ զբաղվող կանանց 48%-ը մահացու վարակի կրող են, Ադրբեջանում՝ 13%-ը, իսկ Մոլդովայում՝ 28:

*«Էլչի»*, Բաքու, Ադրբեջան,
8 մայիսի, 2004 թ.

Կանայք հաճախակի դառնում են մարմնավաճառներ՝ գումար վաստակելու ոչ մի ուրիշ ճանապարհ չգտնելով: Սրանից նրանք ուրիշ մարդկանցից ավելի անառակ չեն դառնում: Եթե կինը պետք է կերակրի իր երեխաներին, բայց դա անելու ճանապարհ չի գտնում, միգուցե ավելի մեծ անառակություն է նրա կողմից մարմնավաճառությամբ չզբաղվել՝ իր երեխաներին սովամահության մատնելով: «Անառակ» բառի օգտագործումը այստեղ լրագրողի արժեքային տեսակետն է, որը հոդվածի հետ ոչ մի կապ չունի:

Նախորդ նախադասությունում լրագրողը խոսում է ՁԻԱՀ-ի (ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ) մասին, իսկ այստեղ Մարդու Իմունային անբավարարության վարակի մասին: Սրանք լրիվ տարբեր հասկացություններ են: Շատ մարդիկ ունեն ՄԻԱՎ-ոդը, ՁԻԱՀ-ի վարակն է, բայց նրանք ՁԻԱՀ չունեն: Այս հոդվածից այդպես էլ հնարավոր չէ հասկանալ, թե արդյոք հարցումը ՄԻԱՎ-ով, թե՞ ՁԻԱՀ-ով հիվանդների թիվն էր պարզելու:

1 Անկախ Պետությունների Համագործակցություն

Այս հոդվածում կանայք պատկերված են ագրեսիվ և անկայուն: Չնայած հոդվածում կանանց քաղաքական կառ-կածյալներ չեն ներկայացվում, բայց հստակորեն նրանց նկարագրում են իբրեւ մի խումբ անհասկանալի տեսակետ-ներ ունեցող ցնդած մարդկանց: Եթե նույնիսկ նրանց տեսակետները ծայրահեղական են, լավ կլիներ հենց նրանցից լսել, թե ինչի համար են պայքարում եւ ինչու են դա անում:

## ¼íÇ³¹Ç ÏáÕÙÝ³ÏÇó Ï³Ý³Ûù Ñ³ñÓ³Ïí»É »Ý §´áõñç³Ý³Ó»-¹»ÙáÏñ³ïÝ»ñÇ¦ íñ³

´ողնիսի միջադեպը մատնանշեց նախընտրական արյունահեղության սկիզբը: Այս արյունաթաթախ ընդհարումից մի քանի օր անց մեկ ուրիշ կռիվ բռնկեց, այս անգամ Թբիլիսիում:

Բախման պատճառը կրկին ընտրություններն էին: Այս ընդհարման առանձնահատկություն ու նշանակալիությունն էր, որ իրար հետ հակամարտում էին կանայք եւ տղամարդիկ: Բնականաբար, նրանք տարբեր քաղաքական կողմերն էին ներկայացնում:

Այս անգամ կռիվն ու ծեծկռտուքը մայրաքաղաքի Իսանի ընտրատարածքում խորհրդարանի պատգամավոր առաջադրված անձի պատճառով էր: Բուրջանաձե-դեմոկրատներն այս ընտրատարածքում առաջադրել են Դավիդ Չինչաձեի թեկնածությունը: 1999-2003թ. խորհրդարանում նարկայացնում էր Տրադիցիոնալիստներին:

Նրա թեկնածությունը առաջադրվում էր ընտրատարածքի ղեկավարների գրասենյակում կայացած արարողության ժամանակ: Մի քանի հարյուր մարդիկ էին եկել Չինչաձեին տեսնելու եւ լսելու համար: Նրանց մեծամասնությունը տղամարդիկ էին: Չինչաձեի ներկայացուցիչների եւ կողմնակիցների համար անսպասելի մի քանի տասնյակ կանայք հավաքվեցին գրասենյակի առջեւ: Ինչպես ականատեսներն են վկայում, միանգամից երեւաց, որ նրանք բարյացկամներ չէին:

Հանկարծ ձեզ մոտ սխալ տպավորություն չստեղծվի: Այս կանայք պարզապես եկել էին, որ արարողությունը ձախողեն:

Կանայք մղվեցին դեպի տղամարդիկ եւ քաղաքական բանավեճի մեջ մտան: Վրաստանում ապրող մարդիկ շատ դյուրազգաց են քաղաքականության հանդեպ, եւ քաղաքական գործչի մասին ասած մեկ խոսքն էլ կարող է վեճի սկիզբ դառ-

◄ Ի՞նչ կապ ունի նախորդ ընդհարումը այս մյուսի հետ: Լավ կլիներ նոր միջադեպը հակիրճ նկարագրել՝ կոնտեքստը ապահովելու համար:

◄ Ինչու՞ «բնականաբար»: Արդյո՞ք լրագրողը ուզում է ասել, որ կանայք եւ տղամարդիք միշտ հակասող նպատակներ ունեն:

◄ Սա չափազանց վանող հայտարարություն է: Ի՞նչ տեսք ունեին նրանք: Ի՞նչ դեմքի արտահայտություն: Որոշակի մանրամասնություններ են հարկավոր տեսարանը նկարագրելու համար:

◄ Բողոքող կանանց մասին խոսելիս լրագրողի օգտագործած հեգնանքը վկայում է, որ այդ կանանց ասածը որեւէ կարեւորություն չէր ներկայացնում: Բայց եթե նրանք այդքան զայրացած էին, ուրեմն հստակ ասելիք ունեին: Դժբախտաբար, մենք այդպես էլ չենք իմանում, թե ինչ:

նալ: Չինչաձեի կողմնակիցներին թվում էր, թե կկարողանան զսպել վիճելու գայթակղությունը, եւ նույնիսկ կանանց որոշ ժամանակ սիրաշահում էին: Բայց թեժ բանավեճ բացվեց: Սա տղամարդկանց սխալն էր. հենց որ նրանք քաղաքական բանավեճի մեջ մտան, կանայք անմարդկային աղաղակ բարձրացրին, եւ պարզ դարձավ, որ նրանք նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցներ էին:

Այս կանայք ծեծկռտուքներին մասնակցելու մեծ փորձ ունեն: Վերջին տասը տարիների ընթացքում նրանք պարբերաբար վեճերի մեջ են ներքաշվում, երբեմն զինված ուժերի հետ, երբեմն էլ ոստիկանության հատուկ ջոկատների:

Այդ պատճառով նրանց համար դժվարություն չէր ներկայացնում Չինչաձեի կողմնակիցների դիմադրությունը հաղթահարել: Տղամարդիկ սկզբից հետ քաշվեցին, բայց երբ կանայք սկսեցին նրանց ճանկռտել, տղամարդիկ ստիպված եղան հայհոյանքների անցնել:

Հակառակորդները սա անպատասխան չթողեցին: Այդ կանայք շատ հմտացած են կեղտոտ բառեր օգտագործելու մեջ:

Վերջիվերջո, Չինչաձեի առաջադրման արարողությունը հետաձգվեց: Լսելով կանանց աղաղակները՝ տղամարդիկ լքեցին մարտադաշտը, իսկ նախկին նախագահի կողմակիցները հետեւեցին նրանց, ասելով, որ երկիրը կփրկվի միայն երբ Գամսախուրդիան ետ գա:

Բուրջանաձե-դեմոկրատները այս միջադեպին մեծ ուշադրություն չդարձրեցին: Նրանք միայն այն հարցը բարձրացրեցին, որ տղամարդկանց վախեցրել էին, բայց չասացին, թե ինչպե՞ս մի քանի կանայք կարողացան իրենց կողմնակիցներին վախեցնել:

Չինչաձեի նախընտրական շտաբում մինչեւ օրս քննարկում են, թե ու՞մ շահերից ելնելով այդ կանայք խանգարեցին ընտրողների հետ Չինչաձեի հանդիպումը: Բացի Չինաչաձեից այդ ընտրատարածքում երկու ուրիշ թեկնածուներ կան, բայց Զվիադի կողմնակից կանայք ոչ Գիա Կարկարաշվիլիի, ոչ էլ Վլադիմիր Բակրաձեի համակիրներ են: Այնպես որ կարելի է չքննարկել այն, թե սրանք երկու թեկնածուներից որեւէ մեկի շահերն էին պաշտպանում: Թվում է, թե նրանք

Կանանց պահվածքը այստեղ կենդանային է նկարագրվում, եւ դա կապվում է նրանց քաղաքական համոզմունքների հետ: Նամանավանդ պարզունակ համեմատական նկարագիրը բացարձակ չի պարզաբանում, թե ո՞րն է քաղաքական բանավեճը: Քանի որ նրանք Գամսախուրդիայի կողմնակիցներն են, որը մահացել է տասը տարուց ավելի առաջ, ուրեմն այստեղ ինչ-որ կոնտեքստ կարևի է գտնել: Ինչու՞ են նրանք Գամսախուրդիային համակրում: Արդյո՞ք նրանք մտածում են, թե նա երկրի համար ինչ-որ բան կարող էր անել հիմա: Լրագրողը նույնիսկ չի ջանում այդ հարցերին պատասխանել:

Արդյո՞ք այն փաստը, որ նրանք նախկինում էլ են նման բողոքներով հանդես եկել, նշանակում է, թե նրանց քաղաքական տեսակետները անօրինական են: Արդյո՞ք նրանք են միշտ հանդիսացել կռվի պատճառը:

Արդյո՞ք բոլոր կանայք էին ճանկռում: Թե՞ միայն մեկը: Ո՞վ է այս մեղադրանքի հեղինակը: Անհասկանալի է մնում, թե լրագրողը այնտեղ անձամբ ներկա եղել է, թե՞ ոչ:

Այստեղ նկարագրվում է, իբր թե կանանց պահելաձևը ստիպեց տղամարդկանց հայհոյել: Բայց լրագրողը այստեղ վիրավորում է կանանց, նրանց հայհոյելու «հմտությունների» մասին պատմելով: Ինչու՞ կեղտոտ բառեր օգտագործելը սովորական երևույթ է տղամարդկանց համար, իսկ կանանց համար՝ ոչ:

Ինչպե՞ս էին այդ հարցը բարձրացրել: Ու՞մ էին նրանք կոնկրետ մեղադրում վախեցնելու համար:

պարզապես կամավորներ էին, եւ պարզապես քաղաքական լարվածություն հրահրելու համար դա արեցին:

Նրանց տրամադրվածությունից եւ ձայնի տոնից դատելով` կարելի ենթադրել, որ նրանք ուրիշ տեղերում էլ նմանատիպ բողոքի ակցիաներ կկազմակերպեն: Միայն թե նախօրոք իմանան, թե որտեղ եւ ինչ թեկնածությունների առաջադրումներ պիտի լինեն:

*«Ախալի Թաոբա»*, Թբիլիսի, Վրաստան,
1 հոկտեմբերի, 2003 թ.

Սա կրկին համոզում է, որ նրանց գործողությունները թելադրված են նրանց ուժեղ քաղաքական համոզմունքներով: Միայն այն պատճառը, որ լրագրողը այդ համոզմունքները չի կիսում, չի նշանակում, որ այդ կանայք իրավունք չունեն արտահայտվելու:

Լրագրական հիմնական պահանջներին համապատասխան այս հոդվածում ներկայացվում են երկու հակասող տեսակետներ մի կարեւոր հարցի վերաբերյալ՝ կանանց դերը հասարակական եւ քաղաքական կյանքում: Ռուզան Խաչատրյանին հնարավորություն ընձեռնելով նախագահի նկատառումներին պատասխանել, լրագրողը հնարավորություն է տալիս ընթերցողներին նախընտրությունը տալ այս կամ այն փաստարկին: Բայց լավ կլիներ նաեւ նախագահին, կամ էլ նրա աշխատակազմից որեւէ մեկին հնարավորություն ընձեռնել հակառակվել նրա դատողություններին, մասնավորապես այն մեղադրանքին, որ իր վարչակազմը խախտում է Սահմանադրությունը եւ օրինականությունը: Եթե նույնիսկ աշխատակազմից ոչ ոք չհամաձայներ պատասխան տալ, դա կնշվեր հոդվածի մեջ՝ ընթերցողներին ցույց տալով, որ գոնե պատասխան ստանալու փորձ է արվել:

## §Ð ³ çáñ¹ Ø ³ ñïÇ 8-Ý ³ ÝóÏ ³ óÝ»Éáõ »Ýù Ù»ñ ÁÝï ³ ÝÇùÝ»ñÇ Ñ»ï¦

Արդյո՞ք լրագրողը նախագահի հետ հանդիպմանը ներկա է եղել: Եթե այո, ապա ուսանողները ի՞նչ պատասխանեցին նախագահի դիտողությանը: Նրանք տվեցի՞ն հետեւանքային հարցեր: Նախագահի հայտարարությունը հստակորեն կանանց դերի վերաբերյալ ստերեոտիպային արտահայտում է: Արդյո՞ք նախագահը որեւէ բան է խոսել այն մասին, թե ինչու է հանրահավաքը ագրեսիվ եղել: Եթե այո, ապա դա պետք է նշել: Եթե լրագրողը ներկա չի եղել, կարեւոր է նշել մեջբերված խոսքի աղբյուրը՝ օրինակ, պաշտոնական հաղորդագրություն կամ կառավարության ներկայացուցիչ, որպեսզի ընթերցողը համոզվի, որ այդ հայտարարությունը հենց այն է, ինչ նախագահն է ասել:

èոբերտ Քոչարյանը Երեւանի պետական համալսարանում հանդիպելով ուսանողների հետ, ի պատասխան այն հարցին, թե ինչպիսի՞ն է նախագահի վերաբերմունքը մարտի 8-ին կանանց բողոքի հանրահավաքի նկատմամբ, ասաց. «Մարտի 8-ը մեր գիտակցության մեջ կանացի ջերմության, քնքշության եւ ընտանեկան տոն է: Անկեղծ ասած՝ չեմ հասկանում, թե ինչպես կարելի է այդ օրը ագրեսիվ դրսեւորումներով հանրահավաքի դուրս գալ»:

Մեր խնդրանքով նախագահի արտահայտությունների մասին իր կարծիքը հայտնեց «Արդարություն» դաշինքի մամլո պատասխանատու, մարտի 8-ի ցույցի մասնակից Ռուզան Խաչատրյանը. «Հետաքրքիր բան է նկատվում. վերջերս պարոն Քոչարյանը չափազանց անկեղծացել է, ի դեպ՝ ի վնաս իրեն: Նա չի հասկանում, թե «ինչպես կարելի է այդ օրը ագրեսիվ դրսեւորումներով հանրահավաքի դուրս գալ»: Բնականաբար, հարց է ծագում, իսկ հասկանո՞ւմ է, թե որ օրը կարելի է այդ «ագրեսիվ դրսեւորումները» ցույց տալ, եւ եթե հասկանում է, միգուցե կհուշի՞ մեզ: Եվ նա չարաչար սխալվում է՝ կարծելով, թե այդ օրը բողոքի ցույցով դուրս էին եկել կանայք, ում տանը ջերմություն չկա: Այդ օրը հանրահավաքի էին եկել կանայք, ովքեր բացի իրենց ընտանեկան հոգսերից, հոգում են նաեւ պետության եւ ազգի ճակատագրի համար, ովքեր սիրում են իրենց հայրենիքը, ինչպես իրենց ընտանիքը: Նաեւ հավաստիացնում ենք պարոն Քոչարյանին, որ հաջորդ մարտի 8-ը մենք անցկացնելու ենք մեր ընտանիքների հետ, որովհետեւ երկրում արդեն վերականգնված կլինի սահմանադրական կարգը, եւ ձեւավորված կլինի օրինական իշխանություն»:

*«Իրավունք»*, Երեւան, Հայաստան, 12 մարտի, 2004 թ.

Ե՞րբ է կայացել այդ հանդիպումը: Ի՞նչ առիթով էր այդ հանդիպումը կազմակերպվել:

Լավ կլիներ նաեւ Մարտի 8-ի հանրահավաքի մասին տեղեկություններ տալ: Ո՞վ էր այն կազմակերպել: Քանի՞ մարդ էր դրան մասնակցել: Ի՞նչ պահանջներ էին նրանք ներկայացնում: Սա միանգամյա միջոցառո՞ւմ էր, թե՞ նույն մարդկանց կողմից հետեւողականորեն կազմակերպվող ցույցերի մի մասն էր:

Այս հայտարարությունը շատ պարզ է, բայց լավ կլիներ մի քիչ ավելի մեծ կոնտեքստ ապահովվել սրա համար: Մարտի 8-ի հանրահավաքի եւ դրա՝ քաղաքականությանը առնչության մասին մանրամասները կօգնեին ընթերցողին ըմբռնել դրա իմաստը եւ կարեւորությունը:

# 6. üÇ½ÇÏ ³ Ï ³ Ý »õ Ùï ³ íáñ Ñ ³ ßÙ ³ Ý¹ ³ ÙáõÃÛáõÝ

# üÇ½ÇÏ³Ï³Ý »õ Ùï³íáñ Ñ³ßÙ³Ý¹³ÙáõÃÛáõÝ

Լրատվամիջոցները հաճախ են անտեսում ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամներին: Իսկ եթե անգամ գրում են նրանց մասին, ապա իբրեւ ծաղրի առարկա կամ կարեկցանքի արժանի մարդկանց: Լրագրողները հաճախ նրանց խնդիրները քննարկում են բժիշկների, կառավարության անդամների, բայց ոչ հենց իրենց՝ հաշմանդամների հետ, հետեւաբար շատ քիչ սպասում, թե ինչ են այդ մարդիկ զգում եւ ինչ են մտածում իրենց վիճակի մասին:

Որոշ դեպքերում արդարանում են, թե դժվար է գտնել հաշմանդամների՝ հարցազրույց վերցնելու համար: Շիզոֆրենիա, թերզարգացածություն կամ այլ մտավոր եւ հոգեկան բարդություններ ունեցող մարդիկ երկար ժամանակ մեկուսացած են եղել կամ տներում, կամ հաստատություններում, որովհետեւ նրանց ընտանիքները ամաչել են նրանցից կամ ցանկացել են պաշտպանել նրանց հասարակական խտրականությունից: Դա վերաբերում է նաեւ հաշմանդամ կամ ուղեղի կաթվածով, սկլերոզով տառապող մարդկանց, ինչպես նաեւ մյուս ֆիզիկական հաշմանդամներին, հատկապես այն պատճառով, որ հասարակությունը քիչ ջանքեր է գործադրել հոգալու նրանց հատուկ կարիքները կրթության  բնագավառում, աշխատավայրում եւ ենթակառուցվածքներում, ինչպես, օրինակ, փողոցները կամ հասարակական շինությունները:

Բարդում է առաջանում, երբ հաշմանդամները անդամակցում են այլ հասարակական խմբերի, որոնց հասարակությունը բացասաբար է վերաբերվում: Չնայած ցանկացած մարդ կարող է վարակվել ՄԻԱՎ-ով եւ ՁԻԱՀ-ով, սակայն թմրամոլները, մարմնավաճառները եւ համասեռամոլները, որոնց սովորաբար չեն ընդունում իբրեւ հասարակության կարեւոր անդամների, հաճախ համարվում են ամենամեծ ռիսկի խումբը:

Հաշմանդամների մասին գրելիս հաշվի առնեք ստորեւ բերվածը:

* Նախ, նրա մասին գրելիս անպայման զրուցեք նրանց հետ: Այն ինչ ուրիշներն են պատմում ձեզ նրանց մասին, նույնիսկ եթե խոսում են կարեկցանքով, պետք է պարզապես մեկնարկային կետ ծառայի ձեր նյութի համար: Դուք պետք է կապ հաստատեք հենց հաշմանդամների հետ  եւ հարցնեք, թե արդյոք ձեր ունեցած տեղեկությունները համապատասխանում են այն ամենին, ինչ նրանք իրականում զգում են: Հակասությունների դեպքում կարող եք կրկին բժիշկների կամ մյուս փորձագետների հետ:

* Հաշմանդամների մասին մի գրեք միայն իրենց հաշմանդամության ենթատեքստով: Նրանք եւս բոլորի նման ունեն հետաքրքրություններ, կարիերա եւ ընտանիք: Եթե հանդիպեք այնպիսի մարդկանց, ովքեր չնայած իրենց հաշմանդամությանը, հաջողություններ են հասել որպես նկարիչներ, քաղաքական գործիչներ կամ այլ մասնագետներ, ապա կարող եք շատ լավ նյութ պատրաստել: Որոշ ժամանակ անցկացրեք նրանց հետ՝ պարզելու համար, թե ինչպես են հաղթահարել իրենց հաջողության ճանապարհին եղած դժվարությունները: Հարցրեք նրանց, թե ի՞նչ խորհուրդ կտային նմանատիպ իրավիճակում հայտնված այլ մարդկանց:

* Ուշադրություն դարձրեք ձեր բառապաշարին: Յուրաքանչյուր լեզվում կան հաշմանդամներին բնորոշող հատուկ բառեր, որոնց մի մասը վիրավորական է, իսկ մյուսը՝

ոչ: Հնարավոր է դուք կարծեք թե, կոնկրետ այս կամ այն բառը կամ արտահայտությունը վիրավորական չէ, սակայն դուք չեք կարող ճիշտ դատել: Եթե հաշմանդամներն ասեն, որ նախընտրում են, որպեզի իրենց այլ կերպ դիմեն, ապա պետք է հաշվի առնեք նրանց խնդրանքը:

* Հաշմանդամների մասին լրագրության ամենկարեւոր կողմերից մեկը նրանց հնարավորությունների շրջանակի խնդիրն է: Գրեք այն մասին, թե արդյո՞ք հասարակությունը ջանում է թույլ տալ հաշմանդամներին մասնակցել կարեւոր հասարակական միջոցառումներին: Եթե այդպես չէ, ապա ինչու՞: Արդյո՞ք փողն է պատճառը, քաղաքական կամքի բացակայությու՞նը, խորապես արմատացած նախապաշարմունքնե՞րը, թե՞ մեկ այլ խնդիր: Ինչպիսի՞ կրթական կամ մասնագիտական հնարավորություններ են բաց կամ  էլ փակ հաշմանդամների համար:

* Ուսումնասիրեք, թե արդյոք հաշմանդամները կազմու՞մ են խմբեր կամ համագործակցու՞մ են այլ հասարակական կազմակերպությունների հետ՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար եւ ինչպե՞ս: Արեւելյան Եվրոպայի շատ երկրներում, օրինակ, ՄԻԱՎ-ով եւ ՁԻԱՀ-ով փառապող մարդիկ ստեղծել են իրենց կազմակերպությունները՝ թե միմյանց սատար կանգնելու, թե կառավարությանն ու հասարակությանը իրենց կարիքներին իրազեկ դարձնելու համար: Շատ տարածաշրջաններում մտավոր եւ ֆիզիկական հաշմանդամները եւ նրանց ընտանիքները պահանջում են արդյունավետ բուժման առավել մատչելիություն: Պարզեք, թե այդ առումով ի՞նչ է կատարվում ձեր մարզում:

* Համոզվեք, որ գիտեք թե ինչի մասին եք գրում: Եթե, օրինակ, գրում եք ՄԻԱՎ-ով տառապող մարդկանց մասին, համոզվեք, որ հասկանում եք ՄԻԱՎ-ով վարակված լինելու եւ ՁԻԱՀ ունենալու միջեւ եղած տարբերությունները, հասկանում եք, թե ինչպես է փոխանցվում եւ ինչպես չի փոխանցվում ՄԻԱՎ-ը: Լրագրողները մարդկանց տեղեկացնելու հիանալի հնարավորություն ունեն, բայց միեւնույն ժամանակ մեծ պատասխանատվություն են կրում սխալ տեղեկատվություն փոխանցելու համար:

* Լրագրողի համար տարբերություն կա հաշմանդամների իրականությունը ըմբռնելու եւ վերջիններիս կարեկցելու միջեւ: Եթե դուք կիսում ենք նրանց ապրումները, նշանակում է հարգում եք նրանց որպես անհատ, քանի որ զրուցում ու ժամանակ եք անցկացնում նրանց հետ, անմիջականորեն ծանոթանում նրանց կյանքին: Կարեկցանքը հաճախ ենթադրում է մի տեսակ զիջողական վերաբերմունք, թե դուք կամ մյուսները նրանցից ավելի լավ գիտեք իրենց կարիքները: Եթե դուք հաշմանդամների մասին կարծիք եք կազմել հիմնվելով ոչ թե վերջիններիս, այլ ուրիշների ասածների վրա, ուրեմն, ավելի շուտ կարեկցանք  եք զգում եւ դեռեւս պատրաստ չեք նրանց հուզող հարցերի մասին գրելու:

* Քանի որ հաշմանդամները հաճախ մեկուսացած են հասարակությունից, հնարավոր է դժվար լինի գտնել նրանց զրուցելու համար: Ամենահարմար սկիզբը նրանց ներկայացնող խմբերի եւ ՀԿ-ների հետ կապնվելն է: Զրուցեք կազմակերպիչների հետ՝ հաշմանդամների հոգսերի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար եւ նրանց միջոցով կապ հաստատեք իրենց անդամների հետ: Դուք պետք է անպայման զրուցեք նաեւ խմբում չընդգրկված մյուս հաշմանդամների հետ, ովքեր կարող են այլ դիրքորոշում ունենալ կամ ավելի անկեղծ ու շիտակ մտքեր եւ կարծիքներ արտահայտել:

* Հաճախ պարզվում է, որ ստերեոտիպերը ճշմարտության փարր են պարունակում: Անդամահատված մարդկանց շրջանակներում կարելի է տեսնել շատ մուրացկանների եւ անտուն մարդկանց, սակայն դրա պատճառը հիմնականում այն է, որ հասարակությունը նրանց այլ տարբերակ չի առաջարկում: Թմրամոլների մոտ ՄԻԱՎ-ի ռիսկի աստիճանն ավելի բարձր է այն պատճառով, որ նրանք չգիտեն ինչպես պաշտպանվել վարակից կամ հնարավորություն չեն ունենում մաքրել ասեղները: Հաղորդակցման պատճառները հաճախ խոր արմատներ ունեն հասարակական խնդիրների մեջ եւ լրագրողի դերը այդ մարդկանց մեղադրելը չէ:

Այս հոդվածը, հաշմանդամների խնդիրները ներկայացնելու հետ մեկտեղ, պատկերում է նրանց անշնորհակալությունը՝ առաջարկվող օգնության դիմաց: Հոդվածի վերնագիրը հաստատում է այդ տպավորությունը՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրելով նրանց բողոքի վրա: Հոդվածը տպավորություն է ստեղծում, թե նրանք ագահ են եւ հաստարակությունից, որը պատրաստակամորեն նրանց օգնում է, կորզում են ինչ հնարավոր է: Հոդվածը մանրանում է՝ նկարագրելով Արթիկի քաղաքապետի եւ տեղի հաշմանդամների միջեւ լեզվակռիվը, եւ գրեթե ոչինչ չի անում նրանց կյանքի առեւլի դժվարությունները ներկայացնելու համար:

## Ð ³ ßÙ ³ Ý¹ ³ ÙÝ»ñÁ µáÕáùáõÙ »Ý

§²սպղիկ» հաշմանդամների միությունը հունիսի 15-ին իրականացրեց իր առաջին ակցիան՝ «Պաշտպանենք հաշմանդամների իրավունքները եւ աջակցենք նրանց» թեմայով:

ԱՄՆ «Սայլակների հիմնադրամ» կազմակերպության կողմից «Ասպղիկի» նախագահ Լեւոն Ներսիսյանը ստացել էր 150 ԱՄՆ դոլար արժողությամբ 240 սայլակներ՝ դրանք ՀՀ[1] մարզերում ու համայնքներում, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղում բաժանելու համար: Առաջինն այս առաջարկությանն արձագանքել էր Արթիկի քաղաքապետ Համայակ Աբրահամյանը, ուստի 17 արթիկցիներ առաջինը ստացան նոր սայլակները: Հաշմանդամների հետ ավելի հեշտ աշխատելու եւ նրանց ֆինանսական օգնություն ցույց տալու համար Լեւոն Ներսիսյանն առաջարկել էր քաղաքապետին Արթիկում հիմնադրել հաշմանդամ երեխաների տեղական ծնողական կազմակերպություն: Մինչ ծնողները կհավաքվեին եւ կընտրեին կազմակերպության նախագահին, Հ. Աբրահամյանն արդեն ներկայացրեց այդ պաշտոնի համար ամենահարմար թեկնածուին՝ Նարինե Զաքարյանին: Վերջինս, լինելով 20-ամյա անփորձ աղջիկ, ինչքան էլ անկեղծորեն ասում էր, որ համակարգչով աշխատել չգիտի, որ գերմաներեն է անցել դպրոցում ու անգլերեն ընդհանրապես չգիտի, քաղաքապետը փորձում էր իր լավ ընկերոջ՝ ավագանու անդամ Սերգեյ Զաքարյանի միամիտ աղջկան հասկացնել, որ «ոչինչ կսորվիս, չիդեմ որս է»:

Լրագրողը անշուշտ քննադատում է քաղաքապետին, բայց այդ վերաբերմունքը նա պետք է փաստացի ներկայացնի: Ինչու է քաղաքապետը կոմիտեի նախագահի ընտրելուց դեր խաղում: Արդյո՞ք ներկաներից որեւէ մեկը, այդ թվում եւ լրագրողը, հարցրեցին, թե ինչու՞ իր ընկերոջ աղջիկը պետք է այդ պաշտոնը ստանձնի: Եթե հարցրել են, դրա մասին գրել է պետք: Եթե ոչ՝ ինչո՞ւ ոչ:

1 Հայաստանի Հանրապետություն

Երբ եկավ սայլակներ բաժանելու պահը, քաղաքապետարանի դիմաց հավաքված հաշմանդամների ծնողները  սկսեցին «չեմուչում» անել՝ դժգոհելով մերթ սայլակների չափսերից, մերթ անհարմարությունից, կամ էլ՝ դրա դիմաց 150 դոլար խնդրեցին:

Բայց «Ասպդիկի» նախագահը համեստորեն ներկայացրեց իրենց հասարակական կազմակերպության գործունեությունը, բացատրեց, որ սայլակներ են ստացել և այստեղ փաթեթավորել:

Երբ սայլակ ստացողների ցուցակում կարդացին Արայիկ Փամփալյանի անունը, հաշմանդամ երեխայի մայրը ոչ միայն հրաժարվեց օգնությունից, այլև բարձրաձայն հայտարարեց, որ նման կազմակերպություններն ամեն ինչ անում են իրենց օգնելու համար, իսկ իրենց քաղաքապետը ոչնչով չի աջակցում հաշմանդամներին, վիրավորում է ու վռնդում: «Ինձի կըսե՝ քու հաշմանդամդ ինձի պետք չէ, չզարմացնես երեխովդ»: Քիչ հետո քաղաքապետի ու այդ կնոջ միջև լեզվակռիվ բռնկվեց, մեկը բղավում էր. «Ինձ հեչ մեկը ստեղ չի օգնել, իմ հաշմանդամ երեխեն սոված ա մնացել, ամսական 3600 դրամ թոշակի հույսին»,- մյուսն էլ պատասխանում էր. «Սուտ կըսես, չես ամնչե, քանի անգամ ես քեզ օգնել եմ, ուղղակի բանավոր օգնություն է եղել ու դիմումները չեմ պահել»:

Ցավալի էր այն, որ այդպես էլ հաշմանդամ երեխային չկարողացանք համոզել, որ փոխի իր հին սայլակը նորով:

«Ես շնորհակալ եմ բարեգործներին, բայց էս նվերը չեմ ուզե, կայյասկի տեղը փող կուզեմ, որ հաց ուտեմ ու տուն առնեմ»:

Տեսնելով, որ շրջապատի հետաքրքրությունը մեծանում է , քաղաքապետն առաջարկեց, որ ինքը մուծի 5000 դրամ տան վարձը, բայց հետո բարկանալով կնոջ ագրեսիվ վերաբերմունքից՝ հրաժարվեց իր խոսքից: Ի վերջո, Հ. Աբրահամյանը մի «հրաշք» ելք առաջարկեց. «Լավ, արի գրանցվի «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրում, կդասավորիմ, գործի չես գնա, օրական 1000 դրամ կուդան»: Հաշմանդամ երեխան մտավախություն հայտնեց, որ մեկ է հույս չունի, թե հրաշք կլինի ու քաղապետն իր խոստումը կպահի: Այնուամենայնիվ, «Ասպդիկ» հաշմանդամների միությունը Արթիկում իր առաքելությունը կատարեց:

*«Առավոտ»*, Երևան, Հայաստան,
17 հունիսի, 2004 թ.

Ինչքանո՞վ էին իրավացի նրանց բողոքները: Ինչքա՞ն մարդ էր այնտեղ ներկա: Ինչ-որ մեկին սայլակները դուր եկա՞ն: Եթե բողոքները փղեղին էին, ուրեմն նրանք պարզապես փող մուրող անշնորհակալներ չէին: Այս հոդվածի ոճը տպավորություն է ստեղծում, թե նրանք ընդհանրապես ոչնչի արժանի չէին:

Լավ կլիներ, եթե լրագրողը մեղադրանքի ճշմարտությունը կարողանար բացահայտել: Այլապես, այս ամենը պարզապես երկու հոգու բարձր գոռալու մրցույթի է նման, և ընթերցողները չեն կողմնորոշվի, ում հավատալ:

Տպավորություն է ստեղծվում, թե լրագրողը ջանում էր, որ երեխան սայլակը վերցնի: Ինչո՞ւ էր նա այդ անում: Արդյո՞ք նա համարում էր, որ սայլակների դիմաց գումար պահանջելը արդարացի չէր: Արդյո՞ք լրագրողը համոզված էր, որ սայլակները վերցնել է պետք: Եվ արդյո՞ք լրագրողի կողմից ճիշտ էր այդ իրադարձությանը մասնակցել այն դեպքում, երբ նա դրա մասին հոդված էր գրելու:

Այս վերջին նախադասությունը շատ շփոթեցնող է: Ինչպե՞ս միությունը իր առաքելությունը կատարեց: Նրան հաջողվե՞ց բաժանել մանցած 239 սայլակները: Եթե այո, ապա մնացածների վերաբերմունքը ինչպիսին էր: Լոկ քաղաքապետի և մի ընտանիքի հակաճառության վրա կենտրոնանալով լրագրողը ընթերցողին զրկում է իրադարձության բոլոր մյուս մանրամասներից և մյուսների արձագանքներից, ինչը, միգուցե, ավելի շատ բան կպարզաբաներ:

Այս հոդվածը հոգեբուժարանում բռնկված հրդեհի մասին է եւ վերնագրում ծայրահեղ վիրավորական լեզվական ոճի օգտագործման մի օրինակ է:
«Խորովված գծերը» վերնագիրը ոչ միայն մտավոր հիվանդություններից տառապողների մասին գոյություն ունեցող ստերեոտիպների վրա էր հիմնված, այլեւ ճշգրիտ չէր, քանի որ ոչ ոք չէր տուժել հրդեհից:

## Êáñáí í ³ Í ·Å»ñÁ

*Ðñ ³ ï ³ ñ ³ ÏÇãÁ Ý»ñáÕáõÃÛáõÝ ¿ ËÝ¹ñáõÙ í»ñÝ ³ ·ñÇ Ñ ³ Ù ³ ñ*

Օրեքշաբթի օրը քաղաքի փաբլոիդի (դեղին մամուլ) հրապարակիչը մամուլում ներողություն է խնդրել հոգեբուժարանում բռնկված հրդեհի մասին պատմության վերնագրի համար: Հուլիսի 9-ին Թրենթոնի հոգեբուժարանի վարչական շենքին վնաս պատճառած հրդեհի մասին հոդվածը *«Թրենթոնիան»* թերթում հայտնվել էր «Խորովված գծերը» վերնագրով: Շենքում հիվանդներ չեն եղել, եւ ոչ ոք վնասվածքներ չի ստացել: Խմբագրականում Դեյվիդ Բ. Բոնֆիլդը դա անվանել է «անտաշ ու չմտածված վերնագիր, որը դաժան անլրջություն է մտավոր հիվանդների հանդեպ, որը ճշգրիտ չէ»: Բոնֆիլդը նշել է, որ 47.526 տպաքանակ ունեցող օրաթերթի ընթերցողները խմբագրությունը հեղեղել են բողոքներով եւ խմբագրին ուղղված նամակներով: «Մեր թերթը միշտ հպարտացել է նրանով, որ պայքարել է հզորների դեմ միշտ անզորների կողմը բռնելով՝ ինչպես Նյու Ջերսիի քաղաքական կաշառակերությունը բացահայտելու հարվածելու դեպքում, ինչի համար էլ մենք Պուլիցերյան մրցանակը ստացանք: Այդ պատճառով մեզ համար անակնկալ չէր, որ մեր ընթերցողները անզորների կողմը բռնեցին՝ մեր դեմ ու մեզ մեղադրեցին: Եվ մենք դա ընդունեցինք: Յուրաքանչյուր հարվածը»,- գրում է Բոնֆիլդը:

Նա ասել է, որ թերթը կփորձի իր սխալը ուղղել, ոչ միայն հոգեկան հիվանդների նկատմամբ ավելի նրբանկատ լինելով, այլ նաեւ նրանց շահերի եռանդուն պաշտպան դառնալով:

Վերնագրի հեղինակը՝ Թոնի Պերսիչիլին, ներողություն է խնդրել թերթում հոդվածը լույս տեսնելու հաջորդ օրն իսկ: Մամուլի տեսաբանը եւ խմբագիրը գրել են, որ հոդվածի վերնագիրը ճիշտ չէր եւ վիրավորական էր, եւ նա իր վրա է վերցրել ողջ պատասխանատվությունը:

Միջադեպի համար ներողություն խնդրելիս խմբագիրը համաձայնվում է, որ խիստ վիրավորական արտահայտություն էր օգտագործվել, միանգամից պատասխան է տալիս եւ՛ ընթերցողներին, եւ՛ մտավոր հաշմանդամներին ներկայացնող կազմակերպություններին: Նրա այդ քայլը վկայում է, որ լրատվական կազմակերպությունները ժամանակ առ ժամանակ համաձայնվում են հասարակության ճնշմանը, եւ այն, որ կարեւոր է ստիպել նրանց հաշվենկատ լինել դատողական սխալների նկատմամբ:

Նմանատիպ դեպքերի նկատմամբ ուշադրությունը վերջիվերջո կարող է բոլոր կողմերի համար էլ շահավետ լինել: Նման դեպքերը կարող են ստիպել լրատվական կազմակերպություններին ավելի պատասխանատու լինել բազմաշերտության վերաբերվող խնդիրների մասին գրելիս, ինչը իր հերթին կօգնի հասարակությանը ստանալ քիչ թե շատ անկողմնակալ տեղեկություններ՝ կարեւոր սոցիալական խնդիրների մասին:

Բայց, ինչպես հայտնում է *«Ֆիլադելֆիա ինքուայերերը»* մտավոր հիվանդների ազգային միությունը անցած շաբաթ ասել են, որ Պերսիչիլիի ներողությունը անբավարար է: Միությունը հայտարարել է , որ վերնագիրը հիմնական նախապաշարմունքների օրինակ է, եւ եփին մտքով կապարված խտրականություն, եւ պահանջել են «հստակ փոխհատուցում»:

*«Ասոշիեյթիդ Փրես»*, Թրենթոն, Նյու Ջերսի, Միացյալ Նահանգներ, 23 հուլիսի, 2002թ.

Հասարակական կազմակերպությունները նույնպես կարող են եւ պետք է առանցքային դեր խաղան՝ վիրավորական լուսաբանման դեպքերը գրանցելով, ճնշում գործադրելով նորություններ պատրաստող կազմակերպությունների վրա եւ հասարակությանը ոգեւորելով՝ նմանատիպ խնդիրների նկատմամբ ուշադիր լինել: Լրագրողները եւ խմբագիրները պետք է հասկանան, որ այս կազմակերպությունները կարող են բոլոր տեսակի փոքրամասնությունների համայնքները լուսաբանելու ժամանակ անփոխարինելի աջակից եւ խորհրդատվության աղբյուր լինել:

Այս հոդվածը համեմատաբար կարևկցական և օբյեկտիվ ձևով փորձում է ներկայացնել հաշմանդամ երեխաներին կանոնավոր դասարաններում ներգրավելու նորամուծությունը: Այստեղ ներկայացվում են հարցի և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Այս պատմությունը ավելի գրավիչ կդառնար, եթե ընդգրկեր հարցազրույցներ նրանց հետ, ում անմիջականորեն այդ խնդիրը վերաբերվում է՝ հոգևկան կամ ֆիզիկական հաշմանդամ երեխաների ծնողների, և հենց երեխաների հետ: Շատ լրագրողներ չեն պատկերացնում, որ հնարավոր է տեղեկատու զրույց ունենալ նույնիսկ հաշմանդամ մարդկանց հետ, որոնք շատ լավ կարող են յուրահատուկ և անսպասելի տեսակետներ ներկայացնել: Ավելին՝ լավ կլիներ մեջբերել նաև այն երեխաների ծնողների մեկնաբանությունները, ովքեր հաշմանդամություն չունեն, և հենց երեխաներին նույնպես՝ նրանց վերաբերմունքը պարզելու համար:

Լրագրողը տարբեր տեսակի խաշմանդամություն ունեցող երեխաներին իրարից չի տարբերակում: Մտավոր խանգարվածությունը նույնը չէ, ինչը որ մտավոր հաշմանդամությունը, իսկ ֆիզիկական հաշմանդամությունը կամ շարժողական հմտությունների պրոբլեմներով երեխաները լրիվ տարբեր խնդիրներ ունեն: Եթե Վրաստանի հասարակությունը բոլորին նույն ձևով է վերաբերվում, ապա լրագրողը պետք է այդ մասին նշեր:

## ²Ûë ¹»åùÁ áõß³¹ñáõÃÛáõÝ ¿ å³Ñ³ÝçáõÙ

Վերջին ժամանակներում ավելի են հաճախացել ինտեգրացված ուսուցման մասին խոսակցությունները. սա ենթադրում է հաշմանդամ կամ մտավոր հիվանդ երեխաներին առողջ երեխաների հետ մեկտեղ ուսուցանել: Ինչպես հայտնի է, արտասահմանում այդ մեթոդը երկար ժամանակ գործածվում է: Հատկանշական է, որ տարբեր ինտելեկտուալ կարողություններ ունեցող երեխաները միմյանց հետ ընկերանում են ոչ թե դասարաններում, այլ բնության մեջ՝ դպրոցի փորձառական ֆերմաներում:

Վրաստանում որոշվել է այդ խնդիրը լուծել ավելի հեշտ ճանապարհով:

Հետաքրքիր է, թե այս նորույթը ինչքան ժամանակ Վրաստանում արդյունավետ կլինի: Արդյո՞ք տարբեր մտավոր կարողություններ ունեցող երեխաները կկարողանան իրար հետ հարմարվել: Հրեշտակապետ Միքայելի բուժիչ-մանկավարժական դպրոցը այցելող երեխաները հասարակ երեխաների հետ չեն կարող համեմատվել, քանի որ տրամաբանական մտածելակերպ չունեն և իրենց սեփական աչքերով չտեսած առարկաների ընկալում չունեն:

Տիկին Լալի Ցերցվաձեն, վերոհիշյալ դպրոցի ուսուցիչներից մեկը, ասաց, որ արտասահմանում միայն թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաները կարող են առողջ երեխաների հետ համատեղ սովորել:

Որտեղի՞ց են քաղված այս տեղեկությունները: Այս մեթոդը կարող է որոշ տեղերում գործածված լինել, բայց կասկածելի է, որ Արևմուտքում դպրոցի ինտեգրացիայի նորմա լինի:

Ո՞րն է կոնկրետ նրանց հիվանդությունը: Արդյո՞ք դա մտավոր խանգարում է, թե՞ հաշմանդամություն ծայրահեղ մի ձև: Երբ նման հաշմանդամությունների մասին եք խոսում, ինչքան ճշգրիտ նշեք նրանք, այնքան լավ:

Այս մեջբերումը արտասահմանում իրական իրավիճակի ճշգրիտ նկարագիրը չէ: Լրագրողը պետք է խնդրեր ուսուցչուհուն ավելի հստակորեն բացատրել, թե նա ի՞նչ նկատի ունի, և պետք չէ անվերապահորեն հավատալ նրա խոսքերին:

Այս կապակցությամբ, Վրաստանում մենք առաջինը պետք է հասարակությանը եւ ուսուցիչներին նախապատրաստենք այս նորամուծությանը: Այլապես, ցերեբրալ (ուղեղային) անդամալույծները կամ թեթեւ ֆիզիկական անդամալույծները եւ սայլակներում նստածները ընկճվածություն կզգան, եթե այցելեն ավանդական դպրոց: Սա կարող է պատահել ոչ միայն ծաղր ու ծանակի պատճառով, այլեւ իրենց վրա փխուր հայացքների հետեւանքով: 3-7 տարեկանի ընթացքում երեխաները սովորում են իրար ընդօրինակել: Այդ պատճառով անդամալույծ կամ մտավոր հաշմանդամ երեխաներին այս տարիքում պետք է սովորեցնել իրենց նորմալ տարեկիցների հետ շփվել: Նաեւ հարկ է նշել, որ շատ դեպքերում ծնողներն են սխալներ անում, երբ փակի տակ են պահում իրենց երեխաներին:

Արդյո՞ք լրագրողը ինչ-որ վիճակագրական տվյալներ կամ տեղեկություններ ունի, թե ինչքան հաճախ են ծնողները իրենց հաշմանդամ երեխաներին առողջ երեխաների հետ շփվել թույլ տալիս, կամ ընդհակառակը՝ նրանց փակի տակ պահում: Արդյո՞ք սա լայն տարածված խնդիր է Վրաստանում:

Այսպիսի անպաշտպան երեխաները հասարակության հետ շփման ավելի մեծ կարիք ունեն: Մայա Խունդաձեն, վերոհիշյալ դպրոցի ուսուցչուհին, նմանատիպ ինտեգրացիա արդեն փորձել է: Նա փորձել է իր երեխային ինտեգրել իր մտավոր հիվանդ աշակերտների հետ: Ճիշտն ասած երեխան սկզբում վախեցել է իր նոր «ծանոթների» պահվածքից եւ բարձր հուզականությունից, բայց այժմ նրանք իրար հետ լավ են համակերպվում:

Հետաքրքիր կլիներ, եթե լրագրողը խոսեր ուսուցչուհու երեխայի հետ:

Դավիդ Ջուրաբաշվիլին, Միխայիլ Ասաթիանիի հոգեբուժական ինստիտուտի տնօրենը, պատմեց մեզ, որ մտավոր հետամնացությունը տարբեր աստիճաններ ու խորություն ունի: Նրանց ինտեգրացումը առողջ երեխաների հետ առանց համապատասխան կրթական ծրագրի եւ հոգեբույժների համաձայնության անթույլատրելի է: Ջուրաբաշվիլին համարում է, որ դպրոցին ինտեգրելու գործընթացում հնարավոր է ընդգրկել ոչ թե մտավոր հետամնաց երիտասարդներին, այլ ֆիզիկական անդամալույծներին: Մտավոր հետամնաց երեխաներին ավելի շատ ժամանակ է պետք նոր նյութերը ընկալելու համար, ինչը կարող է մնացած երեխաների համար ուսուցման գործընթացը դանդաղեցնել: Հատուկ հավասարակշռություն պետք է ապահովվի նաեւ դպրոցներում. օրինակ ամեն մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամ երեխային՝ 10 առողջ երեխաների հաշվարկով:

Լեվան Չիկվանայան, մանկավարժության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը,երեխաների համատեղ ուսուցման եւ՛ լավ, եւ՛ բացասական կողմերն է տեսնում: Նա համարում է, որ հնարավոր է ուսուցանել թեթեւ շարժողական արգելակումներ ունեցող երեխաներին (կակազում, կաղում) իրենց հասակակիցների հետ մեկտեղ, բայց միաժամանակ նա խորհուրդ է տալիս, որ ուսուցիչները չափազանց ուշադիր լինեն, քանի որ հիվանդ, հոգեկան բարդույթներով երեխաները կարող են աններդաշնակություն առաջացնել դասարանում: Եվ վերջում, համատեղ ուսուցանման մեթոդը հավանաբար հանդուրժողականություն կդաստիարակի երիտասարդության մեջ, բայց խնդրի մասին լուրջ է պետք մտածել. մեր առողջ երեխաները իրենց «չեն կտրում» դաս սովորելով եւ արդյոք այս դեպքում հնարավոր կլինի նրանց լիարժեք կրթություն նրանց տալ մտավոր հաշմանդամ երեխաների հետ համատեղ:

*«Էպոխա»,* Թբիլիսի,
21 հունվարի, 2003թ.

Արդյո՞ք Վրաստանում կրթական համակարգի համաձայն կակազող կամ կաղող երեխաները առանձնացվում են դասարանի մյուս աշակերտներից:

Այս վերջին դիտողությունը նմանվում է լրագրողի կողմից զգուշացման, որ այս մեթոդը հնարավոր է այնքան էլ գաղափար չէ: Բայց, եթե առողջ երեխաները լավ չեն սովորում, արդյո՞ք արդարացի է սրա համար հաշմանդամներին մեղադրել, ինչպես դա արվել է այս վերջին մեկնաբանությունում:

Սա մի Ադրբեջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման ներկա վիճակի համեմատաբար սթափ նկարագիր է, որտեղ իրավիճակը քննարկվում է առանց բացասական ստերեոտիպներին անդրադառնալու: Բայց, չնայած այստեղ վիճակագրական տվյալներ են ներկայացված, բայց ՄԻԱՎ-ով տառապող մարդկանց հետ հարցազրույցներ չկան, ինչը անշուշտ պատմությանը կենդանություն կհաղորդեր:

# ÒÆ²Ð-áí ÑÇí ³Ý¹Ý»ñÇ ÃÇíÁ ²¹ñµ»ç³ÝáõÙ ³×áõÙ ¿ ÊÝ¹ÇñÁ ëå ³éÝ ³ÉÇ ã ³ ÷»ñÇ ¿ Ñ ³ ë»É

²շխարհը ՁԻԱՀ-ի համաճարակի շեմին է. համենայն դեպս սա է մասնագետների կանխագուշակումը: Նրանց կարծիքով մոտ ապագայում ՄԻԱՎ-ով հիվանդների թիվը 40 միլիոնից կհասնի մինչ 100 մլն մարդ: Սրանք շատ սարսափելի տվյալներ են: Մեր երկիրը բացառություն չի կազմում, քանի որ մասնագետները այդ հիվանդության տարածման միտում են նկատել եւ այստեղ:

Համաձայն Ազգային հակա-ՁԻԱՀ-ային կենտրոնի տվյալների, 2003թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 573 ՄԻԱՎ-ի կրողներ են գրանցվել: Համեմատելու համար ասենք, որ հուլիսի տվյալներով 556 հիվանդ կար: Նույնիսկ «փոքր» աճը կարող է անուղղելի հետեւանք ունենալ, եւ Ադրբեջանի համար անտանելի բեռ դառնալ:

Արդյո՞ք իսկապես հիվանդ մարդկանց թիվն է աճել, թե՞ պարզապես հետազննումներն ու բացահայտումներն են ավելացել: Այս հարցի պատասխանը էական նշանակություն ունի՝ տվյալների կարեւորությունը բացահայտելու համար:

ՄԻԱՎ-ով հիվանդ մարդկանցից 551 ադրբեջանցի է, իսկ 22-ը՝ արտասահմանցի: Նրանցից 273-ը ապրում է Բաքվում, մնացածը բնակվում են շրջաններում: ՄԻԱՎ-ի կրողների մեծ մասը տղամարդիկ են՝ 77 տոկոսը, իսկ մնացածը կանայք եւ երեխաներ: Հիվանդների միջին տարիքը 20-39 է:

Սա տարիքային շրջան է, այլ ոչ թե միջին տարիքը: Միջինը մեկ թվով է արտահայտվում:

Ըստ աղետալի վիճակագրական տվյալների, 45 մարդ է մահացել այս ահավոր հիվանդությունից եւ 44-ն էլ մահվան շեմին են:

Այսօրվա դրությամբ երկրում գրանցված է 7 ընտանիք, որտեղ եւ՛ ծնողները, եւ՛ երեխաները վարակված են: 24 ընտանիքում միայն ամուսիններն են վարակված, 88 ընտանիքներում միայն մեկ ամուսինը եւ 8 ընտանիքում՝ միայն կինը: Շատ անհանգստացնող է, որ 256 հետազոտված հիվանդները, այսինքն՝ ընդհանուր թվի 48 տոկոսը, արտագնա աշխատողներ են, որոնք վարակվել են երկրից դուրս, հատկապես Ռուսաստանում:

Ինչու՞ է այդ փաստը ավելի վտանգավոր, քան եթե նրանք Ադրբեջանում վարակված լինեին: Երկու տարբերակներն էլ պետք է որ վտանգավոր լինեին:

Ազգային հակա-ՁԻԱՀ-ային կենտրոնի տնօրեն եւ ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական կոմիտեի ազգային համակարգող եւ քարտուղար Հաբիլ Ալիեւն, ասում է, թե ցանկալի է, որ դրսից ժամանած այն մարդիկ, ովքեր պատրաստվում են ամուսնանալ, անպայման բժշկական հետազոտություն անցնեն:

Այդ ընթացքում, երկրում ՁԻԱՀ-ի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի աշխատանքները լարված առաջ են ընթանում: Օրինակ, առողջապահության նախարարի Ալի Ինսանովի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի No 155 որոշմամբ ՄԻԱՎ-ի ախտորոշման շուրջօրյա անանուն ծառայություններ կբացահայտվեն բոլոր քաղաքներում եւ շրջաններում: Այս ծառայությունները հաստատվել են եւ գործում են: Սրանք շարժական են, եւ տարածքում ապրող բոլոր ցանկացողները կարող են հետազոտվել: «Մենք պահանջում ենք, որ երկրի այն բոլոր քաղաքացիները, ովքեր թմրադեղեր են օգտագործում, կամ պատկանում են սեռական փոքրամասնություններին, եւ ովքեր չեն վստահում իրենց զուգընկերներին, կամ տառապել են վեներական հիվանդությունով վերջին 5-10 տարիների ընթացքում անցնեն բժշկական հետազննում իրենց իսկ շահերից ելնելով»,- ասաց Ալիեւը:

Միաժամանակ, Ալիեւը ասում է, որ շատերը ցանկություն չեն հայտնում հետազոտվել սուբյեկտիվ պատճառներով: Սա կապված է ավանդույթների եւ հասարակությունից վախի հետ, որը, ինչպես նրանք են կարծում, կարող է մարդուն սպանել:

Պարզ է, որ սա է միակ ու հիմնական պատճառը, որ ՁԻԱՀ/ՄԻԱՎ կրողների դեպքերի ճշգրիտ տեղեկություններ չկան եւ ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման միջոցները արդյունավետ չեն:

Ալիեւը ասում է, որ ՄԱԿ-ը 2001 թվականին կազմակերպել է հատուկ ՁԻԱՀ-ին վերաբերող նիստ: Որպես կատարված աշխատանքի արդյունք մի նախագիծ է ընդունվել՝ հիվանդության տարածումը կանխարգելելու համար: Ադրբեջանը միացել է այս ծրագրին:

Ո՞րն է սրա իմաստը: Արդյո՞ք դա նշանակում է, որ այդ մարդկանց կարգելեն ամուսնանալ կամ էլ նրանց կստիպեն, թե ինչպես է պետք պաշտպանվել վարակվելուց: Արդյո՞ք իմաստ կա մարդկանց միայն ամուսնանալու դեպքում հետազոտվել: Մի՞թե սա պնդում է, որ այն մարդիկ, ովքեր չեն ամուսնանա, նաեւ ոչ մի սեռական հարաբերություններ չեն ունենա: Եթե այո, ապա դա սխալ եզրակացություն է:

Ինչքանով են իսկապես այս ծառայությունները անանուն: Արդյո՞ք լրագրողը պարզապես կառավարության տված խոսքին է հավատում: Արդյո՞ք միայն վերոհիշյալ ռիսկի խմբի ներկայացուցիչները պետք է հետազոտվեն, թե՞ դա բոլորին է վերաբերում: Արդյո՞ք լրագրողը ստուգել է, թե այդ ծառայությունները իսկապես աշխատում են: Իսկ բացի հետազոտությունից ինչ ծառայություններ են նրանք առաջարկում: Ինչը կդրդի մարդկանց գնալ եւ հետազոտվել առաջին պատահած տեղում, հատկապես եթե բուժման տարբերակները սահմանափակ են կամ էլ գոյություն չունեն:

Սրանց «սուբյեկտիվ պատճառներ» անվանելը ենթադրում է, որ մարդիկ գործում են անտրամաբանական: Բայց սրանք իսպակորեն անհանգստության առիթ են: Եթե հարցնենք, թե արդյո՞ք մարդիկ որեւիցե օգուտ կունենան եթե պարզեն, հիվանդ են թե ոչ, պատասխանը դրական կլինի: Այստեղ ոչ մի բան չի նկարագրվում, թե արդյո՞ք կառավարությունը ինչ որ մի բան է անում, որ մարդիկ ցանկանան հետազոտվել:

Դա միա՞կ պատճառն է, թե՞ հիմնական: Սրանք տարբեր բաներ են:

Եթե խոսքը Միացյալ ազգերի կազմակերպության մասին է, ապա կազմակերպության անունը պետք է առաջին հղման ժամանակ ամբողջովին գրվի: Հապավումը կարելի է օգտագործել հետագա հղումների ժամանակ:

Ի՞նչ նախագծի մասին է խոսքը: Ինչպես է Ադրբեջանը մասնակցում: Ինչքան գումար է ծախսվում այդ ծրագրի վրա: Կառավարությունը կարո՞ղ է պարզապես միանալ ծրագրին՝ դրա իրագործման համար ոչինչ չանելով:

«Կենտրոնը դիմել է երկրի նորընտիր նախագահին՝ Իլհամ Ալիեւին: Կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի այդ խնդրին, որը կարող է սպառնալից չափեր ընդունել»,- եզրափակում է Ալիեւը:

*«Զերկալո»,* Բաքու, Ադրբեջան,
31 Հոկտեմբերի, 2003թ.

Կարեւորը ծրագրի իրագործումն է, այլ ոչ թե կառավարության հայտարարությունը:

Կոնկրետ ի՞նչ են ուզում նախագահից: Լավ կլիներ մի քանի որոշակի միջոցներ նշել, թե ինչպես կարելի է խնդիրը հաղթահարել:

Սա կարեկցանքից եւ լավագույն մտադրություններից մի հոդված է հաշմանդամ մարդկանց մասին ծնված: Բայց, հաշվի առնելով, որ այստեղ շեշտը դրված է մեր հասարակության մեջ հաշմանդամների անտեսված լինելու խնդիրի վրա է եւ դա քննադատվում է, այսուհանդերձ դա ավելի է խորացված այստեղ: Սա սովորական երեւույթ է սոցիալական փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ գրված հոդվածներում, հատկապես այն խմբերի, որոնք տեսադաշտից դուրս են մնում: Մարդիկ, այդ թվում եւ լրագրողները, այնքան են սովոր չնկատել, որ նույնիսկ փորձ չեն անում նրանց մասին գրելիս նրանցից հարցազրույց վերցնել: Այս հոդվածում հաշմանդամները դարձել են պատմության առարկա, եւ ոչ թեմա: Միզուցե Սադիխովը, ումից հարցազրույց է վերցրվել, հաշմանդամ է, բայց լրագրողը չի մատնանշում դա: Եթե նա հաշմանդամ է, ապա լավ կլիներ նրա սեփական պատմությունը լսել. ի՞նչ է նա զգում, ինչպե՞ս է հաղթահարում հաշմանդամության դժվարությունները կամ համակերպվում դրա հետ իր կյանքում եւ ինչպե՞ս է եղել, որ նա ակտիվիստ է դարձել:

## Þ ³ ñÅ ³ ë ³ ÛÉ ³ ÏÁ Ã ³ ïñáÝáõÙ
## ê ³  ³ ÝÑ»Ã»ÃáõÃÛáõÝ ã¿` å ³ ñ½ ³ å»ë Ù ³ Õ ³ Ù ³ ÏñÃáõÃÛáõÝ Ýß ³ Ý ¿

¼արգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում մարդիկ չէին նկատում սայլակով, հենակների օգնությամբ քայլող կամ էլ արհեստական վերջանդամով մարդկանց: Նրանց չէին նկատում ոչ թե, որ իրենց տրամադրությունը կարող էր փչանալ, այլ որովհետեւ շարժասայլակով մարդիկ անսովոր երեւույթ չէին Խորհրդային Միությունում: Հաշմանդամները հազիվ էին հասցնում նրանց հետեւից, ովքեր լայն քայլերով դեպի «պայծառ կոմունիստական ապագան էին» ընթանում: Բայց մյուս կողմից էլ, շատ քիչ հաշմանդամներ կարելի էր փողոցներում, կամ այլ հասարակական վայրերում տեսնել, այնպես որ մարդիկ միամտորեն մտածում էին, թե նրանք մեծաքանակ չեն:

Սակայն, «երկաթե վարագույրի» մյուս կողմից մեզ հասնող հազվագյուտ տեսաֆիլմերը եւ վավերագրական ֆիլմերը մեզ ցույց էին տալիս, որ այնտեղ հաշմանդամների մեծ քանակ կա: Նրանց կարելի էր տեսնել փողոցներում, հասարակական տրանսպորտում, խանութներում, մի խոսքով` ամենուրեք: Իսկ մենք, չնայած մեզ շրջապատող պայմաններին, դեռ մտածում էինք, որ նրանցից ավելի լավ կյանքով ենք ապրում:

Սակայն, «Պերեստրոյկա» կոչվածը եւ դրանից բխած մնացած իրադարձությունները ամեն ինչ հիմնիվեր շրջեցին: Հաշմանդամները «ընդհատակից» դուրս եկան, եւ պարզվեց, որ այդ նրանք չէին, որ խնդիր ունեին, այլ մենք էինք, այդ նրանք չէին, այլ մենք, որ չէինք ուզում քաղաքակիրթ ձեւ-

ով մտածել, այլ մտածում էինք քարե դարի մարդկանց պես: Այս ամենը մեզ թույլ տվեց առնվազն տեսնել այս մարդկանց կարիքները եւ օգնել նրանց:

Այժմ 25.000-ից ավելի հաշմանդամներ կան Ադրբեջանում:

Քաղաքի միության վարչության պետը՝ Ասկյար Ալիեւը, ասում է, թե կազմակերպությունը հիմնվել է 1989 թվականին եւ ԽՍՀՄ-ում չորրորդն է եղել ՝ Բելառուսից, Ուկրաինայից, եւ Ղազախստանից հետո:

Մինչ այդ հանրապետությունում գոյություն ունեին միայն երկու միություններ՝ խուլերի եւ կույրերի:

Այդ ժամանակ հաշմանդամները արտոնություններ ունեին, որոնք վերացվեցին 1996 թվականին:

Եվ առաջին անգամ նրանք զգացին իրական կյանքի դժվարությունները, չնայած այդ իրականությունում առողջ մարդկանցից ոչ քիչ, երբեմն էլ միգուցե ավելի շատ, կյանքի պայքար էին մղում: Երկրում ընդհանուր թվով հաշմանդամների 17 կազմակերպություններ կան: Հասարակության մեծագույն խնդիրն է հոգալ հաշմանդամների կարիքները:

Այն գաղափարը, որ հաշմանդամները հասարակության համար բեռ են, խիստ վիճարկելի է: Նրանցից շատերը, ում հանդեպ ճակատագիրը կույր է եղել, գտել են իրենց տեղը կյանքում, եւ միայն նրանց կրթությանը նպաստելու խնդիրն է, որ ուշադրություն է պահանջում: Հաշմանդամ մարդկանց մանկուց օգնելով՝ մենք նրանց հնարավորություն կտանք հարմարվելու եւ ծառայելու հասարակությանը այնպես, ինչպես բոլոր մարդիկ:

Հաշմանդամ մարդիկ, չնայած նրանց ֆիզիկական արատներին, ուզում են որակյալ կրթություն ստանալ: Նրանք օժտված են այդ իրավունքով (սահմանադրության համաձայն): Սակայն իրականում նրանք խնդիրների ու խոչընդոտների են հանդիպում:

Սադիխովը ասում է. «Մի դեպք կար, երբ մի երիտասարդ մի քանի տարի շարունակ Ղազախի շրջանից քաղաք էր գալիս, բայց չէր կարողանում ընդունվել Բաքվի պետական համալսարան: Նա բոլոր առարկաներից լավ թվանշաններ էր ստանում, բայց գրվածներից անբավարար էր ստա-

Այսպիսի վիճակագրական տեղեկություններ տալիս, անպայման պետք է նշվի աղբյուրը: Որտեղի՞ց է վերցվել այս թիվը՝ կառավարությունի՞ց,հենց իրենցից՝հաշմանդամների՞ց:Ովքե՞ր են կոնկրետ այդ խմբի մեջ մտնում:Արդյո՞ք այդտեղ ընդգրկված են եւ ֆիզիկական եւ մտավոր հաշմանդամները, թե՞ միայն ֆիզիկական հաշմանդամները:

Ինչպե՞ս է այդ կազմակերպության լրիվ անվանումը:Եթե դա Հաշմանդամների միություն է, ինչը կարելի է ենթադրել ըստ սփորեւ բերվածի, ապա առաջին հղման ժամանակ ամբողջական անվանումը պետք է նշվի:

Ի՞նչ արտոնություններ նրանք ունեին: Ինչպե՞ս եւ ինչու՞ դրանք վերացվեցին:

Կոնկրետ ի՞նչ է նրանց երաշխավորում սահմանադրությունը: Ինչու՞ չեն այդ երաշխիքները ի կատար ածվում:

նում: Երբ նա դիմեց Հաշմանդամների միություն, պարզվեց որ նա ձեռքի բնածին արատ ունի, եւ դժվարությամբ է գրիչը բռնում: Միությունը որոշեց օգնել նրան՝ մի նամակ ուղարկեցինք կրթության նախարարություն, եւ որոշում ընդունվեց նրան հանձնելու եւս մեկ հնարավորություն տալ քննությունը: Թայիր Դամիրցիեւը ընդունվեց համալսարան: Հիմա նա ուսուցիչ է աշխատում Սուրաքսանիի շրջանում եւ շրջանի Հաշմանդամների միության նախագահն է: Բայց նա դեռ ունի պրոբլեմներ. նրան գործից ազատել էին հաշմանդամության պատճառով, եւ նա ստիպված եղավ դատարան դիմել, որպեսզի իրեն վերականգնեն իր պաշտոնում»:

Սադիխովը ասում է, թե շատ դեպքեր են եղել, երբ հաշմանդամներին մերժել են աշխատանք տալ, եւ նրանք դիմել են դատարան, որպեսզի պաշտպանեն իրենց օրինական իրավունքները:

Ըստ Միլլի Մեջլիսի[1] 1992թ. օգոստոսի 25-ի որոշման՝ հաշմանդամ մարդիկ նույն սոցիալական, տնտեսական, քաղաքացիական եւ աշխատանքային իրավունքները ունեն, ինչ երկրի առողջ քաղաքացիները:

Սադիխովն ասում է, որ նրանցից յուրաքանչյուրն ունի բազում այնպիսի սոցիալական խնդիրներ, որոնք նույնիսկ առողջ մարդիկ են դժվարությամբ հաղթահարում: Տարբեր մակարդակի պաշտոնյաները դժվարանում են հաշմանդամների հետ գործ ունենալ՝ առօրյա բազում խնդիրների, ավելի առաջնային առաջադրանքների եւ երբեք չվերջացող գործերի պատճառով: Հասկանալի է, որ նրանք մինչեւ ականջները գործերի մեջ են թաղված: Բայց եթե հաշմանդամը երկչոտ ձայնով ասում է, թե տան, սայլակի, էլ չասենք՝ հատուկ փոխադրամիջոցի կարիք ունի, պետք է օգնել նրանց: Նրանք ասում են, որ ուրիշ խնդիրներ ունեն լուծելու, եւ այս խոսքերը մեր հարաբերությունների սովորական բանաձեւն են դարձել:

◄ Սա հուզիչ պատմություն է: Բայց լավ կլիներ, որ լրագրողը հենց Թահիրի հետ խոսեր, ոչ թե վստահեր երկրորդ ձեռքի տեղեկություններին:

◄ Օրինակ ե՞րբ: Կրկին, ավելի լավ կլիներ այդ մարդկանցից մեկի հետ խոսել, քան թե նրանց մասին ինչ-որ մեկից լսել, նույնիսկ եթե վերջինս նրանց ներկայացուցիչն է:

1 Միլլի Մեջլիսը Ադրբեջանի խորհրդարանն է:

Ադրբեջանի Հաշմանդամների միության զոյության ընթացքում, ինչպես ասում է Սադիխովը, միայն մեկ անգամ է, որ իրենցից խորհուրդ են հարցրել՝ ֆիլհարմոնիկ դահլիճի վերակառուցման ժամանակ: Համերգային դահլիճում, հանդերձարանում, զուգարանում եւ այլ տեղերում հաշմանդամների համար հարմարություններ են ստեղծվել: «Շարժասայլակով մարդը թատրոնում քաղաքակրթության նշան է»:

Որո՞նք են կոնկրետ այս հարմարությունները. ավելի լայն միջանցքնե՞ր, բռնակնե՞ր զուգարաններում: Որոշ մանրամասնություններն ավելի հստակ պատկեր կտային:

Միայն սայլակ գտնելն է, որ այսօր մեծ խնդիր չէ: Սադիխովն ասում է, թե դրա համար հաշմանդամները պարզապես պետական բժշկական կոմիտեից վկայական պետք է ներկայացնեն շրջանային սոցիալական ապահովագրման վարչություն, որտեղ նրանց կգրանցեն:

Վերջերս, Բինաքադիի Հաշմանդամների միության նախագահը՝ Ասկյար Ահմադլին, այդ շրջանի հացի փռի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, որ ամեն օր երկուական հաց տան երկու ընտանիքի: Հասկանալի է, որ սա պարզապես կաթիլ է ծովում, բայց գոնե ինչ-որ օգնություն է:

Սադիխովը հիշատակեց Հացիբալա Աբութալիբովին, ով այն ժամանակ, երբ Սուրաքսանիի շրջանի ղեկավարն էր, սովորաբար մի քանի շաբաթ էր նվիրում հաշմանդամների խնդիրների լուծմանը: Հաստատությունների ղեկավարները իրենց հաշմանդամ աշխատակիցներին դրամական պարգեւներ էին տալիս, պաշտոններն էին բարձրացնում եւ բարելավում էին նրանց աշխատանքային պայմանները:

Ի՞նչ հիմքերով էր այս ամենն արվում: Միայն այն պատճառով, որ սրանք հաշմանդամնե՞ր էին:

Բայց ոչ մի նման բան այսօր չկա:

Իսկ ե՞րբ է դա տեղի ունեցել. Խորհրդային Միության օրո՞ք, թե՞ հինգ տարի առաջ: Լավ կլիներ իմանալ:

Սադիխովը ասում է, թե ըստ օրենքի առաջին եւ երկրորդ խմբերի[1] հաշմանդամները պետք է ստանան հավելյալ 25 տոկոս աշխատավարձ, իսկ երրորդ խմբի հաշմանդամները՝ 15-20 տոկոս: «Սակայն Խաթայի շրջանում մի դեպք եղավ, երբ դպրոցում աշխատող հաշմանդամների աշխատավարձը չբարձրացվեց: Եւ միայն բյուրոկրատական քաշքշուկից հետո արդարությունը հաղթեց»:

1. Ադրբեջանում, ինչպես նախկին Սովետական Միությունում էր ընդունված, հաշմանդամ մարդիկ դասակարգվում են խմբերի ըստ այն ցուցանիշի, թե ինչ ծանրության հաշմանդամություն ունեն: Նրանք տարբեր մակարդակի աջակցություն են ստանում՝ կախված այն բանից, թե որ խմբին են պատկանում:

Այն շենքը, որտեղ գտնվում է Ադրբեջանի Հաշմանդամների միությունը,որ քաղաքի 11 թաղամասերն է վերահսկում, ողբալի վիճակում է գտնվում: Այն գտնվում է Սաբայիլի թաղամասի գործադիր իշխանությունների ղեկավարության տակ:Սակայն ոչ բազմաթիվ նամակները, ոչ բողոքները արձագանք չեն ստացել: Սադիխովը ասաց, որ ոչ գործարարները, ոչ էլ պետական կառույցները չեն շտապում հաշմանդամ մարդկանց օգնել: «Հաշմանդամների Միջազգային օրը նշվում է դեկտեմբերի 3-ին: Որպես կանոն, մարդիկ միայն այդ օրն են մեզ հիշում: Շրջանի գլխավոր ղեկավարները ճաշկերույթի են հրավիրում շրջաններից հինգ կամ վեց մարդ: Երբեմն, նրանց 20-30.000-ական մանաթ են տալիս: Եւ այդքանով մարդկանց այս շերտի նկատմամբ ուշադրությունը ավարտվում է: Բայց մենք ուզում ենք, որ մեզ հիշեն այդ օրից առաջ եւ հետո էլ»,- ասում է Սադիխովը»

«*Ջերկալո*», Բաքու, Ադրբեջան,
31 Հոկտեմբեր, 2003թ.

# 7. êáóÇ³É³ å»ë
# Ëáó»ÉÇ ËÙµ»ñ

# êáóÇ³É³ å»ë Ëáó»ÉÇ ËÙµ»ñ

Îոմունիստական հասարակություններում, սոցիալապես խոցելի խմբերի՝ թմրամոլների, բանտարկյալների, անօթեւան մարդկանց եւ գործազուրկների գոյությունը կամ պաշտոնապես չի ընդունվել, կամ էլ այդ խմբերը համարվել են պետության թշնամիներ: Ի հետեւանք, նրանց կյանքը, հոգսերը եւ խնդիրները հետաքրքրություն չեն ներկայացրել եւ չեն ուսումնասիրվել լրատվամիջոցների կողմից. կարծես թե այդ խմբերի մասին գրելով նրանց գոյությունն ինչ-որ ձեւով կօրինականացվեն կամ անհանդուրժելի խղճահարություն կառաջանար նրանց կացության նկատմամբ:

Այն ժամանակից ի վեր, այնուամենայնիվ, պարզ է դարձել, որ նման խմբերի ներկայությունն անտեսելը վնասակար է հասարակության համար: Յուրաքանչյուր հասարակության համար, որ նախկինում կարծում էր, թե անընկալունակ է կապիտալիզմին վերագրվող հասարակական չարիքների նկատմամբ, այժմ պարզ է դարձել, որ կանխամտածված անտեսումը շատ քիչ է բարդ խնդիրները վերացնելու համար: Իրականում, ստվար եւ աճող քանակությամբ խոցելի քաղաքացիների ներկայությունը ապացուցել է ճիշտ հակառակը, որ ձեւացնելը՝ թե իբր դրանք գոյություն չունեն, ի վերջո միայն ավելի է վատթարանում իրավիճակը:

Ահա սոցիալապես խոցելի խմբերի մասին լրագրության բարելավմանն ուղղված որոշ եղանակներ:

* Պարզեք, թե որ խոցելի խմբերն են բնորոշ ձեր քաղաքին կամ մարզին: Կոնկրետ առկա՞ է արդյոք գործազրկության խնդիր, ասենք այն պատճառով, որ փակվել են մոտակա գործարանները: Հատկապես մե՞ծ է արդյոք անտուն մարդկանց թիվը՝ կոնֆլիկտների հետ կապված ունեցվածքի բռնագրավման կամ որեւէ այլ պատճառով: Ինչպիսի՞ն է փարածաշրջանային պատերազմների վետերանների իրավիճակը: Իսկ թմրամոլների՞նը: Այնուհետեւ ուսումնասիրեք, թե արդյոք լրատվամիջոցները գրե՞լ են այդ խմբերի մասին եւ եթե այո՝ գնահատեք այդ նյութերը եւ պարզեք, թե ինչ բացթողումներ են եղել:

* Անպայման հարցազրույց վերցրեք գործազուրկներից, թմրամոլներից, պատերազմի մասնակիցներից եւ մյուսներից, ում մասին գրում եք: Խոցելի խմբերի անդամները, եթե անգամ երբեւէ հայտնվում են մամուլում, ապա հանցագործությունների հետ կապված եւ ամենից հաճախ նրանց հետ հարցազրույց չեն էլ անցկացնում: Սովորաբար, իրավապահ մարմինների պաշտոնյաները եւ մյուս «գիտակներն» իրենց իրավունք են վերապահում պատեհ-անպատեհ արտահայտել իրենց դիրքորոշումը: Եվ, քանի որ լրագրողները հաճախ կիսում են այդ ստերեոտիպերը, նրանք կարող են պարզապես փոխանցել դա ընթերցողներին առանց որակավորելու:

★ Կապ հաստատեք հասարակական կազմակերպությունների հետ, որոնց առաքելությունը գործազուրկներին, թմրամոլներին, անտուն մարդկանց եւ սոցիալապես խոցելի խմբերի այլ անդամներին օգնելն է: Վստահեք այդ մարդկանց՝ իբրեւ հուսալի աղբյուրների: Հասարակական կազմակերպություններին խնդրեք զանգահարել ձեզ հոդվածի թեմաներ առաջանալու դեպքում: Պարզեք, թե որոնք են այն ամենակարեւոր խնդիրները, որոնց վրա նրանք աշխատում են: Խնդրեք նրանց օգնել, որպեսզի դուք որոշ ժամանակ անցկացնեք նրանց կողմից պաշտպանվող խմբերի անդամների հետ:

★ Գործազուրկների, թմրամոլների եւ մյուսների հետ հարցազրույց անցկացնելիս, մի սահմանափակվեք միայն այդ թեմաներին վերաբերող հարցերով: Փորձեք ամբողջական պատկերացում կազմել նրանց կյանքի մասին, գտնել մի բան, ինչով նրանք ապրում են: Հարցրեք նրանց հետաքրքրությունների, հոբբիների, ընտանիքի անդամների, սիրած կենդանիների եւ այն ամենի մասին, ինչը թույլ կտա ձեզ կիսել նրանց իրականությունը եւ ոչ թե նրանց դիտել զուտ իրենց թերությունների պրիզմայով: Ջանացեք փոխանցել, թե ինչպիսին են այդ մարդիկ իրականում՝ հարուստ անցյալով եւ բարդ ներաշխարհով, եւ ոչ թե պարզապես սոցիալապես զրկված խմբի ներկայացուցիչներ:

★ Համատեքստում քննեք սոցիալական հոգսերը: Եթե վերջին ժամանակներում թմրամոլությունը մեծ խնդիր է դարձել, ապա ուսումնասիրեք, թե ինչ գործոններ են ընկած դրա հիմքում: Տնտեսական անկու՞մը կամ՝ զուցե թմրանյութերի առավել մատչելիությու՞նը: Եթե աճում է գործազրկությունը, փորձեք պարզել, թե ինչո՞ւ. փակվում են տեղական գործարաննե՞րը, թե՞ արտահանումն է անկում ապրում: Եթե գրում եք նախկինում դատապարտվածների մասին, որոնք կրկին հանցանք են գործում, հետազոտեք, թե արդյոք հե՞շտ, թե՞ դժվար է նախկին բանտարկյալների համար աշխատանք գտնելը: Եթե դուք ներկայացնենք դեպքերի ամբողջական պատկերը, դա միշտ կօգնի ընթերցողին հասկանալ մյուսների դրությունը:

★ Նկարագրեք այդ խմբերի անդամներից որեւէ մեկին, որն ինչ-որ դժվար կամ արտառոց բան է արել: Արդյո՞ք մեկը, ով չի կարողացել աշխատանք գտնել մի բնագավառում, ջանացել եւ հաջողության է հասել մեկ այլ բնագավառում: Եղե՞լ է արդյոք մեկը, ով թողել է թմրամոլությունը եւ կազմակերպություն է ստեղծել նմանատիպ իրավիճակում գտնվող մյուս մարդկանց օգնելու համար: Արդյո՞ք որեւէ նախկին բանտարկյալ լիովին վերափոխվել եւ ճանաչում է գտել, ասենք, որպես նկարիչ:

★ Չնայած այդ մարդկանց հետ ժամանակ անցկացնելը վճռականություն է պահանջում, դա չի նշանակում, որ նրանց ասած յուրաքանչյուր բան պետք է միանշանակ ընդունեք: Ակասկած շատ ճնշող պատմություններ կլսեք նրանցից, սակայն եթե համոզված չլինեք դրանց ճշմարտացիության մեջ, ապա հոդվածում պետք է նշեք, որ փվյալ տեղեկատվությունը վերագրում եք ձեր աղբյուրին: Օրինակ, եթե թմրամոլն ասում է, որ շաբաթական միայն մեկ անգամ է թմրանյութ օգտագործում, դուք պետք է գրեք, նա ասում է, թե շաբաթական միայն մեկ անգամ է թմրանյութ օգտագործում, քանի որ չեք կարող վստահ լինել՝ դա ճիշտ է թե ոչ: Կամ եթե գործազուրկն ասում է, թե ինքը 10 անգամ աշխատանքի մերժում է ստացել, ուրեմն դուք պետք է հայտնեք, որ նա ասում է, թե 10 անգամ աշխատանքի մերժում է ստացել, այլ ոչ թե ներկայացնեք իբրեւ փաստ:

Խորհրդարանի մոտ մուրացողների մասին այս հոդվածը խառնաշփոթ պատկեր է ներկայացնում: Ի տարբերություն նմանատիպ հոդվածների բացասական բովանդակության, սա **համենայն դեպս** հենց մուրացիկների մասին տեղեկություններ է ներկայացնում: Եվ հենց դա է, որ նրանց վիճակը հասկանալի է դարձնում ընթերցողներին: Հեշտ է հասկանալ գործազուրկ մորը, որը մուրում է իր երեխաներին կարիքները հոգալու համար: Այս հոդվածը ավելի շատ մուրացիկների միջեւ եղած տարբերություններն է ներկայացնում, քան քննադատում է նրանց:

## Øáõñ ³ óÇÏÝ»ñÁ  ËáñÑñ¹ ³ ñ ³ ÝÇ å ³ ñëåÇ Ùáï
## ¶»õáñÇÏÁ ß ³ ñáõÝ ³ ÏáõÙ ¿ ÙÝ ³ É  ³ Ý·»ñ ³ ½ ³ Ýó»ÉÇ

Æ տարբերություն ԱՄՆ-ի եւ աշխարհի բազմաթիվ այլ երկրների, Հայաստանում որեւէ մեկին հայտնի չէ, թե ով որքան փող ունի կամ ով՝ ումից շատ ունի: Սակայն հասարակության մեջ արմատացած է այն համոզմունքը, որ մեզանում ամենահարուստը բարձրաստիճան պաշտոնյաներն են, խոշոր գործարարները եւ քաղաքական գործիչները: Հայաստանում, սակայն, կան մի խումբ մարդիկ, որոնք մասնագիտացած են հենց այդ մարդկանցից գումար խնդրելու գործում: Բարձրաստիճան պաշտոնյաները, խոշոր գործարար պատգամավորները, քաղաքական գործիչները այս մարդկանց հասանելի են լինում ԱԺ նստաշրջանների ժամանակ ԱԺ շենք մտնելիս եւ դուրս գալիս: Երեկ ԱԺ հերթական նստաշրջանի ժամանակ ԱԺ Դեմիրճյան մուտքի մոտ ընդամենը այդպիսի չորս մարդ կար: Հայտնի «ՀՀՇ-ի Գեւորիկը» կանգնած էր մյուսներից առանձին: Նա պաշտոնյաներից եւ քաղաքական գործիչներից փող վերցնելու մեծ փորձ ունի, քանի որ դրանով զբաղվում է դեռեւս ՀՀՇ իշխանության օրերից:

Սա տարօրինակ պնդում է: Հայտնի չէ, թե մարդիկ Միացյալ Նահանգներում կամ ուրիշ երկրներում հաստատ գիտեն, թե ուրիշներն ինչքա՞ն գումար ունեն: Ի՞նչ հիմունքով է լրագրողը նման բան հայտարարում:

Ի տարբերություն մյուսների, Գեւորիկը զբաղվում է բացառապես քաղաքական գործիչներով եւ հայտնի մարդկանցով, այսինքն՝ փող է վերցնում միայն հայտնի գործիչներից: Նա ատում է ԱԺ մուտքի մոտ կանգնող մյուս մուրացկաններին, իսկ նրանք բոլորն ատում են նրան:

Նա իսկապե՞ս հայտնի է: Ի՞նչ նկատի ունի լրագրողը: Նա հայտնի է մյուս մուրացիկների՞ն  թե՞ քաղաքական գործիչներին նույնպես: Արդյո՞ք նա հանրահայտ քաղաքական ակտիվիստ է եղել: Նա իսկապե՞ս ամենահաջողակ մուրացիկն է, թե՞ պարզապես պարծենում է: Այստեղ որոշակի կոնտեքստ է հարկավոր:

Այդ ատելությունը շատ սկզբունքային պատճառներ ունի: «Ես գիտեմ, թե ով է տվող, ով՝ տվող չի: Ես մոտենում եմ միայն տվողներին, իսկ չտվողներին հանգիստ եմ թողնում: Իսկ սրանք ամեն

1 ՀՀՇ - ն Հայաստանի քաղաքական կուսակցություն է. Հայոց համազգային շարժում

գալստուկ կապողից փող են ուզում: Չտվողներն էլ մտնում են ներս, բողոքում են եւ ոստիկաններին հրահանգում բոլորին քշել. կապ չունի՝ ով ում է անհանգստացրել»,- բացատրում է Գեւորիկը՝ հայտարարելով, որ հիմա ինքը ոստիկաններին կխնդրի, որ մյուսներին քշեն:

Գեւորիկը չի խոսում իր եկամտի մասին, սակայն ասում է, որ մյուսները եռօրյայի ամեն օրը հարյուր դոլար են հավաքում: «Իսկ դու երեւի 200՞»,- հարցիս Գեւորիկը պատասխանում է քմծիծաղով. «Եթե այդքան պետք է հավաքեմ, էլ ինչու պետք է գամ»:

Մյուս մուրացկաններն ասում են, որ նման թվերը հեքիաթներ են: Արտաշատի Նորաշեն գյուղի բնակիչ Գյուլնարա Պողոսյանը ասում է, որ իր երկու տղաները հաշմանդամ են, եւ ինքը մուրացկանությամբ է հոգում նրանց եւ նրանց երեխաների սննդի եւ դեղորայքի հարցը: «Եթե ես այդքան փող աշխատեի, ինչու՞ պետք է դեղատանը 24 հազար դրամ պարտք ունենայի»,-ասում է տիկին Գյուլին:

Չնայած դրան, նա ասում է, որ շատ գոհ է պատգամավորներից, որոնք իրեն միշտ էլ օգնել են: «Ամեն մեկը՝ իր չափով: Մարդ կա՝ գրպանից փողը հանում, հինգ հազար դրամանոցները մի կողմ է պահում, հազար դրամանոցներն է տալիս, մարդ էլ կա՝ հազարներն է մի կողմ պահում, հարյուր դրամանոցներն է տալիս»,- ասում է նա: Սակայն պատմում է, որ լինում են դեպքեր, երբ պատգամավորները մեծ գումարներ են տալիս: «Օրինակ, մեր ընտրատարածքի պատգամավոր Մանվել Ղազարյանը անցյալ տարվա դեկտեմբերին այնքան փող տվեց, որ երեք ամիս դրանով էինք ապրում: Նոր տարվա օրն էլ թոռներիս ասացի, որ Հիսուսին աղոթեն Մանվել ձյաձյայի համար՝ նոր սեղան նստեն»,- պատմում է տիկին Գյուլին:

Մեկ այլ մուրացկան, որն ասում է, որ Նոր Նորքում է ապրում, պատմում է, թե ինչպես Ռուբեն Հայրապետյանը մի օր երեք մուրացկանների 10 հազարանոցներ է տվել: «Ուրիշները եթե մեծ փող են տալիս, ապա անպայման ասում են՝ գնացեք, իրար մեջ կիսեք, որի պատճառով վեճեր են լինում»,- ասում է մեր զրուցակիցը: Վերջինս, համեմատելով նախկին եւ ներկա ԱԺ-ն, ասում է, որ նախկինում թեեւ հարուստները ավելի քիչ էին,

Լրագրողը այստեղ օգտագործել է կնոջ անունի չափազանց մտերմիկ ձեւը: Դա մոտավորապես անգլերեն այն տարբերակին է նման, եթե նա հարցազրույց վերցներ Էլիզաբեթ Սմիթից, եւ հետո գնար եւ անվաներ նրան Տիկին Լիզ: Հայերենում դա պարզապես հովանավորչական ոճ է:

Սա շատ ազդեցիկ եւ հուզիչ նկարագրություն է: Անշուշտ, ընթերցողը պետք է կարեկցանք զգա տիկին Գյուլիի նկատմամբ եւ հասկանա նրա մուրալու պատճառները: Նա չի ներկայացվում պարզապես որպես տգրուկ: Իրենց ընտրատարածքի պատգամավորի մասին մանրամասնությունը հաջող է:

սակայն փող տվողներն ավելի շատ էին: Ընդհանրապես իրենց փող չտվողների անունները մուրացկանները վախենում են տալ: «Չեն տալիս, գոնե չխանգարեն, որ մյուսներն էլ տան: Բայց որ բողոքենք, իրենք էլ մեզանից կբողոքեն»,-ասում են մեր զրուցակիցները:

Ամենաշատը նրանք վախենում են հենց ոստիկանությունից եւ, որ ամենազավեշտալին է՝ Գեւորիկից: Ոստիկանները մերթընդմերթ փորձում են ԱԺ Դեմիրճյան մուտքի մոտից հեռացնել մուրացկաններին: Ի տարբերություն ոստիկանների, Գեւորիկը դա անում է մուրացկաններին վախեցնելու միջոցով: Մուրացկաններն ասում են, որ եթե Գեւորիկը ԱԺ չի գալիս, ապա մուրացկանների թիվն այդ օրը ավելի է շատ լինում, քանի որ չկա մուրացկան, որը Գեւորիկից գոնե մի աքացի ստացած չլինի: Մեր այն հարցին, թե ինչու ոստիկանները դրա համար նրան չեն պատժում՝ հուսահատ շարժում են ուսերը: Նրանք գիտեն, որ Գեւորիկին, ի տարբերություն իրենց, դոլարներ են տալիս, եւ նա իշխանության ու ոստիկանների շրջանում հովանավորներ ունի: Մուրացկանները ընդդիմության ներկայացուցիչներից գրեթե փող չեն ուզում: «Որովհետեւ գիտենք, որ չունեն»,- ասում են նրանք: Նրանք վախենում են խոսել իրենց քաղաքական համակրանքների եւ հակակրանքների մասին՝ զգուշանալով, որ դա կազդի իրենց փող տվող եւ չտվող պատգամավորների տրամադրության վրա: Ի դեպ, երեկ մենք Երեւանի փողոցներում մուրացկանությամբ զբաղվող մի քանի մուրացկանների հարցրինք, թե որեւէ մեկը իրենց 10 հազար դրամանոց երբեւէ տվե՞լ է: «10 դրամ չեն ուզում տալ, ուր մնաց՝ 10 հազար: Ամենամեծ փողը որ տվել են՝ հինգ հարյուր դրամանոցն է եղել»,- պատմեց մուրացկաններից մեկը: Մեկ այլ մուրացկանի բախտ էր վիճակվել մի քանի անգամ հազար դրամանոց ստանալ, բայց տասը հազար դրամանոցի մասին չի էլ երազել:

*«Հայկական ժամանակ»*, Երեւան, Հայաստան,
11 մայիսի, 2004թ.

Նրանք բոլորը միաժամանա՞կ են այդ ասում, թե՞ խմբով: Առանձին մարդու խոսքը ճիշտ է առանձնացնել չակերտներով, որպեսզի այդ խոսքը վերաբերվի այդ մեկին, ոչ թե բոլորին:

# 8. Î ³ ñ»óÝ»ñ »õ Ãáß ³ Ï ³ éáõÝ»ñ

# Î ³ ñ»óÝ»ñ »õ Ãáß ³ Ï ³ éáõÝ»ñ

Ðետկոմունիստական հասարակություններում շատ տարեց մարդիկ հայտնվել են հուսահատ իրավիճակում: Քանի դեռ նրանց թոշակները բավարար չեն իրենց գոյությունը նվազագույնս ապահովելու համար, սոցիալ-տնտեսական փոփոխությունները նրանցից շատերին ստիպել են բավարար քանակությամբ հավելյալ փող վաստակելու այլ միջոցներ գտնել, որպեսզի պարզապես կարողանան կերակրվել: Արժեզրկումն այնքան է գերազանցել ապրանքներից եւ ծառայություններից օգտվելու նրանց զննողունակությունը, որ նրանք հաճախ ստիպված են լինում դիմել փողոցներում մուրալու միջոցին:

Չնայած դրությունը լավ հայտնի է բոլորին, լրագրողները հազվադեպ են անդրադառնում նրանց: Տարեցները գրեթե միշտ մամուլում հայտնվում են տատիկի տեսքով` կռացած եւ պատռված շալի մեջ փաթաթված, գանգատվելով, թե ինչպես է ամեն ինչ փոխվել: Հազվադեպ է պատահում, որ տարեց մարդկանց նկարագրեն որպես կատարյալ, գրավիչ, իրենց իրավունքների համար պայքարող, սակայն հանգամանքների խոնարհ զոհեր:

Ահա մի քանի խորհուրդներ տարեցների այլ կերպար ստեղծելու վերաբերյալ:

* Պարզեք, թե արդյոք ձեր քաղաքում կամ մարզում գոյություն ունե՞ն տարեցներին օգնող կազմակերպություններ: Նրանց հետ խոսեք տարեցների առջեւ ծառացած խնդիրների մասին: Եղեք այն զբոսայգում կամ համայնքային կենտրոնում, ուր հաճախ են այցելում տարեցները: Վերջիններիս հարցրեք իրենց հոգսերի մասին: Գուցե դուք կարծում եք, թե գիտեք տարեցների բոլոր խնդիրները: Սակայն եթե որոշ ժամանակ ուսումնասիրեք, հնարավոր է անակնկալի գաք:

* Անշուշտ, ֆինանսական հոգսերը կարեւոր են, սակայն դրանք ուսումնասիրության միակ առարկան չեն: Օրինակ, դուք կարող եք ուշադրությունը կենտրոնացնել տարեցների առջեւ ծառացած առողջական խնդիրների վրա: Ո՞ր հիվանդություններն են տարածված նրանց շրջանում կամ որտե՞ղ կարող են նրանք բուժում ստանալ: Ինչպե՞ս են նրանք բուժվում հիվանդանոցներում: Արդյո՞ք տնտեսական խնդիրներն են պայմանավորում թերսնումը:

* Իրենց զավակների եւ թոռների հետ տարեցների հարաբերությունները կտրուկ փոխվել են վերջին տասը տարիների ընթացքում: Շատ երիտասարդներ հեռացել են ծնողներից` իրենց կյանքն ավելի լավ դասավորելու ակնկալիքով: Որոշ ընտանիքներ մասնատվել են պատերազմի հետեւանքով, իսկ մի մասն էլ դիմակայում վերջին տարիների հեղաշրջումների պատճառած կորուստներին կամ հաշմանդամությանը: Գրեք այս հարցերի շուրջ: Ինչպե՞ս են տնտեսական եւ սոցիալական փոփոխություններն ազդել ընտանեկան աճի վրա:

* Մեկ օր անցկացրեք փողոցում մուրացող մեկ կամ ավելի փարեց մարդկանց հետ եւ գրեք նրանց մասին: Ինչպիսի՞ վերաբերմունքի են նրանք արժանանում: Ի՞նչ են այդ մասին մտածում իրենք` փարեցները: Որքա՞ն գումար են նրանք օրական հավաքում եւ ինչպե՞ս են ծախսում: Ինչպե՞ս են նրանք որոշում, թե որ անկյունը կամ տեղանքը ընտրել:

* Մեկ օր էլ անցկացրեք փողոցում շոկոլադ, օծանելիք կամ այլ բան վաճառող փարեց կնոջ կամ տղամարդու հետ: Ուսումնասիրեք նրա սոցիալական դրությունը: Որտեղի՞ց են նրանք հայթայթում ապրանքները: Որքա՞ն են ստիպված լինում վճարել եւ որքա՞ն են վաստակում: Ի՞նչ խնդիրներ են ունենում իշխանությունների հետ:

* Ներկայացրեք յուրօրինակ զբաղմունք ունեցող փարեց մարդկանց: Արդյո՞ք ձեր շրջապատում կա որեւէ հայտնի դերասան, շարունակում է աշխատել թոշակի անցնելուց հետո կամ գուցե որեւէ իրավաբա՞ն, բժի՞շկ կամ այլ մասնագետ: Գտեք այնպիսի փարեցների, ովքեր ունեն հետաքրքիր հոբբիներ, կամ օժտված են անսովոր հմտություններով, կամ էլ զբաղվում են սպորտով, կամ որեւէ այլ ֆիզիկական գործունեությամբ: Արդյո՞ք հատուկ հետաքրքրություն ունենալը նրանց օգնում է երիտասարդ զգալ:

* Գրեք մի հոդված փարեց մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքի խնդրի շուրջ: Այդ հասկացությունը, որը վերաբերում է փարեցների նկատմամբ առկա նախապաշարմունքին եւ խտրականությանը, Արեւմուտքում ավելի ու ավելի է տարածում գտնում` որպես կյանքի շատ ասպեկտներում փարեցների առջեւ ծառացած հիմնական խնդիր: Առկա՞ է արդյոք համեմատելի ընկալում ձեր մարզում: Արդյո՞ք փարեցներին խտրականությամբ են վերաբերվում, օրինակ, աշխատավայրում կամ այլուր:

# øí»³ñÏ»Éáõ Ï»ë-Çñ³ íáõÝù 60-Çó Ñ»ïá

Èիբերալ դաշինքի պատգամավորներ Վեսնա Պետրովիչը եւ Լաբուդ Սլյուկիչը առաջարկել են, որ 60 տարեկանից անց մարդիկ Մոնտենեգրոյի ապագայի վերաբերյալ հանրաքվեի ժամանակ քվեարկելու միայն կես իրավունք ունենան: «*Պոդգորիցա Մեդիան*» այսօր է հայտնել, որ ԼԴ պատգամավորները ասել են, թե 20 եւ 60 տարեկան մարդիկ չեն կարող հավասար իրավունք ունենալ Մոնտենեգրոյի ապագայի վերաբերյալ որոշում ընդունելիս:

*«Դանաս/Բետա»*, Բելգրադ,
20 դեկտեմբերի, 2000 թ.

Ո՞րն է 20 տարեկանների խոսքը ավելի ծանրակշիռ համարելու տրամաբանությունը: Պատճառն այն է, որ նրանք ավելի երկար կյանք ունենն առջեւում: Իսկ 20 տարեկանները 40 տարեկաններից էլ ծանրակշիռ խոսք ունենն: Իսկ 50 տարեկաննե՞րը: Երեւի այս մտահղացման հեղինակները ենթադրում են, թե 80 տարեկանները ընդհանրապես քվեարկելու իրավունք չունենն:

# 9. ö ³ Ëëï ³ Ï ³ ÝÝ»ñ »õ ï»Õ ³ Ñ ³ Ýí ³ ÍÝ»ñ

# ö ³ Ëëï ³ Ï ³ ÝÝ»ñ »õ ï»Õ ³ Ñ ³ Ýí ³ ÍÝ»ñ

Ìերջին փասը փարիներին Հարավ-Արեւելյան Եվրոպայում փեղի ունեցած պափերազմների պափճառով հազարավոր մարդիկ դարձան փախսփականների: Ոմանք հափեցին սահմանները եւ ապրում են ուրիշ երկրներում դժոխային պայմաններում: Ոմանք էլ դարձան մշփապես փեղահանվածներ, եւ պարզապես այլեւս չունեն փուն ու ազափ կյանք: Շափերին հաջողվել է միասնական պահել իրենց ընփանիքները, մինչդեռ մյուսները կորցրել են իրենց ծնողներին, ամուսիններին կամ երեխաներին` քաղաքացիների վրա հարձակումների, համաճարակների կամ էլ ներգաղթի պափճառով:

Անխուսափելիորեն, դուրս վփարված անձանց եւ փախսփականների այսքան մեծ քանակն անխուսափելիորեն հանգեցրել է սոցիալական, փնփեսական, եւ քաղաքական բարդությունների այն փարածաշրջաններում, որփեղ նրանք հանգրվանել են: Շափ փեղերում հին բնակիչները, ովքեր այժմ իրենք էլ են սփիպված պայքարել, նոր դաժան պայմաններում չեն ողջունում սրանց ներկայությունը: Պեփական գործիչները հաճախ փորձում են բարձրացնել իրենց ժողովրդականությունը` փեղական բնակչության մեջ վրդովմունք բարձրացնելով սրանց նկափմամբ:

Լրագրողները կարող են կարեւոր դեր ունենալ լարված դրությունը հանդարփեցնելու, այլ ոչ թե սրելու մեջ: Ահա մի քանի խորհուրդներ:

★ Անցյալի բացթողումները երեւան հանելու համար գնահափեք, թե լրափվամիջոցներն ինչպես են անդրադարձել փախսփականների խնդիրներին: Օրինակ, արդյո՞ք նրանք հայփնվում են միայն հանցագործությունների մասին հոդվածներում: Արդյո՞ք պափրասփվել են նյութեր այն մասին, թե ինչպես են նրանք փորձում սափարել միմյանց կամ բարելավել իրենց կյանքը: Եղե՞լ են արդյոք հոդվածներ, որփեղ քաղաքական գործիչները կամ փեղի բնակիչները զանգափվում են փախսփականների հեփ կապված խնդիրներից` առանց վերջիններիս պափասխանելու հնարավորություն փալու:

★ Փախսփականների մասին լրագրությունն անխուսափելիորեն կենփրոնացած է հանցագործությունների վրա: Ճիշփ է, հանցագործությունը պրոբլեմ է, բայց դրա մասին գրելիս շափ կարեւոր է համապափասխան ենթափեքս ապահովել: Ինչպիսի՞ն է գործազրկության վիճակը փախսփականների շրջանակում: Ի՞նչ փրավմաներով են նրանք փառապում: Քանի՞ երեխա են սփիպված կերակրել: Սա չի նշանակում, որ դուք պարփավորված եք արդարացում գփնել նրանց հանցանքների համար, բայց պեփք է փորձեք նկարագրել այն հուսահափ իրականությունը, որում նրանք սփիպված են ապրել:

★ Որոշ ժամանակ անցկացրեք փախսփականների ճամբարներում կամ գաղթականներով բնակեցված փարածքներում եւ զրուցեք հնարավորինս շափ մարդկանց հեփ: Գրեք հոդված ձեր փեսածի մասին: Ինչպիսի՞ն են պայմանները: Ինչպիսի՞ փներում են մարդիկ ապրում: Արդյո՞ք օգփվում են հոսող ջրից: Արդյո՞ք նրանց երեխաներն ի վիճակի են դպրոց հաճախել: Ինչպե՞ս են սնվում:

★ Կապ հաստատեք տեղական կամ միջազգային հասարակական կազմակերպություննների հետ, որոնք աշխատում են փախստականների հետ եւ ներկայացնում նրանց շահերը: Պարզեք, թե որքանով են օգնում նրանց: Հարցրեք, թե որո՞նք են ձեր մարզում փախստականների առջեւ ծառացած հիմնական ընթացիկ խնդիրները: Այդ կազմակերպությունների միջոցով մեկ օր անցկացրեք որեւէ փախստական ընտանիքի հետ, որպեսզի իրական պատկերացում կազմեք նրանց կյանքի մասին:

★ Գտեք մեկ կամ մի քանի փախստականների, ովքեր կարողացել են հաղթահարել բոլոր դժվարությունները: Ինչպե՞ս են կարողացել աշխատանք, բնակարան կամ սնունդ գտնել: Կրթության ինչպիսի՞ հնարավորություններ ունեն նրանց երեխաները: Հարցրեք նրանց, թե ինչպես են հաղթահարել խոչընդոտները եւ արդյոք հետեւել են որեւէ այլ ընտանիքի խորհրդին:

★ Գրեք մի փախստականի մասին, որն իրեն նվիրել է նույն իրավիճակում գտնվող մյուսների կյանքը բարեփոխելուն: Արդյոք որեւէ մեկը տեղում դպրո՞ց է բացել: Եթե այո՝ մեկ օր անցկացրեք դասարանում եւ նկարագրեք այն: Կա՞ մեկը, որ օգնում է փախստականներին աշխատանք գտնել: Արդյոք որեւէ մեկն օգնու՞մ է նրանց գտնել պատերազմի քաոսում կամ տեղաշարժերի հետեւանքով անհետ կորած իրենց բարեկամներին:

★ Գրեք այն փախստականների հոգեբանական եւ առողջական խնդիրների մասին, ովքեր փորձում են վերաինտեգրվել հասարակությանը: Հարցրեք բժիշկներին, թե նրանցից քանիսն են տառապում հետտրավմատիկ սթրեսով եւ այլ հուզական բարդություններով: Կա՞ն արդյոք համաճարակներ, որոնք հատկապես տարածված են փախստականների շրջանում, եւ ի՞նչ քայլեր են ձեռնարկում իշխանություններն այդ խնդրի ուղղությամբ:

Այս հոդվածը փտղահանված մարդկանց վերաբերվում է այն հարգանքով եւ կարեկցանքով, որին նրանք արժանի են: Ի տարբերություն բազմաթիվ հոդվածների այստեղ նկարագրվում են այն դրական քայլերը, որոնք արվում են իրավիճակը բարելավելու համար, այլ ոչ թե լոկ թշնամանք եւ բողոքներ է արտահայտում: Չնայած դրան, այստեղ հատուկ տեղեկություններ չեն հաղորդվում Ադրբեջանում տեղահանված մարդկանց իրավիճակի մասին: Բացակայում են նաեւ դասընթացի մասին մանրամասնությունները. ինչքա՞ն գումար է ծախսվում դրա վրա, ի՞նչ արձագանքի է արժանացել տեղահանված մարդկանց կողմից: Եվ քանի որ նրանցից որեւէ մեկի հետ հարցազրույց չկա, ընթերցողը չի ստանում նրանց կյանքի իրական պատկերը:

## î»Õ ³ Ñ ³ Ýí ³ Í ³ ÝÓÇÝù ÏëÏ ³ Ý ³ Ý Çñ ³ í ³ Ï ³ Ý ³ ç ³ ÏóáõÃÛáõÝ

## ² 1ñµ»ç ³ ÝÇ »ñÇï ³ ë ³ ñ¹ Çñ ³ í ³ µ ³ ÝÝ»ñÇ ÙÇáõÃÛáõÝÁ Çñ ³ ·áñÍáõÙ ¿ §î»Õ ³ Ñ ³ Ýí ³ Í Ù ³ ñ¹Ï ³ Ýó Ñ ³ Ù ³ ñ Çñ ³ í ³ Ï ³ Ý ¹ ³ ëÁÝÃ ³ ó¦-Á

Մարդկությունը մուտք գործեց 21-րդ դար՝ իր գիտական եւ տեխնիկական զարգացման վերելքի ժամանակ: Բայց այսօր, ինչպես եւ միջին դարերում, մարդիկ դեռ «ժանտախտի» մասին են խոսում: Այս հիվանդությունը, որը ազդում է բարոյականի վրա, դեռ գոյություն ունի եւ անբուժելի է: Այս բժշկական տերմինը այսօր կարելի է օգտագործել հասարակության վրա ազդեցություն ունեցող ահաբեկչության աճը, նացիոնալիզմը եւ ռասայական ու կրոնական անհանդուրժողականությունը բնութագրելու համար: Հենց անհանդուրժողականությունն է, որ զայրույթ, վրիժառություն է առաջացնում, եւ աշխատեցնում է ռազմական սարսափելի մեքենան, ստիպում է մարդկանց զինվորներ կամ պատերազմի զոհեր դառնալ, զրկում է նրանց ապրելու իրավունքից, տունուտեղից եւ գոյատեւելու միջոցներից: Ահաբեկչության զոհերը դառնում են ոչ պիտանի ու հասարակությունից առանձնացված մի խումբ:

Երրորդ հազարամյակի սկզբին հասարակության առջեւ կանգնած զլոբալ խնդիրներից մեկը փախստականների եւ տեղահանված մարդկանց հարցն է: Դժբախտաբար, մեր երկիրը դեռեւս առաջնային տեղ է զբաղեցնում փախստականների քանակով: Ադրբեջանում այսօր մեկ միլիոնից ավելի Հայաստանից փախստականներ եւ երկրի օկուպացված տարածքներից տեղահանված մարդիկ կան:

Այս առաջին մասը չափից դուրս ճարտասանական է, եւ այստեղ որպես աշխարհի խնդիրների պատճառ, անհանդուրժականութունն, է մատնանշվում, ինչը նույնքան ճիշտ է, ինչքան որեւիցե այլ պատճառ: Եվ դա ցույց է տալիս, որ լրագրողը էթնիկական փոքրամասնություններից ոչ մեկի կողմը չի բռնում: Նա պարզապես հանդուրժողականության կողմնակից է:

Կառավարությունը հնարավորություններ ունի, որոնք կարող են, եւ պետք է օգտագործվեն 21-րդ դարի ժանտախտը հաղթահարելու համար: Համար հարկավոր է պարզապես լսել մարդկանց օգնության աղերսանքները, եւ կարեկցել նրանց: Իհարկե, մեկն ի վիճակի կլինի տնտեսական օգնություն հատկացնել, մյուսն էլ կօգնի նրանց՝ կյանքում իրենց տեղը գտնել: Բայց, այնուամենայնիվ, օգնության աղերսանքները ամայության մեջ արձակած ձայնի են նման: Եվ նրանք, ովքեր ժխտում են, թե հասարակությունն այդպես է վարվում, պարզապես խաբեբաներ են:

Լավ կլիներ, որ լրագրողը նշեր հատկապես, թե ի՞նչ պետք է անի կառավարությունը, եւ հետո մեջբերեր կառավարության մեկնաբանությունները, թե ինչու՞ այդ ամենը չի արվում: Արդյո՞ք կառավարությունը պետք է հատուկ ծրագրեր իրագործի: Տնաշինությու՞ն սկսի: Նրանց համար աշխատա՞նք գտնի, թե՞ մի ուրիշ բան:

Ներկա ժանտախտի դեմ պայքարի ամենապատասխանատու մասը կրթությունն է:

Սա վիճելի հայտարարություն է: Իհարկե լավ կլիներ, որ փախստականները եւ տեղահանված մարդիկ իրենց իրավունքների մասին իրազեկ լինեին: Բայց իրավունքները իմանալը չի նշանակում, որ նա ի վիճակի կլինի դրանք պաշտպանել: Տվյալ պարագայում սա կարող է պարզապես ավելի իրազեկ դարձնել, թե ինչքան են իրենց իրավունքները ոտնահարվում:

Այսպես, բազմաթիվ տեղահանված մարդիկ, որոնց իրավունքները բազում անգամ ոտնահարվել են, բացարձակ տեղյակ չեն իրենց իրավունքներից: Այս կապակցությամբ, այս տարվա հոկտեմբերին Ադրբեջանի երիտասարդ իրավաբանների միությունը նախաձեռնել է մի ծրագիր՝ «Տեղահանված մարդկանց համար իրավական դասընթաց» անվանումով: Ծրագիրը իրականացվում է Փախստականների դանիական կոմիտեի աջակցությամբ: Սրա հիմնական նպատակն է օժանդակել հարյուր հազարավոր տեղահանված մարդկանց, որոնք զրկված են իրավական աջակցությունից, որպեսզի նրանք կարողանան իրենց իրավունքները պաշտպանել:

Այստեղ լավ կլիներ ծրագիրը ավելի մանրամասն նկարագրել: Ի՞նչ է կոնկրետ իրենից ներկայացնում: Ի՞նչ է այն սովորեցնում: Ինչպե՞ս է անցկացվում ուսուցանումը. դասընթացների՞, սեմինարների՞, թե՞ ծանուցողական արշավի միջոցով: Ինչքա՞ն գումար է ծախսվում դրա համար: Եվ որո՞նք են տեղահանված մարդկանց համար իրավական ուղիները:

Ադրբեջանի երիտասարդ իրավաբանների միության մամլո քարտուղարը՝ Նիգյար Մալիկովան, ասաց, որ ծրագիրը պետք է եզրափակվի երեք ամիս անց: Ծրագրի շրջանակներում միության մասնագետները արդեն մի շարք դասընթացներ են անցկացրել փախստականների բնակեցման վերաբերյալ:

Ի՞նչ տեւողություն ունեն այս դասընթացները: Ի՞նչ թեմաներ են ընդգրկված: Եթե այդքան շատ փախստականներ կան, ինչպե՞ս կարող է ամբողջ ծրագիրը երեք ամսվա ընթացքում եզրափակվել: Ի՞նչ շարունակություն սա կտանա: Ինչպե՞ս են սրան արձագանքել տեղահանված անձինք: Միգուցե լրագրողը պետք է այդ դասընթացներից մեկին մասնակցեր եւ դրա մասին գրեր:

Հիմնականում, ասաց Մալիկովան, դասընթացները անց են կացվում Միացյալ Ազգերի Կազմակերպության փաստաթղթերի հիման վրա, որտեղ պարունակվում են փախստականների եւ տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության պայմանագրեր եւ դաշնագրեր:

Դասընթացի ընթացքում փախստականները ծանոթանում են նաեւ Ադրբեջանի՝ այս կարգի մարդկանց իրավունքները կարգավորող օրենքներին. սրանք են՝ համապատասխան ապրելու չա-

փանիշների իրավունքը, կրթություն ստանալու բարեկամների մասին տեղեկատվություն ստանալու իրավունքները, բժշկական օգնություն ստանալու իրավունքը, եւ ինքնությունը հաստատող փաստաթղթեր ունենալու իրավունքը՝ ստիպողական գաղթից ապահովված լինելու, ազատ մուտք ապահովելու համար եւ այլն:

Մալիկովան ասում է, որ, համենայն դեպս, որպես կանոն, կառավարական կառույցները տեղահանված մարդկանց չեն տրամադրում իրենց հասանելի տեղեկությունները՝ իրավունքների, արտոնությունների վերաբերյալ: Ինչ վերաբերվում է ծրագրին, ապա առաջին փուլն արդեն ավարտված է:

*«Զերկալո»,* Բաքու, Ադրբեջան,
24 հոկտեմբերի, 2003 թ.

Ինչի՞ց էր բաղկացած առաջին փուլը: Դա վերանշված երեք ամիսների վե՞րջն է, թե՞ դեռ երկրորդ փուլ կա: Ծրագրի մանրամասները խուռն են ներկայացրած:

Այս լրագրողին, ըստ երեւույթին, թվում է, որ եթե որեւիցե հայ վերադառնա Ադրբեջանում իր տունը, կդավաճանի իր հայրենակիցներին: Նա մտածում է նաեւ, որ չի կարելի քննադատել Հայաստանի կառավարությանը: Հոդվածի հերոսների ասածի էությունը հասկանալու փոխարեն, լրագրողն իր հոդվածում պարզապես հարձակվում է այդ երկու հայերի վրա՝ նրանց ենթադրելի հայրենասիրության պակասի համար: Ի՞նչ են նրանք մասնավորապես ասել մամլո ասուլիսի ժամանակ: Ինչքանո՞վ է իրավացի նրանց քննադատությունը: Լավ կլիներ իմանալ: Դրա փոխարեն լրագրողը պարզապես վիրավորում է այդ երկու փղամարդկանց:

## Ð³Ï³Ñ³ÛÏ³Ï³Ý Ë³Õ»ñ Ñ³Û»ñÇ ÙÇçáóáí

2դրբեջանական մամուլն այս օրերին ողողված է հրապարակումներով հայ փախստականներ Ռոման Թարյանի եւ Արթուր Ապրեսյանի՝ Բաքվում հրավիրված մամուլի ասուլիսի վերաբերյալ: Մեր հարեւան երկրի լրատվամիջոցներն անթաքույց հրճվանքով են ծամծմում այս թեման: Բնական է, երկու հայ եկել հասել են Բաքու՝ հայրենիքը փնովելու: Ռոման Թարյանն ու Արթուր Ապրեսյանն իրականում գոյություն ունեցող մարդիկ են, որոնք իսկապես գաղթել են Բաքվից, փասը փարուց ավելի ապրել են Հայաստանում: Այս մասին տեղեկացանք ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ Գագիկ Եզանյանից: Ռոման Թարյանն ապրել է Երեւանում, Կորյունի 23 հասցեում, աշխատել է խանութում: Գագիկ Եզանյանի խոսքով, բազմաթիվ փախստականներ են այժմ դիմում վարչություն՝ վրդովված, իրենց խոսքով ասած, հայրենիքի դավաճանների արարքից: Ի դեպ, վարչություն է եկել նաեւ Ռոման Թարյանի նախկին կինը՝ Աիդան: Նա նշել է, թե եւս մեկ անգամ համոզվել է, որ ճիշտ է արել ամուսնալուծվելով, միայն ցավում է, որ իր երկու երեխաները կրում են Թարյան ազգանունը:

Առանց խորը վերլուծության նույնիսկ պարզ է, որ կատարվածը մեր հարեւան երկրի ձեռքի գործն է: Նպատակը՝ կրկին ցեխ շպրտել Հայաստանի վրա, թե իբր Հայաստանը թաղված է կոռուպցիայի եւ անօրինականության մեջ, իսկ Ադրբեջանն այնքան ժողովրդավար է, որ պատրաստ է նույնիսկ հալածված հայերին հյուրընկալել Բաքվում: Ցավոք, այս անգամ համաշխարհային հանրության աչքերին թոզ է փչվում մեր հայրենակիցներին օգտագործելու ճանապարհով, որոնց հավանաբար ինչ-որ բան են խոստացել:

Լրագրողը խոսել է հենց Աիդայի՞ հետ, թե՞ տեղեկությունները հաղորդել է Եզանյանը: Երկրորդ ձեռքի տեղեկությունները, հատկապես այն տեղեկությունները, որոնք մեկը օգտագործում է ինքն իր տեսակետը հաստատելու համար, չի կարելի հավաստի համարել: Եթե լրագրողը չի լսել այս բառերը հենց կնոջից, ապա չպետք է մեջ բերեր դրանք:

Նրանք կարող են ինչ-որ բան խոստացած լինել, բայց կարող է եւ ոչ: Լրագրողը պետք է ջանար ուսումնասիրել հայերի հայտարարությունները եւ պարզել, ճշմարի՞տ են դրանք, թե՞ ոչ: Պարզապես երկու հայերին ու Ադրբեջանի կառավարությանը քննադատելը առանց փաստերի լույս չի սփռում իրավիճակի վրա:

Ներթական ադրբեջանական խաղն է, պարզ է նույնիսկ առանց խորը վերլուծության: Բավական է ընդամենը մի քանի տրամաբանական հարց տալ եւ փորձել ստանալ դրանց պատասխանները: Առաջինը եւ հիմնականը՝ ինչպե՞ս են հայերը հասել Բաքու: Պարզ է, որ առանց Ադրբեջանի իշխանությունների օգնության հայերը հաստատ Բաքու չէին հասնի: Բավական է հիշել ոչ վաղ անցյալում ադրբեջանական հիստերիան, երբ հայերը Բաքվում պետք է մասնակցեին ՆԱՏՕ-ի գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում անցկացվող զորավարժություններին: Ակնհայտ է, որ այս երկուսը Բաքու էին հասել ոչ միայն Հայաստանում փախստականների ծանր սոցիալական վիճակից դժգոհելու համար, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանում փախստականներն ապրում են վրաններում՝ բաց երկնքի տակ: Նրանց բողոքն ակնհայտորեն ճիշտ հասցեով չէր: Մեր հայրենակիցների շուրթերով բարձրացվել են քաղաքական խնդիրներ: Նրանք ասել են, թե ատում են Ռոբերտ Քոչարյանին եւ համարում, որ Ստեփան Դեմիրճյանը պետք է ղեկավարի Հայաստանը:

Պարզ է, թե ինչու Ադրբեջանում Ռոբերտ Քոչարյանին չեն սիրում, սակայն նկատենք, որ Ստեփան Դեմիրճյանին փաստորեն իր հայրենակիցներն արջի ծառայություն են մատուցում: Ինչպիսի՞ն է լինելու Ռոման Թարյանի եւ Արթուր Ապրեսյանի ճակատագիրը: Նրանք, թերեւս, հույս ունեն, որ բարձրացված աղմուկից հետո իրենց կհաջողվի որեւէ բարեկեցիկ երկրում ապաստան գտնել: Իսկ գուցե մեր հայրենակիցները մտադիր են Բաքվում մնալ, եթե նրանց այդքան լավ են վերաբերվում: Հայաստանի միգրացիայի եւ փախստականների վարչությունում Ռոման Թարյանի եւ Արթուր Ապրեսյանի պահվող գործերում նրանք նշել են, որ ժամանակին Բաքվում չորս սենյականոց բնակարաններ են կորցրել:

Երեւի հույս ունեն հետ բերել դրանք: Սակայն զգուշությունը նրանց չի խանգարի, միշտ մնալու է գիշերը կացնահարվելու վտանգը:

*«ԱԶԳ»,* Երեւան, Հայաստան,
16 ապրիլի. 2004 թ.

Հայերը չպե՞տք է քննադատեն երկրի նախագահին: Մի՞թե դա ինքնին հակահայրենասիրություն է:

Արդյո՞ք մարդկանց անձնական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները հասանելի են բոլորի համար: Ինչ-որ մեկի պահելաձեւը մյուսին դուր չգալը հիմք չէ՝ այս մարդկանց անձնական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները բոլորին ի ցույց հանելու համար: Լրագրողը պետք է նշեր, թե որտեղի՞ց է այդ տեղեկությունները գտել: Նա դրանք վերցրել էր գործակալության ղեկավար Եգանյանի՞ց: Գործակալությունում մի՞շտ են պատմում լրագրողներին, թե ինչեր են պարունակվում մարդկանց անձնական՝ ենթադրաբար գաղտնի փաստաթղթերում:

Այս զգուշացումը այնպես է հնչում, իբր լրագրողը անձամբ ուզում է, որ նրանց այնտեղ սպանեն: Անկախ նրանից, թե ինչ անձնական զգացմունքներ ունի լրագրողը այս դեպքի վերաբերյալ, վիրավորական եւ էթիկայի կանոններից զուրկ է նմանատիպ ենթադրություններ անելը:

Այս կարճ հոդվածը ոստիկանապետին արդարանալու հնարավորություն է տալիս, սակայն նույն հնարավորությունը չի ընձեռնում հակառակ կողմին: Առարկության գլխավոր թեման՝ փախստականների հանդեպ ոստիկանության ձեռնարկած անհամապատասխան գործողությունները, սկզբից քննարկելու փոխարեն եւ վերնագիրը, եւ առաջին պարբերությունը կենտրոնացած են ոստիկանապետի ժխտման վրա, ինչը ավելի է շեշտում նրա խոսքերի հակասությունը՝ ի հեճուկս նրանց, ում ենթադրաբար վատ են վերաբերվել:

# àëïÇÏ ³ ÝáõÃÛáõÝÁ ÅËïáõÙ ¿ ùÇëï»ñÇ »õ ã»ã»Ý ÷ ³ Ëëï ³ Ï ³ ÝÝ»ñÇ ï»Õ ³ Ñ ³ ÝáõÙÁ

Կախեթիի շրջանի ոստիկանապետը՝ Զուրաբ Տուշուրին, կտրականապես ժխտում է հասարակական կազմակերպությունների այն մեղադրանքները, թե ոստիկանությունը անօրինական գործողություններ է կիրառել Պանկիսի կիրճում բնակվող քիստերի եւ չեչեն փախստականների հանդեպ:

Հատկանշական է, որ բնակչությունն ինքը պնդում է, որ ոստիկանությունը կապարել է այս գործողությունները, ավելին՝ ոմանք հացադուլ են կազմակերպել՝ այս գործողությունների դեմ իրենց բողոքը արտահայտելու համար:

Տուշուրին համոզված է, որ ՀԿ-ների եւ բնակչության ներկայացրած մեղադրանքը հիմք չունի, քանի որ եթե նման գործողություններ տեղի ունեցած լինեին, ապա նրանք հացադուլ կազմակերպելուց առաջ բողոքով կդիմեին կառավարության որեւէ անդամի կամ կառույցի:

«Վերջին վեց ամիսների ընթացքում միայն վեց փախստական է ձերբակալվել: Վերջին երկու շաբաթների ընթացքում մեքենայի գողության երկու դեպք է արձանագրվել, եւ ոստիկանությունը չէր կարող հետաքննություն վարել առանց կիրճ գնալու»,- ասում է Կախեթիի շրջանի ոստիկանապետը:

Նա չի ժխտում, որ Պանկիսի կիրճում նման հետաքննություն է անցկացվել, բայց պնդում է. որ ոստիկանության գործողությունները օրինական են, եւ ՀԿ-ների ու բնակչության մեղադրանքները՝ անարդարացի:

*«Մեդիա Նյուզ»* Լրատվական գործակալության հոդված, որը տպագրվել է *«24 Ժամ»* օրաթերթում, Թբիլիսի, Վրաստան, 11 մայիսի, 2004 թ.

Ի՞նչ անօրինական գործողությունների մասին է գնում խոսքը: Վերնագրում խոսվում է տեղահանման մասին, բայց մեղադրանքները այդպես էլ չեն պարզաբանվում:

Լավ կլիներ այստեղ, կամ մեկ ուրիշ մասում մեղադրանքները ներկայացնողներից տեղեկություններ կամ մեջբերումներ անել: Սա կհավասարակշռեր հոդվածը՝ հակադրելով ոստիկանապետի կարծիքը նրանց կարծիքի հետ, ում հանդեպ վատ վերաբերմունք էր ցուցաբերվել: Այլապես, նրանք ընթերցողի համար անտեսանելի են մնում եւ դժվար է նրանց կարծիքը հասկանալ:

Այս փաստարկը շատ համոզիչ չէ: Բացարձակ խելամիտ չէ սպասել, որ կառավարության մի մարմնի կողմից վատ վերաբերմունքի արժանացած մարդիկ կբողոքեն մյուս կառույցին: Ավելին՝ միգուցե եւ նրանք բողոքել են, բայց ոչ մի պատասխան չեն ստացել: Առաջին հայացքից թվում է, թե լրագրողը Տուշուրիի հաստատման հետ համամիտ է:

Կրկին, լավ կլիներ մանրամասնել, թե փախստականների խոսքերով ինչ տիպի վերաբերմունք են նրանք ստացել, եւ ինչ են մասնավորապես ոստիկանության ուժերը արել:

# 10. ê»é³Ï³Ý ÏáÕÙÝáñáßáõÙ

# ê»é ³ Ï ³ Ý ÏáÕÙÝáñáßáõÙ

êեռական փոքրամասնությունները Հարավ-Արեւելյան Եվրոպայում ավելի տեսանելի են դարձել վերջին տարիներին: Նրանք միություններ են կազմել, կազմակերպել են համագումարներ եւ միասեռների հպարտության շքահանդեսներ, լրագրողներին ստիպելով գրել ոչ ավանդական սեռական հակվածություն ունեցող մարդկանց՝ արվամոլների, լեսբուհիների, եւ բիսեկսուալների: Բազմաբարդ խնդիրների մասին, բայց բազմաթիվ լրագրողներ եւ լրատվական կազմակերպություններ դեռեւս նմանատիպ մարդկանց վերաբերվում են ինչպես գծերի եւ հասարակության թափթփուկների, որոնք արժանի չեն ոչ՛ ցավակցության, ոչ՛ ըմբռնման, ոչ՛ էլ մարդկանց հիմնական իրավունքների:

Ահա մի քանի խորհուրդներ սեռական փոքրամասնությունների մասին հրապարակումների վերաբերյալ:

* Մեծ ուշադրություն դարձրեք լեզվական խնդրին: Շատ հոդվածներում սեռական փոքրամասնություններին բնորոշում են այնպիսի նվաստացնող բառերով, ինչպիսիք են «պեդեռաստ» եւ «այլասերված» արտահայտությունները: Յուրաքանչյուր լեզու ունի իր յուրահատկությունները, բայց անգլերենում, օրինակ, «արվամոլ», «լեսբուհի» եւ «երկսեռ» բառերը չեզոք տերմիններ են եւ չունեն բացասական երանգավորում: Օգտվեք ձեր լեզվում առկա նման չեզոք տերմիններից:

* Տրանսվեստիտները եւ տրանսսեքսուալները նույնը չեն: Տրանսվեստիտներն այն մարդիկ են, ովքեր նախընտրում են կրել հակառակ սեռին բնորոշ հագուստ: Տրանսսեքսուալներն այն մարդիկ են, որոնց մարմինները չեն համապատասխանում իրենց սեռական ինքնության գիտակցմանը, այլ կերպ ասած՝ անատոմիական տղամարդիկ, ովքեր իրենց համարում են կին, եւ անատոմիական կանայք, ովքեր իրենց համարում են տղամարդ: Տրանսսեքսուալներն իրենց ցանկությամբ կարող են ենթարկվել թանկ եւ ցավոտ վիրահատության՝ ֆիզիկապես իրենց սեռը փոխելու համար:

* Սեռական փոքրամասնությունների մասին գրելիս, շատ կարեւոր է, որպեսզի նախքան ձեր նյութը պատրաստելը զրուցեք նրանցից ոմանց հետ: Արվամոլները, լեսբուհիները եւ մյուսները եւս ունեն հույսեր, երազանքներ եւ հոգսեր: Նրանք էլ, ինչպես բոլորը, ունեն կարիերա, հետաքրքրություններ եւ ընտանիք: Մի ենթադրեք, թե գիտեք ինչպիսին է նրանց կյանքը կամ ովքեր են նրանք՝ առանց նրանցից որեւէ մեկի հետ այդ մասին զրուցելու:

* Շատ մարդիկ ընդգծված վերաբերմունք ունեն սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Այն փաստը, որ որոշ պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ կամ ուրիշները կարող են վիրավորական տերմիններ կամ արտահայտություններ գործածել արվամոլների եւ լեսբուհիների մասին խոսելիս, ամենեւին չի նշանակում, որ դուք իբրեւ լրագրող պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման անպա-

տիվ արտահայտությունները: Անհրաժեշտության դեպքում, այդ միտքն այլ բառերով արտահայտեք: Եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, նկատի ունեցեք, որ սեռական փոքրամասնությունները վիրավորական եւ զայրացնող են համարում դրանք:

★ Դուք չպետք է միանշանակ ընդունեք բժիշկների եւ գիտնականների կարծիքը, ովքեր փաստում են, թե սեռական փոքրամասնությունները հիմնականում միտումնավոր ներքաշում են երեխաներին, տարածում են ՄԻԱՎ եւ այլ վնասներ պատճառում հասարակությանը: Եթե որեւէ մեկը ձեզ ասի, օրինակ, որ արվամոլների 50%-ն անհանգստացնում է երիտասարդ տղաներին, ապա հարցրեք նրանց, թե որտեղից են հայթայթել այդ վիճակագրությունը: Իրենք իրենց փորձագետ համարող մարդիկ հաճախ օգտագործում են այս տեսակ սխալ տեղեկատվությունը կամ խեղաթյուրում ուսումնասիրությունները՝ ջանալով ազդել հասարակական կարծիքի վրա՝ ընդդեմ սեռական փոքրամասնությունների:

★ Սեռական փոքրամասնությունների մասին շատ հրապարակումներ հաճախ վերաբերում են հանցագործություններին՝ հատկապես ոչ-ավանդական սեռական հակվածություն ունեցող մարդկանց  վրա կատարված հարձակումներին կամ նրանց սպանություններին: Նմանատիպ հրապարակումները սովորաբար այդ զոհերին դիտում են որպես հանցագործներ, իբրեւ թե հենց իրենք են մեղավոր հարձակման ենթարկվելու համար, քանի որ տարբեր են մյուս մարդկանցից: Նման դեպքերում կարեւոր է հիշել, որ հանցագործները հարձակվողներն են, այլ ոչ թե տուժողները: Հաճախ լրագրողներն ուղղակի միանշանակ փոխանցում են պաշտոնյաների կարծիքը, ովքեր եւս կիսում են այն տեսակետը, թե զոհերն ինչ-որ ձեւով արժանի էին հարձակման ենթարկվելու:

★ Քանի որ սեռական փոքրամասնությունները հաճախ մեկուսացած են հասարակությունից, հնարավոր է դժվար լինի զրուցելու համար գտնել նրանց: Սկսելու ամենահարմար ձեւը նրանց ներկայացնող խմբերի եւ ՀԿ-ների հետ կապվելն է: Զրուցեք կազմակերպիչների հետ նրանց հոգսերի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար եւ նրանց միջոցով կապ հաստատեք իրենց մյուս անդամների հետ: Փորձեք նաեւ զրուցել խմբում չընդգրկվածների հետ, ովքեր կարող են այլ դիրքորոշում ունենալ կամ ավելի անկեղծ ու շիտակ մտքեր եւ կարծիքներ արտահայտել:

★ Մի հավատացեք արվամոլների, լեսբուհիների եւ մյուս սեռական փոքրամասնությունների մասին ձեր լսած բոլոր ստերեոտիպերին: Շատերը կարծում են, օրինակ, որ արվամոլներին հեշտությամբ կարելի է բաժանել «ակտիվների» եւ «պասիվների», ընդ որում՝ պասիվ արվամոլները հանդես են գալիս կնոջ դերում: Տեսականորեն դա լավ է հնչում, սակայն իրականում սեռական դերերն առավել խճճված եւ նուրբ են: Ճշմարիտ չէ նաեւ, որ իբրեւ թե բոլոր արվամոլներն արտիստիկ են, որ իբր բոլոր լեսբուհիները կամ ատում են տղամարդկանց, կամ էլ ցանկանում տղամարդ լինել, եւ որ տղամարդիկ, ովքեր կանանց պես են հագնվում, ինքնըստինքյան հոմոսեքսուալներ են:

Այս հոդվածը Ջոն Էլվիսին է իր մահվան մեջ մեղադրում՝ իբր թե միասեռ լինելու պատճառով: Այս մեղադրանքը, թեև նա այլասերել է երեխաներին, այստեղ բամբասանքներից բացի ոչ մի փաստով չի հաստատվում: Նաեւ հոդվածում միասեռությունը շփոթվում է պեդոֆիլիայի հետ: Չնայած այդ երկուսը որոշ նմանություն ունեն, բայց որոշակիորեն տարբեր երեւույթներ են: Ինչու՞մ է մեղադրվում Էլվիսը. նրանում, որ միասե՞ռ է եղել, պեդոֆիլ, թե՞ երկուսը միասին:

## Üáñ Ñ³Ù³Ï³ñ·Ç ïñ³·ÇÏáÙ»¹Ç³Ý

***ºñµ Ó»ñ Í³é³Ý ·ñáõÙ¿ ³Ûë µ³é»ñÁ, »ñÏáõ ï³ñÇ, »ñÏáõ ³ÙÇë »õ 19 ûñ¿ ³Ýó»É ³Ûë ïñ³·ÇÏáÙ»¹Ç³ÛÇ ëÏ½µÇó:***

Ես չէի վերադառնա այս թեմային, եթե ԱՄՆ-ի դեսպանատունը փետրվարի 19-ին մի չափազանց լուրջ հետեւանքով հանդես չգար:

Ավելի պարզ լինելու համար ես ստիպված եմ ժամանակով ետ գնալ: 2000 թվականի նոյեմբերի 30-ին ԱՄՆ-ի Միջազգային հանրապետական ինստիտուտի ներկայացուցիչ Ջ. Էլվիսը սպանվել էր Բաքվում: Նրա մարմնի վրա դանակի 36 հարվածներ էին հայտնաբերվել:

Նրա կողքին նաեւ հայտնաբերվել էին չօգտագործված պահպանակներ: Ոչ ոքի այդ ձեւով չէին սպանի, եթե նա արեւելյան մենթալիտետը վիրավորած չլիներ:

Իրականում, Հին Քաղաքում պատահած այս միջադեպը զգուշացում էր ԱՄՆ-ին: Այն ժամանակ մենք դիտարկեցինք իշխող էլիտայի եւ ընդդիմության վարքագիծը, մի վերլուծություն ներկայացրեցինք, եւ ՝ «Մեր երկրում գտնվող ամերիկացիները՝ Ջոն Էլվիսի կոնտեքստով» վերնագրի տակ 2000թ. դեկտեմբերի 31-ին «Շարգ» թերթում հրապարակեցինք: Ըստ մեր դիրքորոշման, քանի որ մենք սեռական փոքրամասնությունների վերաբերյալ օրենք չունենք, ապա թող նրա կողմից բռնաբարված անչափահաս երեխաների ծնողները եւ զոհերն իրենք նրան դատեն: Քանի որ մենք պատրանքներով չենք ապրում, նման արդարադատություն չէինք ակնկալում իշխող էլիտայի եւ ընդդիմության բացակայության պայմաններում: Սրա պատճառը նրանց՝ հուսահատ կախվածությունն է ԱՄՆ-ի աջակցությունից՝ հզորություն ձեռքբերելու եւ այն պահպանելու համար: Դժբախտաբար հասարակությունն այս հարցին մոտեցավ որպես Եվրոպական անառակության եւ սեռական հետապնդման դեպք: Սա մեզ նույնիսկ

◀ Ի՞նչ հերքման մասին է խոսում լրագրողը: Ի՞նչ է կոնկրետ հայտարարել դեսպանատունը:

◀ Առանց որեւիցե փաստարկների այս կարծիքը ենթադրում է, որ զոհը ինքն է մեղավոր իր մահվան մեջ: Այն նկատառումը, որ միայն «արեւելյան մենթալիտետը վիրավորած» մեկին այդպիսի զարհուրելի մահ կհասնեն, դժվար է ընդունել որպես ճշմարտություն: Սա նույնպես ենթադրում է, որ կա մեկ՝ «արեւելյան մտածելակերպ», որին բոլորը համաձայն են: Բայց արդյոք այդ մենթալիտետին ցանկացած հակադրվող պետք է դանակի 36 հարվա՞ծ ստանա: Սա մի քիչ ծայրահեղական է, բայց հենց այն է, ինչ հեղինակն ասում է:

չզարմացրեց: Եթե մի երկրի նախագահը իրեն անառակի պես է պահում, ապա զարմանալի չէ որ, այդ երկրի ներկայացուցիչը պետք է սեռական փոքրամասնությանը պատկանի:

Թերեւս, ամերիկացիները մեր երկրում այդ երեւույթի համար ավելի պարկեշտ տերմին են գտել՝ ոչ ավանդական սեռական կողմնորոշման մարդիկ: Ես կուզեի հիշեցնել, որ նախագահ Քլինթոնը սեռական հարաբերությունների մեջ էր մտել իր աշխատակցի հետ երկրի ամենահեղինակավոր սենյակում: Մի պետություն, որը 42 մլն ԱՄՆ դոլար ծախսեց այդ դատավարության վրա, մարմնավորում է ոչ միայն օրենքի սկզբունքները, այլեւ բարոյականության ճգնաժամին:

Այն ժամանակ ԱՄՆ-ի կոնգրեսմեն XXX[1] իր սեռական համակրանքը արտահայտեց Էլվիսի նկատմամբ, եւ նույնիսկ վիրավորեց ու սպառնաց մեր երկրին: Մեր կառավարությունն ու ընդդիմությունը նրան անպատասխան թողեցին: 10 վկաների հարցաքննությունից երեւում է, որ Հին Քաղաքի երիտասարդները արդեն երկու տարի ու երեք ամիս հոգեբարոյական ահաբեկումների առարկա են դարձել: Ավելի քան 1.000 երիտասարդներ, այդ թվում եւ աղջիկներ հարցաքննության են ենթարկվել այդ միասեռի պատճառով, որը իր գործողությունների արժանի պատասխանը ստացավ դանակի 36 հարվածներով:

Նրանք, ովքեր ամեն ինչ պատրաստ են զոհաբերել իշխանություն ձեռք բերելու համար, ընկըսեցին ԱՄՆ-ի ոտքերը լիզել՝ ասելով, թե չեն ուզում այս դրվագի պատճառով իրենց հարաբերությունները վատթարացնել: Երբ մենք հարցրեցինք, թե երբվանի՞ց են միջպետական հարաբերությունները որոշվում սեռական փոքրամասնությունով, որը գիշերային ակումբներից դուրս չէր գալիս:

Իրականությունն այն է, որ ԱՄՆ-ն այս հանցագործությունը քաղաքականացրեց եւ բարձրացրեց միջպետական հարաբերությունների մակարդակի: Մեր քաղաքական գործոնները միշտ էլ օտարի ցանկությունների իրագործող են եղել: Հետո մենք հարցր փվեցինք հասարակությանը. «ինչու՞ Ադրբեջանի ընդդիմությունը ոչինչ չի ասում սե-

Այս նկատառումը փորձում է կապել նախագահ Քլինթոնի վարքը եւ ԱՄՆ-ի քաղաքացու արվամոլ լինելու փաստերը: Բայց ի՞նչ կապ ունի մեկը մյուսի հետ: Արդյո՞ք լրագրողը ի նկատի ունի, որ Ադրբեջանի ոչ մի քաղաքական գործիչ արտամուսնական կապեր չի ունեցել: Այս սեռական անխոհեմությունները միայն ամերիկացինե՞րն են անում, թե՞ նաեւ Արեւմտյան ուրիշ երկրների քաղաքացիները: Սա հազիվ թե ընդունելի գաղափար է:

Այդ կոնգրեսմենը իր սեռական համակրանքը Էլվիսի նկատմամբ կոնկրետ ինչ ձեւով դրսեւորեց: Ինչպե՞ս էր նա Ադրբեջանին սպառնացել: Լավ կլիներ, եթե հեղինակը այստեղ մանրամասներ բերեր:

Ի՞նչ էր Էլվիսը կոնկրետ արել: Նա երեխաներին այլասերե՞լ էր: Թե՞ պարզապես միասեռ էր: Որտեղի՞ց հեղինակը գիտի, որ 1.000 երիտասարդներ հարցաքննվել են: Անհավանական է, որ այդքան շատ անձինք այդ փաստով հարցաքննվեին: Եթե դա այդպես է, ապա հեղինակը պետք է տեղեկության աղբյուրը նշեր:

Արդյո՞ք գիշերային ակումբներ այցելելը հանցանք է: Որտեղի՞ց հեղինակը գիտեր, որ Էլվիսը իր ամբողջ ժամանակը գիշերային ակումբներում էր անցկացնում:

Իսկ ի՞նչ օրինական կարգավիճակ ունեն հիմա սեռական փոքրամասնությունները: Հեղինակը նշում է, թե օրենք չկա: Արդյո՞ք դա նշանակում է, որ այժմ միասեռությունը օրինական է. ի՞նչ է այդ նշանակում: Իսկ ինքը ի՞նչ օրենք է ցանկանում ունենալ: Արդյո՞ք նա ուզում է, որ միասեռները օրենքից դուրս հայտարարվեն:

1. Ծանոթություն: Լրագրողը այդ կոնգրեսմենի անունը նշել էր, բայց ԲՏԻ-ի հետազոտության արդյունքում նման անունով ոչ մի ներկայացուցիչ չգտնվեց, եւ այս գրքում վերարտադրված հոդվածի փարբերակից անունը հանվել է:

ռական փոքրամասնության վերաբերյալ»: Մենք հասկացանք, որ դա՝ ԱՄՆ-ի ուշադրությունը գրավող յուրապեսակ դիրք էր: Եվ սրանք այն մարդիկ են, ովքեր մարտնչում են մեր ապագան կառավարելու համար: Նրանք արդեն մեր պետության մեծ մասը վաճառել են, եւ հիմա էլ մեր մշակույթն են ուզում վաճառել: Այնուամենայնիվ, եթե մենք կարողացանք անել դա[1], եթե կարողացանք իրենց տեղը դնել, ապա կկարողանանք նույնն անել ապագայում:

Հետո ոմն ամերիկացի զգուշացրեց, թե Ջ. Էլվիսի միասեռ լինելու փաստը չպետք է հիշատակվի, քանի որ այն կարող է «Հարավային Կովկասում ԱՄՆ-ի բարի անունը վնասել..»: Մենք կարծում ենք, որ ԱՄՆ-ը չունի բարի համբավ, այլ միայն իշխանություն ունեն: Այդ ամերիկացին՝ միջադեպի մասին տեղեկություններ տվող մեր պաշտոնյաներից մեկի մասին խոսելիս հայտարարել է, թե այդ պաշտոնյան «ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի մեջ ռազմավարական մրցակցության պայմաններում ԱՄՆ-ի պարտության օգտին է գործել»: Մենք էլ որոշեցինք մտածել, որ նրանք երեխաներ են, որոնք ռազմավարական խաղեր են սիրում խաղալ. թող խաղան: Եվ այդ ժամանակից ի վեր նրանք դեռ խաղում են:

Բայց վերջերս այս տրագիկոմեդիայի կծիկի նոր ծայրն է բացվել: Մեզ ասել են, թե ԱՄՆ-ը մեզ աջակցություն այլեւս չի տրամադրի՝ մինչ Էլվիսի մարդասպանին չգտնենք: Նրանք, ովքեր իշխանության են ձգտում, իրենց գրչակների օգնությամբ վերնագրերը զարդարեցին իրենց երջանկությամբ, որ միասեռի պատճառով մեր երկիրն այլեւս աջակցություն չի ստանա:

Միգուցե դուք զարմանաք, թե ինչպես կարող են այս մարդիկ այդքան լոյալ լինել Ջ. Էլվիսի նկատմամբ: Իսկ ԱՄՆ-ի դեսպանությունը սրանց հիասթափեցրեց՝ ժխտելով այդ հայտարարությունը: Կառավարությունն էլ լուռ մնաց: Ինչ վերաբերում է մեզ, մենք միշտ շեշտել ենք, որ օգնությունից, որը մենք իրականում պետք է մերժենք, կախված լինելը նշանակում է, որ ազգը իրավունք չունի սեփական դիրքորոշում ունենալ:

Ո՞վ է ասել դա: Արդյո՞ք դա ԱՄՆ-ի պաշտոնական հայտարարությունն է:

---

1 Այստեղ նկատի է առնվում Էլվիսի սպանությունը

Պետք է թքել այն օգնության վրա, որը «երկնագույն»[1] պայման ունի: Ինչպես միշտ, վերակացու բոսերը առաջ գցեցին իրենց խոսնակներին, իսկ իրենք լուռ մնացին: Իսկ ի՞նչ ասացին կամ արեցին խոսնակները: Նրանք նույնիսկ տեղեկությունները չճշտեցին: Գոյատեւելու համար նրանք դեսպանատներից դուրս չեն գալիս: Երեւի մենք պետք է ինչքան հնարավոր է շուտ «սեռական փոքրամասնությունների վերաբերյալ» օրենք ընդունենք, որպեսզի մեր քաղաքացիները կարողանան ըստ օրենքի վարվել:

Նրանք կուշտ են անօրինությունից եւ օրենքների բացթողումներից: Ոչինչ չի խանգարում, որ ինչ-որ մեկը Ջոն Էլվիսի անվան միասեռների ակումբ բացի: Իսկ վերակացու բոսերը ոչ մի նոր դրույթ չեն փալիս իրենց խոսնակներին: Եվ նրանք կրկին խոսում են այն մասին, թե ինչպես է ԱՄՆ-ը իրենց քաղաքացիների իրավունքները պաշտպանում: Ապա այդ դեպքում ինչու՞ եք դուք այդքան անտարբեր Հին Քաղաքի 1.000-ից ավելի երիտասարդների հոգեբարոյական ահաբեկումների նկատմամբ: Գիտենք, որ ԱՄՆ-ի դիմաց միշտ գառ եք դառնում: Իսկ նրանք, ովքեր միշտ սկանդալներ են ստեղծել, այս մեկը «միջազգային սկանդալ» անվանեցին: Իսկ նրանցից մեկը, որը իր պաշտոնը կորցրել է, կամ ավելի ճիշտ ասած, վաճառել է ի օգուտ դրամաշնորհների եւ արտասահմանյան ուղեւորությունների, ավելի ահավոր բաներ էր ասում: Դե, բավական է: Ես հիշում եմ այն տեսարանը, երբ նրանք Ջ. Էլվիսի դագաղին հրաժեշտ էին տալիս. շատ տխուր պահ էր:

Նայելով այս ամենին՝ ես եզրակացրեցի, որ եթե մենք ազգովի բոլոր այս մարդկանց հրաժեշտ չտանք, ապա այս ամոթալի իրադրությունը այնքան երկար կտեւի, որքան նրանք այստեղ մնալու հնարվորություն ունեն:

*«Օլայլար»*, Բաքու, Ադրբեջան,
27 փետրվարի 2003 թ.

Իսկ ի՞նչ օրինական կարգավիճակ ունեն հիմա սեռական փոքրամասնությունները: Հեղինակը նշում է, որ օրենք չկա: Արդյո՞ք դա նշանակում է, որ այժմ միասեռությունը օրինական է. ի՞նչ է այդ նշանակում: Իսկ ինքը ի՞նչ օրենք է ցանկանում ունենալ: Արդյո՞ք նա ուզում է, որ միասեռները օրենքից դուրս հայտարարվեն:

1 Ադրբեջանում եւ նախկին Խորհրդային Միության երկրներում արվամոլներին նկարագրելու համար օգտագործվում է , երկնագույն բառը՝ երբեմն ստորացնող իմաստով

Այս վերնագիրը գերազանց օրինակ է, թե ինչպես ակամա կողմնակալությունը կարող է հանգեցնել իրականությունը աղավաղելուն: Վերնագիրը ակնհայտորեն մեղադրում է կնոջը իր, իր մոր և իր երեխաների մահվան մեջ, պնդելով, որ փղամարդու սիրահետումների մերժումը «հանգեցրեց» կոտորածի: Ճշմարտությունն այն է, որ փղամարդու բռնի բնույթը և ոչ թե կնոջ արարքը, «հանգեցրեց» մարդասպանության: Կապ չունի կինը լեսբուհի էր, թե՝ ոչ, նա իրավունք ուներ փղամարդուն մերժել առանց վախենալու, որ իրեն կսպանեն: Վերնագիրը առանց ուղղակի փաստարկների ակնարկում է, որ կինը փղամարդուն մերժել էր լեսբուհի լինելու պատճառով, այլ ոչ թե որովհետև նրա հետ քնել չէր ուզում:

## È»ëµáõÑáõ Ù»ñÅáõÙÁ å ³ ï×³é ¹ ³ ñÓ ³ í Ù ³ ñ¹ ³ ëå ³ ÝáõÃÛ ³ Ý

*¼áÑÇ ë»é ³ Ï ³ Ý ³ ñÏ ³ ÍÝ»ñÁ*

Օրեկ դպրոցին հայտնել են, որ մի հարբած մարդասպան չորս հոգանոց ընտանիք է կոտորել այն բանից հետո, երբ նրա սեռական հետապնդումները մերժվել են ընտանիքի լեսբուհի մոր կողմից:

Մետաղի ջարդոն վաճառող Դեյվիդ Մորիսը, երկաթե ձողով ծեծելով, սպանել է ամուսնալույծ Մենդի Փաուերին, պատմեցին Երդվյալ ատենակալներին: Հետո նա նույնկերպ վարվել է կնոջ աղջիկների՝ 10-ամյա Քեթիի և 8-ամյա Էմիլիի հետ, ինչպես նաև կնոջ 80-ամյա հաշմանդամ մոր՝ Դորիս Դոուսոնի հետ, որպեսզի կենդանի վկաներ չմնան:

Պատրիկ Հարինգթոնը, Թագավորական դատախազը, իր մեղադրական խոսքով Սվոնսիի Արքունական դատարանին դիմելով՝ ասաց, թե հարվածները այնքան կատաղի են եղել, որ զոհերի գանգերը ջախջախված էին, իսկ 80-ամյա Դորիս Դոունի մարմնի վրա հայտնաբերվել էին 38 վնասվածքներ: «Սա պարզապես մարդասպանություն չէ, սա կոտորած է»,- ավելացրեց նա:

«Բոլորի գլուխներին այնպիսի ուժգնությամբ էր հարվածներ հասցվել, որ գանգոսկրերի մեծ մասը կոտրված էին»:

«Նույնիսկ անկողնում պառկած անշարժունակ տատիկին՝Դորիս Դոուիին էր այդպիսի հարվածներ հասցրել»:

«Միսթեր Հարրինգթոնը պատմեց, որ 1999 թ-ի հունիսին 39-ամյա Մորիսը սպասում էր մինչ 34-ամյա փիկին Փաուերը իր երեխաների հետ վերադառնա քրոջ տնից: Նա կատաղությամբ բռնկվեց, երբ կինը արհամարհեց իր սիրային առաջարկը»,- ասաց փաստաբանը:

Թերթում այս հոդվածը ուղեկցվում է կնոջ կյանքի մասին մանրամասնություններ տվող սյունակով՝ վերնագրի հարցը ավելի բարդացնելով: «Սեռական արկածներ» արտահայտության օգտագործումը պետք է, որ ավելի շատ ընթերցողներ գրավի, բայց այն կրկին ակնարկում է, որ կինը իր պատիժն է ստացել իրեն լավ զգալու համար: Համենայն դեպս, հոդվածում նաև նշվում է, որ նա սիրող մայր է եղել, կայուն սիրային հարաբերություններ է ունեցել և հետաքրքրված չի եղել նոր «սեռական արկածներով»:

Դատավարությունը լուսաբանելուց լրագրողը ընթերցողներին է փոխանցում փաստաբանի և վկաների արտահայտած տեսակետները՝ նույնիսկ նրանք, որոնք կողմնակալ կամ սխալ են: Դեպքը ուսումնասիրելուց պարզերություն է երևում մերժումից հետո կատարած սպանության, ինչպես առաջին նախադասությունում է նշվում, և վերնագրի հայտարարության մեջ, թե մերժումը ինչ-որ կերպ առիթ է ներկայացել սպանության համար:

Եթե զոհի սեռական հակվածությունը նշվում է պատմության հենց սկզբից, ապա լրագրողը գոնե պիտի ջանար մատնանշել, թե փվյալ փաստը այս պատմության մեջ ի՞նչ դեր է խաղացել: Այլապես, սա պարզապես իրադրության պատկերման համար օգտագործված մանրամասնություն է և ոչինչ չի ավելացնում պատմությանը՝ ընթերցողներին այն ավելի հասկանալի դարձնելու համար:

«Անշարժունակ» բառը հնացած է, քանի որ այն ստեղծում է մարդու թուլության և անզորության տպավորություն: Ավելի ճիշտ է օգտագործել «անաշխատունակ» կամ «հաշմանդամություն ունեցող» արտահայտությունները:

Նա նաեւ ասաց, որ Մորիսը Հարավային Ուելսի Կլիդաչ քաղաքում գտնվող տանը ապացույցները վերացնելու համար հինգ դիակները առանձին-առանձին հրկիզելուց առաջ բաղնիքում իր վրայի հետքերը մաքրել է:

Մորիսը նաեւ մեղադրվում է փիկին Փաուերի դիակը պղծելու մեջ: Դիակը հայտնաբերվել է հրշեջների կողմից՝ հրդեհը հանգցնելուց հետո:

Ժյուրիի անդամներին պատմեցին, որ իր մահից առաջ փիկին Փաուերը Մորիսին վախեցնելու նպատակով լեսբիական հարաբերությունների մեջ էր մտել 32-ամյա նախկին ոստիկանուհի Ալիսոն Լյուիսի հետ:

Միսթեր Հարինգթոնն ասաց, որ սկզբից սխալ կասկածանքների տակ էին ընկել փիկին Փաուերի լեսբուհի սիրեկանուհին եւ նրա՝ ոստիկանության տեսուչ ամուսինը:

2000 թ-ի հունիսին փիկին Լյուիսը եւ նրա ամուսինը՝ Սթիվենը, որը դեռ ծառայության մեջ էր գտնվում, ձերբակալվեցին: Նրանց տները, մեքենաները եւ հագուստը մանրամասն հետազոտվեցին, ինչպես դատախազը ասաց՝ «խելքին մոտ, բայց անհիմն կասկածանքների հիման վրաե»:

Մինչեւ 2001 թ-ի մարտը Մորիսը կասկածյալների մեջ չէր մտնում: Ասվեց, որ նա անընդմեջ ստել էր ոստիկանության հարցաքննությունների ժամանակ եւ սպանությունների գիշերը իր կատարած գործողությունների տարբեր վարկածներ էր տվել:

Բայց դատական փորձագետները փիկին Փաուերի տանը գտնված ոսկե շղթայի վրա հայտնաբերեցին ներկի մասնիկներ, որոնք համապատասխանում էին Մորիսի՝ խոհանոցում օգտագործված ներկին:

Դ-րն Հարինգթոնը ասաց, որ Մորիսը սկզբից ժխտում էր, թե շղթան իրենն է, բայց դատավարությունից որոշ ժամանակ առաջ ընդունեց, որ այն կարող է իրենը լինել:

Ժյուրիին նաեւ ներկայացվեց այն, որ սպանություններից մեկ օր հետո, Մորիսը պատմել էր իր ընկերներից մեկին, թե որոշ հարաբերություններ է ունեցել փիկին Փաուերի հետ եւ այդ շղթան այդ ժամանակ է այնտեղ թողել: Նա համոզել էր իր ընկերոջը դրա փոխարեն մեկ ուրիշ շղթա գնել իր համար:

Մորիսը, որը Սվոնսիի Հովիտի Քրեյգ-ցեֆնփարքից է, (Craig-cefn-parc), ժխտում է չորս հոգուն սպանելու մեջ իր մեղավորությունը: Սպասվում է, որ դատավարությունը կշարունակվի դեռ 14 շաբաթ:

Տարբերվող սեռական կողմնորոշում ունեցող մարդկանց վերաբերյալ նախապաշարումները հաշվի առնելով, անակնկալ չէ, որ ոստիկանության կասկածանքները հիմնված են եղել նրանց կյանքի լեսբիական կողմի վրա, կարծես թե ինչ-որ անխուսափելի կապ կա միասեռության եւ մարդասպանության մեջ:

Լավ կլիներ հոդվածում նշել, արդյո՞ք դատախազը բացատրել է, թե այդ «խելքին մոտ կասկածանքները» նախապաշարումից բացի, ինչի վրա են հիմնված եղել:

*«Մեթրո»*, Լոնդոն, Բրիտանիա,
23 ապրիլի, 2002 թ.

Այս հոդվածում սեռական փոքրամասնությունների նկատմամբ այն վերաբերմունքն է արտահայտված, թե նրանք մեր ժամանակակից կյանքի խենթության կամ խելագարության արտացոլումն են եւ ավանդույթները փլուզողները: Սա, իհարկե, միայն մեկ կարծիք է, բայց ոչ միակը: Երգչից հարցազրույց են վերցրել նրան` ավելի շատ որպես գիժ ներկայացնելու համար, եւ ոչ թե իր բացահայտ արվամոլության վերաբերյալ սեփական զգացմունքները եւ հավապալիքները քննարկելու:

## ÆÝãáõ ¿ñ »ñÏë»é æ³µ³ ´áç·áõ³Ý §ç»ñÙ¦ ´áñÇë Ì Çåáõñç³ÛÇ Ñ»ï

Այս վերնագիրը խոստանում է սկանդալային պատճառներ բացահայտել, թե ինչու է Ծիպուրիան զրավում Բոջգուային, չնայած հետո պարզվում է, որ Բոջգուան հրապուրված է իր գործընկերոջ ստեղծագործությամբ, այլ ոչ թե սեռական միտումներով:

***Ինչու է ռաբիս երգիչ Ջաբա Բոջգուան բծախնդիր***

Եթե կոնկրետը միշտ բխում է ընդհանուրից, ապա սխալ չի լինի ասել. սկզբից աշխարհին ամբողջովին գժվեց, հետո մեր երկիրն էլ իրեն կորցրեց: Արգելքների բացակայությունը եւ քաոսը փիրեցին ամենուրեք: Հասարակության մի մասը մնացավ ավանդույթները: Մոռացավ այն ավանդույթները, որոնց Վրաստանը հետեւել է դարեր շարունակ: Ինչքան էլ զարմանալի լինի` բնակչության մեծ մասը այսպես կոչված ոչ ավանդական սեռական կապերի մեջ է մտնում:

Ազատ սեռական հարաբերությունները այնքան են շատացել, որ բոլորը դրանց հանդեպ անտարբեր են դարձել: Իսկ երբ նման անտարբերությունն իշխում է ամեն ինչում, տղամարդը հետաքրքրություն չի տեսնում կնոջ մեջ, իսկ կինը` տղամարդու: Սա պարարտ հող է ստեղծում ոչ ավանդական սեռական հարաբերությունների մեջ հետաքրքրություն գտնելու համար: Արվամոլների, լեսբուհիների եւ երկսեռների տարածումը դրա վառ օրինակն է:

Ես ուզում եմ ձեզ պատմել Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում հայտնի երգիչ Ջաբա Բոջգուայի մասին:

- Ես ծնվել եմ Սենակիում: Հիմա ես աշխատում եմ Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում, որտեղ մեծ ժողովրդականություն եմ վայելում: Ես թողարկել եմ մի քանի ալբոմներ:

**Ջաբա, ձեր ֆիզիկական առանձնահատկությունները նկարագրեք...**

Ես չախազանց սեքսուալ եմ (ինչպես իմ ընկերներից ոմանք են ասում` գժոտ տղա): Բացի իմ սեռական օրգանից ամբողջ մարմնիս վրա բազմաթիվ կոսմետիկ վիրահատություններ եմ արել: Ես հետույքս էլ եմ փոքրացրել:

Ի՞նչ զարմանալի բան կա, որ հասարակական կապանքների թուլացման հետ նրանք այլընտրանքային փորձեր անելու հնարավորություն ստացան: Ոչ ավանդական կողմնորոշումներն այստեղ շփոթվում են սանձարձակ սեռական հարաբերությունների հետ: Միայն այն պատճառով, որ ինչ-որ մեկը արվամոլ է, լեսբուհի, երկսեռ, կամ էլ ինչ-որ մի բան, չի նշանակում, որ նրանք ավելի շատ սեռական կապեր են ունենում, քան ուրիշ որեւէ մեկը:

Այստեղ կրկին սեռական փոքրամասնությունների ազատամտությունը կապվում է սեռական զսպվածության կորստի հետ` կարծես թե սեռական փոքրամասնությունները նախկինում գոյություն չեն ունեցել: Թվում է, թե հեղինակը չի հասկանում, որ նման վարքը միշտ էլ գոյություն է ունեցել: Տարբերությունն այն է, որ մարդիկ հիմա դրա մասին ավելի ազատ են խոսում:

Քանի՞ տարեկան է Ջաբան: Ի՞նչ տեսակի երգեր է նա երգում: Ճիշտ կլիներ նրա մասին որոշ տեղեկություններ բերել այստեղ, եթե, իհարկե, նա Վրաստանում շատ հայտնի չէ: Արդյո՞ք նա տրանսսեքսուալ է: Այս հոդվածից այդ կարելի է եզրակացնել, բայց դա շատ հստակ չէ: Լրագրողը պետք է հասկանա տրանսսեքսուալների, տրանսվեստիտների եւ միասեռների տարբերությունները, իսկ այստեղ նա կարծես թե սրանց իրար հետ շփոթում է: Տրանսվեստիտները սիրում են հակառակ սեռի նման հագնվել: Տրանսսեքսուալները ուզում են սեռը փոխել: Շատ տրանսվեստիտներ եւ տրանսսեքսուալներ իրենց տարասեռ են համարում:

**Զաբա, ձեր հայտարարությունների համաձայն, դուք պետք է ամուսնանայիք «Նեոե» ակումբում: Ի՞նչ պատահեց, որ դուք ձեր մտադրությունը փոխեցիք:**

Ես չափազանց բծախնդիր մարդ եմ: Ինձ իմ հարսնացուն այդ օրը դուր չեկավ, եւ ես միտքս փոխեցի:

Այս հարցը Զաբա Բոջգուային, որը փղամարդ է, այնպիսի ձեւակերպումով էր ուղղվել, ինչպես կնոջն են դիմում (վրացերեն լեզուն սեռը հատկանշող լեզու է): Նորմալ պայմաններում սա վիրավորական կհամարվեր: Չնայած վրացերեն «հարսնացու» բառի օգտագործումը պարզ է դարձնում, որ նա փղամարդ է, բայց դա չի արդարացնում Զաբա Բոջգուային կնոջ պես դիմելը:

Զաբա Բոջգուան, կամ «գժոտ փղան» մասնակցում էր «Սամեգրելոյի Երգը» եռօրյա Միջազգային փառատոնին, որը Խոբիի շրջանում էր անցկացվում: Բազմաթիվ հյուրեր էին հրավիրված, Զաբա Բոջգուան էլ Թուրքիայից էր եկել:

**Զաբա, ի՞նչ կասեք այս միջոցառման մասին:**

Ես իսկապես համակրանքով լցվեցի այս միջոցառման փնօրենի՝ Բորիս Ծիպուրիայի հանդեպ: Ամեն ինչ շատ գեղեցիկ եւ հետաքրքիր էր կազմակերպված: Բեմը հրաշալի զարդարված էր՝ իմ սեքսուալ հագուստին շատ համապատասխան: Իսկ Բատոնո Բորիան բոլորի միջից ամենալավն է:

**Բորիան ձեզ որպես փղամա՞րդ է դուր գալիս, թե՞ դուք նրա մասին բարձր կարծիք ունեք՝ որպես արվեստագետ:**

Որպես փղամարդ Բորիան ինձանից պարիքով ավելի մեծերին է ձգում: Իսկ ես նրան գնահատում եմ որպես ստեղծագործող:

**Իսկ ձեր ընտանիքը դե՞մ չէ ձեր վարքին:**

Ի՞նչ վարքի մասին է խոսքը: Նա չի մատնանշել ոչ մի յուրահատուկ վարքագիծ:

Ես մեծացել եմ ժամանակակից ընտանիքում, այնպես որ խնդիր չունեմ: Դուք զարմանո՞ւմ եք: Դա խոսում է այն մասին, թե ինչքան ցածր մակարդակ ունեք:

**Դուք երբեւէ մտածե՞լ եք կրկին ամուսնանալու մասին:**

Ո՞ւմ հետ է նա ամուսնացած եղել նախկինում: Ի՞նչ է պատահել: Նա փղամարդո՞, թե՞ կնոջ հետ է ամուսնացած եղել: Լավ կլիներ նշել:

Ես դեռ դրա մասին չեմ մտածել: Բայց եթե իմ կյանքում հայտնվի մեկը, ով ինձ գերի՝ հնարավոր է, որ՝ այո:

**Իմիջիայլոց, դուք շատ գայթակղիչ հետույք ունեք:**

Ես գիտեմ: Հետույքս վիրահատելուց հետո ես այն ապահովագրել եմ:

**Արդյո՞ք դուք պատրաստվում եք անհատական համերգ ունենալ Թբիլիսիում:**

Ես մտադիր եմ մի շատ սկանդալային համերգ ունենալ Թբիլիսիում:

**Ի՞նչ նկատի ունեք սկանդալային ասելով:**

Ես կլինեմ գերազանց մարզավիճակում, կհագնեմ գունեղ հագուստ: Մի խոսքով, չափազանց սեքսուալ, եւ համերգը կանվանվի «Սեքս սիմվոլ»:

**Ի՞նչ կարող եք ասել ձեր ընկեր Սաշա Սոմխիշվիլիի մասին:**

Սաշան իմ ընկերը չէ, նա իմ ընկերուհին է:

Հ.Գ. Եվ այս ամենից հետո Զաքա Բոջգուան շատ «բծախնդիր մարդ է»: Նա «խենթիկ» է՝ մեղմ, հաճելի շարժուձեւով: Ինչպես նա ինքն իր մասին է ասում՝ սեռական օրգանները եւ մորուքը միակ բաներն են, որ իրեն իրական կին լինելուց փարբերում են: Զարմանալիորեն, նա կանանց նույնպես գրավում է: Իմ զարմանքին չափ չկա: Ես միայն կարող եմ ասել. «Զվարճալի կլիներ, եթե այսքան փխուր չլիներ»:

*«Տավխուպալի գազետի»*, Թբիլիսի, Վրաստան, 21-27 հոկտեմբերի, 2003թ.

Ի՞նչ է նշանակում այս փոխակերպումը: Ի՞նչ հարաբերություններ նրանք ունեն:

Աստվածաշնչյան սահմանումներով միասեռությունը դատապարտող պատմությունները սովորական երեւույթ են: Բայց հազիվ թե դրանցից որեւէ մեկում ուսումնասիրված լինեն ավանդական ընկալմանը հակառակվող ազատամիտ քրիստոնեական եւ հրեական աստվածաբանների փաստարկները, կամ էլ պարզապես այդ տեսակետները վերանայված: Մինչդեռ ոմանք կարող են այս փաստարկների հետ չհամաձայնել, կամ էլ ընդհանրապես սրանք անտեսել եւ Աստվածաշունչը հիշատակել՝ որպես բացարձակ վկայություն: Բայց դրանով իսկ իրենք միայն նրանց կհամոզեն, ովքեր առանց այդ էլ այդ տեսակետը ունեն:

## Â»ñÃÇ §Þ ³ µ ³ Ãí ³ ½ ³ ñÙ ³ ÝùÁ¦ ëÛáõÝ ³ ÏÇó

Եպիսկոպոսաց ժողովը օգոստոսի 5-ին ընդունել է առավել քան զարմանալի որոշում՝ անթաքույց արվամոլ Ջին Ռոբերտսոնին կարգելով Նյու Հեմփշիրի եպիսկոպոս:

Սակայն դա դեռ ամբողջը չէ. սույն, կներեք արտահայտությանս համար, հոգեւորականը եպիսկոպոսաց ժողովին ներկայացել էր իր կողակից Մարկ Էնդրյուի հետ եւ անգամ հայտարարել. «Դա ոչ միայն երազանքիս իրականացումն է, այլեւ Աստծո նշան»: Մնում է զարմանալ, թե ինչպես քրիստոնեական կոչվող որեւէ հաստատություն իրեն թույլ է տալիս նման դրսեւորումներ, երբ քրիստոնեական թիվ 1 գրքում՝ Աստվածաշնչում, արվամոլությունը որակվում է որպես մեծագույն եւ ամենադատապարտելի մեղքերից մեկը:

*«Իրավունք»*, Երեւան, Հայաստան,
8 օգոստոսի, 2004թ.

Սա ոչ մի ձեւով չի պարզաբանում, թե ինչի՞ մասին է խոսքը: Եվ, անկասկած, բազմաթիվ հայեր գաղափար չունեն, թե որտե՞ղ է գտնվում Նյու Հեմփշիրը կամ դրա մասին որեւէ ուրիշ տեղեկություն: Նմանատիպ մանրամասնությունները շատ կարեւոր են, քանի որ պատմությանը կոնտեքստ եւ իմաստ են տալիս:

Այս ծաղրական արտահայտությունը լրագրողի վերաբերմունքն է ցույց տալիս այդ որոշման նկատմամբ: Իհարկե, ծաղրելուց հեշտ բան չկա, միայն ավելի լավ կլինի մտածել այս դեպքի մասին, ուսումնասիրել փոփոխվող հավատալիքները եւ դրա հետ հաշտվելու ճանապարհներ գտնել:

Միասեռությունը մեղք է համարվում, բայց մեր կյանքում այնքան շատ հարցերի մենք այսօր ուշադրություն չենք դարձնում:

Շատ ժամանակակից աստվածաբաններ Աստվածաշնչում՝ միասեռության մասին հաստատումները այժմ ներկայացնում են այն պատմական **դարաշրջանի համատեքստում, երբ այդ գրքերը գրվել են, եւ ոչ թե որպես այս դարի թելադրական: Առավել եւս, եթե Աստվածաշնչում դատապարտվում է միայն սեռական հարաբերությունները տղամարդկանց միջեւ, ապա սրա տրամաբանական եզրակացությունը կարող է լինել այն, որ լեսբուհիներին Աստված մեղավոր չի համարում:** Բայց այն մարդիկ, որոնք վկայակոչում են Աստվածաշունչը՝ արվամոլների եւ լեսբուհիների հանդեպ իրենց վերաբերմունքը արդարացնելու համար, չեն համաձայնում այս հաստատումների հետ: Այս հարցերից ոչ մեկը լրագրողները չեն ուսումնասիրում:

# 11. ø³Õ³ù³Ï³Ý ÁÝ¹¹ÇÙáõÃÛáõÝ »õ ³ÛÉ³ ËáÑÝ»ñ

# ø³Õ³ù³Ï³Ý ÁÝ¹¹ÇÙáõÃÛáõÝ »õ ³ÛÉ³ ËáÑÝ»ñ

Հետկոմունիստական երկրներում մղվող պայքարի հիմնական նպատակներից մեկը քաղաքական տեսակետների բազմակարծություն ապահովելն է եւ տարամետ դիրքորոշումների արտահայտումը՝ որպես քաղաքացիական հասարակության նորմալ եւ բնական բաղկացուցիչ ընդունելը: Որոշ հասարակություններ մյուսներից ավելի հաջողությամբ հաղթահարեցին այդ անցումը եւ եռանդուն քայլեր ձեռնարկեցին ընդդիմադիր կուսակցությունների եւ մեծամասնության կարծիքին չհարող այլ անձանց համար ասպարեզ հարթելու ուղղությամբ:

Շատ երկրներում եւ տարածաշրջաններում, այնուամենայնիվ, այդ գործընթացը դեռեւս անավարտ է: Նույնիսկ, երբ տեղական եւ պետական իշխանությունները պատրաստակամություն են դրսեւորում հանդուրժելու այլ տեսակետներ, հաճախ միեւնույն ժամանակ շարունակում են իրավական, քաղաքական եւ տնտեսական խոչընդոտներ ստեղծել՝ դժվարացնելով ընդդիմությունում գտնվող քաղաքացիների համար իրենց ձայնը լսելի դարձնելը: Երբեմն, իշխանության կրողների կողմնորոշումներին տարակարծիք մարդկանց վերաբերվում են իբրեւ անհավատարիմների եւ դավաճանների, որոնք կարող են անարդարացիորեն ենթարկվել քրեական հետապնդման:

Լրագրողները եւ լրատվության միջոցները, մի շարք հանգամանքներով պայմանավորված, երբեմն լուռ համաձայնվում են ընդդիմադիր տեսակետների խարանմանը: Նրանք իրենք են գտնվում իշխանությունների եւ գործնական շահերի նշանակալի ճնշման ներքո: Երբեմն էլ լրագրողները կարող են իսկապես կարծել, թե իրենց հասարակությունում ընթացող բանավեճի մեկ կամ մյուս կողմն անիրավացի է եւ արժանի չէ իր փաստարկները ներկայացնելու իրավունք ունենալու: Հաճախ լրատվամիջոցները անցնում են կառավարության կողմը, իսկ ընդդիմադիր ուժերը ներկայացնող լրագրողներն էլ փորձում են արգելքներ ստեղծել դեպքերի մատուցման պաշտոնական տեսակետի հրապարակման համար:

Բոլոր կողմերին բանավեճում ներգրավելը ցանկացած հասարակությունում մամուլի կարեւոր խնդիրներից մեկն է: Ահա մի քանի օրինակներ, թե ինչպես է դա տեղի ունենում:

* Արխիվներն ուսումնասիրելով՝ բացահայտեք ձեր լրատվամիջոցների կողմից դեպքերի լուսաբանման անցյալում տեղ գտած բացթողումները: Հիմնականում կենտրոնացել են բացառապես մեկ քաղաքական կուսակցության վրա, թե՞ հարցազրույց վերցրել միայն միեւնույն տեսակետը ունեցող մարդկանցից: Արդյո՞ք ընդդիմության առաջնորդներին եւ իշխանություններին մարտահրավեր նետած այլ մարդկանց հնարավորություն է ընձեռնվել արձագանքել իրենց դեմ ուղղված մեղադրանքներին: Արդյո՞ք լիովին անտեսվել են այլակարծ մոտեցումները:

* Կարեւոր խնդիրներ լուսաբանելիս աշխատեք չսահմանափակվել մեծամասնության կամ իշխանությունների դիրքորոշումներով: Եթե կառավարությունը հայտարարում կամ որոշակի քայլեր է նախաձեռնում, գտեք այնպիսի մարդկանց, ովքեր դեմ են առաջարկ-

վող կամ իրականացվող քաղաքականությանը: Նրանք կարող են լինել այլ քաղաքական գործիչներ, ինչպես նաեւ գիտնականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ կամ էլ պարզապես անցորդներ:

* Տեղեկատվության աղբյուրներ փնտրեք ընդդիմադիր առաջնորդների շրջանում: Կապ հաստատեք նրանց հետ եւ ճանաչողական հանդիպում կազմակերպեք՝ նրանց հոգսերը, կարիքները, համոզմունքները եւ գաղափարները քննարկելու համար: Մի՛ խոստացեք անպայման ներառել նրանց դիրքորոշումները, բայց խնդրեք նրանց զանգահարել ձեզ որեւէ նշանակալի իրադարձություն դեպքում, որի շուրջ նրանք կցանկանային ներկայացնել իրենց մեկնաբանությունը:

* Ուշադրությամբ վերլուծեք կառավարության կողմից առաջարկված ցանկացած նոր օրենք կամ կանոնակարգ: Բացահայտեք, թե ում օգտին եւ ի վնաս ում է դա գործելու եւ ապա անպայմանան պարզեք վերջիններիս կարծիքը դրա շուրջ: Միանշանակ մի ընդունեք իրենց քաղաքականությունն արդարացնող իշխանությունների փաստարկները:

* Կառավարությանը հակադրվող մարդկանց մի բնութագրեք իբրեւ «դիսիդենտներ» կամ «այլախոհներ»: Հիշեք, որ բազմակարծ հասարակությունում տեսակետների եւ քաղաքական դիրքորոշումների բազմազանությունը բնականոն երեւույթ է: Կառավարության քաղաքականությանը արմատապես հակադրվողները չպետք է առանձնացվեն իբրեւ հատուկ խումբ, միայն այն պատճառով, որ ընդամենը կիրարկում են մարդու հիմնարար իրավունքներից մեկը. նրանք ընդամենը մարդիկ են, որ համակարծիք չեն իշխանությունների հետ:

* Մի չափազանցրեք տարբեր անհատների կամ կուսակցությունների տեսակետների միջեւ առկա տարբերությունները: Մարդիկ, հատկապես քաղաքական գործիչները, հաճախ ավելի ընդգծված եւ չափազանցված են ներկայացնում իրենց ասելիքը՝ հասարակության աչքում միավորներ շահելու կամ համարձակ երեւալու համար: Երբ գրում եք նուրբ թեմաների շուրջ, որտեղ առկա են տեսակետների տարբերություններ, անհրաժեշտ է ցանկացած մոտեցում լուսաբանել անաչառորեն եւ խուսափել վիրավորական բառապաշարից:

* Ընդդիմության առաջնորդները կամ կառավարության տեսակետները չկիսող մարդիկ եւս կարող են լինել նույնչափ դոգմատիկ եւ ինքնիշխան, որքան իշխանություն կրողները: Միայն այն, որ նրանք հակադրվում են ներկա իշխանություններին, դեռեւս չի նշանակում, որ իշխանություն ունենալու դեպքում ամբողջովին այլ կերպ կդրսեւորեն իրենց: Դրդեք նրանց դուրս գալ հակակառավարական կոչերի շրջանակներից եւ բացատրել իրենց ծրագրերը: Որպես լրագրող թերահավատ եղեք հասարակական որեւէ խնդրի կամ բանավեճի շուրջ հնչած այս կամ այն պնդումների նկատմամբ:

Այս հոդվածը հայտարարում է, թե ընդդիմության հանրահավաքները ճիշտ չեն, եւ Ալիեւի հայտարարությունն է մեջ բերում՝ առանց որեւէ ապացույցի, թե սովորական հասարակությունը դրանց դեմ է: Ի՞նչի հիման վրա է Ալիեւը նման հայտարարություն արել: Արդյոք նա ունի՞ հարցումների տվյալներ, որոնք ապացուցում են իր խոսքերը: Սա պարզապես ինքն իր շահերը պաշտպանող հայտարարություն է, որը հոդվածում կրկնել են:

## Î³ñÇù ãÏ³, áñ ÁÝ¹¹ÇÙáõÃÛáõÝÁ Ñ³Ýñ³Ñ³í³ùÝ»ñ Ï³½Ù³Ï»ñåÇ ê³Û¹ÇÝ ²ÉÇ»õ. §Ð³ë³ñ³ÏáõÃÛáõÝÁ ¹»Ù ¿¦

Ընդդիմության փորձերը՝շփոթեցնել հասարակությանը, միանշանակ չեն ընդունվում: Խորհրդարանի պատգամավոր Սայդին Ալիեւը նշել է, թե կարիք չկա, որ ընդդիմությունը հանրահավաքներ կազմակերպի, քանի որ քաղաքական կուսակցությունները կարող են իրենց կարծիքները հասարակությանը հայտնել լրատվական միջոցներով:

Ամեն ինչ միայն ցույցերի ժամանակ անելը ճիշտ չէ: Ս.Ալիեւը կարծում է, որ հասարակությունը բացասական է վերաբերվում այս ցույցերին: «Ավելի լավ կլիներ, որ ընդդիմությունը Լեռնային Ղարաբաղի խնդրում աշխուժություն ցուցաբերեր: Ավելի լավ կլիներ, որ նրանք այս ամենի փոխարեն միջազգային կազմակերպություններին կոնֆլիկտի լուծման տարբերակներ առաջարկեին»:

*«Օլայլար»*, Բաքու, Ադրբեջան,
27 մայիսի, 2004 թ.

Ի՞նչ կերպով են տեղի ունեցած հանրահավաքները հասարակությանը շփոթեցնում: Սա հաստատվում է իբրեւ փաստ ՝առանց որեւիցե փաստաթուղթ ներկայացնելու:

Այս հոդվածում սա հետաքրքիր ու հեգնական հայտարարություն է, որին ընդդիմությունը հաջողությամբ կարող է հակադրվել: Եթե մամուլն այդքան հասանելի է քաղաքական ընդդիմախոսների համար, ապա ինչո՞ւ այդ հոդվածում նրանց ձայնն էլ չի լսվում: Նրանց պետք է հնարավորություն տրվեր այս հայտարարությունը մեկնաբանել:

Ալիեւի այս հայտարարությունը ակնարկում է, որ հնարավոր չէ միաժամանակ ցույցերին մասնակցել եւ տարածքային հարցեր լուծել: Բայց մեկը մյուսին չի կարող խանգարել: Ալիեւի մեղադրանքները հրապարակելու մեջ վատ բան չկա, բայց ճիշտ չէ թույլ տալ նրան ընդդիմախոսներին քննադատել՝ նրանց պատասխանելու հնարավորություն չտալով:

Այս հոդվածը հայրենասիրության սահմանափակ մի սահմանում է ներկայացնում՝ քաղաքական ընդդիմությանը մեղադրելով դավաճանության մեջ: Հեղինակը կարծես թե մտածում է, որ հայրենասիրություն նշանակում է կառավարությանը պաշտպանել, եւ առկա վարչակազմը քննադատելը հավասարեցնում է երկիրը դավաճանելուն: Հոդվածը նաեւ բորբոքում է իրավիճակը՝ ենթադրելով, որ ընդդիմության քաղաքական գործիչները Հայաստանի թշնամու՝ Ադրբեջանի շահերից են գործում, մի հայտարարություն, որը ընթերցողների փազնապի եւ զայրույթի պատճառ կարող է դառնալ, եւ Գեղամյանի ու Քոչարյանի հանդեպ անմիջապես նախապաշարմունքներ կհարուցի նրանց մեջ:

## ÆÙ ÃßÝ ³ Ùáõ ÃßÝ ³ ÙÇÝ ÇÙ µ ³ ñ»Ï ³ ±ÙÝ ¿

Ðին աշխարհը՝ Եվրոպան, հարուստ պատմություն ունի, որի էջերում քիչ չեն հերոսներն ու դավաճանները: Նրանք բոլորն էլ այդպիսին են դարձել իրենց նպատակների իրականացման համար, այսինքն, հանուն դրանց են կատարել իրենց այն բոլոր քայլերը, որոնց արդյունքում հերոսացել կամ դավաճան են որակվել: Ու քանի որ հին աշխարհը ամեն օր հազար մարդ է մտնում նոր եւ հազար պարվա գործ ու փորձ սկսվում են ամեն օր, այսօր պատմության անիվը պտտվում ու Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովից մեզ է հասցնում հայոց արմատական ընդդիմության զույգ ներկայացուցիչների ձախողված հերոսացման ոդիսականը: Չնայած նրանք դեռեւս հնարավորություն ունեն ցույց տալու, որ իրենք իրենց քաղաքական շահերը վերջնականապես չեն գերադասել սեփական ժողովրդի ու երկրի շահերից: Դրա համար պետք է քաջություն ունենալ հրապարակավ խոստովանել ու ընդունել սեփական սխալը եւ ասել, որ դրսից տղա բերելու գործն այս անգամ էլ չստացվեց: Միայն թե տվյալ դեպքում Արտաշես Գեղամյանի ու Շավարշ Քոչարյանի համար չափազանց դժվար է ազատվել թուրքադրբեջանական համագործակցության ջրաղացին ջուր լցնողի խարանից, որին նրանք արժանացել են ԵԽ ԽՎ վերջին նստաշրջանում սեփական երկրի դեմ գործ տալու գործընթացում, մասնավորապես, Ադրբեջանի պատվիրակության հերթական սատարումին արժանանալով:

Ինչպես ասում են՝ «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է». Ստրասբուրգում հենց այդպես էլ վարվել են ն՛ւ Արտաշես Գեղամյանն ու Շավարշ Քոչարյանը՝ Հայաստանի արմատական ընդդիմության ներկայացուցիչները, եւ Ադրբեջանի պատվիրակությունը. նրանց շահերը, կամա թե ակամա, շարունակում են համընկնել:

Երկրի առաջնորդներին ընդդիմանալը կամ էլ այն, ինչ նրանք են արել, չի մատնանշում, որ նրանք հայրենասեր չեն, կամ էլ անհավատարիմ են իրենց երկրին:

Այն ենթադրությունը, թե ընդդիմությունը Ադրբեջանի հետ է համագործակցում, անհիմն ու ստոր վիրավորանք է՝ նրանց հանդեպ վստահությունը խախտելու համար: Եթե լրագրողը փաստեր բերեր, որ այդպես է, հետագա հետաքննության կարիք կծագեր՝ ընդդիմության թեկնածուներին այդ մեղադրանքներին պատասխանելու հնարավորություն տալով: Բայց պատմությունը կառուցել միայն այն հիմքի վրա,որ երկուսն էլ հակադրվում են Հայաստանի կառավարությանը, շատ անարդարացի է:

Արմատական ընդդիմությունը իր նպատակին հասնելու՝ երկրի օրինական իշխանությունը տապալելու համար փորձում ու փորձարկում է տարբեր ճանապարհներ՝ ապօրինի հանրահավաքներ ու հակասահմանադրական գործողություններ, հասարակական կարգի խախտում, հասարակության ու միջազգային հանրության ապատեղեկացում:

Ընդ որում, վերջին մեթոդը կիրառվում է խիստ առարկայացված. ինչպես խոստովանում է «Ազգային միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը, իրենք տեսաերիզներ են մատակարարում Հայաստանում գտնվող օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություններին:

Ըստ ամենայնի, դրանցից մի քանի օրինակ ընդդիմության ներկայացուցիչներն իրենց հետ տարել էին նաեւ Ստրասբուրգ: Սակայն Եվրախորհրդում պարզել էին, որ դրանք այսպես ասած, «պիրատական արտադրանք են», համապատասխան լիցենզիա չունեն: Եվ պարոնայք Ա. Գեղամյանն ու Շ. Քոչարյանը այդ կերպ չէին կարողացել իրականացնել սեփական երկիրն ու ժողովրդին սեւացնելու դավաճանական առաքելությունը՝ , ստիպված ապավինելով այլ մեթոդների, որոնք, ինչպես ԵԽ ԽՎ բանաձեւը ցույց տվեց, ընդդիմության ուզած արդյունքին չեն հանգեցրել:

Բայց նրանց քայլը անջնջելի խարան է դարձել հենց իրենց համար. «Ազգային միաբանություն» կոչվող կուսակցության առաջնորդն իրավունք չունի փորձել անմիաբան դարձնել ազգը: Եվրոպայում դա հասկացան ու փակեցին այդ քայլի ճանապարհը: Մնում է Արտաշես Գեղամյանը, Շավարշ Քոչարյանը եւ ընդհանրապես արմատական ընդդիմության ղեկավարները եւս հասկանան, որ դավաճանների ծառայությունը որքան էլ հաճույքով են ընդունում, միեւնույն է, նրանց ետեւից դուռը փակում ու ծիծաղում են: Սա՝ ամենաքիչը, սակայն դավաճաններին մշտապես չեն ներում ո՛չ նրանց ծառայությունից օգտվողները՝ անկախ նրանց ժողովրդավար լինելու աստիճանից, ոչ էլ, առավել եւս, սեփական ժողովուրդը: Հենց դա էր վկայում դիմավորման այն արարողությունը, որ մատուցվեց անցյալ շաբաթավերջին Ստրասբուրգից մեր պատվիրակության վերադարձին: Հայ երիտասարդները Շավարշ

Ինչու՞ են հանրահավաքներն անօրինական: Ի՞նչ հակասահմանադրական գործողություններ են նրանք ծավալում: Հոդվածում դրանք պետք է նշվեն: Այլապես, մարդիկ չեն կարողանա պնդումների հավաստիության մասին դատել: Եթե այդ գործողությունները անօրինական են և հակասահմանադրական, ընթերցողին ավելի շատ տեղեկություններ է պետք ներկայացնել, որպեսզի նրանք ինքնուրույն կարողանան որոշել, թե համաձայն են, որ այդ գործողությունները պետք է արգելվեն:

Կրկին, ի՞նչ հասարակական կարգի խախտումների կամ ապատեղեկացման մասին է խոսքը: Հոդվածում դա պետք է նշվի՝ հստակ օրինակներ բերելով, այլապես դա միայն բանբասանք է:

Կոնկրետ ի՞նչ տեսաերիզներ: Ինչի՞ մասին է խոսում լրագրողը: Եվ ինչ էլ որ դա լինի, ի՞նչ վատ բան կա դրա մեջ: Նմանատիպ մեղադրանքներ անել՝ առանց պարզաբանման, պարզապես անփույթ լրագրություն է:

Ի՞նչն էր կոնկրետ դավաճանական: Պարզապես այն, որ կառավարության մասին քննադատական նյութե՞ր են ուզեցել ներկայացնել:

Հասկանալի չէ, թե ի՞նչ այլ մեթոդների մասին է այստեղ խոսվում: Եվ լրագրողը պետք է բացատրի, թե ինչումն է դրա վճռականությունը: Միգուցե որոշ ընթերցողներ գիտեն այդ պատմությունը, բայց անկասկած շատեր, եթե ոչ մեծամասնությունը, չգիտեն:

Քոչարյանին ու Արտաշես Գեղամյանին դիմավորեցին «Ամոթ, դավաճաններ», «Արտաշես Գեղամյան... նախագահ Ադրբեջանի» եւ նման բովանդակության այլ կարգախոս-ցուցապաստառներով...

Հ. Գ. Երեկ՝ մամուլի ազատության օրը, կազմակերպած այն ասուլիսում, որին խոսքի ազատության ջատագովները «ՀՀ»-ին չէին հրավիրել (տեսնես պարոն Գեղամյանն այդ մասին արդեն փեղյակ պահե՞լ է դրսերում), Արտաշես Գեղամյանը մի անգամ եւս խոստովանեց, որ ինքն աշխատում է արտերկրի տեղեկատուի հաստիքով. «Արդեն երեք ամիս շարունակ մեր օպերատորները նկարում են այդ ամենը, եւ ԵԽ անդամ բոլոր երկրների դեսպաններին ուղարկում ենք այդ տեսահոլովակը»:

Ընդդիմության գործիչներն անընդհատ պնդում են, թե խոսքի ազատությունը վտանգված է, եւ իրենք զրկված են եթերից: Այդ դեպքում ովքե՞ր են մեր օպերատորները, եթե մասնավորապես «Ազգային միաբանությունն» ինքը (ինչքան հայտնի է) գրանցված լրատվամիջոց չունի: Միանգամից պարզ է դառնում սաղրանքի հիմքը. ընդդիմությունը տեսախցիկով զինում է ո՛չ լրագրողի, սաղրանք կազմակերպում, հետո եվրոպաներում հայտարարում, թե լրագրողների իրավունքները Հայաստանում ոտնահարվում են: Սակայն մի՞թե կուսգրասենյակի օպերատորը լրագրող է:

Պրն Գեղամյանը երեկվա ասուլիսում խոստովանեց նաեւ այն, որ իրեն եւ ընդդիմությանը ֆինանսավորում են որոշակի ակնկալիք ունեցող գործարարներ, «ովքեր մեզ համար հանդիպումներ են կազմակերպում Մոսկվայում, Լոնդոնում, Վիեննայում»: Ամենապախուրը նա եզրակացրեց վերջում. «Նրանք ազգությամբ հայ են, բայց մեծ հայրենասեր են»:

Այսինքն, ըստ Ա. Գեղամյանի, եթե մարդը հայ է, ուրեմն հայրենասեր չէ, բայց եթե իրեն ֆինանսավորում է, ուրեմն մեծ հայրենասեր է: Այսքանից հետո զարմանալի չէ, որ պրն Գեղամյանն ուրախացած հայտարարում է, թե Ադրբեջանի նավթի պաշարներն ավելանում են: Ի դեպ, նշենք, որ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման հայտարարել է, թե Ադրբեջանը նավթ չի ունեցել ու չունի, ինչով էլ հարուցել է Ադրբեջանի քաղաքական գործիչների դժգոհությունը: Միգուցե նաեւ պարոնայք Գեղամյանի եւ Ռ. Քոչարյանի՞...

*«Հայաստանի Հանրապետություն»*, Երեւան, Հայաստան, 4 մայիսի, 2004 թ.

Այն փաստը, որ երկրի որոշ քաղաքացիներ ընդդիմությանը մեղադրում են դավաճանության մեջ, դեռեւս դա ճշմարտություն չի դարձնում:

Կրկին, ի՞նչ տեսահոլովակների մասին է խոսքը:Եվ, ինչ էլ որ դրանք լինեն, եթե այդքան հասանելի են ընդդիմության ցանկացած անդամի համար, ուրեմն մեծ գաղտնիք չեն ներկայացնում: Այդպիսով՝ արտասահմանյան պետություններին դրանք ուղարկելը դավաճանություն չի կարող լինել:

Նույն հարցը կարելի է տալ այս հոդվածի հեղինակի մասին: Մի՞ թե կարելի այսքան բացահայտորեն ներկա կառավարության օգտին խոսող մեկը լրագրող համարվի: Համենայն դեպս, հեղինակը ենթադրություններ է անում, թե ինչպես են տեսանյութերը հավաքվում:

Լրագրողի տեսակետը ծայրահեղական է. եթե մեկը պաշտպանում է կառավարությանը, ուրեմն նա հայրենասեր է, եթե չի պաշտպանում՝ ուրեմն ՝ ոչ:

Եվ կրկին, ընդդիմության անդամներին Ադրբեջանի հետ կապելու փորձը պարզապես ընթերցողներին նրանց դեմ նախապաշարելու մի ձեւ է:

# 12. Èáõë ³ÝÏ ³ ñãáõÃÛáõÝ »õ å ³ïÏ»ñ

# Èáõë ³ ÝÏ ³ ñãáõÃÛáõÝ »õ å ³ ïÏ»ñ

Ðոդվածներում զետեղված նկարները շատ առումներով տեղեկատվության փոխանցման նույնքան վճռորոշ նշանակություն ունեն, որքան բառերը: Անկախ նրանից, դա թերթի լուսանկար է, թե տեսապատկեր, տեսողական բաղկացուցիչները կարող են այնպիսի ազդեցիկ եւ հաճախ հուզական բովանդակություն հաղորդել ընթերցողներին կամ հեռուստադիտողներին, որը միշտ չէ ակնհայտ նույնիսկ այդ նկարները ընտրողների համար, ովքեր իրենք կարող են չպատկերացնել դրա ենթագիտակցական կամ չգիտակցված ազդեցությունը:

Լրագրողական նյութը պատկերներով համալրելիս, կարեւոր է  նկատի ունենալ, որ նկարները կարող են տպավորվել ընթերցողների կամ հեռուստադիտողների հիշողության մեջ, քանի որ վերջիններս կարող են անգամ չկարդալ տեքստը կամ էլ նկատել միայն վերնագիրը կամ լուսավերադիրը: Այսպիսով, կարեւոր է ընտրել այնպիսի նկարներ, որոնք արտացոլում են նյութի բուն էությունը, եւ ոչ թե հակասում կամ փչացնում այն:

Ահա մի քանի խորհուրդներ.

* Նկարը պետք է համապատասխանի նյութի բովանդակությանը: Շատ հաճախ ամենաազդեցիկ նկարը կամ տեսապատկերն իրական ընդհանրություն ունեն նյութի բովանդակության հետ: Օրինակ, քաղցած տեսքով մուրացող  փախստականի նկարը կարող է ոմանց մոտ կարեկցանք, իսկ մյուսների մոտ զզվանք առաջացնել, սակայն հավանաբար տեղին չէ այն զետեղել ապաստարան խնդրող մարդկանց կենսապայմանների բարելավման մասին հոդվածում:

* Լրագրողը եւ լուսանկարիչը պետք է նախապես քննարկեն նյութը եւ  աշխատեն որպես մի թիմ: Շատ թերթերում լրագրողները եւ լուսանկարիչները միմյանց քիչ ուշադրություն են դարձնում եւ մոռանում, որ իրենց պատասխանատվությունները, թեեւ տարբեր, սակայն միեւնույն ժամանակ սերտորեն կապված են: Լրագրողները պետք է գիտակցեն, որ հաջողված նկարներով համալրված նյութն ավելի շատ մարդիկ կընթերցեն, իսկ լուսանկարիչները պետք է հասկանան, որ գրավիչ տեքստը վճռորոշ ենթատեքստ կարող է ապահովել իրենց նկարների համար:

* Ամենից հարմար տարբերակն այն է, որ տվյալ նյութը գրած կամ պատրաստած լրագրողը  նկարների մասին համապատասխան նշում ունենա կամ առնվազն տեղյակ լինի, թե նյութի հատկապես որ մասում է այն տեղադրվելու: Ընդհանրապես, թղթակիցներն ամենից լավ գիտեն նյութը եւ առանց նրանց հետ խորհրդակցելու նկարներ ներառելը հղի է մեծ վտանգով, ինչը կարող է աղավաղել նյութի բովանդակությունը կամ միտքը:

* Արդյո՞ք լուսանկարի մակագրությունը ճշգրտորեն արտացոլում կամ բնութագրում է լուսանկարը: Եթե դուք համոզված չեք, որ նկարն ինքնըստինքյան հասկանալի է, անհրաժեշտ է ներառել որեւէ մակագրություն՝ այն համատեքստին համապատասխանեցնելու համար: Սխալվելու հավանականությունը նվազագույնին հասցնելու համար, ամեն դեպքում պարզեք, թե արդյոք այդ հոդվածը հեղինակած լրագրողը ընթերցել եւ հավանություն է տվել տվյալ մակագրությանը:

* Զգուշացեք նյութի մեջ ներառել այնպիսի լուսանկարներ, որոնք կծառայեն միայն ստերեոտիպերի սրմանը: Նման նկարները վիրավորական են եւ նոր կամ լուսաբանող տեղեկատվության տեսանկյունից շատ քիչ բան են ավելացնում. Բոլորն են տեսել փողոցի անկյուններում իրենց ցուցադրող մարմնավաճառների հարյուրավոր նկարներ: Շատ ավելի հետաքրքիր կլինի ընտրել այնպիսի նկար, որը կբացահայտի նրան մեկ այլ՝ անսպասելի իրավիճակում (օրինակ, համալսարան այցելելիս կամ երեխաների համար ճաշ պատրաստելիս):

* Լուսանկարներն ընդհանրապես մի վերափոխեք, բացառությամբ այն դեպքերի, երբ ցանկանում եք լավացնել նկարի որակը կամ աղոտ դարձնելով մեկի դեմքը՝ բացառել նրա ճանաչելու հնարավորությունը: Ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ չափազանց հեշտ է հմտորեն համակցել պատկերները, օրինակ՝ որոշ մարդկանց հեռացնել կամ երկու անձանց իրար մոտիկ տեղադրել: Սակայն նման կերպ վարվելով՝ հիմնովին խախտվում է տեղեկատվությունը ճշգրտորեն եւ անկեղծորեն փոխանցելու՝ լրագրության ամենակարեւոր սկզբունքը:

* Ուշադիր վարվեք ծայրահեղ բռնություն պատկերող նկարների կամ այլ գրաֆիկական հնարքների հետ: Դրանք կարեւոր են որոշ տեսակի՝ օրինակ, պատերազմական դաժանությունների կամ՝ խտրականության կամ սոցիալական անարդարության մասին հոդվածներում: Սակայն հստակ սահմանազատում պետք է լինի արդյունավետ լրագրության եւ այն շահագործելու միջեւ: Եթե նկարը միայն վշտացնում է մարդկանց եւ, միեւնույն ժամանակ, չի ստիպում նրանց մտածել, ապա հավանաբար լավ կլինի վերանայեք ձեր ընտրությունը:

# 13. Ì»ñ³å³ïñ³ëïÙ³Ý Ùá¹áõÉÝ»ñ

ազմակողմանի լրագրության վերաբերյալ վերապատրաստական դասընթացը կարող է տեւել մի քանի ժամ, մի քանի օր, նույնիսկ՝ մեկ շաբաթ: Դա կարող է անցկացվել որպես լրագրական դասընթացի մի մաս կամ որպես առանձին սեմինար: Քանի որ դասընթացի բովանդակությունը եւ կառուցվածքը կախված է մասնակցող լրագրողների կոնկրետ կարիքներից, անհնար է այն սկսելու խստորեն սահմանված կանոններ առաջարկել:

Այնուամենայնիվ, ստորեւ առաջարկվող մոդուլյար մոտեցումը վերապատրաստողներին թույլ կտա ընտրել փվյալ լսարանի համար ամենահարմար տարբերակը: Յուրաքանչյուր մոդուլի հարցերը կարող են համառոտ կամ մանրամասնորեն քննարկվել, բայց մոտավորապես կես օր կպահանջվի դրանք լիովին ուսումնասիրելու համար:

Քննարկումները մշակելիս, փորձեք օգտվել օրինակների հնարավորինս լայն ընտրությունից՝ ներառելով մասնակիցների պատրաստած նյութերը, տեղական թերթերի վերջին համարներից վերցված հոդվածները եւ այս ձեռնարկում ներկայացված փորձի վերծանումները, եթե դրանք առնչվում են տվյալ թեմային: Հիշեք նաեւ, որ այս մոդուլները կառուցված են մեկը մյուսի հիման վրա, որոնցից յուրաքանչյուրն օգնում է ըմբռնել եւ հասկանալ այս բարդ լրագրողական խնդիրները:

Ահա մի քանի ուղեցույց, որ օգտակար կլինեն.

1) կեսօրյա սեմինարի ընթացքում կիրառեք առաջին մոդուլը,
2) մեկօրյա սեմինարի ընթացքում՝ առաջին եւ երկրորդ մոդուլները,
3) երկօրյա սեմինարի ընթացքում՝ առաջինից չորրորդ մոդուլները,
4) երկու օրից երկար տեւող սեմինարների ընթացքում փորձեք օգտագործել բոլոր մոդուլները:

Անկախ այն բանից, թե սեմինարը կես օր կտեւի, թե մեկ շաբաթ, բոլոր մասնակիցներին հորդորեք մշակել անհատական աշխատանքային պլան, ինչը նրանց կօգնի հիմնավորել իրենց սեփական գործելակերպը:

## Ü ³ Ë ³ ë»ÙÇÝ ³ ñ ³ ÛÇÝ å ³ ïñ ³ ëïáõÃÛáõÝ

## Ô»Ï ³ í ³ ñÇ ÏáÕÙÇó ë»ÙÇÝ ³ ñÇ Ý ³ ËÝ ³ Ï ³ Ý ·Ý ³ Ñ ³ ïáõÙÁ

**Նախասեմինարային հանձնարարություններ մասնակիցներին**

Սեմինարի ղեկավարը պետք է խնդրի, որպեսզի յուրաքանչյուր մասնակից սեմինարից առնվազն չորս շաբաթ առաջ որոշ տեղեկատվություն տրամադրի: Նյութերը պետք է ուղարկվեն սեմինարի ղեկավարին վերանայման եւ փաթեթների պատրաստման համար:

Յուրաքանչյուր մասնակից պետք է ուղարկի հետեւյալը.

* մասնակցի թերթի հինգ համար,

* մասնակիցներից յուրաքանչյուրի թերթում (տպագիր մամուլի լրագրողները) տեղ գտած որեւէ հոդվածի կամ էլ ռադիո կամ հեռուստահաղորդման (հեռուստատեսային կամ ռադիո լրագրողները) օրինակ, որը տվյալ մասնակցի կարծիքով լավ մատուցված, լավ գրված եւ հավասարակշիռ նյութ է,

* մասնակցի թերթում տեղ գտած որեւէ հոդվածի կամ էլ ռադիո կամ հեռուստահաղորդման օրինակ, որտեղ մասնակցի կարծիքով, պակասում է հաղորդման, շարադրման եւ խմբագրման բազմազանությունը:

Յուրաքանչյուր մասնակից պետք է ապահովի հետեւյալ տվյալները.

* տվյալ տարածքում առկա տարբեր էթնիկ խմբերը եւ բնակչության մոտավոր թվաքանակը,

* 25-ից ցածր, 25-40 տարեկան, 41-60 տարեկան եւ 60-ն անց մարդկանց տոկոսային հարաբերությունը,

* տվյալ տարածքում կանանց տոկոսը:

Նախքան սեմինարի բացումը, ղեկավարը պետք է ուշադրությամբ վերանայի մասնակիցների տրամադրած թերթերը եւ հաղորդումները, ինչպես նաեւ ժողովրդագրական տեղեկատվությունը: Սեմինարի ղեկավարը պետք է գնահատի նյութերի առավելությունները եւ թերությունները: Նա պետք է փնտրի բնակչության որեւէ հատվածի համար վիրավորական համարվող արտահայտությունների անհարկի գործածման, ինչպես նաեւ ստերեոտիպերի կոնկրետ օրինակներ: Ղեկավարը պետք է վերանայի յուրաքանչյուր մասնակցի տրամադրած նյութերը՝ որպես տվյալ թերթի ընթերցող:

Ահա առավելությունների եւ թերությունների օրինակներ, որ սեմինարի ղեկավարը պետք է փնտրի:

1. Կոնկրետ էթնիկ եւ ռասայական խմբերի խնդիրները ներկայացված են որպես ներհամայնքային՝ հիմք ընդունելով նյութի լեզուն կամ ոճը:

Թերթն ապահովում է բանավեճեր՝ ներգրավելով ռասայական կամ էթնիկ տարբեր խմբերի, սակայն նույն էթնիկ խմբերին չի անդրադառնում իրենց համայնքների կամ ընդհանուր համայնքի ներսում դրական, կառուցողական եւ օգտակար գործընթացների շրջանականերում:

2. Շաբաթվա կտրվածքով ներկայացվող քրեական խրոնիկաները հիմնականում ներառում են մեկ էթնիկ կամ ռասայական խմբի հանցագործներին:

Հանցագործության բոլոր կասկածյալները մեկ ռասայական կամ էթնիկ խմբից են, եւ նրանց բնութագրերը շատ ընդհանուր են, այլ ոչ թե առանձնահատուկ, ինչպես, օրինակ, «թխահեր տղամարդ, 180 սմ հասակով եւ 80 կիլոգրամ քաշով», որտեղ չի նկարագրվում հագուստը, կոշիկները եւ այլն:

3. Անբարեխիղճ խմբագրում

Արդյո՞ք թերթում, ռադիոյով եւ հեռուստա-

պեսությամբ մատուցվող նյութի լեզուն վիրավորական կամ ստերեոտիպային է որոշակի էթնիկ խմբի, տարեց մարդկանց, հաշմանդամների կամ կանանց համար:

4. Հազվադեպ լուսաբանում

Արդյո՞ք թերթերը, ռադիո եւ հեռուստահաղորդումները մշտապես ընդգրկում են տեղական իրադարձությունների մասին պատմող նոր նյութեր, որոնք ներառում են տարբեր ռասայական կամ էթնիկ խմբեր, տարեց մարդկանց, հաշմանդամների կամ կանանց:

5. Էթնիկ համայնքների անհամաչափ լուսաբանում

Արդյո՞ք թերթերը, ռադիո եւ հեռուստահաղորդումները ներկայացնում են առանձին էթնիկ խմբերին եւ կրոնական փոքրամասնություններին: Եթե այո՝ արդյո՞ք այդ լուսաբանումը հագեցած է շաբլոն դարձվածքներով, ստերեոտիպերով կամ այդ խմբերի վիրավորական բնութագրումներով:

6. Էթնիկ համայնքի անդամներ հրապարակումներում պարբերաբար չեն ընդգրկվում

Արդյո՞ք թերթերը, ռադիո եւ հեռուստահաղորդումները լուսաբանում են այն գործարար տղամարդկանց ու կանանց, բժիշկներին, իրավաբաններին եւ պրոֆեսորներին իբրեւ տեղեկատվության աղբյուրների, ովքեր տարբեր էթնիկ, կրոնական կամ ռասայական խմբերի անդամներ են: Արդյո՞ք նրանց հետ խորհրդակցում են այն հարցերի շուրջ, որոնք չեն առնչվում իրենց ռասայական, էթնիկ կամ կրոնական պատկանելիությանը: Արդյոք կանանցից տեղեկատվություն ձեռք բերում են համայնքային կյանքի ամենատարբեր ոլորտներին առնչվող նյութերի համար:

***Օրինակ:*** Հոդվածում տեղական հիվանդանոցի բժիշկները քննարկում են հղի կանանց առողջական խնդիրները եւ նախածննդյան խնամքի կարեւորությունը: Արդյո՞ք վկայակոչված են նաեւ կին, կամ կրոնական, կամ էթնիկ փոքրամասնությունների անդամ բժիշկներ:

7. Ոչ բավարար քանակությամբ կանայք, փոքրամասնություններ եւ «մյուսներ» թերթում զետեղված նկարներում

Արդյոք թերթերը, ռադիո եւ հեռուստահաղորդումներն իրենց առօրյա լուսաբանումների մեջ ընդգրկո՞ւմ են փոքրամասնությունների անդամների, կանանց, տարեց մարդկանց կամ հաշմանդամների լուսանկարներ:

***Օրինակ:*** Արդյոք նյութի մեջ զետեղված են ավելի լուրջ նախածննդյան խնամք քարոզող բժիշկների նկարներ: Ու՞մ են ընտրել լուսանկարելու համար. տղամա՞րդ, թե՞ կին բժշկի, էթնիկ խմբի անդամ բժշկի, թե՞ հաշմանդամի:

Սեմինարի ղեկավարը պետք է կանոնակարգի մասնակիցների նյութերից վերցված օրինակները եւ դրանք օգտագործի հաջորդ մոդուլների համար: Եթե հնարավոր չէ նախքան սեմինարն ավարտելը մասնակիցների ներկայացրած նմուշները գնահատել, ապա դրանք լրացուցիչ նյութ կարող են դառնալ հետագա մոդուլում իբրեւ օրինակ օգտագործելու համար:

Ղեկավարը պետք է մշակի սեմինարի ընթացքում օգտագործվող նյութերի հավաքման մեթոդներ եւ այդ օրինակներն անհրաժեշտության դեպքում օգտագործի հետագա սեմինարներում:

8. Ոչ մի պատմական ենթատեքստ՝ ռասայական, էթնիկ կամ կրոնական պատկանելիության տարրեր պարունակող նյութերում

Արդյոք լրագրային, ռադիո կամ հեռուստատեսային լրատվական կազմակերպությունները ճիշտ պատմական ենթատեքստի վրա՞ են կառուցում այն նյութերը, որոնք աղերսներ ունեն էթնիկ, ռասայական կամ կրոնական պատկանելիության խնդիրների հետ: Եթե այո՝ ու՞մ պատմությունը: Ինչպե՞ս ենք մենք որոշում պատմական ենթատեքստի ճշգրտությունը եւ համապատասխանությունը:

Մասնակիցների տրամադրած նյութերը, ընթերցողների վերլուծությունների հետ մեկտեղ կարեւոր հիմք կստեղծեն սեմինարի կամ դասընթացի ժամանակ ղեկավարի կողմից արվող միջամտությունների եւ խմբակային քննարկումների համար:

# Øá¹áõÉ 1. ä ³ ïÙáõÃÛáõÝÝ ÁÝ¹¹»Ù µ ³ ½Ù ³ ½ ³ ÝáõÃÛ ³ Ý

**Նպատակ**

Հնարավորություն ստեղծել քննարկելու *«մեկուսացման»* պատմությունը եւ դրա ազդեցությունը համայնքների զարգացման վրա: Հետադարձ հայացք նետելով իր լրատվական գործունեությանը յուրաքանչյուր մասնակից պետք է կարողանա մասնակցել *«ներառման»* նոր մոդելի մշակմանը:

**Սկզբունք**

ԶԼՄ-ները հնարավորություն ունեն պատշաճ եւ նախապաշարմունքներից զերծ լրագրության միջոցով ուղղորդել քննարկումները եւ զսպորոշել ընդհանուր եզրերը:

**Արդյունք**

Հասարակության բոլոր շերտերի մասնակցությունը շատ խմբերի համար պատմական որեւէ ձեւավորված իրական եւ թվացյալ մեկուսացման թուլացմանը:

Տասնամյակներ շարունակ համայնքի կամ պետության ներսում, ինչպես նաեւ ազգամիջյան շարունակվող հակամարտություններում լրատվամիջոցների դերը եղել է վերափոխումների ուսումնասիրության եւ առաջարկներ անելու վրա կենտրոնանալը: Երբ քննարկումը վերաբերում է նոր ներգաղթածներին կամ ազգային բնօրրանի մաս կազմած էթնիկ խմբերին, լրագրողների դերակատարությունն է բացատրել բնակիչներին, թե ազգի այժմյան եւ հետագա զարգացման գործում ինչ նշանակություն ունեն բնակչության տեղաշարժերը կամ վաղուց գոյատեւող փոքրամասնությունների մշակութային ազդեցությունը:

Յուրաքանչյուր ժողովրդի մեջ կան մեկ կամ ավելի խմբեր, որոնք հիմնական կորիզի մաս չեն համարվում: Աֆրիկայի նախկին բրիտանական գաղութներից, Կարիբյան տարածաշրջանից կամ Հարավային Ասիայից Միացյալ Թագավորություն ներգաղթածները տասնամյակներ շարունակ դժգոհել են սպիտակների կողմից մեկուսացումից, ստերեոտիպային վերաբերմունքից եւ ատելությունից: Եվրոպական երկրների շատ նախկին գաղութների պարագայում բացասական վերաբերմունք է դրսեւորվել այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր նույնալեզու երկրներ են տեղափոխվել պատմական դեպքերի բերումով: Նախկին գաղութներից արտագաղթածները հիասթափությամբ պարզեցին, որ նույնալեզու լինելն ամենեւին չի նշանակում բարեհաճ ընդունելություն:

Եվրոպական շատ այլ երկրներում ներգաղթած բնակչության առկայությունը հանգեցրել է թյուրըմբռնման եւ անվստահության, որ հաճախ վերաճել է մեծ հակամարտությունների: Մինչդեռ շատ այլ ժողովուրդների պարագայում տարբեր մշակութային միավորները առանց փոփոխության գոյատեւել են հարյուրամյակներ շարունակ:

Լրագրողները եւս հասարակ ժողովրդի նման հաճախ զգոնություն չեն ցուցաբերում եւ ի վիճակի չեն լինում վերլուծել անցյալի մոտեցումները՝ նպաստելու հասարակական ըմբռնմանը եւ հանդուրժողականությանը: Լրագրողներն ինչ-որ չափով մեղադրվել են հակամարտություններ եւ ատելություն բորբոքելու եւ հասարակական տարանջատումները սրելու մեջ, քանի որ նորություններ մատուցելիս չեն կարողացել անցյալի մոտեցումները ճշմարիտ ներկայացնել:

Մեկուսացման հասարակական պատմությունը գլուխ է բարձրացրել ողջ աշխարհում: Չկա այնպիսի մի պետություն, որտեղ տարբերությունների հիմքի վրա բախումներ առաջացած չլինեն եւ գոյություն չունենան, կամ մեր կողմից զիտակցվեն իբրեւ գոյություն ունեցող՝ մեզ տարբերակելով մեր հարեւաններից:

Այսօր հասարակության շատ անդամներ կարող են չիմանալ, թե որն է պատմական մեկուսացման պատճառը. սակայն բոլորը գիտեն, որ մեկուսացումը համայնքային կյանքի անբաժանելի մասն է: Փոքրամասնությունների ներկայացուցիչները կամ նրանք, ովքեր իրենց համարում են այդպիսին, տեսանելի չեն: Վաղ թե ուշ մեկու-

´ ³ ½Ù ³ ÏáÕÙ ³ ÝÇ Éñ ³ ï í áõÃÛ ³ Ý Ó»éÝ ³ ñÏ

սացվածների ու առանձնացվածների մոտ այն կվերածվի ներքին անհամաձայնության, եւ նրանք կպահանջեն ներառում, այդպիսով առաջ բերելով հակառակ ռեակցիա, ինչն էլ իր հերթին կծնի առավել անհանդուրժողականություն, նախապաշարմունք, հետագա մեկուսացում կամ դաժան բախումներ:

ԶԼՄ-ները կարեւոր դեր ունեն պատմական արմատներ ունեցող մեկուսացման լարվածությունը թուլացնելու հարցում: ԶԼՄ-ները մարդկանց մասնակցության հնարավորություն են ընձեռում` տեղեկատվության ազատ փոխանակման եւ անկաշկանդ բանավեճերի միջավայր ստեղծելով, եւ մինչ բանավեճը մոլեգնում է, նրանք հնարավորություն են ունենում ներգրավվել համայնքի առօրյա կյանքի համար առաջնահերթ նշանակություն ունեցող հարցերի լուսաբանմանը: Փաստորեն, առաջին քայլը բոլոր խմբերի ներգրավումն է այնպիսի հասարակական խնդիրների քննարկմանը, ինչպիսիք են` առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, համայնքային տնտեսությունը, կրթությունը եւ ընտանեկան կյանքը:

Առօրյա կյանքի նմանօրինակ լուսաբանումը եզակի հնարավորություն է տալիս ձեւավորել բոլորի բարօրությանն ուղղված համայնքային գործընթացներ անգամ ամենաբազմազան հասարակության պայմաններում:

Լրագրողները պետք է լինեն կամ դառնան մեր հասարակությունների կյանքի արձանագրողները: Համայնքով մեկ շրջագայելու հնարավորություն ունենալով` նրանք կարող են տեղեկատվություն ու փաստեր հավաքել եւ դրանք համադրել հասարակությունը ձեւավորող մարդկանց առօրյա կյանքի մասին պատմող նյութերում: Համախոհներ չլինելով հանդերձ` լրագրողները կարող են հասարակական քննարկման ասպարեզ ստեղծել, ինչը կհանգեցնի բազմաշերտ համայնքների ներսում ընդհանուր հող ստեղծելուն:

*Օրինակ:* Լրագրողը նյութերի շարք է պատրաստում մի մեծ քաղաքում առկա տնտեսական պայքարի մասին: Թղթակիցն ամեն գնով աշխատում է աղբյուրներ գտնել տարբեր էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերի, հին բնակիչների եւ տնտեսական պայքարի մասնակից կանանց շրջանում: Օգտագործվելիք աղբյուրների ուշադիր ընտրությամբ լրագրողը քայլ է կատարում մեկ ընդհանուր խումբ ձեւավորելու ուղղությամբ, ինչպիսին ընթերցողներն են, ովքեր հնարավորություն ունեն համոզվելու, որ իրենք ընդհանրություններ ունեն այնպիսի մարդկանց հետ, որոնց համարում էին անհամատեղելիորեն տարբեր:

## ÜÏ ³ ï ³ éáõÙ` ë»ÙÇÝ ³ ñÇ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

* Նախքան սեմինարը մասնակիցների տրամադրած հոդվածներից կամ հաղորդումներից եւս ընտրեք եւ ներկայացրեք այնպիսի օրինակներ, որոնք հնարավորություն կստեղծեն դիտարկել նմանատիպ լուսաբանումը:

* Հարցրեք մասնակիցներին, թե նյութերն ինչպես կարող են առավել ներառական բնույթ ունենալ: Ի՞նչ պետք է անի լրագրողն ընդլայնելու համար լուսաբանումը` աչքի տակ ունենալով բազմաշերտությունը:

* Առաջին քննարկումը պետք է ընդգրկի ամբողջ խումբը: Երբ մասնակիցներն արտահայտեն իրենց կարծիքը, սեմինարի ղեկավարը պետք է բարձրացնի մասնակիցների կողմից ուղղված հարցերը, որոնք վերաբերում են առանձին խմբերի հետ իրենց ունեցած փորձառությանը` որպես քննարկման սկիզբ հանդիսացած օրինակի ենթատեքստում:

Մասնակիցներին ուղղվելիք հարցերի մի քանի օրինակներ.

* Ունե՞ք արդյոք տարբեր էթնիկ, կրոնական եւ ռասայական պատկանելիություն ունեցող մարդկանց հետ նյութի վրա համատեղ աշխատելու փորձառություն: Ո՞րն էր այդ գործում ամենադժվար մասը: Ինչպիսի՞ն էր այն մարդկանց արձագանքը, ովքեր եղել են ձեր տեղեկատվության աղբյուրները:

★ Կարողացա՞ք արդյոք ձեր հավաքած տեղեկատվությունն օգտագործել ձեր նյութում: Նյութը հիմնականում միայն էթնիկ կամ ռասայական խմբի մասին էր: Արդյոք նյութն առավել արդյունավետ կլինե՞ր, եթե քննարկման առանցքն ընդգրկեր տնտեսական խնդիրներն էթնիկ կամ ռասայական տեսանկյունից:

Այնուհետեւ, ղեկավարը պետք է բերի երկրորդ օրինակը, որը մասնակիցները կքննարկեն երեք կամ չորս հոգանոց խմբերում: Յուրաքանչյուր փոքր խումբ պետք է լուսաբանման պլան մշակի նյութի ներառական բնույթը բարելավելու համար:

Սեմինարի ղեկավարն այնուհետեւ պետք է խնդրի յուրաքանչյուր փոքր խմբին բազմաշերտության վերաբերյալ ամենաքիչը երեք եզրահանգում ձեւակերպել` այս մասի քննարկումներից ելնելով: «Քաղած դասերը» գրառվում են եւ փակցվում սեմինարի սենյակի պատերին:

Սեմինարի ղեկավարը պետք է լրագրողների համար պարզաբանի. այս վարժությունը ցույց է տալիս, որ ներառման գործընթացը կօգնի լրագրողներին` իբրեւ պատմություն գրողների, միեւնույն ժամանակ ԶԼՄ-ների սպառողների համար համայնքի հավասարակշռված, համապարփակ եւ ներառական մոտեցման հնարավորություն կստեղծի:

Հիմնվելով այս նկատառումների վրա, յուրաքանչյուր մասնակից պետք է կարողանա ձեւակերպել մեկ կոնկրետ քայլ, որ կարվի իրենց կողմից լուսաբանվող նյութերի պատմական ենթատեքստը լրացնելու համար: Յուրաքանչյուր մասնակից պետք է շատ ինքնատիպ լինի հաջորդ քայլն առաջարկելիս: Սեմինարի ղեկավարը պետք է ժողովի բոլոր յուրօրինակ առաջարկները, ինչը մասնակիցները կարող են տանել տուն եւ օգտվել: Այս ձեռնարկի վերջում կարելի է գտնել գործողության քայլերի ձեւը:

# Øá¹áõÉ 2. ÆÝã ¿ ÉáõñÁ

**Նպատակ**
Սահմանել, թե ինչ է լուրը՝ մտքում ունենալով բազմազանությունը:

**Սկզբունք**
Փոքրամասնության անդամների ձայնը եւ բազմազանությունը հարստացնում եւ կյանք են ներշնչում հասարակության՝ որպես ամբողջի, լուսաբանմանը:

Յուրաքանչյուր ոք ինչ-որ ասելիք ունի, սակայն ամեն մի ասելիք չէ, որ նորություն է:
Որպեսզի սահմանենք, թե ինչ է նորությունը, պետք է սկսենք վերոհիշյալ հարցադրումից:
*Սեմինարի ղեկավարը հարցնում է. «Ո՞րն է նորության ձեր սահմանումը»:*

ÜÏ³ï³éáõÙ` ë»ÙÇÝ³ñÇ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

* Յուրաքանչյուր մասնակցի պետք է առաջադրվի վարժության համար նախապատրաստված թղթի վրա սահմանել, թե ինչ է նորությունը: Երբ բոլորը կգրեն իրենց սահմանումները, յուրաքանչյուր մասնակից պետք է հիմնավորի իրենը, իսկ սեմինարի ղեկավարը պետք է գրառի դրանք:

* Սահմանումները կարելի է գրանցել մեծ թղթերի վրա, փակցնել ամբողջ սենյակով մեկ, այնպես որ դրանք տեսանելի լինեն, քանի դեռ մասնակիցները կատարում են փվյալ վարժությունը: Անհրաժեշտություն չկա մասնակիցների անունները եւս կցել սահմանումներին:

Այս վարժության բազմաթիվ կիրառումները ցույց են տվել, որ շատերն են դժվարանում սահմանել լուր եզրույթը: Ինչու՞: Որովհետեւ սահմանումն ունի մի քանի շերտեր: Մեզանից յուրաքանչյուրն իր անհատական մոտեցումն է ներկայացնում, երբ փորձում է սահմանել, թե արդյո՞ք այս կամ այն իրադարձությունը պարունակում է նորություններ, որոնք պետք է փոխանցվեն ընթերցողներին կամ հեռուստադիտողներին:

**Լրագրության կուտակած հիմնական պաշարը. ամենատարածված սահմանումները.**

* Հասարակությանը տեղեկացնել այն ընթացիկ իրադարձությունների մասին, որոնք լրագրողների եւ խմբագիրների կարծիքով կարեւոր են ընթերցողների համար:

* Տարբեր աղբյուրներից հասարակությանը տրամադրել պաշտոնական տեղեկատվություն:

* Լուսաբանել, թե ինչն են լրագրողները եւ խմբագիրները համարում այնպիսի տեղեկատվություն , որը հետաքրքիր է իրենց ընթերցողների համար:

ÜÏ³ï³éáõÙ` ë»ÙÇÝ³ñÇ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

* Մասնակիցներին հարցրեք. «որո՞նք են այն մի քանի նոր բաղադրիչները, որ պետք է ներառվեն նորությունները սահմանելիս, այժմ երբ ճշտում ենք լուսաբանման ընթացքում բազմազանության եւ ներառման կարեւորությունը»: Մեզանից յուրաքանչյուրը նորությունը սահմանում է՝ ելնելով իր անձնական փորձից: Հաշմանդամ երեխա մեծացնող լրագրողը հաշմանդամության վերաբերյալ նյութերը ավելի շատ կդիտարկի որպես նորություն, քան նրանք, ովքեր հաշմանդամների հետ ապրելու կենսափորձ չունեն: Նա, ով խնամում է տարեց մարդու, նորություններ պարունակելու տեսանկյունից առավել մեծ ուշադրություն կդարձնի վերջիններիս առնչվող նյութերին, քան նա, ով տարեց մարդ չի խնամում:

*Սեմինարի ղեկավարը հարցնում է.* Ինչպե՞ս է մեր անձնական կենսափորձը ազդում նորությունների սահմանումների վրա: Ի՞նչ նոր բաղդաչիչներ պետք է ավելացվեն նորությունների սահմանմանը՝ ելնելով ինչպես անձնական կենսափորձից, այնպես էլ էթնիկ, փարիքային, ռասայական, կրոնական եւ սեռային պատկանելիությունից: Քննարկումը կարող է տեղի ունենալ

մեծ խմբով, կամ կարող եք այն բաժանել ավելի փոքր խմբերի: Յուրաքանչյուր  խումբ ընտրում է որեւէ մեկին՝ գրառումներ կատարելու եւ վերջում իրենց  քննարկումների մասին ամբողջ խմբին զեկուցելու համար:

Հետեւյալ դրույթները կարող են օգտագործվել քննարկումներ սկսելու նպատակով, որտեղ կձեւակերպվի բազմազան հասարակության պայմաններում նորության գործառույթը:

Նորություն պատրաստելիս լրագրողը պետք է գիտակցի որոշակի օրինաչափություններ.

★ Չի կարելի լուսաբանել միայն այն մարդկանց, ովքեր լրատվության ավանդական «արարիչներ» են կամ շատ ճանաչված գործարարներ: Որպես լրատվական նյութի հնարավոր օրինակ, այստեղ կլինեն փոքր գործարարներ եւ այն կանայք, ովքեր օգնում են աշխատանքով ապահովել բնակիչներին, զարգացնել տնտեսությունը, նորարարություն բերել աշխատավայր:

★ Կարելի է եւ պետք է պատրաստել անհատների մասին լրագրային փոքրիկ հոդվածներ, այնպես որ մարդիկ կարողանան առնչվել նորություններին:

★ Նորությունը պետք է լինի մեր հասարակությունը եւ նրա անդամների իրավունքները, պարտականությունները եւ կարողությունները ըմբռնելու միջոց:

★ Նորությունը համապատասխան պիտի լինի:

*Սեմինարի ղեկավարը պետք է հարցնի.* Ի՞նչ է մտածում խումբը  նախորդ օրն իրենց ընտանիքներում տեղի ունեցած քննարկումների առնչությամբ. ինչի՞ մասին էին նրանք խոսում սուրճի կամ ճաշի սեղանի շուրջ նախորդ օրը: Ի՞նչն է, որ էական տպավորություն է թողել նրանց վրա՝ որպես հասարակության սովորական անդամ եւ ոչ որպես լրագրողի պարտականություններ կրող անձնավորություն:

Հարցրեք մասնակիցներին, թե ինչ է նրանց կարծիքով վերջին դրույթը նշանակում (նորությունը հարաբերական երեւույթ է) եւ ինչքանո՞վ է այն տեղավորվում լրագրողի դերի մասին ունեցած իրենց պատկերացումների մեջ՝ բազմազան եւ հարափոփոխ աշխարհի, տարածաշրջանի, ժողովրդի եւ համայնքի պայմաններում, որտեղ իրենք աշխատում են: Նորությունների այս վերջին սահմանման մեջ ո՞ր արժեքներն են հատկապես անկապտելի:

## ÜÏ ³ ï ³ éáõÙ` ë»ÙÇÝ ³ ñÇ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Խրախուսեք բերվող փաստարկները, հարցադրումները եւ հիմնավորումները: Ղեկավարը պետք է սկսի բանավոր խմբագրել եւ սրել քննարկումների վրա հիմնված պնդումները: Հետեւյալ պնդումները կարող են օգտագործվել օգնելու մասնակիցներին հրավիրել քննարկման՝ բազմաշերտ հասարակությունում նորության սահմանման վերաբերյալ, որտեղ այդ բազմաշերտությունը դառնում է հասարակությանը տեղեկատվությամբ ապահովելու բաղադրիչ:

★ Քաղաքացիանկան արտանությունները պետք է վայելեն բոլորը, այլ ոչ թե համայնքի միայն մի մասը:

Սեմինարի ղեկավարը պետք է հարցնի. Ինչպե՞ս են այս արժեքները ձեր համայնքում ներկայացված: Արդյո՞ք այս արժեքները բոլորի համար են: Արդյոք որոշ խմբեր դուրս են մնում,եւ արդյոք դա տեղի է ունենում այդ տարածքի լուրերը կարդալիս, լսելիս կամ դիտելիս:

## ÜÏ ³ ï ³ éáõÙ` Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

*Սեմինարի ղեկավարը պետք է հարցնի.* Սեմինարի ղեկավարը պետք է մասնակիցներին ներգրավի քննարկման *համապատասխանության* շուրջ: Ու՞մ *համապատասխան*: *Համապատասխանության* խնդիրը տարբեր է, եթե ընթերցողը 65-ն անց կին է, կամ էլ որոշակի էթնիկ ծագում ունի: Խթանեք կենդանի քննարկում՝ *համապատասխանության* սահմանման հնարավորության վերաբերյալ, քանզի դրանով բազմաշերտության նոր շերտեր են ավելացվում ընթերցողի սահմանմանը, ում ուղղված է *համապատասխանությունը*:

Սեմինարի ղեկավարը քննարկումն ավար-

պելիս պետք է *նորության* բնույթի վերաբերյալ կապարի հետեւյալ հետեւությունները:

★ Սահմանումներում նորությունը պետք է ուղեկցվի մարդկանց կյանքի հետ համապատասխանությամբ:

★ Դժվար է սահմանել *համապատասխանությունը*, քանի որ ինչքան պարբեր մարդիկ կան, նույնքան էլ՝ ինքնատիպ սահմանումներ (ինչպես նրանք տարբեր կերպ են ընկալում լրատվամիջոցների կողմից իրենց փոխանցված տեղեկատվությունը):

*Մասնակիցներին ուղղվելիք հարցեր.* Արդյո՞ք նորության սահմանման հարցում այն ընթերցողների ամենալայն շրջանակներին համապատասխանեցնելուն ուղղված աշխատանքներն են ավելի նպատակահարմար, թե՞ լիդերների եւ «սպասրուս քվոն» ներկայացնողների վրա հիմնված սահմանումը: Ինչու՞մ է կայանում թերթին կամ լրագրողին սպառնացող վտանգը, եթե, իհարկե, այն ընդհանրապես առկա է՝ ավելի շատ *համապատասխանությանը*, քան տեղեկատվության փոխանցման մեր հին կարգին կամ սպասրուս քվոին գերապատվություն տալու դեպքում:

*Մասնակիցներին ուղղվելիք հարցեր.* Եթե *համապատասխանությունն* առանցքային է, ապա ինչպե՞ս ենք մենք վերաբերում այն փաստին, որ այն, ինչ համապատասխանում է քեզ, կարող է ինձ համապատասխան չլինել: Ինչպե՞ս կարելի է *համապատասխանության* վերաբերյալ այս երկու մոտեցումները համատեղել մեր նյութերում:

Նորության այլ սահմանումներ՝ հաշվի առնելու համար

★ Այն մեծ եւ փոքր իրադարձությունները, որոնք պատմում են թե ինչպես ենք, որտեղ ենք ապրում, մեկնաբանում են մեր ժամանակները եւ օգնում շարունակել մարդկային պատմությունը բանականությամբ, հանդուրժողականությամբ եւ բաց քննարկմամբ:

★ Տեղեկատվություն, որը կարեւոր է համարվում անհատի, խմբի կամ համայնքի կողմից:

★ Այն ամենը, ինչը մարդու վրա կարող է ազդեցություն թողնել: Չէ՞ որ այն, ինչը ձեզ վրա ազդում է, նորություն է: Դա այն է, ինչ դուք ուզում եք իմանալ, անկախ նրանից, դա հուզական, տնտեսական, թե ֆիզիկական ազդեցություն կունենա ձեզ վրա: Մի՞թե այս նորություններն են, որ պատմություններ են դառնում թերթերում:

★ Նորությունը սահմանելիս, դուք ինքնաբերաբար պատկերացնում եք օրաթերթ, որի մասին յուրաքանչյուրն ունի որոշակի նախապաշարմունքներ: Եթե դուք այդ ուղին ընտրեք, դա կհանգեցնի նորության նկատմամբ շատ ավելի խմբակային մոտեցման: Ամեն ոք կունենա նորության իր յուրօրինակ սահմանումը եւ կարգը:

★ Հարկավոր են նորությունը սահմանող ավելի լայն եւ ընդգրկուն տեսակետներ

*Հարց մասնակիցներին.* Առավել լայն եւ ավելի ներառական տեսանկյունից ինչպե՞ս կսահմանեիք նորությունը ձեր աշխատավայրում եւ ձեր թերթում, ռադիոյում կամ հեռուստաընկերությունում:

Քննարկումը հարաճյուն դարձնելու կամ այն առաջ մղելու համար հարցրեք.

★ «Ի՞նչ կարծիք ունեք բազմաշերտ աշխատակազմի (տարիք, սեռ, էթնիկ խումբ, կրոնական պատկանելիություն, սեռական հակվածություն) ազդեցության մասին»: Քանի որ թվում է, թե նորությունը սահմանվում է այն մարդկանց կողմից, ովքեր աշխատում են թերթերում, ըստ այդ սահմանման նորությունն ավելի բազմաշերտ կլինի, եթե աշխատակազմը բազմաշերտ լինի:

★ Ինչի՞ մասին են խոսում մարդիկ:
Քանզի պարզվում է, որ նորությունն այն է, ինչի մասին մարդիկ խոսում են, մենք պետք է կարողանանք մեր թերթի ներսում աշխատակազմին փոխանցել այն, ինչի մասին մարդիկ խոսում են: Մենք պետք է նորություններ քաղենք մեր հարեւաններից, սրճարաններից, ճաշարաննե-

րից եւ օգնենք որոշել, թե արդյոք հասարակությունն ավելի շատ հարցերի մասին է խոսում, որոնք տեղ չեն գտնում մեր նորությունների էջում:

*Ղեկավարի ամփոփումը.* Ինչպես հետեւում է նորության սահմանման վերաբերյալ քննարկումներից, յուրաքանչյուր լրագրող այդ խնդրին մոտենում է իր տեսանկյունից: Յուրաքանչյուր մասնակից յուրատեսակ սահմանում տվեց նորությանը, եւ մեզանից յուրաքանչյուրը տարբեր կերպ արձագանքեց այս վարժության ընթացքում բարձրացված հարցերին ու խնդիրներին:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է խորհի, թե արդյոք նորության մեր սահմանումը համընկնու՞մ է մեր լրագրային, ռադիո կամ հեռուստատեսային ընկերության կողմից ընդունված նորության սահմանմանը: Եթե այն նույնը չէ, ինչ ենք անում՝ այդ բացը լրացնելու համար: Փոխզիջմա՞ն ենք գնում: Ի՞նչ կարող ենք անել, որ բազմաշերտության խնդիրն առկա լինի յուրաքանչյուր նյութի պարագայում: Ինչպե՞ս ենք մենք որպես անհատներ վերաբերվում ներառման ու բազմաշերտության խնդրին եւ սկսում փոխել նորությունների մատուցման կուլտուրան մեր կազմակերպության կամ հասարակության ներսում:

# Øá¹áõÉ 3. ÆÝã ¿ µ³½Ù³ÏáÕÙ³ÝÇ Éáõë³µ³ÝáõÙÁ »õ ÇÝãáõ± ¿ ³ÛÝ Ï³ñ»õáñ

**Նպատակ**

Սահմանել ավելի բազմակողմանի լուսաբանման հնարավորությունները:

**Սկզբունք**

Չնայած մեր էթնիկ, քաղաքական, փարիքային, սեռային, կրոնական կամ փնտեսական փարբերություններին, բոլորս այն համայնքների անդամներն ենք, որտեղ ապրում եւ աշխատում ենք. մենք բոլորս ցանկանում ենք ավելի լայն համայնքի անդամներ համարվել:

Բազմաշերտ լուսաբանումը նախապեսված է մեր կյանքի հասարակական թելերին անդրադառնալու համար, ինչը ծնում է ըմբռնողականություն, հանդուրժողականություն եւ փոխկապակցված հասարակական կառուցվածք՝ տեղ թողնելով բանավեճերի, անհամաձայնությունների եւ նույնիսկ տարաձայնությունների համար՝ կապված անհատների, խմբերի եւ համայնքների միջեւ տարբերությունների նկատմամբ հարգանքի հետ:

Եթե մարդիկ լրատվամիջոցներով չեն տեսնում իրենց, ապա իրենք իրենց չեն համարի նաեւ իբրեւ այն համայնքի մի մասնիկ, որտեղ ապրում են: Եթե լրագրողները պետք է լուսաբանեն համայնքն ամբողջությամբ, ապա պետք է ուղիներ գտնեն, որպեսզի տվյալ համայնքի բոլոր անդամները ներկայացվեն լուսաբանման մեջ:

Օրինակ, ոչ վաղ անցյալը ցույց է տալիս, որ կառավարության քաղաքականության լուսաբանումը՝ առանց այդ քաղաքականության վերաբերյալ բազմազան ձայները լսելի դարձնելու, շատ ժողովուրդների մոտ սնել է ռասիզմ, աղանդավորություն եւ էթնիկ ատելություն:

*Ղեկավարը հարցնում է.* «որո՞նք են բազմաշերտության այն վճռական կողմերը, որ ձեր կարծիքով չեն լուսաբանվում ԶԼՄ-ների կողմից»:

Սեմինարի ղեկավարը պետք է բոլոր պատասխանները գրի մեծ թղթերի վրա, այնպես, որ բոլոր մասնակիցները կարողանան տեսնել:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ` Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Կարելի է ակնկալել, որ պատասխանները կընդգրկեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ էթնիկ պայքարի պատմությունը տարածաշրջանում, էթնիկ պայքարի կամ ռասայական տարբերությունների քաղաքականությունը, ինչպես նաեւ էթնիկ, ռասայական եւ կրոնական անհանդուրժողականության քաղաքականությունը:

Սեմինարի ղեկավարը կարող է խնդրել խմբին օրինակներ բերել ոչ վաղ անցյալից, թե ինչպես են լրատվամիջոցներն իրենց լուսաբանումների միջոցով օգնել համայնքների ուժեղացմանը կամ թուլացմանը: Օրինակները կարող է լինեն տեղական կամ, ասենք, Ռուանդայից, Մերձավոր Արեւելքից, Կանադայից, Արեւմտյան Եվրոպայից եւ այլն: Ի լրումն, սեմինարի ղեկավարը պետք է մանրամասն քննի այն լուսաբանման առանձնահատկությունները, որն ի վերջո օժանդակել է պայքարին եւ պատերազմին: Նա նաեւ պետք է նշի, որ կոնֆլիկտների հետ պատմական կապը անկում է առաջացնում, որը դժվար է հաղթահարել, եթե լրատվամիջոցների միակ ապավենը հոդվածներն են պայքարի, դրա պատմության, կոնֆլիկտի քաղաքականության եւ հաշտեցմանն ուղղված ջանքերի մասին:

Նախ, մենք պետք է եփ քայլենք ընդհարումներից եւ կոնֆլիկտներից եւ հայացք ձգենք առօրյա կյանքի վրա: Սեմինարի ղեկավարը պետք է անդրադառնա նախորդ մոդուլին եւ հիշեցնի մասնակիցներին, որ բազմակողմանի լուսաբանումը սկսվում է առօրյա կյանքից: Մենք ուղիներ ենք փնտրում՝ բոլոր մարդկանց ամե-

նօրյա կանոնավոր լուրերի մեջ ընդգրկելու համար: Օրինակ, եթե մարդիկ սկսեն ընթերցել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների, կանանց, տարբեր ռասայական կամ կրոնական խմբերի պատկանող մարդկանց անուններ, ապա վերջիններս կսկսեն զգալ, որ իրենք եւս ազգային երկխոսության եւ բանավեճի մի մաս են կազմում:

Լրագրողները պետք է ընդլայնեն տարբեր խմբերից տեղեկատվության աղբյուրների օգտագործումը: ԶԼՄ-ների դերը ավելի կաճի, երբ ընթերցողները եւ հեռուստադիտողները նկատեն, որ հետաքրքրվածություն կա ընգրկել հասարակության բոլոր շերտերի փորձն ու տեսակետները:

Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի կամ Ամերիկայի շատ թերթեր եւ հեռարձակող կազմակերպություններ տասնամյակներ շարունակ ծառայել են գլխավորապես հայտնելու համար, թե ինչ է որոշել կառավարությունը եւ ինչպես են այդ որոշումներն իրականացվելու: Ներառական, բազմաշերտ լրագրության պարագայում, կառավարության որոշումը հետին պլան է մղվում՝ պատմելու համար, թե կառավարության քաղաքականությունը եւ գործունեությունն ինչ ազդեցություն են ունեցել հասարակության տարբեր անդամների վրա: Լրագրողն աշխատում է արտահայտվելու հնարավորություն տալ հասարակության անդամներին, որպեսզի նրանք պատմեն կառավարության գործունեության կամ պասիվության մասին:

Եթե հասարակության ձայնը լսելի է դառնում, այդպիսով մեծանում է բանավեճում ավելի շատ մարդկանց ընդգրկելու հնարավորությունը. լրատվամիջոցները դառնում են բանավեճերի հավաքավայր, որոնք ժամանակի ընթացքում թույլ կտան հասարակությանը իր պրոբլեմները լուծել ի շահ իր բոլոր անդամների:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Պետք է հստակ լինի, որ փոփոխություն կատարելը չի նշանակում ղեկավարել փոփոխությունը: Լրագրությունը արշավանք չէ: Լրատվամիջոցները միջավայր են ստեղծում հասարակության տարբեր շերտերի ձայնը լսելի դարձնելու համար: Իբրեւ սկիզբ սեմինարի ղեկավարը պետք է խնդրի մասնակիցներին ներկայացնել առօրյա կյանքն արտացոլող թեմաների ցանկ: Օրինակներ, որ կօգնեն սկսել քննարկումը.

* առողջապահություն
* կրթություն
* անձնական ֆինանսներ
* երեխաները եւ նրանց զարգացումը
* կրոն կամ հավատք:

Սեմինարի ղեկավարը պետք է այս կատեգորիաներից լրատվական հոդվածների օրինակներ տրամադրի մասնակիցներին: Որպես վերլուծության հիմք օգտագործելով այդ հոդվածները՝ քննարկեք, թե ինչպես կարելի է ընդլայնել տվյալ նյութը հասարակության ավելի շատ շերտեր (տարիք, էթնիկ խումբ, հաշմանդամություն, սեռ) ներգրավելու համար:

**Օրինակ:** Հոդված նախածննդյան խնամքի վերաբերյալ: Կա՞ն արդյոք բժիշկներ փոքրամասնություններից կամ էթնիկ խմբերից: Կա՞ն արդյոք կին բժիշկներ կամ հիվանդներ: Կա՞ն արդյոք այնպիսի կրոնական խնդիրներ, որոնք պետք է հաշվի առնվեն նախածննդյան խնամքը քննարկելիս: Ու՞մ կարելի էր ընդգրկել տվյալ թեմայով հոդվածում ներառման գաղափար դրսեւորելու համար: Ինչպե՞ս կտեղաբաշխեիք հասարակության տարբեր շերտերից ընդգրկված այդ աղբյուրները:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Նախքան սեմինարը մասնակիցների հետ քննարկում սկսեք նրանց տրամադրած կամ ձեր հավաքած ժողովրդագրական տեղեկատվության շուրջ, որը կօգտագործեք առանձին համայնքի ներսում բազմաշերտության վերաբերյալ ձեր քննարկումների հիմքում:

*Ենթադրական հարցեր, որ պետք է հաշվի առնվեն քննարկումն աշխուժացնելու համար.*

*Հարց 1.*

★ Եթե ձեր համայնքում բնակչության 30%-ը կազմում են 25-40 տարեկան կանայք, ի՞նչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ այդ փաստը լուսաբանման վրա:

*Մի քանի գաղափարներ, որ կօգնեն բորբոքել քննարկումը.*

Դրանք երեխա ծնելու տարիքի կանայք են: Նրանք հետաքրքրված կլինեն առողջական եւ կրթական հարցերով, երեխաների մասին խնամքի ստրատեգիաների վերաբերյալ տեղեկատվությամբ, ինչպես նաեւ` առողջապահության, կրթության ու բարեկեցության հետ կապված կառավարության քաղաքականության զարգացմամբ եւ կցանկանան իմանալ, թե այդ քաղաքականությունն ինչպես կանդրադառնա իրենց առօրյա կյանքի վրա:

*Ղեկավարը հարցնում է.* Կա՞ն արդյոք այլ թեմաներ, որոնք եւս կարող են հետաքրքրել նրանց: Նկատի ունեցեք, որ բնակչության այս հատվածի հետաքրքրությունները կփոխվեն, երբ նրանք այլեւս երեխա ունենալու տարիքում չեն լինի: Ինչո՞վ կհետաքրքրվեն նրանք, երբ այդ տարիքից դուրս կգան: Սեմինարի ղեկավարը պետք է մասնակիցներին առաջարկի որպես քննարկման չափանիշ օգտագործել իրենց կյանքը:

Արդյո՞ք հետեւյալ թեմաները լուսաբանվում են ձեր թերթում, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ: Ի՞նչ հաճախականությամբ եւ ձեր գնահատմամբ ի՞նչ որակով են դրանք լուսաբանվում: Ի՞նչ բովանդակություն կավելացնեիք ձեր լրատվական նյութին այդ կոնկրետ խմբի տեղեկատվական պահանջները բավարարելու համար: Տվյալ խմբի տեղեկատվական պահանջները հաշվի առնելով` արդյո՞ք ներկայացնում եք նաեւ փղամարդկանց հետաքրքրող տեղեկատվություն:

Հիշեք, որ կոնկրետ խմբերի հետաքրքրության շրջանակները որոշելը ամենեւին չի նշանակում բացառել մյուս խմբերին:

Հարցրեք սեմինարի մասնակիցների տեսակետը վերջին դրույթի կապակցությամբ: Ինչպե՞ս կարող է կոնկրետ խմբի լուսաբանումը հետաքրքրել նաեւ այդ խմբից դուրս մյուս մարդկանց: Արդյոք մասնակիցներից որեւէ մեկը կարո՞ղ է ներկայացնել մի հոդված կամ գաղափար, որը կհաստատի վերոհիշյալ պնդումը: Մասնակիցներին խնդրեք կոնկրետ օրինակներ բերել հիմնավորելու համար:

*Ենթադրական հարցեր, որ պետք է հաշվի առնվեն քննարկումն աշխուժացնելու համար:*

*Հարց 2.*

★ Եթե ձեր համայնքի բնակչության 20%-ը 65-ն անց մարդիկ են, ի՞նչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ այդ փաստը լուսաբանման վրա:

*Մի քանի գաղափարներ, որ կօգնեն բորբոքել այս հարցի վերաբերյալ քննարկումը.*

Ճանապարհորդություն եւ ժամանց, անձնական ֆինանսներ (ծայրը ծայրին հասցնել, երբ մարդն այլեւս չի աշխատում), թոշակի անցնելու պլաններ, առողջական հոգսեր: Այս խմբի մասին ի՞նչ այլ տեղեկատվություն է հարկավոր, որը կօգնի ձեզ այդ խմբի մարդկանց հետաքրքրող լուսաբանում ապահովել: Արդյո՞ք նրանք ճանապարհորդում են: Արդյո՞ք ճանապարհորդությունը հիմնականում սահմանափակվում է ձեր երկրի կոնկրետ վայրերով կամ հարեւան երկրներով: Արդյո՞ք ճանապարհորդությունը կախված է տվյալ կատեգորիայի մարդկանց էթնիկ պատկանելիությունից: Արդյո՞ք այն կախված է տվյալ կատեգորիայի մարդկանց տնտեսական կարգավիճակից:

Ինչպես արդեն նշվել է, հարցրեք սեմինարի մասնակիցների տեսակետը վերջին պնդման կապակցությամբ: Ինչպե՞ս կարող է կոնկրետ խմբի լուսաբանումը հետաքրքրել նաեւ այդ խմբից դուրս մյուս մարդկանց: Արդյո՞ք մասնակիցները կարող են ներկայացնել որեւէ հոդված կամ գաղափար, որը կհաստատի վերոհիշյալ պնդումը: Աշխատեք մասնակիցների հետ, որպեսզի կոնկրետ օրինակներ բերվեն

հիմնավորելու համար: *Ենթադրական հարցեր, որ պետք է հաշվի առնվեն քննարկումն աշխուժացնելու համար.*

*Հարց 3.*

* Եթե ժողովրդագրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում մարդկանց 30%-ը տարիքով 25-ից ցածր է, ի՞նչ հնարավոր ազդեցություն կարող է ունենալ նման վիճակագրությունը լուսաբանման վրա:

*Մի քանի գաղափարներ, որ կօգնեն բորբոքել քննարկումը.*

Արվեստները (հատկապես երաժշտությունը), անձնական ֆինանսները, առողջություն եւ բարեկեցություն: Այս խմբի հետաքրքրությունների մասին ի՞նչ այլ տեղեկատվություն է հարկավոր որոշելու համար, թե արդյո՞ք կան լուսաբանման ենթակա բնագավառներ, որոնց մասին թերթը պետք է իրազեկ լինի: Գուցե սպորտ եւ ժամա՞նց: Փոխհարաբերություննե՞ր: Արդյո՞ք ձեր թերթը լուսաբանում է այս թեմաները:

Ինչպես վերը նշվել է, ուսումնասիրեք նույն խնդիրները բոլոր խմբերի հետաքրքրությունների տեսանկյունից՝ ընդլայնելով լուսաբանման շրջանակները:

Ղեկավարը պետք է օգտագործի մասնակիցների կողմից տրամադրված թերթերի եւ հաղորդումների օրինակները՝ այս մոդուլի բուն նյութի շուրջ ծավալվելու համար: Հարցերը կարող են շատ առանձնահատուկ լինել՝ կապված էթնիկ պատկանելիության, տարիքային եւ սեռային խնդիրների հետ այն երկրում կամ տարածաշրջանում, որտեղ անցկացվում է սեմինարը:

*Սեմինարի վարժություն.*

Մասնակիցները բաժանվում են չորս հոգուց բաղկացած խմբերի: Յուրաքանչյուր մասնակից վերցնում է մյուսի թերթը, ռադիո կամ հեռուստահաղորդումը եւ վերանայում է մատուցված նորությունները հիմնական բաղադրիչների ներկայացման վերաբերյալ հարցեր ուղղելու համար՝ հիմնվելով մասնակիցների ունեցած ժողովրդագրական տեղեկատվության վրա: Երբ մասնակիցները միմյանց հարցեր են ուղղում մատուցված նորության եւ իրենց լսարանի բազմաշերտության մասին, նրանց ասածների հիման վրա ստեղծվում է ոչ պաշտոնական ժողովրդագրական պրոֆիլ: Յուրաքանչյուր մասնակից պետք է նշումներ կատարի քննարկման ընթացքում՝ ամբողջ խմբին ներկայացնելու համար:

## Ø³ëÝ³ ÏÇóÝ»ñÁ ÷Ýïñáõ٠»Ý.

* Անեկդոտային ժողովրդագրական պատմություն:

* Ի՞նչ տեղեկատվություն է պակասում, որը կօգներ որոշել, թե արդյոք թերթը լուսաբանո՞ւմ է հասարակության բոլոր շերտերը:

Վերանայման արդյունքները եւ փոքր խմբային քննարկումները ներկայացվում են ողջ խմբին: Նշումներ պետք է արվեն այն բնագավառների վերաբերյալ, որոնք բարելավման կարիք ունեն բազմաշերտության լուսաբանումը մեծացնելու համար, ինչը կքննարկվի հետագա մոդուլների ընթացքում:

# Øá¹áõÉ 4. Ð³ïáõÏ ùÝÝ³ñÏáõÙ É»½íÇ í»ñ³µ»ñÛ³É

**Նպատակ.**
Զարգացնել լեզվի գործածման զիտակցությունը խուսափելու համար ռասայական եւ էթնիկ ստերեոտի-պերից:

**Սկզբունք.**
Մեր բառերը կարող են խրախուսել մեր հասարակություններին կարդալ մեր թերթերը, լսել եւ դիտել մեր հեռարձակումները եւ հավատալ մեզ: Այդ նույն բառերը կարող են հասարակության տարբեր խմբերի մասին բացասական վերաբերմունք սերմանել, ինչը լրատվական ԶԼՄ-ներին զերծ չի պահի նախապաշարմունքներից եւ անարդարացիությունից: Կարեւոր է հաշվի առնել, թե ինչու որոշակի բառեր պարզապես չեն օգտագործվում:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Սեմինարի ղեկավարը պետք է քննարկում նախաձեռնի՝ օգտագործելով մասնակիցների տրամադրած հոդվածներից կամ ռադիո եւ հեռուստահաղորդումներից վերցված օրինակները: Տպագրված օրինակների դեպքում, պատճենահանեք անհրաժեշտ հոդվածները, որպեսզի յուրաքանչյուր մասնակից կարողանա կարդալ եւ հետեւել քննարկմանը: Հեռարձակված նյութերը պետք է ցուցադրվեն խմբին:

ԶԼՄ-ները հիմնականում միտումնավոր չեն ստերեոտիպեր եւ տարանջատում ստեղծում: Այնուամենայնիվ, լրագրողներին հաճախ չի հաջողվում արդյունավետ գործածել լեզուն եւ բացառել խմբային ստերեոտիպերի գործածությունը կամ անհանդուրժողականությունը: Ընդունելով, որ այսօրվա լրատվական ԶԼՄ-ները շահագրգռված են խուսափել լեզվի ոչ պատշաճ գործածությամբ պատճառած վնասից՝ լրագրողների գլխավոր կանոնը հետեւյալն է. *գրելիս հետեւեք ճշգրտության կանոններին, ինչը թույլ կտա լեզուն գործածել իր ամենամաքուր ձեւով:*

Մեր կողմից ընտրված բառերը վճռական դեր են խաղում լրատվության բովանդակության մեջ բազմազանության հասնելու հարցում: Առաջին պայմանը տարբեր էթնիկ եւ ռասայական խմբերի անդամներին անաչառ ու պատշաճ ներկայացնելն է՝ զգուշությամբ ընտրելով բառերը եւ խուսափելով ստերեոտիպերից ու շաբլոն դարձվածքներից, որոնք կարող են դիտվել որպես անարգանք:

Որոշ լրատվական կազմակերպություններ ստեղծել են հատուկ կոմիտեներ լեզվի սխալ գործածության եւ թյուրընկալման «խնդիրը» լուծելու համար: Մյուսները լեզվի խնդիրը դարձրել են ոճը կարգավորող իրենց կանոնների մշակման անբաժանելի մասը:

Այնուամենայնիվ, շատ լրագրողներ հազվադեպ են հնարավորություն ունենում նստելու եւ մտածելու, թե ինչու են ընտրում այս կամ այն բառերը: Ժամանակի սղությունը, ծավալի սահմանափակումը եւ նյութի առավելագույն սահունությունը հաճախ պայմանավորում են մեր ընտրությունը: Հազվադեպ է ժամանակ լինում վիճարկել ամենահարմար բառի ընտրությունը:

Այժմ, երբ լրատվական ԶԼՄ-ները գիտակցում են հասարակության բազմաշերտության խորությունը, եւ երբ մենք ուսումնասիրում ենք բազմաշերտության ազդեցությունը մեր աշխատանքի վրա, ստիպված ենք եւս մեկ անգամ հայացք նետել մեր գործածած բառերին:

Փաստորեն, ուսումնասիրելով, թե մարդկանց ինչպես ենք անվանում եւ ինչպես ենք նկարագրում այս կամ այն վայրը, փորձ է արվում պատշաճ կերպով լուսաբանել մեր հասարակության բոլոր շերտերը՝ գործածելով համապատասխան բառերը: Եթե ուշադրությամբ հետեւենք մեր լեզվի ճիշտ եւ սխալ գործածությանը, կնկատենք, որ հաճախ ճիշտ չենք մատուցում տեղեկությունները: Ավելի շուտ մենք հմտորեն կատարում ենք մեր աշխատանքը՝ օգտվելով

բոլոր կանոններից եւ միջոցներից:

## ´³é³ñ³ÝÇ û·ï³·áñÍáõÙ

Բառերի ճիշտ եւ սխալ գործածությունն ուսումնասիրելու առաջին քայլը շատ պարզ է՝ օգտվել բառարանից: Այն կարող ենք օգտագործել մեր առօրյա աշխատանքում, երբ փորձում ենք անաչառ եւ պատշաճ ներկայացնել մեր հասարակության նըրբությունները:

Բառարանը մի գործիք է, որը լրագրողը կարող է օգտագործել իր բառապաշարը հարստացնելու համար՝ վերացնելով այն ընկալումը, որը մենք ստեղծել ենք մեր ազգի, մեր համայնքների եւ մեզ համար:

Ժամանակների փոխվելու հետ փոխվում են նաեւ բառերի նշանակությունները: Բառարանը կարող է մեզ հիշեցնել այդ մասին, մեր գործածած բառերի ծագման մասին եւ օգնել ճիշտ բառեր ընտրելու մեր հոդվածի համար:

*Բառերի իմաստի փոփոխման օրինակ.*

***Գետտո***. 1960-ականներին, բառարանային սահմանումները գետտոն բնութագրում էին որպես մի վայր, որտեղ մի խումբ մարդիկ օրենքի հարկադրանքով ապրում են քաղաքի մի սահմանափակ տարածքում: Դա հատկապես վերաբերում էր կոտորածներին Եվրոպայում: Այսօր, ավելացել է երկրորդ իմաստը, որը թույլ է տալիս այդ բառն օգտագործել՝ բնութագրելու համար քաղաքի այն թաղամասը կամ հատվածը, որտեղ ապրում են փոքրամասնության անդամները՝ սոցիալական, տնտեսական կամ իրավական ճնշման պատճառով: Այս երկրորդ իմաստը փոխում է բառի նախկին նշանակությունը, ըստ որի գետտո ստեղծելու համար պահանջվում էր կառավարության համապատասխան գործողություն:

Ի՞նչ պետք է իմանան թղթակիցներն ու խմբագիրներն նախքան այս բառը գործածելը:

1) Միայն մի փոքրամասնություն է ապրում տվյալ տարածքում, եւ

2) նրանք այնտեղ են ապրում սոցիալական, տնտեսական կամ իրավական ճնշման պատճառով:

Անշուշտ, աշխարհի քաղաքներում կան այնպիսի վայրեր, որոնց կարելի է գետտո անվանել, սակայն լրագրողները պետք է շատ ուշադիր լինեն, որպեսզի իմաստը համապատասխանելու համար անհրաժեշտ բոլոր փաստերն առկա լինեն: Կրկին նշենք, որ բառը չի կարող որպես շատ տարածված արտահայտություն գործածվել քաղաքի ցանկացած տարածքի համար, որը չի համապատասխանում միջին կարգի բնակավայրի չափանիշներին: Ավելին, շատ դեպքերում լրագրողները պետք է օգտվեն յուրօրինակ գտնվելու հնարավորությունից եւ անվանեն այն տարածքը կամ մերձակայքը, որտեղ կատարվում են հոդվածում նկարագրված գործողությունները:

*Բարրիո.* Այս բառը նույնատիպ փաստի վրա հիմնված հատուկ իմաստ ունի: Ըստ բառարանի, բարրիոն - քաղաքի իսպանախոս մասն է կամ հարեւանությունը: Բառարանում ասվում է, որ բարրիոն չենք կարող օգտագործել որպես գետտոի հոմանիշ: Առավել եւս, այստեղ չի նշվում, որ սոցիալական, տնտեսական կամ իրավական ճնշման պատճառով է ստեղծվել այդ թաղամասը կամ տարածքը: Բառը վերաբերվում է միայն հատուկ իսպանախոս թաղամասին: Բարրիոն գետտո չէ: Այն քաղաքի խուլ անկյուն չէ: Սա պարզապես քաղաքի այն մասն է, որտեղ իսպանախոս մարդիկ են ապրում:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Մասնակիցներին խնդրեք իրենց լեզվից բառեր ընտրել քննարկելու համար: Սեմինարի ղեկավարն էլ պետք է մի քանի պատրաստի բառեր ունենա: Եթե հնարավոր է, մասնակիցները կարող են օգտվել բառարանից՝ քննարկվող բառերի ճշգրիտ նշանակությունը վերանայելու համար: Երբեմն այս վարժությունը կարող է բացահայտող լինել: Երբ բառերի հայտնի նշանակությունները հստակ չեն, եւ դուք պարզում եք, որ դրանք սխալ են գործածվում, հարցրեք մասնակիցներին, թե նրանց կարծիքով, ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել կամ ունի նման սխալ գործածությունը: Ո՞վ է ամենից շատ ազդվել դրանից:

## Ð³ïáõÏ Ù³Ýñ³Ù³ëÝáõÃÛáõÝÝ»ñ` ÁÝ¹¹»Ù åÇï³ÏÝ»ñÇ

Բարրիոն եւ գետտոն պարզապես երկու օրինակ են այն բառերի, որոնք մենք հաճախ սխալ ենք օգտագործում: Բարելավված լրագրությունը պետք է մանրամասն նկարագրի տեղը, պայմանները եւ տնտեսական վիճակը, որոնք հայտնվում են հոդվածում, այլ ոչ թե վերածի սրանք պիտակների, որոնք լեզվի սխալ օգտագործման պատճառով հաճախակի շփոթեցնում կամ ստերեոտիպեր են ստեղծում:

Լրագրողները չպետք է մոռանան, որ այն մարդկանց մեծ մասը, ումից մենք հարցազրույցներ ենք վերցնում, ընդգրկված չեն բառարաններում կամ ճշգրիտ բացատրական բառարաններում: Նրանք կարող են տեղյակ չլինել, որ էթնիկական պատկանելիությունը չի բնորոշում նվաճումները կամ եկամուտը: Կամ այն, որ հատուկ էթնիկական խմբերը հոմանիշ չեն աղքատ, հանցավոր, անկիրթ կամ չկրթված, չընդունված կամ իրավազուրկ բառերին:

## ÎñÃ»É ÁÝÃ»ñóáÕÝ»ñÇÝ »õ ï»Õ»Ï³ïíáõÃÛ³Ý ³ÕµÛáõñÝ»ñÁ

Քանի լրագրողներ են գրել իրենցից ավագ քաղաքացիների մասին եւ նրանց անվանել «տարեցներ»՝ առանց հարցնելու զրուցակիցների կարծիքը:

Ի՞նչ կարելի է ասել լրատվական ծառայության մի հոդվածի մասին, որում մարդուն անվանել են «հաշմանդամ»՝ առանց նկարագրելու թե հատկապես ինչպիսի վիճակում է նա եղել: Կրկին նայեք բառի նշանակությունը: Սահմանումը շատ որոշակի է եւ վերաբերում է մարդկանց փոքր մասին, ովքեր համարվում են հաշմանդամ:

Առանձնահատկություններ առանց տարբերությունների՞: Ոչ, դրանք առանձնահատկություններ են, որ տարանջատում են լրագրողներին մարդկանցից, ում նրանք ծառայում են: Դրանք առանձնահատկություններ են, որ շարունակում են բեւեռացնել մեր հասարակությանը:

21-րդ դարում մեզ վրա մեծ պատասխանատվություն է դրված, որպեսզի համոզված լի-

նենք, որ բեւեռացումը չի շարունակվի կամ տարածվի միայն այն պատճառով, որ մենք չափազանց զբաղված կամ անտարբեր ենք եղել կամ էլ զլացել ենք բառարանում մի քանի բառ նայել:

## ØÇ ù ³ ÝÇ É³ óáõóÇã Ëáñհáõñ¹Ý»ñ

* Ուշադիր եղեք ածականներ եւ մակբայներ գործածելիս: Դրանք նկարագրող բառեր են, որոնք ամրապնդում են ստերեոտիպերը: Լրագրողները թղթակիցներ են եւ, ոչ թե նկարագրողներ: Մենք ընթերցողներին, ունկնդիրներին եւ հեռուստադիտողներին ներկայացնում ենք փաստերը, որպեսզի նրանք ինքնուրույն հետեւություններ անեն՝ ինչ համապատասխան նկարագրող բառեր օգտագործել տվյալ դեպքում: Մեր գործը չէ պատմել հասարակությանը այն, ինչին պետք է հավատան: Մեր գործը փաստերն անկողմնակալ ներկայացնելն է, ինչը մեր հասարակության յուրաքանչյուր անդամին թույլ կտա որոշել, ինչպես ապրել իր կյանքը եւ որքանով մասնակից լինել հասարակական կյանքին:

* Շրջահայաց եղեք՝ խուսափելու համար տերմինների կամ արտահայտությունների անհարկի շատ գործածությունից, ինչը կարող է տպավորություն ստեղծել, թե փորձում եք ազատվել ամենատուժած խմբերի անդամներից:

Արդյո՞ք մենք տեղեկատվության աղբյուրը նկարագրում ենք որպես մի գորշ կերպար՝ փորձելով ոճ ստեղծել եւ չենք գիտակցում, որ այդ ոճը ստերեոտիպային է: Ամեն մի բառ կամ արտահայտություն ընտրելիս՝ պետք է մտածենք միջին ընթերցողի, ունկնդրի եւ դիտողի մասին: Արդյո՞ք մենք հաղորդում ենք այն, ինչ մտադրված ենք: Արդյո՞ք մենք ոչ միտումնավոր կամ նույնիսկ չգիտակցելով ամրապնդում ենք կոնկրետ խմբերի նկատմամբ առկա ստերեոտիպերը:

Մեր բառերը կարող են խրախուսել հասարակության անդամներին կարդալ մեր թերթերը, ունկնդրել կամ դիտել մեր հեռարձակումները եւ հավատալ մեր կողմից ամեն օր ներկայացվող տեղեկատվությանը: Երկակի իմաստով, շաբլոն դարձվածքներ կամ ժարգոն գործածելով, մենք վտանգում ենք կորցնել հասարակության եւ լրատվամիջոցների միջեւ ձեւավորված վստահությունը:

Մեր ընտրած բառերը կարող են ամրապնդել այն հասարակական ընկալումը, որին պատրաստել են նախորդ սերնդի թերթերը, ռադիո եւ հեռուստատեսային կազմակերպությունները: Նախկին քաղաքական վարչակարգը, լրատվամիջոցները նախապաշարմունքային վերաբերմունք ունեին հասարակության որոշակի շերտերի նկատմամբ: Մեր բառերը հիշեցնում են վաղ ժամանակների փորձը, երբ սոցիալական, քաղաքական, տնտեսական եւ իրավական դինամիկան ծնում էր ատելություն, վախ, տարանջատում եւ կոնֆլիկտ: Եվ դա ամեն անգամ վերհիշելով՝ մենք վերադառնում ենք պատմական ենթատեքստին՝ թույլ չտալով մեր հասարակությանը շարժվել առաջ եւ դառնալ մի հասարակություն, որը կգնահատի խոսքի ազատությունը եւ բազմակարծությունը, ինչից կախված է ժողովրդավարական լրագրությունը:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

* Սահմանեք, թե ինչ է ստերեոտիպը: Մասնակիցներին խնդրեք քննարկել իրենց էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբում առկա ստերեոտիպերը: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ են զգում, երբ որեւէ թերթի հոդվածում կամ ռադիո կամ հեռուստալրատվության մեջ ստերեոտիպ են տեսնում իրենց ռասայական կամ էթնիկ խմբի նկատմամբ:

* Օգտվեք սեմինարի մասնակիցների տրամադրած թերթերի օրինակներից՝ քննարկելու համար լեզվի գործածությունը՝ բազմաշերտ լրատվություն ապահովելիս: Ինչպե՞ս կարելի էր փոխել այդ հոդվածների լեզուն ստերեոտիպերից խուսափելու կամ դրանք վերացնելու համար:

## ä»ïù ¿ ³ Ý»É Ñ»ï»õÛ ³ ÉÁ

* Խուսափեք ոչ հստակ բառերից կամ արտահայտություններից:

*Օրինակ:* Այն հասարակությունում, որտեղ կրոնական ազատություն է վերահաստատվում, այնպիսի կրոնական փոքրամասնություններին, ինչպիսին Եհովայի վկաներն են, բապտիստները եւ բողոքականները, որպես աղանդներ բնութագրելը ճիշտ չէ եւ աղոտ պատկեր է ստեղծում հասարակության մոտ, թե որն է «հիմնական ուղղությունների», ինչպես, օրինակ, կաթոլիկների, մուսուլմանների եւ ուղղափառների տարբերությունը:

## Øá¹áõÉ 5. Ð³ñó»ñ ¿ÃÝÇÏ å³ïÏ³Ý»ÉÇáõÃÛ³Ý í»ñ³µ»ñÛ³É

Այս պահին սեմինարի ղեկավարը պետք է խմբից որեւէ մեկին խնդրել կարդալ «աղանդ» բառի սահմանումը, իսկ այնուհետեւ պետք է քննարկել, թե այդ բառն ինչու է բացասական ազդեցություն ունենում այն կրոնական խմբերի անդամների վրա, որոնք դասվել են այդ կատեգորիային:

* Խուսափեք բնութագրել այն մարդկանց, ովքեր հակված են հաստատել կամ հերքել ստերեոտիպը:
* Գործածեք այնպիսի բառեր, որոնք ճշգրտորեն բնութագրում են տարեց մարդկանց` առանց պաշտպանելու կամ ստորացնելու:
* Խուսափեք տարեցների նկատմամբ ստերեոտիպային բառերից:

***Օրինակ***` տկար, զառամյալ, անաշխատունակ:

* Խուսափեք բնութագրել կանանց` հիմնվելով նրանց ամուսինների վրա: Կանանց պետք է հնարավորություն տալ ներկայանալ: Մի՛ պատմեք նրանց մասին որպես տղամարդկանց կողակիցների, այլ ներկայացրեք որպես անհատականություններ:
* Խուսափեք աշխարհագրական կամ պատմական անճշտություններից:
* Ներկայացրեք որոշակի մանրամասներ եւ խուսափեք պիտակներից:

***Օրինակ****:* Հանցագործության մասին պատմող նյութի մեջ կասկածյալը նկարագրված է որպես 20-30 տարեկան թխամորթ տղամարդ: Փորձեք ավելի շատ մանրամասներ իմանալ ոստիկանությունից. ի՞նչ կար հագին, որտե՞ղ են տեսել նրան փախուստի դիմելիս, ինչպիսի՞ն էր նրա սանրվածքը:

Դաշտոնյաները երբեք մանրամասներ չեն տրամադրի, եթե լրագրողները հարցեր չուղղեն: Իսկ մեր որոշակի հարցերը կօգնեն հասարակությանը ներկայացնել կասկածյալի համապատասխան նկարագիրը, այլ ոչ թե մի ընդանուր նկարագրություն, որը կարելի է օգտագործել կոնկրետ էթնիկ կամ ռասայական խմբի բնակչության 50%-ին նկարագրելու համար: Իսկ ի՞նչ անել, եթե չկան ոչ մի մանրամասն: Քննարկեք, թե արդյո՞ք նկարագրությունը ծառայում է որեւէ նպատակի, եթե չի օգնում ոստիկաններին ձերբակալել հանցագործին:

Հետեւյալ հարցերը եւ պատասխանները ներկայացվում են, որպեսզի օգտագործեք խմբի հետ քննարկման ընթացքում: Քննարկումը կենտրոնացրեք մասնակիցների սեփական փորձից բերված յուրատեսակ օրինակների վրա: Ստորեւ ներկայացված պատասխանները պետք է ծառայեն որպես սկիզբ, եւ ոչ թե վերջ: Մասնակիցներին բավականաչափ ժամանակ տվեք բանավիճելու, թե արդյո՞ք տվյալ օրինակում էթնիկ կամ ռասայական տարբերակումը տեղին էր: Մասնակիցները հարցադրումներ կանեն, որոնք ղեկավարը պետք է պատրաստ լինի ակտիվորեն ընդգրկել, հարցնել կամ բարձրացնել, որպեսզի օգնի ողջ խմբին իմաստալից քննարկում ունենալ: Քննարկման ավարտին, սեմինարի ղեկավարը պետք է համառոտ ամփոփի խմբի եզրահանգումները:

Այս դասընթացի նշումները պետք է պահվեն` էթնիկ պատկանելիության խնդրի շուրջ հարցերն ու պատասխաններն ընդլայնելու համար:

### ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Հանցագործությունների մասին պատմությունները հաճախ լավ հիմք են ծառայում էթնիկ պատկանելիության վերաբերյալ քննարկման համար: Դրանք ամենահեշտ օրինակներն են, որ կարելի է գտնել մասնակիցների թերթերում:

**Հարց.** Ե՞րբ է տեղին նշել ռասան կամ էթնիկ պատկանելիությունը:

**Պատասխան.** Ընդհանրապես, ռասան կամ էթնիկ պատկանելիությունը տեղին չէ նշել հոդվածում, եթե միայն էթնիկ պատկանելիությունն այն գործոնը չէ, որ կազմում է հոդվածի կորիզը: Քաղաքականության, սոցիալական գործունեության կամ սոցիալական պայմանների մասին հոդվածներում էթնիկ պատկանելիության հիշատակումը հաճախ տեղին չէ: Հեղի-

նակները պետք է ուշադիր լինեն, որպեսզի իրենց ընտրած բառերը թույլ չտան ընթերցողին ենթադրել, թե էթնիկ պատկանելիությունը նշանակություն ունի:

***Օրինակ.*** Մեծ քաղաքներում մի էթնիկ խումբ կարող է որոշ տեսակի փոքր խանութներ կամ առեւտրի կետեր ունենալ: Այդ խանութները հաճախ դառնում են այլ խմբերի կողմից ապելության եւ հարձակումների թիրախներ: Նույնիսկ նման դեպքում թղթակիցը չպետք է նշի, թե հարձակումը պատճառաբանվում է էթնիկ խմբերով: Առաջին հայացքից էթնիկ պատկանելիությունը կարող է կարեւոր երեւալ: Այնուամենայնիվ, ավելի մոտիկից զննելով եւ շրջակայքից ավելի մանրամասն տեղեկություններ իմանալով՝ կարող եք հարձակման այլ պատճառներ բացահայտել՝ ներառյալ հարեւանությամբ բնակվող մարդկանց միջանձնային հարաբերությունները: Նման հանգամանքներում էթնիկ պատկանելիությունը փոքր գործոն է, եւ լրատվությունը չպետք է ընթեցողին դրդի կարծել, թե այս կամ այն խմբի անդամները դուրս են եկել ոչնչացնելու կամ վնասելու մյուս խմբի անդամներին:

ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Խնդրեք խմբին քննարկել, թե արդյո՞ք իրենց կարծիքով ռասան այստեղ կարեւոր է, թե՞ սա ունեւորներն ընդդեմ չունեւորների դեպքն է, կամ զուցե պարզապես հանցավոր գործողություն: Որքան ճշգրիտ կարող է հոդվածն արտացոլել իրավիճակը: Հարցրեք, թե արդյոք կնշվե՞ր տվյալ անձի էթնիկ պատկանելիությունը, եթե վերջինս փոքրամասնության անդամ չլիներ: Եթե պատասխանը բացասական է, ապա պետք է լրջորեն մտածել, թե էթնիկ պատկանելիությունը որքանով է առնչվում այս պատմությանը:

Սեմինարի ղեկավարը պետք է այնպիսի օրինակներ գտնի, որտեղ նշվում է մարդկանց էթնիկ պատկանելիությունը, ինչը կհանգեցնի այն եզրակացության, որ պատմությունն էթնիկական կամ ռասայական իրավիճակի մասին է:

***Հարց.*** Եթե էթնիկական կամ ռասայական համապատասխանության խնդիր կա, ինչպե՞ս պետք է վարվել:

***Պատասխան.*** Եթե ռասան կամ էթնիկական պատկանելիությունը համապատասխան են, լրագրողը պետք է շատ զգույշ լինի հոդվածը գրելիս: Լրագրողը պետք է քննարկի այս հարցը իր գործընկերների հետ, ուսումնասիրի նախապատմությունը, համոզվի, որ էթնիկական շեշտ չի ստեղծվում՝ եթե որեւիցե նման բան չկա:

ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

* Եվս մեկ հայացք գցեք վերը բերված օրինակների վրա: Արդյո՞ք հնարավոր էր գրել այդ պատմությունները ՝ ընթերցողի համար ակնհայտ բացասական տոնից խուսափելով կամ հարցի էթնիկական պատկանելիության կողմի շեշտը փոխադրել այնպես, որ այն համապատասխանի պատմության ճշմարիտ կողմին:

* Եթե դուք ունենք օրինակներ, երբ էթնիկական պատկանելիությունը ճիշտ ձեւով է կապվել պատմության հետ, օգտագործեք այդ օրինակը տարբերությունները ցույց տալու համար՝ այդ պատմությունը համեմատելով այն պատմությունների հետ, որտեղ ռասայական կամ էթնիկական խնդիրները սխալ տեսանկյունից են ներկայացվել:

**Հարց.** Ո՞վ է որոշում, թե արդյո՞ք առկա է ռասայական կամ էթնիկ խնդիր:

**Պատասխան.** Լրագրողները չպետք է իրենց վրա վերցնեն դեպքի էթնիկ կամ ռասայական հնչերանգը որոշելու բեռը: Դեպքի փաստերն իրենք պետք է խոսեն այդ մասին: Հաճախ կառավարության աղբյուրից լրագրողը կարող է լսել, որ ռասան կամ էթնիկ պատկանելիությունը տվյալ պատմության բաղադրիչներն են: Նման պաշտոնական հայտարարությունները կարելի է ստուգել՝ զրուցելով ներգրավված համայնքների ներկայացուցիչների հետ: Եթե պաշտոնյաները պնդեն, որ տվյալ դեպքի հիմքում ռասայական կամ էթնիկ խնդիր է ընկած, գտեք տեղեկատվության աղբյուրներ էթնիկ եւ ռասայական խմբերում, եւ առնվազն այնտեղ մշտապես բազմաթիվ տեսակետներ կլինեն այդ հարցի շուրջ: Այդ նույն պաշտոնյաներին մանրամասնորեն հարցրեք, թե ինչո՞ւ են նրանք որոշել, որ այդտեղ առկա է

էթնիկ խնդիր:

***Օրինակ:*** Ոստիկանությունը հրոսակային կռիվները պիտակավորում է որպես էթնիկ կռիվներ: Եթե թղթակիցը հարցնի՝ ինչու, ապա կպարզի, որ ոստիկանությունը եզրակացրել է, թե դա էթնիկ կռիվ է միայն այն պատճառով, որ հրոսակախմբերից մեկը մի էթնիկ խմբից է, իսկ մյուսը՝ մեկ այլ: Սակայն իրականում, կռիվն սկսվել է քաղաքի հանցավոր թաղամասի փողոցներում թմրանյութերի ապօրինի շահութաբեր առեւտրի շուրջ: Կռիվը կապված էր փարածքային հարցերի հետ, որի հիմքում փնտեսությունն էր ընդդեմ էթնիկ պայքարի: Արդյո՞ք այս պատմության մեջ կարող է էթնիկ խնդիր լինել: Հավանաբար: Այնուամենայնիվ, պարզպաղիր չէ, որ դա կոնֆլիկտի ամենակարեւոր պատճառը լինի, եւ հետեւաբար, թղթակիցը պետք է զգուշություն ցուցաբերի այն հարցում, թե ինչ կարեւորություն է վերագրում էթնիկ խնդրին այս պատմության մեջ:

**Հարց.** Ինչպե՞ս անվանել մարդկանց:

**Պատասխան.** Այս խնդիրը լուծելու տարբերակներից մեկն ուղղակի հենց տեղեկատվության աղբյուրին (այն անձը, որին մեջբերում եք կամ անդրադառնում) հարցնելն է, թե ինչպես է նա նախընտրում, որպեսզի իրեն բնութագրեն: Ինչեւէ, համընդհանուր կանոն է, որ աղբյուրի էթնիկ պատկանելիությունը պետք է նշվի միայն այն դեպքում, եթե այն առնչվում է պատմության թեմայի հետ:

Հիշեք, մեկ նկարն ավելի խոսում է քան հազար բառը: Հաճախ աղբյուրների էթնիկ ինքնությունը կարող է թերթերում կամ հեռուստատեսությամբ ավելի արդյունավետ ձեւով մատուցվել նկարների միջոցով: Այնտեղ, ուր հնարավոր է, ինչու՞ ցույց չտալ տեղեկատվության աղբյուրին, ինչպիսին որ նա կա իրականում՝ փոխանակ նրան անուղղակիորեն բնութագրելու:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Տեղեկատվության աղբյուրի նկարագրությունը պետք է լինի հնարավորինս որոշակի: Պարզապես նշելը, թե նա Ասիայից է, անհատի մասին ոչ մի անհրաժեշտ տեղեկատվություն չի ապահովում, մինչդեռ ռասայական ինքնությունը նշելը տեղին է: Եղեք ճշգրիտ: Ընդհանրացումները նպաստում են ստերեոտիպային վերաբերմունքին: Լավ լրագրությունը սիրում է ճշգրտություն ամեն ինչի նկատմամբ՝ ներառյալ էթնիկ պատկանելիությունը:

**Հարց.** Ի՞նչ կասեիք ներգաղթածների մասին:

**Պատասխան.** Նույնը վերաբերում է նաեւ ներգաղթածներին: Խուսափեք բոլոր ներգաղթածներին խմբավորել, ինչպես, օրինակ, աֆրիկացիներ, ասիացիներ: Ընթերցողը կամ դիտողն ավելի շատ տեղեկատվություն կստանա, եթե դուք որոշակի մանրամասներ ներկայացնեք, թե որտեղից է տվյալ անձը: Նա, ով Ամերիկայից է, կարող է լինել Կանադայից, Միացյալ Նահանգներից կամ Լատինական Ամերիկայից: Ընթերցողը ոչինչ չի իմանում, երբ ասում ենք, որ տվյալ անձն Ասիայից է. նյութի համար ավելի կարեւոր է, թե որ երկրից է նա: Ընթերցողին հայտնեք նրա ազգությունը, եթե անհրաժեշտ է նաեւ՝ պետությունը եւ քաղաքը: Աֆրիկան մեծ մայրցամաք է. նշեք նաեւ ազգությունը: Որպես կանոն ընթերցողին կամ դիտողին ապահովեք կոնկրետ տեղեկատվությամբ:

# Øá¹áõÉ 6. î»Õ»Ï³ïíáõÃÛ³Ý ³ÕµÛáõñÝ»ñ ·ïÝ»ÉÁ

**Նպատակ.**
Աջակցել ծրագրի մասնակիցներին՝ գտնել նոր եւ բազմատեսակ աղբյուրներ:

**Սկզբունք.**
Լրատվական նյութերում աղբյուրների բազմազանությունն իր բնույթով կբերի ավելի բազմազան լրատվություն:

Աղբյուրներ գտնելու եւ դրանք լրատվության մեջ օգտագործելու մեթոդը փոխելը թղթակցից շատ գիտակից գործողություններ է պահանջում: Ցանկացած լրագրող, ով շահագրգռված է իր նյութերում ավելի շատ տեսակետներ ընդգրկել, պետք է սկսի համալրել իր աղբյուրները համայնքի ներսում ունեցած շփումների միջոցով: Մարդկանց հետ պատահական հանդիպումները կարող են հնարավորություն ընձեռնել կապ հաստատել այն բժշկի կամ իրավաբանի հետ, որը կարող է բոլորովին այլ մոտեցում դրսեւորել սովորական պատմության նկատմամբ: Պատահական հանդիպումները կարող են հնարավորություն ստեղծել ավելացնել այլ էթնիկ պատկանելիություն ունեցող ու հարգանք վայելող գիտնականների անունները եւ թիվը: Հեռախոսագրքի անձնավորության հետ յուրաքանչյուր շփում լավ հնարավորություն է ձեր աղբյուրների ցանկը՝ տասնամյակներ շարունակ լրատվության թղթակիցների հիմնական հենարան հանդիսացող կառավարության աղբյուրներից այն կողմ ընդլայնելու համար: Ամենալավ լրագրողները ունեն բազմատեսակ աղբյուրների ամենաընդարձակ ցանցը:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Մասնակիցների օրինակներից ընտրեք չորս պատմություն, որոնք կարող են օգտագործվել քննարկելու համար լրատվության աղբյուրների բազայի ընդլայնումը: Մասնակիցներին խնդրեք կարդալ յուրաքանչյուր պատմությունը եւ բաժանեք փոքր խմբերի: Խնդրեք նրանց գնահատել պատմությունները՝ աղբյուրների բազմազանության տեսանկյունից: Արդյո՞ք վկայակոչված անձինք միայն տղամարդիկ են կամ կառավարության անդամներ կամ էլ մեծամասնության ներկայացուցիչներ, թեպետ այլ ռասայական կամ էթնիկ խմբերում տվյալ խնդրի վերաբերյալ կարող են այլ տեսակետներ լինել:

## Ð ³ ßí Ç ³ éÝ»É

* Զգուշացեք անհավասարակշռված պատմություններից: Փոքրամասնության խնդիրները մեծամասնության մեկնաբանությունների կարիքը չունեն. ոչ հրեաների խնդիրն ունի հակասեմիտների մեկնաբանությունների կարիքը, եւ ոչ էլ արվամոլների եւ լեսբուհիների խնդիրը՝ մարդկանցից վախենալու դեպքերի մեկնաբանությունները: Աղբյուրների մեխանիկական «հավասարակշռումն» իրականում կարող է ճանապարհ բացել նախապաշարմունքային լրատվության համար՝ մեծացնելով նախապաշարված տեսակետներ, ստերեոտիպեր եւ շաբլոն դարձվածքներ գործածելու հնարավորությունը:

* Ուշադիր եղեք չափահասների միջեւ համատեղ կյանքը նկարագրելիս:

Շատ երկրներում պատշաճ չէ, երբ տղամարդը եւ կինը չունեն ամուսնական վկայական, կամ էլ երբ երկու տղամարդ կամ երկու կին զուգընկերներ են եւ միասին են ապրում: Եթե այդ մասին պետք է նշվի, մի բարոյախոսեք կամ սրամտորեն պիտակավորեք: Շատ լրագողներ օգտագործում են «ուղեկից» կամ «մոտ ընկեր» բառերը՝ նման երկարաժամկետ հարաբերությունները կամ համատեղ կյանքը նկարագրելու համար: Կարեւոր է ոչ թե ենթադրել, այլ հարցնել հենց նյութի հերոսին, թե նա ինչպես կբնութագրեր այդ հարաբերությունը:

## ÜÏ ³ ï ³ éáõÙÝ»ñ Õ»Ï ³ í ³ ñÇ Ñ ³ Ù ³ ñ

Կրկին վերանայեք պատմությունները: Յուրաքանչյուր մասնակցին խնդրեք կազմել մարդկանց այլ խմբերի ցանկը, որոնց հետ եւս կարելի է կապ հաստատել եւ նրանց տեսակետներն ավելացնել պատմությանը: Նույն վարժությունը կատարեք մնացած երեք պատմությունների հետ: Մասնակիցներին խնդրեք քննարկել, թե ինչպես աղբյուրներ կգտնեին իրենց հոդվածներում տեսակետներն ընդլայնելու համար:

# Øá¹áõÉ 7. ä³ïÏ»ñÝ»ñ

Առաջին հերթին նկարների միջոցով լրագրողները կարող են հնարավորություն փալ բոլոր ռասայական, էթնիկ եւ կրոնական խմբերի անդամներին մաս կազմել թերթի, ամսագրի կամ հեռուսփափեսային հաղորդման բովանդակությանը:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Սեմինարի մասնակիցներին հարցրեք, թե փոքրամասնությունների ինչպիսի նկարներ (եթե առկա են) են ներառված թերթում կամ նորությունների հեռուսփափեսային թողարկումներում: Արդյո՞ք փոքրամասնությունները հանդես են գալիս թե որպես նորությունների աղբյուր եւ թե նորությունները լուսաբանող: Արդյո՞ք կանայք առկա են նկարներում, թե նորությունների լուսանկարներում կամ փեսանկարներում գերակշռում են փղամարդիկ: Սեմինարի ղեկավարը պետք է համապափասխան օրինակներ բերի մասնակիցների փրամադրած թերթերից կամ փեսանյութերից, կամ էլ պետք է ինքնուրույն գփնի օրինակներ, որփեղ իր կարծիքով լավագույնս է դրսեւորվում լրափվության մեջ փեղ գփած նկարներում բազմազանության պակասը:

* Օրինակները խմբին ներկայացնելիս խնդրեք նրանց փվյալ պատմությունների լուսաբանման այլ փարբերակներ առաջարկել` աչքի փակ ունենալով բազմազանությունը, եւ ոչ թե որպես աղբյուրներ պարզապես օգփագործելով կառավարության միեւնույն այրերին եւ ցուցադրելով վերջիններիս լուսանկարները կամ փեսահոլովակները:

* Մասնակիցներին խնդրեք վերանայել հոդվածները եւ հանցագործությունների մասին պատմող նյութերին կցված նկարները: Նման պատմությունները հաճախ ավելի պատկերավոր են: Գփեք նաեւ պատերազմական կամ քաղաքացիական անհնազանդության գոփիների մասին պատմող նորություններում փեղ գփած

լուսանկարներ կամ տեսահոլովակներ: Արդյոք այդ նկարները եւ տեսանյութերը որեւէ անուղակի տեսակե՞տ են ներկայացնում անհնազանդության կամ պատերազմի մասին: Արդյո՞ք տեսանյութերը հատկապես օգտագործվում են ինչ-որ տեսակետ առաջ քաշելո՞ւ համար: Արդյոք սա՞ է կամ սա՞ պետք է լինի լրագրողի նպատակը: Ինչպե՞ս կարելի է խուսափել ընդգծված քաղաքական կամ պատմական ենթատեքստ ունեցող հոդվածներում որեւէ տեսակետ ներկայացնելուց, երբ այդ ենթատեքստն ավանդաբար բացառել է բոլոր տեսակետները բացի կառավարության տեսակետից:

Թե լուսանկարները, եւ թե տեսանկարները պետք է արտացոլեն նորությունները: Սակայն ոչ մի կանոն չկա, թե ում ընդգրկել նորություններն արտացոլող նկարներում: Բացառությամբ հրատապ նորությունների, գովազդային ընդմիջումների՝ հաճախ կարելի է ընտրություն կատարել:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Վերանայեք մասնակիցների տրամադրած թերթերն ու տեսանյութերը եւ մանրազնին ուսումնասիրեք առկա նկարները: Քննարկեք այս կամ այն իրադարձության վերաբերյալ ավելի բազմազան նկար ընտրելու հնարավորությունները, քան այն, որը տեղ էր գտել թերթում կամ հեռուստատեսությունում: Քննարկեք տրամադրված տեսանյութերից ընտրված պատմությունները: Կայի՞ն արդյոք պատմությունն ավելի բազմակողմանի լուսաբանելու այլ հնարավորություններ:

Երբ կարեւոր իրադարձություն է տեղի ունենում, լուսանկարիչները պետք է պատեհ առիթ փնտրեն ամբոխի բազմազանությունը որսալու, այլ ոչ թե ուսպնապակին կենտրոնացնեն մեծամասնության միատեսակությունը ներկայացնողների վրա:

***Օրինակ:*** Վերջերս ընտրությունների մասին պատմող նյութի համար լուսանկարիչը նկարել էր մի ընտրատարածք, որտեղ մի կին դիտորդական առաքելություն էր իրականացնում, իսկ մեկ այլ կին՝ քվեարկում էր: Լուսանկարիչը գիտեր, որ անցյալում նման տեսարան չէր արձանագրվի այնպիսի հասարակությունում, որտեղ գերիշխում են տղամարդիկ: Նրա նկարը նոր օր է ազդարարում: Լուսանկարիչը հավանաբար կարող էր գնալ մեկ այլ ընտրատարածք կամ կարող էր նմանատիպ տեսարանում նկարել տղամարդկանց եւ հեռանալ: Այս դեպքում լուսանկարիչը որսացել է փոփոխությունը, եւ ընթերցողները կամ հեռուստադիտողներն ինչ-որ չափով կազդվեն նկարում ներկայացված փոփոխությամբ: Գիտակցաբար թե անգիտակցորեն, ընթերցողը կամ դիտողը կսկսի փոփոխություն զգալ հասարակությունում եւ այդ հասարակության ներսում կնոջ դերի մեջ:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Կրկին, փնտրեք նկարների օրինակներ, որոնք հասարակության ներսում աննշան փոփոխության գաղափար են սերմանում: Կա՞ն արդյոք նման օրինակներ նախքան սեմինարը տրամադրված թերթերում կամ հեռուստատեսային նյութերում: Կա՞ն արդյոք նկարներ, որոնք սեմինարի մասնակիցների կարծիքով մյուսների հետ վերցրած կարող էին բազմազանություն ստեղծել՝ առանց փոխելու որպես նորություն ներկայացվող իրադարձությունը:

Բազմազանություն ստեղծող նկարներն ուսումնասիրելու նպատակներից մեկն է հնարավորություն տալ մեր ընթերցողներին եւ հեռուստադիտողներին ասելու. «Շնորհակալություն, որ ես ինձ տեսա ձեր թերթում կամ հեռուստահաղորդման ընթացքում: Շնորհակալություն, որ դուք՝ ԶԼՄ-ներդ, որ ամեն օր նորությունների միջոցով ներկայացնում եք հասարակությունը, ինձ հնարավորություն տվեցիք դառնալ այդ հասարակության մի մասը»:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Այստեղ սեմինարի ղեկավարը պետք է ընդգծի, որ օգտագործված նկարները ԶԼՄ-ների անձնակազմի ընտրության արդյունք են, ովքեր էլ որոշում են, թե որ նկարները պետք է տպել կամ էլ պատրաստել հեռարձակման:

Ինչպե՞ս պետք է փոխվի որոշումների կայացման գործընթացը, եթե թերթերում կամ հեռուստատեսային լրատվական թողարկումների

ընթացքում պետք է ավելի շատ բազմազան նկարներ ընդգրկել: Կրկին դիտարկեք այս մոդուլի ընթացքում արդեն ուսումնասիրված լրագրային լուսանկարները եւ նկարահանված նյութերը: Որտե՞ղ են այլ ընտրության հնարավորությունները: Երբ եւ ով պետք է կատարի այդ ընտրությունը: Ղեկավարը պետք է խմբին ներգրավի քննարկման. որեւէ պատմության տեսարան դիտելիս` նրանք պետք է ընտրություն կատարեն այն պահին, երբ լուսանկարիչը/թղթակիցը կամ օպերատորը պլանավորում եւ լուսանկարում է:

ԶԼՄ-ների կողմից օգտագործված նկարների բազմազանությունը ներառում է նաեւ որոշումների կայացումը, երբ նյութի համար մի նկարի փոխարեն օգտագործվում է մյուսը: Լուսանկարելու կամ նկար ընտրելու համար պատասխանատու յուրաքանչյուր անձ պետք է սկսի այն հարցից, թե ո՞րն է տվյալ պատմությունը լուսաբանելու ամենալավ տարբերակը, որպեսզի այն հնարավորինս շատ ընթերցողներ գրավի:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

Տեղական կամ հանրապետական թերթերից ընտրեք առանց նկարների երկու կամ երեք պատմություն, որոնք օգտագործեք դասընթացի ժամանակ նկարներով առավելագույնս լավ լուսաբանելու համար` չմոռանալով բազմազանության սկզբունքների մասին: Յուրաքանչյուր պատմության համար արված առաջարկությունները գրառեք մեծ թղթերի վրա, որպեսզի դրանք տեսանելի լինեն բոլոր մասնակիցների համար: Երբ այս գործընթացն ավարտվի, մասնակիցներին առաջարկեք օգտագործել այս գործելաոճը իրենց գրած պատմությունները նկարներով լուսաբանելու համար: Ինչպե՞ս կարող է մասնակիցը նման գործընթացը դարձնել լրատվության կազմակերպման մի մասը:

## ÊÙµ³·ñ³Ï³Ý Ù»ÏÝ³µ³ÝáõÃÛáõÝ. Ì³Õñ³ÝÏ³ñÝ»ñ

Խմբագրական ծաղրանկարները յուրահատուկ դեր են խաղում: Դրանք պետք է լինեն անհարգալից եւ երբեմն ներկայացնեն քաղաքական տեսակետների կամ հասարակական անհամաձայնության ծայրահեղությունները: Այդ ծաղրանկարները հաճախ օգտվում են փոքրամասնությունների ստերեոտիպերից:

Սակայն խմբագրական ծաղրանկարները, չնայած մեկ այլ լիգայում, անընկալունակ չեն գնահատականների նկատմամբ, հատկապես երբ դրանք հակված են ամրապնդել ստերեոտիպերը, որոնք պառակտում են հասարակությունը կամ սրում ատելությունն ու անվստահությունը: Միակ միջոցն այստեղ մշտական բանավեճն է եւ լրագրողների ու լրատվական կազմակերպությունների աչալրջությունը:

## ÜÏ³ï³éáõÙÝ»ñ Õ»Ï³í³ñÇ Ñ³Ù³ñ

* Գտեք խմբագրական ծաղրանկարների նմուշներ եւ պատճենահանեք մասնակիցների համար: Հարցրեք, թե արդյոք ծաղրանկարներից որեւէ մեկում որեւիցե վիրավորական բան կա՞ մասնակիցների նկատմամբ, կամ էլ այլ ռասայական, էթնիկ կամ կրոնական պատկանելիություն ունեցող որեւէ մեկի նկատմամբ: Վերջին հարցը. արդյո՞ք մասնակիցները կարծիքով վիրավորական լինելը, նույնիսկ վիրավորանքի սպառնալիքն արդարացվում է ծաղրանկարի փոխանցած գաղափարով:

* Քննարկում սկսեք խմբագրական ծաղրանկարի եւ փպագրված կամ հեռուսփափեսային լրափվության մեջ օգփագործվող լուսանկարների միջեւ փարբերությունների վերաբերյալ: Որո՞նք են այն փարբեր չափորոշիչները, որ երկուսին էլ վերաբերում են: Արդյոք հասարակությունը հասկանո՞ւմ է հիշյալ փարբերությունները: Մասնակիցների կարծիքով ի՞նչ պեփք է արվի, եթե վիրավորական ծաղրանկար է փպագրվել: Իսկ եթե հասարակության կողմից բողոքնե՞ր լինեն: Իսկ եթե բոլորը գիփեն, որ դա վիրավորական է, սակայն բողոքներ չկա՞ն: Արդյո՞ք բողոքների բացակայության փասփը նշանակում է, որ հասարակության եւ լրափվամիջոցների միջեւ առկա է մի պրոբլեմ, որը վերջիններս պեփք է փորձեն հաղթահարել:

# ²ÝÑ³ï³Ï³Ý ³ßË³ï³ÝùÛÇÝ åÉ³Ý

Անհատական աշխատանքային պլանը կօգնի լրագրողներին իրենց հետ տուն տանել այն ամենը, ինչ քննարկել, վերլուծել եւ յուրացրել են այս ծրագրի ընթացքում: Դա մասնակիցներին քաջալերելու միջոց է՝ իրենց վրա պարտավորություն վերցնել ակտիվորեն փոխել իրենց ամենօրյա գործելակերպը որպես արհեստավարժներ: Ավելին, քանի որ լրագրողները կարող են իրենց վրա վերցնել ոչ միայն անհատական գործունեությունը, այլ նաեւ իրենց գործընկերների, լրատվական կազմակերպությունների եւ պրոֆեսիոնալ ասոցիացիաների ու միությունների հետ աշխատանքը, անհատական աշխատանքային պլանը (ԱԱՊ) կարող է նաեւ այլ անհատների, ինչպես նաեւ ինստիտուտների վրա ազդելու մեխանիզմ լինել:

Ղեկավարը պետք է վերամշակի ստորեւ բերված ԱԱՊ-ի ձեւը՝ ավելացնելով կամ փոխելով հարցերը եւ սեմինարի սկզբում դրանք բաժանի մասնակիցներին, որպեսզի յուրաքանչյուր մասնակից ողջ ծրագրի ընթացքում իր մտքում ունենա այդ պլանը: Նախքան լրացնելը խումբը պետք է քննարկի ԱԱՊ-ը, եւ ղեկավարը պետք է խրախուսի յուրաքանչյուր մասնակցին լինել հնարավորինս յուրօրինակ իր նպատակները, աշխատանք գտնելու միջոցները եւ ժամանակացույցը սահմանելու հարցում: ԱԱՊ-ի համար վեցամսյա ժամկետ է առաջարկվում, սակայն դա թողնվում է խմբի եւ ղեկավարի հայեցողությանը, որը պետք է վերանայի ԱԱՊ-ի ձեւը, մինչեւ խմբի անդամները կկարողանան հանգիստ կատարել այն, ինչ պահանջվում է: Վերջին դասընթացի ժամանակ ԱԱՊ-ների լրացումից հետո, ղեկավարը պետք է առաջարկի, որ յուրաքանչյուր մասնակից խմբին ներկայացնի իր աշխատանքային պլանը:

Ղեկավարը պետք է նշումներ անի յուրաքանչյուրի վերաբերյալ՝ հաջորդող քննարկման համար, ինչը լավ կլինի անցկացնել համաձայնեցված ԱԱՊ ժամկետում: Քանի որ բազմազանության խնդիրների նկատմամբ զգայունակ լրագրության գործածումը հաճախակի անձնապես կամ սկզբնականորեն դժվար է, հաջորդող ժամանակացույցը հնարավորություն է տալիս վերանայել բուն քննարկումների ընթացքում շոշափված նյութերը, խրախուսել հետագա քննարկումները եւ հստակեցնել բազմազանության բուն նպատակները: Լավագույն հանգամանքներում դա կիրականացվի շարունակվող սեմինարների, հրապարակումների, ինչպես նաեւ աշխատավայրում կազմակերպվող դասընթացների եւ օժանդակության միջոցով:

# ²ÝÑ³ï³Ï³Ý ³ßË³ï³Ýù³ÛÇÝ åÉ³ÝÇ Ó»õ

## ÐÇß»ù ³é³ù»ÉáõÃÛáõÝÁ

Որպես հասարակության փոխըմբռնման եւ հանդուրժողականության արտահայտման եւ տարածման միջոց՝ ընդլայնեք թերթի, ռադիոյի եւ հեռուստատեսության նորությունների շրջանակները:

Հիշեք հիմնական նպատակները.

* լրատվության բոլոր ասպարեզներում ավելացրեք տեսակետների եւ նկարների բազմազանությունը,

* ամրապնդեք կապը առկա եւ հնարավոր ընթերցողների, ունկնդիրների եւ հեռուստադիտողների հետ,

* ընդլայնեք ձեր ընթերցողների կամ ունկնդիրների եւ հեռուստադիտողների շրջանակները՝ ներգրավելով հասարակության ավելի մեծ հատվածին,

* խթանեք թիմային աշխատանքը եւ հաղորդակցությունը ձեր լրատվական կազմակերպության ներսում:

Անհատական աշխատանքային պլանն ամենակարեւոր քայլերից մեկն է՝ ծրագրի ընթացքում ձեր յուրացրածը կիրառելու համար: Յուրաքանչյուր մասնակից պետք է տուն վերադառնա՝ ունենալով գործողությունների կոնկրետ պլան, որը կօգտագործի որպես լրագրող իր առօրյա պարտականություններին անցնելուն պես:

Խնդրում եմ մի պահ մտածեք, թե կոնկրետ ինչպես պետք է սկսեք գործել ձեր աշխատանքում՝ տեսակետների եւ նկարների բազմազանությունը մեծացնելու, ստերեոտիպերը վերացնելու, լեզուն զգուշորեն գործածելու եւ, ընդհանրապես, այս ծրագրի ընթացքում քննարկված բազմազանության խնդիրների նկատմամբ զգայունակ լինելու համար:

Այնուհետեւ, համառոտ նկարագրեք այն գործողությունները, որ կձեռնարկեք այս ծրագրի սկզբում սահմանված նպատակների որոշ մասն իրականացնելու համար: Նկատի ունեցեք, որ ձեր պլանը վեցամսյա պլան է. յուրաքանչյուր վեց ամիսը մեկ դիտարկեք ձեր առաջընթացը, ավելացրեք եւս մեկ նպատակ: Աշխատանքային պլանը պետք է համարվի ձեր անհատական պլանը՝ վերը նշված նպատակներին հասնելու ուղղությամբ գործելու համար: Կարեւոր է այնպիսի նպատակներ դնել, որոնք իրատեսական են եւ որոնց վստահաբար կկարողանաք հասնել վեցամսյա կամ ձեր կողմից սահմանված որոշակի այլ ժամկետում:

**Ստորեւ բերված են մի քանի օրինակներ**. լրացուցիչ տեղն օգտագործեք բերված օրինակները ընդլայնելու կամ փոխելու, կամ էլ ձեզ նպատակահարմար գործողությունը ներկայացնելու համար:

**1. Իմ աշխատավայրում մեկ այլ լրագրողի հետ կքննարկեմ բազմազանության**
**սկզբունքները եւ կկիսեմ դասընթացի ժամանակ արծարծված նյութերը: Ես դա կանեմ**

**2. Ես բծախնդիր կլինեմ լեզվի գործածության հարցում եւ կփորձեմ վերացնել անհստակ**
**խոսքերը, շաբլոն դարձվածքները եւ այն երկակի իմաստով տերմինները, որոնք կարող**
**են վիրավորական լինել այս կամ այն խմբի համար: Ես դա կանեմ**

14. ´ ³ é ³ ñ ³ Ý

**3. Լեզվի գործածության նկատմամբ բծախնդրություն դրսեւորելուն ուղղված իմ**
**հաջողված մոտեցումները ես կկիսեմ մյուս լրագրողների հետ: Ես դա կանեմ**

**4. Ես դասընթաց կկազմակերպեմ աշխատակազմի մյուս անդամների համար՝**
**քննարկելու բազմազանության սկզբունքները:**

**5. Ես կհետեւեմ մեր թերթում կամ հեռուստատեսային թողարկումնե-**

´ 3 é ցուցակը գրած

նկարներին եւ առաջարկություններ կանեմ կամ կպլանավորեմ նորու-
թյունների

հայթայթումը, որպեսզի հնարավորություն սպեղծեմ բազմազան նկարների համար`

որփեղ պապկերված կլինեն կանայք, փարեցներ, փարբեր ռասայա-
կան, էթնիկ կամ

կրոնական պապկանելիություն ունեցող մարդիկ: Ես դա կսկսեմ

________________________________________

________________________________________

**Նշում:** Առաջարկությունները պարզապես հնարավոր աշխապանքային պլանի օրինակներ են: Գրեք ձեր սեփական դրույթները` որպես մոդել օգտագործելով վերոհիշյալ առաջարկությունները: Եղեք կոնկրեփ, յուրօրինակ եւ իրապես: Հիշեք, որ եթե մեզանից յուրաքանչյուրը մեկ քայլ անի լրապվության մեջ փեսակեփների բազմազանությունը մեծացնելու ուղղությամբ, դրանով մենք ավելի կմոփենանք հասարակական հանդուրժողականության համար արփահայփման եւ փարածման միջոց սփեղծելուն:

*արեցների նկատմամբ կողմնակալ վերաբերմունք*: Նախապաշարմունք կամ խտրականություն՝ հիմնված որեւէ մեկի տարիքի կամ տարեց մարդկանց մասին ստերեոտիպերի վրա:

*Հակասեմիտիզմ:* Նախապաշարմունք կամ խտրականություն հրեաների նկատմամբ՝ հիմնված նրանց կրոնական դրսեւորումների եւ հավատալիքների կամ էթնիկ ստերեոտիպերի մասին բացասական պատկերացումների վրա:

*Մոլեռանդություն:* Համառ եւ չպատճառաբանված նվիրվածություն սեփական կարծիքներին, կենսակերպ եւ հավատքի համակարգ՝ հակադիր դիրքորոշումների եւ դրանք պաշտպանողների դեմ սահմանափակ անհանդուրժողականությամբ կամ նախապաշարմունքով:

*Կլասիզմ:* Նախապաշարմունք կամ խտրականություն՝ հիմնված սոցիալ-տնտեսական դասի վրա:

*Հաշմանդամություն:* Ֆիզիկական կամ մտավոր արատ, որը խանգարում կամ խոչընդոտում է որոշակի գործողություններ կատարել կամ բացասաբար է ազդում մտավոր գործունեության վրա:

*Խտրականություն:* Անաչառության եւ արդարացի վերաբերմունքի մերժում այլ մշակույթի, էթնիկ համայնքների եւ սոցիալական խմբերի անդամների նկատմամբ մի շարք ասպարեզներում՝ ներառյալ աշխատանք, բնակարան, քաղաքական իրավունքներ եւ բնակության վայր:

*Բազմազանություն:* Թե անհատների եւ թե խմբերի մեջ իրարից տարբերվող որակների եւ հատկանիշների առկայություն՝ առաջնային բնույթի, որոնք ընդհանրապես հնարավոր չէ ընտրել, ինչպես տարիք, էթնիկ պատկանելիություն, սեռ, սեռական հակվածություն, հաշմանդամություն եւ այլն, կամ երկրորդական բնույթի, ինչպես կրթություն, աշխարհագրական տեղադրություն, ամուսնական կարգավիճակ, կրոն եւ այլն:

*Հավասարություն:* Միեւնույն կոչումը, աստիճանը կամ արտոնություններն ունենալու դրություն:

*Էթնոցենտրիզմ:* Գիտակցաբար կամ անգիտակցորեն այլ էթնիկ խմբերին սեփական արժեքներով, չափորոշիչներով եւ չափանիշներով դատելը եւ այլընտրանքային դիրքորոշումները կամ մոտեցումներն անտեսելը:

*Հոմոֆոբիա:* Երկյուղ կամ արհամարհանք այն մարդկանց նկատմամբ, ովքեր արվամոլներ են, լեսբուհիներ կամ երկսեռներ կամ էլ ենթադրվում են այդպիսին:

*Բազմամշակութայնություն:* Մշակույթների, կրոնների, էթնիկ համայնքների եւ հասարակության ներսում գոյակցող այլ խմբերի լայն շրջանակը ճանաչելը եւ հարգելը:

*Նախապաշարմունք:* Անտրամաբանական կասկած եւ ատելություն մարդկանց մի ամբողջ դասի նկատմամբ. ուրիշների մասին թշնամական կարծիք կամ դատապարտում՝ հիմնված բացառապես կամ զգալի չափով նրանց կարգավիճակի վրա որպես որոշակի էթնիկ, կրոնական կամ սոցիալական խմբի անդամներ:

*Ռասիզմ:* Նախապաշարմունք կամ խտրականություն՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ որոշ էթնիկ խմբեր բնածին առավելություն ունեն մյուսների նկատմամբ՝ մտավոր կարողություններով, բարոյական հատկանիշներով, հավատքի համակարգով, կենսակերպով եւ այլ որակներով:

*Քավության նոխազ:* Մարդկանց մի ամբողջ դասին կամ այդ խմբի անդամներ համարվող անհատներին սոցիալական, տնտեսական կամ այլ խնդիրների համար մեղադրելը, որոնք իրականում ծագում են բարդ եւ բազմաթիվ պատճառներից:

*Սեռական հակվածություն:* Անհատի սեռական հետաքրքրության ուղղվածությունը դեպի միեւնույն, հակառակ կամ երկու սեռերի անդամներին:

*Ստերեոտիպ:* Մարդկանց մի ամբողջ խմբի մասին լայն ընդհանրացում՝ անտեսելով կամ չնկատելով անհատական տարբերությունների կամ զանազանությունների հնարավորությունը:

*Հանդուրժողականություն:* Այլ մշակույթների, էթնիկ համայնքների կամ սոցիալական խմբերի հավատքի, մտածելակերպի եւ ունակությունների անկեղծ ընդունում:

*Քսենոֆոբիա:* Խոր հակակրանք, երկյուղ, արհամարհանք՝ օտարերկրացիների կամ այլ մշակութային կամ էթնիկ պատկանելիություն ունեցող մարդկանց նկատմամբ:

# ´³½Ù³ÏáÕÙ³ÝÇ ï»Õ»Ï³ïíáõÃÛ³Ý ÇÝëïÇïáõï

È Ադրբեջանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա
Տնօրեն՝ Արզու Աբդուլաեւա

Բաքվի մամուլի ակումբ
Նախագահ՝ Արիֆ Ալիեւ
Կայք՝ www.pressclub.az

Սեւծովյան մամուլի միություն
Տնօրեն՝ Ալյոնա Իմեդաշվիլի

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
Նախագահ՝ Լեւոն Բարսեղյան
Կայք՝ www.asparez.am

Ազատության ինստիտուտ
Տնօրեն՝ Լեւան Ռամիշվիլի
Կայք՝ www.liberty.ge

Ստեփանակերտի մամուլի ակումբ
Նախագահ՝ Գեղամ Բաղդասարյան
Կայք՝ demo.ktsurf.net

Երեւանի մամուլի ակումբ
Նախագահ՝ Բորիս Նավասարդյան
Կայք՝ www.ypc.am

Բազմակողմանի լրատվության ցանցի որեւէ անդամի մասին լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք դիմել Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ:

ոնդոնում տեղակայված Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը /MDI/ շահույթ չհետապնդող, ոչ կուսակցական կազմակերպություն է, որը նպաստում է զարգացող երկրներում հակամարտությունների լուծմանը՝ հասարակության մեջ առկա տարբեր կարծիքները լրատվամիջոցներում լուսաբանելու միջոցով:

Ինստիտուտի բազմակողմանի լուսաբանման ցանցը (ԲԼՑ) միավորում է լրագրողներին, լրատվական կազմակերպություններին, ԶԼՄ-ների աջակցության կենտրոններին, լրագրության դպրոցներին, որպեսզի նրանց միահամուռ ջանքերի օգնությամբ լրատու ԶԼՄ-ներն իրենց ուժերը լավագույնս ծառայեցնեն հասարակության կողմից տարակարծության, փոքրամասնական համայնքների, միջխմբային հակամարտությունների եւ մարդու իրավունքների առավել համապարփակ ընկալմանը: ԲԼՑ-ն առաջադրում է պրոֆեսիոնալ լրագրության բարձրագույն չափանիշներ՝ կապված փոքրամասնությունների խնդիրների, բազմակարծության, ազգամիջյան փոխհարաբերությունների լուսաբանման հետ, բացի այդ՝ մշակում է այդ չափանիշների իրագործման համար անհրաժեշտ միջոցներ, ուսուցման մեթոդներ ու լրագրողական գործնական ծրագրեր:

Անկողմնակալ, հավաստի, կարեկից եւ խորաթափանց լուսաբանումը վճռական նշանակություն ունի հասարակության տարբեր խմբերի միջեւ փոխըմբռնումը խթանելու գործում: Շատ հաճախ լրատվամիջոցներն օգտագործվում են՝ իբրեւ նախապաշարումներ ու խտրականություն սերմանող զենք: MDI-ը նպատակ ունի փոխել իրավիճակը՝ ԶԼՄ-ները վերածելով մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ամրապնդմանը ծառայող գործիքի:

Այս նպատակները մենք իրականացնում ենք՝ առաջին հերթին կրթական ու վերապատրաստման մեր ծրագրերի միջոցով, ինչպես նաեւ՝ համագործակցելով.

- գործող լրագրողների հետ,
- լրագրության դասախոսների եւ գիտնականների հետ,
- լրատվամիջոցների սեփականատերերի եւ ղեկավարների հետ,
- լրատվական, իրավապաշտպան եւփոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ:

Ինստիտուտի առավել բնորոշ հատկանիշը տարակարծության խնդիրը տարբեր անկյուններից դիտարկելու մեր համընդհանուր մոտեցումն է: Մենք գործնական դասընթացներ ենք կազմակերպում լրագրողների ու ԶԼՄ-ների ղեկավարների համար, սովորեցնում ենք փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպություններին, թե ինչպե՞ս հարաբերվեն լրատվամիջոցների հետ: Բացի այդ, աշխատում ենք փոքրամասնությունների համար նախատեսված ԶԼՄ-ները հզորացնելու ուղղությամբ. գործակցում ենք լրագրության դասախոսների հետ, ովքեր կրթելու են լրագրողների ապագա սերունդներին:

**Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի գործունեությունը բաժանվում է ինը հիմնական ոլորտների.**

1. բազմաշերտության մասին իրազեկման դասընթացներ լրագրողների լրատվամիջոցների ղեկավարների համար,

2. բազմաշերտության գործնական դասընթացներ եւ մասնագիտական զարգացման ծրագրեր լրագրողների միջին սերնդի համար,

3. բազմակողմանի լրատվության նախաձեռնություններ՝ ներառյալ թիմային լրատվությունը եւ լրատվական գործակալությունների նախագծերը,
4. բազմաշերտության ուսումնական պլանի մշակում՝ համագործակցելով լրագրության ֆակուլտետների հետ,

5. լրատվամիջոցների եւ հանրության հարաբերությունների դասընթացներ փոքրամասնությունների համար,

6. նախագծեր՝ լրատվամիջոցների մեջ հանդուրժողականությանը նպաստելու համար,

7. բազմաշերտության տեղեկագրերի, աղբյուրների ձեռնարկների եւ դասընթացների ձեռնարկների հրատարակում,

8. հակամարտություններից հետո լրագրողների համար մասնագիտական զարգացման միջոցառումների իրականացում՝ հատուկ շեշտ դնելով Հետտրավմատիկ սթրեսային խանգարումների հաղթահարման վրա,

9. ԶԼՄ-ներում տարակարծությանն առնչվող թեմաների լուսաբանման մոնիտորինգ:

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
ՀՀ, Երևան 375009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (374 1) 58 10 59, 58 15 26
Հեռ./ֆաքս՝ (374 1) 58 76 69
Էլ. փոստ՝ antares@antares.am
www. antares.am